

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության  
ինստիտուտ

Դավթյան Հայկանուշ Յուրիի

Ժամանակը Սերո Խանզադյանի պատմավեպերում

## Ատենախոսություն

Ժ. 01. 02 - Նորագույն շրջանի հայ գրականության մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական դեկավար՝ բանասիրական  
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Մարտին Գարեգինի Գիլավյան

Երևան – 2015

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|  |          |
|--|----------|
| <b>Ներածություն</b> -----                            | <b>3</b> |
| <br>   |          |
| <b>Գլուխ առաջին</b>                                  |          |
| Ազատագրական պայքարի նոր ալիքը -----                  | 14       |
| <br>   |          |
| Ա) Ազգային ինքնության վերահաստատման ճանապարհին ----- | 14       |
| Բ) Պայքարի Միսիթարյան շրջանը -----                   | 36       |
| Գ) Արցախյան մերօրյա գոյամարտի ակունքները -----       | 54       |
| <br>   |          |
| <b>Գլուխ Երկրորդ</b>                                 |          |
| Ողբերգականն ու հերոսական -----                       | 67       |
| <br>   |          |
| <b>Գլուխ Երրորդ</b>                                  |          |
| Առասպելականն ու իրականը -----                        | 104      |
| <br>   |          |
| <b>Եզրակացություններ</b> -----                       | 129      |
| <br>   |          |
| <b>Օգտագործված գրականության ցանկ</b> -----           | 132      |

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գրականության և մասնավորապես պատմավիպասանության համար անչափ կարևոր է գրողի՝ ժամանակի սրված զգացողությունը, որովհետև «... իրականության արտացոլումը գրականության մեջ անհրաժեշտաբար կապվում է ժամանակի ու տարածության պատկերացումների հետ, ասել է թե՝ կենսական իրողությունները դրսնորվում են տարածաժամանակային որոշակի սահմաններում, ինչը, սակայն, չի նշանակում, թե ժամանակի գեղարվեստական արտացոլումը իրական ժամանակային ընթացքի պարզ վերարտադրություն է»<sup>1</sup>:

Գրողի կողմից ժամանակի գեղարվեստական արտացոլումը, նրա համապատկերը, ամենաբնորոշ կողմերն ու դրսնորումները կարող են «խտացվել մեկ պահի մեջ՝ ամփոփելով մեծ ժամանակաշրջանի բովանդակություն, բայց և կարող են ձգվել, երկարացվել՝ տալով մեկ ակնթարթում կատարված դեպքերի, փայլատակած մտքի կամ հարցի համակողմանի ուսումնասիրությունը»<sup>2</sup>:

Գրականագիտությունը տարբերակում է ժամանակի «ներփակ» և «բաց» հասկացությունները. «գեղարվեստական ժամանակը «ներփակ» է կոչվում, եթե համընկնում է պատմական ժամանակի հետ և ներկայացնում է բնական ընթացքով իրար հաջորդող իրողությունների շղթա», իսկ «ժամանակի «բաց» պատկերացումը ենթադրում է ժամանակային տարբեր հոսքերի» (անցյալ, ներկա, ապագա) առկայություն՝ նրանց համադրման տարբեր ձևերով, ինչպես նաև դեպքերի գլխավոր ընթացքին գուգահեռ զարգացող սյուժետային գծերի ցուցադրում»<sup>3</sup>:

Ժամանակի փիլիսոփայական հասկացությունը հասարակության առաջընթացի տարբեր շրջաններում սահմանվել է տարբեր բնութագրումներով: Այն դիտարկվել է որպես յուրահատուկ ընթացք՝ անցյալ-ներկա-ապագա ուղեծիրում, «իրար հաջորդող երևույթների հերթագայություն, որտեղ ամեն մի նատերիական պրոցես զարգանում է մի ուղղությամբ՝ անցյալից դեպի ապագա»<sup>4</sup>:

Արտահայտվել են նաև տեսակետներ, որոնք բացառում են ժամանակի անցյալ - ներկա - ապագա հոսքերը՝ հաստատելով լոկ ներկայի գոյությունը. «Կա լոկ «ներկա ժամանակ», որն անընդհատ ծնվում է և նույն պահին իսկ հոսում - չքանում է անցյալի

<sup>1</sup> Զրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Երևան, 1970, էջ 117:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 118:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 118:

<sup>4</sup> Փիլիսոփայական բառարան, Երևան, 1975, էջ 152:

մեջ: ժամանակի ծնունդը փոփոխությունների դրսևորումն է: Նրանց էությունը ինֆորմացիայի վերածելն է կառուցվածքային էներգիայի: «Անցյալ ժամանակի» մեջ տեղի է ունենում հակառակ ընթացքը. «Ներկան նորի ծնունդն է՝ ծագող ժամանակով իրականացվող՝ անցյալ ժամանակից եկող ինֆորմացիայի հիման վրա»: «Անցյալը գոյություն ունի լոկ այնքանով, որքանով նրա մեջ պահպանվել է «ներկայի կառուցվածքային էներգիան»<sup>5</sup>:

ժամանակը յուրովի է բնութագրում Կ. Գ. Յունգը. «Ըստ Երևույթին, ժամանակն ամենակին էլ վերացական մեծություն չէ, այլ ավելի շուտ կոնտինիում, որն իր մեջ ներառում է որակներ կամ որոշակի պայմաններ, որոնք կարող են դրսևորվել տարբեր վայրերում հարաբերական միաժամանակությամբ զուգահեռականության դեպքում՝ պատահականորեն համարյա չբացահայտվող, ինչպես, ասենք, նույնատիպ մտքերի, խորհրդանիշների կամ հոգեկան վիճակների միաժամանակ դրսևորման փաստի մեջ»<sup>6</sup>: Իսկ Ալ. Ենշտեյնը հարաբերականության տեսությամբ եզրակացրեց, որ ժամանակը չի կարող գոյություն ունենալ ինքնին՝ տարածությունից ու մատերիայից անկախ. «Ժամանակը և տարածությունը գոյություն ունեն ոչ թե ինքնին, մատերիայից անկախ, այլ գտնվում են այնպիսի ունիվերսալ փոխկապվածության մեջ, որտեղ նրանք կորցնում են իրենց ինքնատիպությունը և հանդես են գալիս որպես միասնական ու անբաժանելի տարածաժամանակի հարաբերական կողմեր»<sup>7</sup>:

ժամանակի և տարածության միասնականության խնդրին առաջինն անդրադարձել է Գ. Լեսսինգը: «Լառուկոն կամ գեղանկարչության ու բանաստեղծության սահմանների մասին» գրքում նա գրում է. «Առարկաները գոյություն ունեն ոչ միայն տարածության, այլև ժամանակի մեջ: Նրանց գոյությունը ձգվում է, և իրենց լինելության յուրաքանչյուր ակնթարթին նրանք կարող են հանդես գալ այս կամ այն տեսքով կամ դրսևորումներով: Գեղանկարչությունն առարկայի ու գույների միասնականությունն է տարածության մեջ, բանաստեղծությունը՝ հոդաբաշխ ձայնի՝ ընկալված ժամանակի մեջ»<sup>8</sup>:

ժամանակի և տարածության փոխադարձ կապը Մ. Բախտինը անվանում է քրոնոտիպ, որը որոշում է «Գրական ստեղծագործության միասնականության կապերը

<sup>5</sup> Голубев В.С., Феномен времени и соцественная история, История и современность, М., 2011, № 1, стр.65.

<sup>6</sup> Юнг К. Г. , Дух в человеке, в искусстве и литературе, Минск, 2003, стр. 59.

<sup>7</sup> Философия языка речи, 153:

<sup>8</sup> Лессинг Г., Лаокоон или о границах живописи и поэзии, М., 1933, стр. 111.

իրականության հետ»<sup>9</sup>, ունի կառուցվածքային գործառույթներ և իր մեջ ներառում է «գեղարվեստական երկի ոչ միայն բովանդակային, այլև ձևակառուցվածքային կողմերը, թեև առաջին հայացքից թվում է, թե գեղարվեստական երկի ձևաստեղծման խնդիրը չի առնչվում վերջինիս»<sup>10</sup>:

Ինչպես ամբողջ մարդկության, այնպես էլ յուրաքանչյուր առանձին մարդու համար ժամանակը չի կարող լինել նույնական, որովհետև նույնական չեն կարող լինել ազգային մտածողությունները, գենետիկ կողերը, աշխարհներներն ու ձևերը:

Սակայն բոլոր դեպքերում «ժամանակի զգացողությունը կարևոր է այն առումով, որ այն գեղարվեստական վերացություն չէ, այլ կեցության անհրաժեշտություն: Ի՞նչ ենք ժառանգել անցյալից և ի՞նչ ենք ստեղծում՝ գոյության իմաստն է սա, և ստուգվում է նաև անհատի քաղաքական հետագիծը հասարակություն, պետություն, հայրենիք հասկացություններում»<sup>11</sup>:

Ժամանակն իր մեջ ընդգրկում է արդիականության ու պատմության եզրույթները. «Ժամանակը,- գրում է Մ.Շահինյանը,- սովորաբար մենք պատկերացնում ենք անցյալից ապագա ձգվող վերընթաց ուղու տեսքով, մի տեսակ՝ հետևից դեպի առաջ, մինչդեռ այն նման է բաժակի, որի մեջ անընդհատ լցվում է ջուրը: Այսինքն՝ մենք՝ մարդիկ, ժողովուրդները այդ բաժակի մեջ ենք, և ժամանակը հավիտենական թափվում է մեզ վրա: Կա ներկա, որի մեջ խտացված են մեր անցյալն ու ապագան»<sup>12</sup>:

Խոսելով քրոնոտիպի մասին՝ Յր. Մաթևոսյանը գրում է. «Ես ազնիվ եմ համարում իրականի, վավերականի, քո տեղի ու քո ժամանակի վրա սևեռվելը, սևեռվես և քո տեղի և քո ժամանակի մեջ տեսնես բոլոր ժամանակները և ամբողջ աշխարհը: Յայ գրականությունը ընդգծվում է ինքնահատուկ մի ալտրուիզմով: Սա մի երկրի և մի ժողովողի ծնած գրականություն է, որ հավերժորեն ասպատակվել է, անիրավվել, տրոհվել է: Մեր ազգի յուրաքանչյուր զավակ կորստի ցավ ունի, և թվում է մենք պետք է դառնայինք «չար ուժը աստծու դրախտում»: Սակայն տեսեք, թե ինչ ներդաշնակ է ծփում ողջ հայ գրականությունը, տեսեք, թե ցավով ծանրաբեռ մեր մեջ անունները

<sup>9</sup> Бахтин М., Вопросы литературы и эстетики, М., 1975, стр. 391.

<sup>10</sup> Ավետիսյան Զ., ժամանակի կատեգորիան «Գնորգ Մարզպետումի» վեպում, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1979, № 1, էջ 9:

<sup>11</sup> Սարինյան Ս., Գեղարվեստական գրականության պատմականությունը, Երևան, 1979, էջ 292:

<sup>12</sup> Գրական թերթ, 1997, 15 ապրիլի:

ինչպիսի հոժարությամբ են ստանձնում տիեզերքի ցավը, ինչպես համերաշխ են մարդկության ցավը կրելիս»<sup>13</sup>:

Գեղարվեստական գրականության մեջ ժամանակն ընդգրկում է անհատի ու ժողովրդի կյանքի ինչպես ծավալուն ու նշանակալից հատվածներ, այնպես էլ փոքր, բայց նույնպես կարևոր ու նշանակալից իրադարձություններ: Այս առումով պատմավեպերի ժամանակը միայն ազատագրական կրիվների ժամանակները չեն. դրանք իրադարձությունների զարգացման բարձրակետերն են, հերոսների կյանքի ժամանակները:

Յայ պատմավիպասանության մեջ արտահայտվում են քրոնոտիպի դրսնորման ամենատարբեր ձևեր: Մուրացանի, Ռաֆֆու, Դ. Ղենիրճյանի, Ստ. Զորյանի, այնուհետև հետագա տասնամյակների պատմավիպասանությունը գեղարվեստորեն յուրացրել է ժողովրդի անցյալի տարբեր ժամանակահատվածներ, առանձին ժամանակաշրջանների մեջ բացահայտել ժողովրդի պատմական գոյության տրամաբանությունը:

Պատմության իմաստավորման տեսական եզրահանգումները համարելով ընդհանուր, իսկ գեղարվեստական արդյունքները՝ տարաբնույթ՝ գրականագետ Վ. Եփրեմյանը հայ պատմավիպասանության մեջ տեսնում է ժամանակաշրջանի կերպար ստեղծելու երկու սկզբունք՝ «խորքային և տարածական»:

Գրականագետը 1960-ական թվականների հայ պամավիպասանության մեջ գերիշխող է համարում տարածական սկզբունքը (Ս. Այվազյան «ճակատագիրն հայոց (1967), Յովի. Ղուկասյան «Ուսկան Երևանցի» և այլն: Մի դեպքում «դարաշրջանի կոլորիտը, շունչն ու ոգին» վերածվում են ինքնանպատակ զարդանախչի, քանի որ «չեն ամրապնդվում ժամանակի խորքային իմաստավորմամբ» և, Ս. Սարինյանի բնութագրությամբ «կանխում են պատմության փիլիսոփայությունը բացահայտելու հնարավորությունը», մի այլ դեպքում «ժամանակաշրջանի դիմապատկերն ստեղծվում է այնպիսի գծերով, որոնց հանրագումարը վերաճում է գլխավոր հերոսի գործունեության տարածաժամանակային միջավայրի»: Սակայն 1960-ական թվականների պատմահայեցողությանը բնորոշ էր նաև պատմական ժամանակի խորքային ըմբռնումը, որի «տեսակարար կշիռը մեծ չէր կյանքի զարգացման շղթայում»:

Որպես «պատմական ժամանակի խորքային ըմբռնման» լավագույն օրինակ՝ գրականագետն առանձնացնում է Ս. Խանզադյանի «Մխիթար Սպարապետ» վեպը, որտեղ հեղինակը խտացնում է «պատմական ճակատագրի խորհուրդն ու մողելը»<sup>14</sup>:

<sup>13</sup> Մաթեոսյան Յր., Ես ես եմ, Երևան, 2003, էջ 368:

<sup>14</sup> Ավելի մանրամասն տես՝ Եփրեմյան Վ., Զգրված գրքի ծանոթագրություններ, Երևան, 2008:

Ինչպես «Մխիթար Սպարապետ»-ում, այնպես էլ «Շուշի», «Անդրանիկ», «Խոսե՛ք, Հայաստանի լեռներ», «Թագուհին հայոց» պատմավեպերում Ս. Խանզադյանը շարունակում է հայ պատմավիպասանության ավանդույթները՝ փորձելով հայտնաբերել ժամանակի «ներքին ֆունկցիան» ու նրա շարժումը մեկնաբանել ճշմարիտ պատմականության դիրքերից:

«Ես ապրել եմ՝ իմ մեջ կրելով Աքովյանի ոգին,- 1982-ին գրում է Ս. Խանզադյանը:  
- Մենք բոլորս նրա զավակներն ենք, նրա արբանյակները՝ սերնդեսերունդ, առանց ընդմիջման: Աքովյանն իր «Վերքի» մեջ այնպիսի կրակ է դրել, որ ահա 120 տարի է չերմացնում է հայ ժողովրդի՝ միշտ կարոտով լեցուն սիրտը: Նրանից հետո եկած մեր գրական ու ժողովրդական բոլոր մեծերը նրա հոգեզավակներն են, նրա էությունից են ծնված»<sup>15</sup>:

Խ. Աքովյանի դասերը Ս. Խանզադյանին հատկապես օգնել են ժողովրդական սովորությունների, ծեսերի, տոնախմբությունների, կենցաղի, ավանդույթների նկարագրության միջոցով ներկայացնելու ժամանակի համապատկերը, շարժման դիմամիկան, ինչպես նաև ժամանակների հետադարձ կապը (Դ. Ղեմիրճյանը գրում է, որ «Վերքը» անկարելի է լավ հասկանալ առանց 17-18-րդ դարերի հայոց պատմության, քանի որ նրա նյութը կազմում է 17-18-րդ դարերի պատմության անմիջական շարունակությունը»)<sup>16</sup>:

Իր պատմավեպերում Ս. Խանզադյանը ստեղծագործաբար յուրացնում է նաև Ռաֆֆու՝ պատմության փիլիսոփայության բացահայտման, այն արդիականության տեսանկյունից մեկնաբանման, աշխարհընկալման նոր մեթոդների ու եղանակների մշակման սկզբունքները:

Շարունակելով Ռաֆֆու ավանդույթները և արդիականության տեսանկյունից ինաստավորելով հայ ժողովրդի հերոսական գոյապայքարը պատմական առաջընթացի տարբեր շրջափուլերում՝ Ս. Խանզադյանն ավելի է խորացնում «ճանապարհն հայոց» հասկացությունը, որը դարեր շարունակ եղել է մեր գաղափարաբանության անկյունաքարը: Եվ, վերջապես, ճիշտ է գրականագիտական այն դիտարկումը, որ եթե չլիներ Ռաֆֆու «Դավիթ Բեկը», երևի չլիներ նաև «Մխիթար Սպարապետը»: Անհնարին է գերազահատել «Մխիթար Սպարապետի» ստեղծման ու լայն ժողովրդայնության վայելման գործում «Դավիթ Բեկի» անգնահատելի նշանակությունը, որովհետև, ինչպես գրում է Ս. Սարինյանը, «Ռաֆֆու վեպն իր իմացաբանական նստվածքներով պատռում

<sup>15</sup> «Գրական թերթ», 1982, 17 դեկտեմբերի:

<sup>16</sup> Ղեմիրճյան Դ., Անձանոք էջեր գրական ժառանգության, Երևանի ժողովածու, հ.7, Երևան, 1974, էջ 180:

է ժամանակագրության շրջանակներն ու թափանցում պատմության գաղափարի համապարփակ ոլորտները՝ մարդկանց արարքների, իրադարձությունների շարժման մեջ հայտնաբերելով պատմության գաղափարը, պատմության աշխարհայացքը և կարգավորում օրենքի և իրավունքի, անցողիկի ու հավերժականի, գոյի ու անգոյի, մարմնի և հոգու առեղջվածները»<sup>17</sup>:

Նույնը կարելի է առանց երկմտելու ասել Ս. Խանզադյանի «Մխիթար Սպարապետ» և «Թագուհին հայոց» վեպերի մասին, որոնք իմացաբանական խոր նստվածքներով պատմական որոշակի ժամանակաշրջանների համապատկերը ներկայացնելուց բացի հանգրվանային իրողություններ հանդիսացան 1960-1970-ական թվականների պատմավիպասանության առատ հունձքի մեջ:

Որքան էլ տարօրինակ է, Ս. Խանզադյանի հարուստ գրական ժառանգությունը, որի դրսենորումներից շատ շատերը մեր գրականության մնայուն արժեքներից են, ըստ արժանվույն չի գնահատվել և չի արժենորվել, և մեր գրականագիտական միտքը մեծ պարտք ունի անվանի գրողի, հասարակական գործչի, արցախյան ազատամարտի ակունքներում կանգնած անխոնջ հայրենասերի հանդեպ: ճիշտ է, նրա մասին գրվել են ոչ ծավալուն ուսումնասիրություններ, առանձին հոդվածներ ու գրախոսություններ (Ս. Աղաբարյան, Յր. Թամրազյան, Ս. Արզումանյան, Ս. Սարինյան, Վ. Եփրեմյան, Կ. Աղաբեկյան, Մ. Գիլավյան, Լ. Ներսիսյան, Վ. Աղաբարյան և այլք), որոնք, սակայն, բավարար չեն անվանի արձակագրի գրական հարուստ ժառանգության արժենորման, կերպարակերտման ու պատկերավորման յուրահատկությունների բացահայտման, ստեղծագործական դիմանկարի ամբողջացման համար:

Գ. Յայրյանի «Սերո Խանզադյան» գրքույկը լույս է տեսել գրողի ծննդյան 60-ամյակի կապակցությամբ և, բնականաբար, ավելի շատ հոբելյարին մեծարելու, նրա ստեղծագործական ուղին համառոտ կերպով ներկայացնելու, քան գիտական համակարգված ուսումնասիրության փորձ է: Թ. Պետրոսյանի «Ս. Խանզադյանի պատմական արձակը» թեկնածուական ատենախոսությունը, որը 1986թ. լույս տեսավ առանձին հրատարակությամբ, առաջին լուրջ փորձն է ի մի բերելու գրողի պատմավիպասանության նվաճումները, ժամանակի գրականագիտական մտքի պահանջների շրջանակներում արժենորելու դրանք: Սակայն այն նույնպես ամբողջական պատկերացում չի տալիս անվանի գրողի պատմավեպերի մասին. նախ՝ չի ընդգրկում Ս. Խանզադյանի բոլոր պատմավեպերը, և երկրորդ՝ տուրք է տալիս, բնականաբար,

<sup>17</sup> Սարինյան Ս. , Րաֆֆի, Երևան, 1975, էջ 86:

պատմական ժամանակի, նրա շարժման, պատմության փիլիսոփայության բացահայտման ու մեկնաբանման՝ ժամանակաշրջանին բնորոշ մեթոդներին ու եղանակներին<sup>18</sup>:

Գեղարվեստական առաջընթացի ընդհանուր շղթայում Ս. Խանզադյանի պատմավեպերին անդրադարձել է նաև Ս. Արզումանյանը: «Սովետահայ վեպը» մենագրության երրորդ գրքում անվանի գրականագետն անդրադարձել է «Մխիթար Սպարապետ», «Խոսեֆ, Յայաստանի լեռներ», «Թագուհին հայոց» վեպերին՝ դրանք արժեկությունը 1960-80-ական թվականների պատմավեպի ընդհանուր համապատկերում: Ս. Արզումանյանը գրում է. «Մասշտաբային մտահղացումները գրողին պարտադրում են վիպական բարդ կառուցվածք: Իսկ մեծաքանակ հերոսները, նրանց կապերի ու զանազան հարաբերությունների «կարգավորումը» կառուցվածքային հավելյալ բարդացումներ էին պահանջում: Վիպասանը հիմնականում հաջողությամբ է լուծել ստեղծագործական կառուցվածքի հարցը՝ թեմատիկ բազմազանությունը և սյուժետային տարբեր ճյուղավորումները ենթարկելով գաղափարական-գեղարվեստական մի հիմնարար նպատակ ուղղվածության՝ պատմության ու ժամանակի գլխավոր միտումների բացահայտմանը»<sup>19</sup>:

Ս. Արզումանյանը Ս. Խանզադյանի պատմավեպերի հաջողությունը պայմանավորում է պատմական անցյալի ու ներկայի գուգահեռներում նմանություններ տեսնելու ու դրանք գեղարվեստական բարձր վարպետությամբ ներկայացնելու մեջ՝ վիպասանի համար ուղենիշ համարելով «պատմական կերպարը կատարյալ դարձնելու համար պետք է «խորիրդակցել ոչ միայն դարերի, այլև այսօր ապրող ժողովրդի հետ» կարգախոսը»<sup>20</sup>:

Ուշագրավ դիտարկումներով են հանդես եկել նաև Ս. Աղաբարյանը, Վ. Մնացականյանը, Ս. Սարինյանը, Զ. Ղուկասյանը, իսկ Յո. Թամրազյանը «Մխիթար Սպարապետը» գնահատել է որպես ուղենիշային վեպ մեր գրականության համար. «Մեր զարգացող գրականության համար ուղենիշային երկ է ժամանակակից կյանքի մասին գրած հաջող վեպերի հեղինակ Ս. Խանզադյանի «Մխիթար Սպարապետը», որն այսօր լայն տարածում է գտել ու ձեռքից ձեռք է անցնում»:

<sup>18</sup> Տես՝ Յայրյան Գ., Սերո Խանզադյան, Երևան, 1975, Պետրոսյան թ., Սերո Խանզադյանի պատմական արձակը:

<sup>19</sup> Արզումանյան Ս., Սովետահայ վեպը, գ.3, Երևան, 1986, էջ 147:

<sup>20</sup> «Ավանգարդ», 1981, № 54:

Ս. Խանզադյանի՝ պատմության թեմայով գրված ստեղծագործություններին անդրադարձում է նաև երիտասարդ գրականագետ Վ. Աղաբաբյանը իր «Մերո Խանզադյանի վիպակներն ու պատմվածքները» թեկնածուական ատենախոսության մեջ, որտեղ, ճիշտ է, չեն քննարկվում պատմավեպերի հետ կապված հարցեր, բայց արվում են հետաքրքիր դիտարկումներ, մասնավորապես՝ արձակագրի փոքր կտավի ստեղծագործություններում («Վարք հարանց» պատմվածքների շարքում և «Վեց գիշեր», «Մեռածները հիշում են», «Արաքսը պղտորվում է» վիպակներում) անդրադարձ է կատարվում պատմության տրամաբանության բացահայտման այն մեթոդներին ու սկզբունքներին, որոնք խորությամբ դրսնորվեցին հետագա շրջաններում ծնված պատմավեպերում:

«Ժամանակը Մերո Խանզադյանի պատմավեպերում» ուսումնասիրության առարկան Ս.Խանզադյանի գրական հարուստ ժառանգության ծանրակշիռ նաև կազմող պատմավեպերն են («Մխիթար Սպարապետ», «Խոսե՞ք, Յայաստանի լեռներ», «Թագուհին հայոց», «Շուշի», «Անդրանիկ», «Գարեգին Նժդեհ»), նրանց մասին գրված ուսումնասիրություններն, նպատակը՝ անվանի գրողի պատմագեղարվեստական արձակում ժամանակի կատեգորիայի բնութագրումը, ժամանակի խանզադյանական սրված զգացողության բացահայտումը, առաջադիր խնդիրը՝ մերօրյա տեսանկյունից պատմության փիլիսոփայության, անցյալի դասերի խանզադյանական մեկնությունների իմաստավորումը: Եվ, քանի որ ժամանակն ու տարածությունը անքակտելիորեն կապված են միմյանց հետ, փորձում ենք Ս. Խանզադյանի պատմավեպերում ներկայացնել նրանց միասնականությունը, որն, ինչպես նշվել է, ունի կառուցվածքային գործառույթներ և իր մեջ ներառում է գեղարվեստական երկի ոչ միայն բովանդակային, այլև ծևակառուցվածքային տարրերը, իր ազդեցությունը թողնում կոմպոզիցիայի և սյուժետային շղթայի կառուցվածքի տրամաբանության ծևակորման վրա:

Ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ («Ազատագրական պայքարի նոր ալիքը», «Ողբերգականն ու հերոսականը», «Առասպելականն ու իրականը»՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Առաջին գլխում անդրադարձել ենք Ս. Խանզադյանի այն վեպերին, որոնց գործողությունները կատարվում են 18-րդ դարի առաջին և վերջին քառորդներում՝ ընդգրկելով տարածական բավականին լայն շրջանակներ («Մխիթար Սպարապետ», «Շուշի»):

ճիշտ է, «Մխիթար Սպարապետ» և «Շուշի» վեպերում նկարագրվում են 18-րդ դարի առաջին և վերջին քառորդներին Սյունյաց լեռնաշխարհում և Արցախում տեղի ունեցած իրադարձությունները, բայց դրանք ծավալվում և զարգանում են Հայաստանի ամենատարբեր գավառներում, դուրս գալիս նրանց սահմաններից, հասնում մինչև Թուրքիա և Պարսկաստան, Մերձավոր Արևելք, Ապշերոնյան թերակղզի, Հյուսիսային Կովկաս, Սանկտ-Պետերբուրգ և այլուր:

Ինչպես վերոհիշյալ, այնպես էլ Ս. Խանզադյանի մնացած վեպերում ժամանակը հանդես է գալիս ամենատարբեր չափումներով, իր «բաց» և «ներփակ» դրսևորումներով. մի դեպքում համընկնում են իրական ու պատմական ժամանակները, մի այլ պարագայում մենք տեսնում ենք ժամանակի տարբեր հոսքերը: Այդ վեպերում գործողությունների ծավալման ընթացքը մեծապես պայմանավորված է ժամանակի գործոններով, որոնք որոշում են շարժման ուղղությունները, առաջ քաշում ազատագրական պայքարի՝ ժամանակի զգացողությամբ օժտված անհատների՝ գոյապայքարի առաջնորդների ու ազատամարտիկների, համախմբում ժողովրդի ներուժը, բացահայտում նրա թաքնված հնարավորությունները, անկոտրում ոգին ու կամքը:

Առաջին գլխում ընդգծվում է ժամանակի ու տարածության փիլիսոփայական հասկացությունների որոշիչ դերը անհատականությունների ձևավորման, հոգեկերտվածքի կազմավորման գործում: Շեշտվում է, որ նշված վեպերի կերպարները ժամանակի ծնունդ են և առաջնորդվում են նրա պահանջներին համապատասխան: Ժամանակաշրջանն է նրանց հերոսացնում, մղում անձնազոհության, առնում իր տարերքի մեջ:

Երկրորդ գլխում անդրադարձել ենք Յայոց մեծ եղեռնին ու նրան հաջորդած տարիներին կատարված իրադարձությունները պատկերող վեպերին(«Խոսե՛ք, Հայաստանի լեռներ», «Անդրանիկ», «Գարեգին Նժդեհ»), որոնց մեջ, ճիշտ է, գործողությունները ծավալվում են ժամանակային ոչ մեծ հատվածում (անցյալ դարի երկու տասնամյակներ), սակայն սփռվում են դեպի պատմության խորքերը՝ բացահայտելով այն իրողությունը, որ մեր բարբարոս հարևանները մի քանի տասնամյակում չեն, որ այդպիսին են դարձել: Նրանք հենց այդպիսին էլ եղել են՝ արյունարբու, թալանչի, նենգ, ստոր ու խաբերա:

Նշված վեպերում իրադարձությունները ծավալվում են ժամանակի աշխարհաքաղական զարգացումների ընդհանուր համապատկերում,

աշխարհագրական տարբեր հարթություններում և ներկայացվում են մեր գոյապայքարի ընդհանուր տրամաբանության ու նրա շարունակականության տեսանկյունով:

Ս.Խանզադյանը արցախյան գոյապայքարի ակունքներում կանգնած մեր մեջ երախտավորներից է, և նրա վեպերում արծարծված ու մեկնաբանված պատմության դասերը հույսը սեփական ուժերին ապավինելու, համազգային հերոսությունը պահպանելու, մարտահրավերներին համախմբված դիմակայելու իմաստուն պատգամներ են, որոնք խիստ արդիական են մեր օրերում:

Երրորդ գլխում անդրադարձել ենք հայ պատմավիպասանության գլուխգործոցներից մեկին՝ «Թագուհին հայոց» վեպին, որտեղ գրողը վարպետորեն համադրում է հայ դասական ու եվրոպական ժամանակակից վեպի ավանդույթները, ընդլայնում նրա տարածածամանակային ընդգրկումների սահմանները, համադրում առասպելականն ու իրականը:

Վեպի նյութն ընդգրկում է մ.թ.ա. Երկրորդ հազարամյակում հայրենի բնօրրան Հայասա Երկրում կատարված իրադարձությունները: Յեղինակի նպատակը մեր արմատների հայտնաբերումն է, այն տեսակետի հերքումը, որ Եղել է Ուրարտական պետություն. «Մեր լեզուն,- գրում է Խանզադյանը,- ճշգրիտ տեղեկություններ է տալիս մեր հարևան իին աշխարհների մասին (Բաբելոն, Եգիպտոս, Ասորեստան), բայց մեր լեզվում նույնիսկ շշուկ չկա այսպես կոչված Ուրարտու պետության անվան մասին: Ինչու չկա: Որովհետև Ուրարտու չի Եղել: Ինչպես կարող էր 3-4 հարյուր տարի որևէ պետություն Եղած լիներ և ոչ մի հետք չքողմներ լեզվամտածողության մեջ»<sup>21</sup>:

Ս. Խանզադյանը վարպետորեն է ներկայացնում ժամանակի շարժումը, գեղարվեստորեն պատճառաբանում այն վարկածը, որ Ուրարտուն Հայաստանի հեթանոսական շրջանի փուլերից մեկն է միայն: Հայասա աշխարհն իր հզորությամբ ու հարստությամբ Արևելքի քաղաքակրթությունների կենտրոնն է Եղել, այնտեղ են խաչաձևել մշակութային ճանապարհները, այնտեղ են ստեղծվել իին աշխարհի հեթանոսական գլուխգործոցները:

Ժամանակի սուր զգացողությունը հեղինակին հնարավորություն է տալիս վերակենդանացնել հեթանոսական շրջանի կոլորիտը, հարուստ գույներն ու երանգները, բարքերն ու սովորությունները, բացահայտել պատմական այն խոշոր տեղաշարժերը, որոնք վճռորոշ նշանակություն ունեցան հետագա ընթացքի վրա:

<sup>21</sup>.«Գրքերի աշխարհ», 1982, 20 սեպտեմբերի:

«Թագուհին հայոց»-ը ճիշտ ժամանակին գրված ստեղծագործություն է առաջին հերթին այն առումով, որ բացահայտում է պատմական այն կապերը, որ գոյություն ունեն Հայաստի և Հայաստանի միջև, օբյեկտիվ փաստարկումներով ժխտում հարևան քոչվոր ու խաշնարած ցեղախմբերի՝ մեր ծագումնաբանության վերաբերյալ բարբաջանքները։ Եվ միայն այն հանգամանքը, որ Հայոց երկրի աշխարհագրական տարբեր տարածաշրջաններում մինչև օրս էլ պահպանվում են «Թագուհին հայոց» վեպում ներկայացված հեթանոսական ծիսակատարություններից, կենցաղավարության, ավանդույթների բնորոշ կողմերից շատերը, վկայում են այն մասին, որ հենց Հայաստան է եղել մեր բնօրրանը, որ այնտեղ են ձևավորվել մեր տեսակին, բնավորությանը, մեր ապրելակերպին բնորոշ բազմաթիվ հատկանիշներ։

Եզրակացություններում ներկայացրել ենք ուսումնասիրության արդյունքները։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ  
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ԱԼԻՔԸ

Ա/ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ ԲԱՆԱՊԱՐՅԻՆ

Յուրաքանչյուր ժամանակաշրջան, պայմանավորված հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական կոնկրետ հանգամանքներով, առաջադրում է պատմական անցյալի ճանաչման, արժեորման ու փիլիսոփայական իմաստավորման իր մեթոդներն ու եղանակները:

Այս առումով ուշագրավ են անհատի պաշտամունքի հաղթահարումից հետո ծավալված զարգացումները, որոնք եապես փոխեցին հասարակական մտածողության կարծրատիպերը, ձևավորեցին նոր արժեհամակարգեր, ճշգրտեցին կողմնորոշման չափանիշները:

Գրականություն վերադարձավ նախորդ տասնամյակներում այնտեղից դուրս մնացած մարդ՝ իր հոգսերով ու մտահոգություններով, աշխարհընկալման իր սկզբունքներով ու հավաստիացումներով: Գրականություն եկավ նոր հերոս, որը ցանկանում էր ունենալ իր տոհմաբանությունը, մերձենալ իր ակունքներին, ճանաչել իր պատմությունը, կարդալ նրա ողբերգական ու հերոսական էջերը: Խրուշչովյան «ձնհալը» ոչ միայն ջարդեց նախորդ տասնամյակների կարծրատիպերը, այլև բացեց ավագ սերնդի, այսպես ասած, երկրորդ շնչառությունը, մղեց ստեղծագործական նոր որոնումների, իրականության ու պատմության առեղջվածների ու խնդիրների համարձակ հետախուզումների: Պատմության դասերի նորովի ընթերցումները գրողների առջև բացեցին դեռևս չբացահայտված ստեղծագործական չյուրացված տարածքներ, ազգային-ազատագրական պայքարի նորանոր էջեր:

Պատմության դասերը սկսեցին մեկնաբանվել նաև ժողովրդի հոգևոր մաքառումների կտրվածքով:

Գրողները պատմությանն անդրադառնում էին ժամանակի բոլոր չափումներով:

Այս ամենը չէր կարող, բնականաբար, իր դրական ազդեցությունը չքողնել նաև գրական-գեղարվեստական զարգացումների վրա, ի հաշիվ ժամանակային ծավալումների՝ չընդլայնել գեղարվեստական ընդգրկումների տարածքները:

Արդեն 1950-ականների կեսերից Գ. Մահարու արտահայտությամբ «ճակատային գրոհ» սկսվեց այն ուղղություններով, որտեղ ճնշումն ավելի ուժեղ էր եղել

գրապատմական առաջընթացի ստալինյան շրջանում: Գաղափարախոսական կապանքներից ու զսպաշապիկներից ազատագրվող գեղարվեստական միտքը սկսեց մշակել իրականության արտացոլման նոր մոտեցումներ ու սկզբունքներ, վերագնահատել պատմական անցյալի վերաբերյալ ավանդական ըմբռնումները:

Պատմության նկատմամբ համաժողովրդական հետաքրքրության բարձրացումը, ինչպես գրում է գրականագետ Ս. Պետրովը, պայմանավորված էր «հասարակական հոգեբանության մեջ կատարվող տեղաշարժերով, ժամանակների կապի վերականգնման պահանջի սրացումներով»<sup>22</sup>, ինչի հետևանքով «պատմությունը, պատմական հիշողությունը, ժողովրդական բնավորության պատմական արմատները բառացիորեն իշխեցին 1960-ականների և 1970-ականների գրական մտքի վրա»<sup>23</sup>:

Պատմական հիշողության կորուստը վտանգավոր է ընդհանրապես մարդկության, մասնավորապես փոքրաքանակ ժողովուրդների համար, որովհետև պատմությունը «հզոր լուսարձակի պես պետք է լուսավորի» (Պ. Սևակ) ժողովուրդների անցնելիք ճանապարհը և ոչ թե վահանի պես պաշտպանական գենք հանդիսանա նրանց համար: Պատմությունն է ճշգրտում, թե որտեղից է գալիս տվյալ ժողովուրդը, դեպի ուր է գնում. ասել է թե՝ ինչպես ժողովուրդներին, այնպես էլ յուրաքանչյուր անհատ մարդու մեծապես հետաքրքրում են իրենց արմատները, ծագումնաբանության հարցերը, նախնիների հերոսական գործերն ու թույլ տված սխալները: Այս ամենը բոլոր ժամանակներում խիստ կարևոր է եղել մեր ժողովրդի համար, որովհետև մեր բնօրրանը միշտ էլ շրջապատված է եղել ու է «փալանած եզան բութ կճղակներով հանդ ու հորովել տրորող»<sup>24</sup> խաշնարած ցեղախմբերով, որոնք այս էլ քանի-քանի դար շարունակ կասկածամտության թունավոր սերմեր են տարածում մեր ծագումնաբանության, հոգևոր ինքնության վերաբերյալ: Այս իսկ պատճառով, 1950-ական թվականների կեսերից սկսած, հայ գրականությունն առաջնային տեղ է հատկացնում ազգային ինքնության բացահայտումներին. «Հարցն ամենևին էլ չի վերաբերում ոչ ուրիշներին հակադրվելուն, ոչ էլ ինքնամեկուսացմանը: Ըստ էության, փիլիսոփայական առումով մենք խնդիր չունենք մեր ինքնությունը հաստատելու, ինչպես մեր հարևանները, որոնք մոլորվել են թուրք կամ աղվան երկընտրանքի միջև: Պատմության և գրականության մեջ մեր խնդիրը հայի տեսակի հարատևման գաղտնիքի և ազգային հոգեբանության բացահայտումն է՝ անվերջ փոփոխվող քարտեզի վրա մեր կայուն տեղն ունենալու նպատակով: Խնդիրն

<sup>22</sup> Պետրով Ս., Русский советский исторический роман, М., 1980, стр. 456.

<sup>23</sup> «Вопросы литературы», М., 1980, № 7, стр. 60

<sup>24</sup> Սահյան Յ., Երկերի ժողովածու 2 հատորով, հ. 2, Երևան, 1982, էջ 114:

ունի իր բաղադրիչները, որոնք վերաբերում են առասպելական ժամանակներին ու պատմությանը, եղեռնին ու պատերազմներին, ազգային հոգեբանությանն ու ճակատագրին, կրոնին ու փիլիսոփայությանը»<sup>25</sup>:

Գրականության գերխնդիրը «մշակութային սեփական անձնագրի» ստեղծումն էր, «անվերջ փոփոխվող քարտեզի» վրա մեր գույնն ունենալն ու մեր հասցեի ամրագրումը, «հայոց անվախճան հույսի, հավերժորեն վերանորոգվելու և ընդհատված պատմությունը նորից ու նորովի սկսելու ազգային առանձնահատկությունը, որն ի վերջո դառնում է ազգային ճակատագիր»<sup>26</sup>:

1950-ականների վերջերին և 1960-ականների սկզբներին լույս տեսան հայ ժողովրդի պատմական անցյալին նվիրված տասնյակ վեպեր ու վիպակներ (Ստ. Զորյան «Վարազդատ», Մ. Արագի «Խսրայել Օրի», Գ. Մահարի «Այրվող այգեստաններ», Զ. Դարյան «Արծիվ Վասպուրականի», «Սայաթ Նովա», Ս. Այվազյան «ճակատագիրն հայոց», Ստ. Ալաջաջյան «Եղեգները չխոնարհվեցին», Յր. Քոչար «Նահապետ», «Սպիտակ գիրք» և այլն):

«ճակատային գրոհը» շարունակվեց 1970-80-ական թվականներին (Յ. Խաչատրյան «Էրեբունի», «Տիգրան Մեծ», «Արտավազդ», Պ. Զեյթունցյան «Արշակ Երկրորդ», Միքայել Շաթիրյանի «Արծաթե դար», Վ. Գրիգորյան «Դար կորստյան» և այլն):

Բնականաբար վերոհիշյալ ոչ բոլոր ստեղծագործություններն էին աչքի ընկնում պատմական ժամանակի գեղարվեստորեն բարձր արտացոլմամբ, խորքային ներթափանցումներով: Սակայն կարևոր դա չէր, այլ այն, որ պատմության թեման, ազգային-ազատագրական պայքարների պատմությունն արդեն դադարել էր «տարու» լինելուց:

Եդ. Զրբաշյանն այդ շրջանի համար բնորոշ է համարում պատմության «աշխարհագրական քարտեզի» ընդլայնումը, գեղարվեստական նոր տարածքների հայտնաբերումը, պատմության ընթացքի՝ ժամանակակից մոտեցումներով վերահիմաստավորումը:

Գլխավոր խնդիրը պատմության խորքերում ազգային դիմագծի փնտրությն էր այն պարզ պատճառով, որ այդ դիմագիծը անցյալ տասնամյակներում էապես աղճատվել էր, կորցրել իր բնորոշ կողմերը, ազգային ոգու և հիշողության վերագտնումը, ժողովրդի

<sup>25</sup> Քալանթարյան Ժ., Ժամանակակից հայ արձակի վիճակն ու խնդիրները, «Գրական թերթ», 2014, №.16:

<sup>26</sup> Նույն տեղում:

մղած հերոսամարտերի, հոգևոր մաքառումների նորովի իմաստավորումը, հանուն հայրենյաց նահատակված, եղեռնի անմեղ զոհերի ոգեկոչումը:

Մեր պատմավիպասանները ազգային դիմագծի, ոգու, տեսակի փնտրութը հասցնում էին մինչև ակունքները՝ մինչև Յայսա, Ուրարտու, Երեբունի և Էպոս, Ավարայրից մինչև Սարդարապատ և Շուշի, ճանապարհ, որը մեր պատմությունն անընդհատ վերանորոգելու, մեր հիշողությունը վառ պահելու, մեր խախտված շնչառությունը կարգավորելու, ողնաշարը շտկելու միակ ուղին է:

Դա «ճանապարհն հայոց»-ն է, որի յուրաքանչյուր հանգրվանում դրսնորվել է մեր ժողովրդի մարտական ու շինարար ոգու ողջ եռթյունը, ապրելու, ստեղծելու, արարելու՝ մեր տեսակին յուրահատուկ հոգեբանությունը:

Պատմության թեման Ս. Խանզադյանին հոգեհարազատ է եղել դեռևս ստեղծագործական առաջին քայլերից: Եվ պատահական չէ, որ հետագայում նա գրում է. «Մեր ժողովրդի մեծ պատմությունը կենարար աղբյուրի նման սնում է իմ գրական ստեղծագործությունը»<sup>27</sup>:

Պատմական թեմայով գրված նրա առաջին գործերը «Վահրամ Որոտնեցի» (1934-1940) չափածո և «Առան իշխան»<sup>28</sup> արձակ ստեղծագործություններն են, որոնք գրապատմական արժեք ունեն՝ գրողի ստեղծագործական դիմանկարի ամբողջացման առումով:

Առավել ուշագրավ են 1950-ական թվականներին գրված «Վարք հարանց» շարքը, «Վեց գիշեր», «Մեռածները իրամայում են», «Արաքսը պղտորվում է» վիպակները, որտեղ արդեն երևում է ապագա պատմավիպասանի ձեռագիրը, պատմության արժեքունան, պատմական իրադարձությունների գեղարվեստական արտացոլման այն մեթոդներն ու եղանակները, որոնք հետագայում ավելի խորքային ներթափանցումներով դրսնորվեցին պատմավեպերում:

Անդրադարձալով պատմական որևէ կոնկրետ ժամանակաշրջանի՝ գրողն անցյալում կատարված մեծ ու փոքր իրադարձությունները փորձում է ներդաշնակել ներկայում ընթացող դեպքերին, գեղարվեստական տարածություն ներմուծել «պատմական անցյալի այն դրվագները ու երևույթները, որոնցում պահված պատմամշակութային և բարոյահոգեբանական արժեքները, անցյալում իրենց համար ճանապարհ հարթելով, աշխատում են այսօրվա համար»<sup>29</sup>:

<sup>27</sup> “Հայութայուրնա Արմենիա”, 1979, 2, սոր. 100.

<sup>28</sup> Պահպանվում է գրողի արխիվում:

<sup>29</sup> Եփրեմյան Վ., Զգրված գրքի ծանոթագրություններ, էջ 9:

Շարքում ընդգրկված պատմվածքները, ավանդապատումները, զրույցներն ու հուշագրությունները, որոնք գրվել են 1950-60-ականներին, առաջին հերին ուշագրավ են ժամանակային լայն ընդգրկումների և անցյալի, ներկայի ու ապագայի համադրումների տեսանկյունից: Միաժամանակ դրանք պատմության փիլիսոփայության ընկալման, պատմական թեմատիկային անդրադառնալու, գրական վարպետության կատարելագործման հիմանալի միջոց հաղիսացան ապագա պատմավիպասանի համար: Այս շարքում մշակվեցին նաև կոմպոզիցիոն տարբեր հնարքներ, որոնք հետագայում ավելի կատարելագործված կերպեվ օգտագործվեցին մեծ կտավի պատմագեղարվեստական երկերում: «Վարք հարանց» շարքում այդպիսի հետաքրքիր հնարքներից է պատմության նշանավոր դեմքերի «հանդիպումները» դարեր հետո իրենց գործը շարունակողների, իրենց ավանդույթները պահպանողների հետ: Այս առունով ուշագրավ են «Վարք Մաշտոցի» շարքի չորս պատմվածքները: «Լույս հնձանից» պատմվածքում Մեսրոպ Մաշտոցը «հանդիպում է» իր անվանակից գինեգործի հետ: Հնձանի գինեբույր մթնոլորտում Մաշտոցը կրտսեր Մեսրոպին պարզաբանում է զավակներին հայեցի դաստիարակելու, գիտության լույսը տարածելու, անցյալի ճանապարհն այդ լույսով ողողելու անհրաժեշտությունն ու կարևորությունը: Պայծառանում է գինեգործի միտքը, ու նա փնտրում է այն ուղին, այն լույսը, որով ինքը հայ կմնա, ու հայ կմնան նաև իր զավակներն ու թոռները. «Բեր այն սպեղանին, որով ես էլ հայ մնամ, զավակս ել, թռոս էլ, վաղը և հավիտյանս հավիտենից» (VI, 519):

Իր պատմվածքներում Ս. Խանզադյանը ժամանակի տարբեր գուգահեռներում ներկայացնում է սերունդների գենետիկ կապերը, սերնդեսերունդ փոխանցվող պայքարի ոգին և այդ պայքարում՝ հոգևոր մաքառումների անգնահատելի դերը:

Հարյուրամյակների իր ճանապարհին հայ ժողովուրդը գոյատևել է ոչ միայն հերոսաբար պայքարելով ու փառավոր հաղթանակների բազմաթիվ էջեր գրելով, այլ նաև ստեղծագործ մտքի խոյանքներով ու լույսի պաշտամունքով: Բրուտ Առաքելի հետ հանդիպման ժամանակ Մաշտոցն իր պատգամն է հղում գալիք սերունդներին. «Ես գիր տվի ձեզ, որ լույս ունենանք ձեր տանն ու հոգում: Բայց կմարի լույսը, եթե դուք մոռանաք սուրն ու սուր բռնելու գործը: Սուրն ու գիրը ձեզ պաշտպան» (VI, 544):

Ս. Խանզադյանը Մաշտոցին ներկայացնում է որպես ոգեղեն լույսի և ուժի խորհրդանիշ, առաքեալ, գինական և հասարակ շինական («Քարահեղձի թգենին», «Խոսում է մագաղաթի պատառիկը»):

Մի շարք պատմվածքներում Ս. Խանզադյանը հետադարձ հայացք է նետում դեպի մեր պատմության վաղնջական ժամանակները, անդրադառնում հայ ժողովրդի կազմավորման, հարազատ բնօրրանում իր պատմության կերտման, միասնության արմատավորման, այլազան քոչվոր ցեղերի դեմ մղված պայքարի խնդիրներին, որոնք հետագայում ավելի լայնամասշտաբ ընդգրկումներով արտացոլվեցին «Թագուհին հայոց» վեպում:

Պատմվածքներում ներկայացված ավանդույթներից, բնապատկերներից շատերը «Թագուհին հայոց» վեպում բացահայտվում են նոր կողմերով, նոր գույներով ու նրբերանգներով, նպաստում կերպարների կերտման, նրանց ժամանակների համապատկերում ավելի բազմակողմանիորեն ներկայացնելու հեղինակային մտահաղացումների իրականացմանը:

«Վարք հարանց» շարքի պատմվածքներում Ս. Խանզադյանն անդրադառնում է ժողովրդի մարտական ոգու պահպաննան, «մատաղի գառան» հոգեբանության հաղթահարման, չարին չարով հակադարձելու՝ այսօր էլ օրախնդիրը հարցերին, որոնք լայն ընդգրկումներով հետագայում արտացոլվեցին հայոց Մեծ Եղեռնի թեմայով գրված «Մեռածները հիշում են», «Վեց գիշեր» և հատկապես «Խոսեք, Յայաստանի լեռներ» ստեղծագործություններում («Ծովի երգը», «Փշե զրույց», «Ուղեցույց»): Սերունդների «հանդիպման» կոմպոզիցիոն հնարքը հեղինակն օգտագործել է հետագայում գրված «Արաքսը պղտորվում է» վեպում, որտեղ մանուկ Առաքելը «հանդիպում է» իր նախապապին՝ Առաքել Դավթիթեցի պատմագրին, որն օգնում է նրան հասկանալու 17-րդ դարի ողբերգական ու հերոսական դեպքերն արտացոլող իր մատյանի խորհուրդներն ու պատգամները:

Պատմվածքներում արտացոլված պատմահայեցողության ելակետային գրույցներից շատերն իրենց զարգացումն ունեցան «Մխիթար Սպարապետ» ու «Շուշի» վեպերում:

Ս. Խանզադյանի «Մխիթար Սպարապետ» պատմավեպը լույս է տեսել 1961 թվականին, երբ ժողովրդի ինքնագիտակցության մեջ արդեն հասունանում էին Մեծ Եղեռնի դատապարտման, հայ դատի պաշտպանության գաղափարները: Մոտենում էր Եղեռնի 50-ամյակը, հասարակության մեջ ձևավորվում և ամրապնդվում էին հայրենասիրական նոր գաղափարներ, անհատի պաշտամունքի մամլիչ կապանքներից աստիճանաբար ազատագրվող ստեղծագործական միտքը ինքնադրսելորման նոր ուղիներ, մեթոդներ ու ձևեր էր որոնում:

Վեպի գաղափարը, սակայն, գրողը հղացել է ավելի վաղ. «Իմ ռազմաճակատային տետրակների մեջ մնացել է քառասուներկու թվականին արված մի գրառում, որտեղ նշված են Դավիթ Բեկ, Մխիթար Սպարապետ, Թորոս իշխան և այլ անուններ: Դրանք ինձ հիշեցնում են, որ տակավին Վոլխով գետի ափին՝ նեղ պլացդարմում, թշնամու կրակային կետերից յոթանասուն-հարյուր մետր հեռավորության վրա ես մտահղացել եմ վեպ գրել այդ թեմայով՝ հայ ժողովրդի ազատագրական պայքարի թեմայով՝ ընդդեմ թուրք նվաճողների, որ այդքան չարիք են պատճառել մեր ժողովրդին:

Հայտնի է, որ ֆաշիստական Գերմանիային այս կամ այն կերպ օգնում էր Թուրքիան: Գուցե հին թշնամու ակտիվացումն էր դրդիչ եղել, որ ես անդրադառնամ հենց այդ՝ 18-րդ դարի առաջին քառորդի հայ ժողովրդի կյանքին, այն պատերազմներին, որ մղում էր հայ ժողովուրդը թուրք հափշտակիչների դեմ: Ավելացնեմ, որ Մխիթարյան ժամանակաշրջանը հոգեբանորեն խիստ համընկնում էր Հայրենական պատերազմի հետ»<sup>30</sup>:

Վեպի հղացման ու ստեղծման ժամանակների ու 18-րդ դարի առաջին քառորդի իրադարձությունների նմանությունների համատեքստում է ձևավորվում թեմայի զարգացման տրամաբանությունը:

ճիշտ ժամանակին հղացված ու գրված «Մխիթար Սպարապետ»-ի գործողությունները տեղի են ունենում 18-րդ դարի առաջին քառորդում, երբ հայկական ազատագրական շարժումները նոր թափ ստացան ու մտան զինված պայքարի շրջան: Նորից սկսեցին շրջանառվել ու գործողության մեջ դրվել Խսրայել Օրու՝ Ռուսաստանի օգնությամբ թուրքական ու պարսկական լծից ազատագրվելու թերևս ոչ իրատեսական ծրագրերը:

Ժամանակը թելադրում էր խաղի նոր պայմաններ ու կանոններ: Ռուսական կայսրությունը մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում ապշերոնյան նավթառատ տարածքների նկատմամբ, որոնց հանդեպ որոշակի նկրտումներ ունեին նաև տարածաշրջանում ընդգծված ազդեցություն ունեցող գերտերությունները, մասնավորապես՝ Անգլիան ու Գերմանիան: Վերջիններս ամեն կերպ սատարում էին Թուրքիային՝ նրա մեջ տեսնելով Ռուսաստանի ազդեցության՝ Այսրկովկասում ամրապնդման ու տարածման խոչընդոտ:

Ռուսական զորքերն արդեն հայտնվել էին կասպիական ափերում, բացի այդ Պարսից աշխարհում սկսել էին խռովություններ, խիստ ակտիվացել էին հատկապես

<sup>30</sup> Խանզադյան Ս., Կեսամատենագիտություն, Երևան, 1985, էջ 29:

աֆղանները, որոնք ասպատակեցին և 1722 թվականին գրավեցին Իրանի մայրաքաղաք Սպահանը՝ թուլացնելով Սեֆյանների ազդեցությունը ինչպես Իրանում, այնպես էլ տարածաշրջանում: Հասունացել էր զինված պայքարի ելնելու պահը, եկել էր իրանական խաների ու օսմանյան թուրքերի, երկրում անարգել ասպատակող զանազան ավազակախմբերի դեմ համաժողովրդական շարժում սկսելու ժամանակը: Շարժման կենտրոնները Սյունյաց աշխարհն ու Արցախն էին, որոնք դարեր շարունակ անարիկ պատճեց են եղել դեպի Արևոտք տարածվելու նկրտումներ ունեցող ասպատակիչների ճանապարհին: Բազմաթիվ հորդաներ են ջախջախվել՝ բախվելով Սյունիքի ու Արցախի անարիկ լեռներին, իրենց մաշկի վրա զգալով լեռնեցիների ուժը: Սյունյաց աշխարհում բռնկված ազատագրական շարժման մասին մեզ հասած հիմնական սկզբնաղբյուրը 18-րդ դարի կեսերին Մխիթարյան վանական Դուկաս Սեբաստացու շարադրած պատմությունն է՝ «Ընտիր պատմութիւն Դավիթ Բէգին և պատերազմաց հայոց Խափանու, որ եղև ընդդեմ թուրքաց» վերնագրով: Դ. Սեբաստացու համար աղբյուր են ծառայել 1722-28 թվականների Սյունիքի ապստամբության մասնակից Ստեփանոս Շահումյանի և շարժման մի քանի այլ մասնակիցների պատճառ հուշերը: Այդ հուշերում Ստ. Շահումյանը, որպես շարժման նախաձեռնող, վրաց Վախթանգ թագավորի որդի Շահնավազին (Բակուրին) ներկայացնում է Ղափանի 50 տանուտերերի կեղծ կնիքներն ու ստորագրությունները կրող մի դիմում՝ խնդրելով Սյունյաց երկիր ուղարկել վրացական բանակի իրամանատարներից մեկին՝ սկսված շարժումը դեկավարելու և երկիրը թշնամիներից պաշտպանելու համար: Միամտորեն ակնկալվում էր նաև վրացական զինուժի օգնությունը: Մի խումբ զինվորականների հետ Սյունիք է ժամանում Դավիթ Բէկը՝ հնուտ ու բազմաթիվ մարտերում կոփված մի զորական, ում անունը քաջ հայտնի էր նաև թուրքական ու պարսկական զինվորական շրջաններում: Օժտված լինելով ռազմավարական ու կազմակերպչական բարձր հմտություններով, իրազեկ լինելով ուժերի հարաբերակցությանը, հակառակորդի մարտավարության եղանակներին ու մեթոդներին՝ Դավիթ Բէկը կարողացավ կարճ ժամանակամիջոցում համախմբել Սյունյաց երկրի ցաքուցրիվ ուժերին, համագործակցելով արցախյան զորագնդերի հետ, տարածաշրջանը մաքրել պարսիկներից ու թուրքերից, իր շուրջը համախմբել հայ մելիքներին: Դավիթ Բէկի առաջին հարվածը Ղարաչողու կոչվող ցեղախմբին էր, որը լուրջ խոչընդոտ էր հայկական զինված ուժերի միավորնան ու համագործակցության ճանապարհին: Զախջախելով ցեղախմբին՝ Բէկն այնուհետև երկրի սահմաններից դուրս է շպրտում նաև Օրուգիքի և Զիվանշիր ցեղերի միավորված

ավազակախմբերին: Այդ ընթացքում Դավիթ Բեկի խիզախ գորավարներից մեկը՝ Մխիթար Բեկը հանկարծակի հարձակմանը ոչնչացնում է Քյորփալլու ավանում կենտրոնացած հակառակորդի գինված ուժերը:

Սյունյաց և Ավան Յուզբաշու գլխավորությամբ կռվող արցախյան գորքերի հետ Դավիթ Բեկը հաջող մարտեր է մղում Օրդուբաղի, Բարգուշատի, Նախիջևանի խաների դեմ՝ հերոսական մարտերով ազատագրում Սյունիքի ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող հենակետերը՝ Շինուհայրը, Յալիձորը, Խնձորեսկը, Տեղը, Խնածախը, Որոտանը: Սյունիքում Դավիթ Բեկը ստեղծում է հայկական իշխանություն՝ Յալիձոր կենտրոնով, կառավարման բոլոր ինստիտուտներով, կապ հաստատում Ատրպատականում գտնվող Պարսից շահ Թահմազի հետ, ով ճանաչում է նրա իշխանությունը և տալիս դրամ հատելու իրավունք:

Դավիթ Բեկի մահվանից հետո նրա գործը շարունակում է Մխիթար Սպարապետը, ում գլխավորությամբ հայոց գորագնդերը մի շարք փառահեղ հաղթանակներ են տանում պարսիկների ու թուրքերի դեմ:

Պատմական այս ժամանակաշրջանը, որ դարձել է «Մխիթար Սպարապետ»-ի նյութ, բավականին լավ է ուսումնասիրված ու արժենորված հետագա շրջանների պատմագրության ու գրականության մեջ: Ժամանակաշրջանի մասին հարուստ տեղեկություններ են հաղորդում Լեռն, Ռաֆֆին, Աշ. Յովհաննիսյանը, որոնց ուսումնասիրությունները ստեղծագործաբար օգտագործվել են Ս. Խանզադյանի կողմից: Բացի այդ, հետպատերազմյան տարիներին գրողը մի քանի տարի շարունակ հսկայական քանակությամբ նյութեր է հավաքել Սյունիքի գյուղերում: Գրի է առել բազմաթիվ ավանդապատումներ, լեգենդներ, փաստական տվյալներ՝ Դավիթ Բեկի, Մխիթար Սպարապետի, նրանց գինակիցների, հոգևորականների, աշխարհագորայինների մասին: Այդ գործը շարունակել է նաև «Մխիթար Սպարապետի» հրապարակումից հետո: 1978 թվականին այս կապակցությամբ նա գրում է. «Սիրելի մարդկանց հետ ամբողջ կյանքում միասին ենք եղել»<sup>31</sup>: Յետազոտական ու բանահավաքչական մեծածավալ աշխատանքը, Սյունիքի, Արցախի տարածաշրջաններում մարդկանց հետ հանդիպումները էապես նպաստել են, որ գրողը իիննավորված ու փաստարկված կերպով ներկայացնի 18-րդ դարի առաջին քառորդի

<sup>31</sup> «Յայրենիքի ձայն», 1978, № 51:

Ավելի մանրամասն տես՝ Յայկական Սովետական Յանրագիտարան, հատ. 3, Երևան, 1977, Յայ Ժողովողի պատմություն, հատ.3, Երևան, 1989:

իրադարձությունները, ստեղծի դարաշրջանին բնորոշ կերպարներ, կոլորիտային հյութեղ պատկերներ:

Վեպում ծավալվող գործողությունների ընթացքը հեղինակը ներկայացնում է ժամանակային երկու պլանով: Վիպական գործողությունների ներկայում Սյունյաց աշխարհում և Արցախում Հայոց պետականության վերականգնումն է Դավիթ Բեկի և Միհիթար Սպարապետի կողմից, ովքեր, համախմբելով ցաքուցրիվ ուժերն ու վերջ տալով, թեկուզ ոչ ամբողջությամբ, ներիշխանական տարածայնություններին, վերականգնում են պետականությունը, Հալիծոր մայրաքաղաքում ստեղծում պետական կառավարման ինստիտուտներ, կազմավորում միասնական հրամանատարության ենթակայության տակ գտնվող բանակ՝ իր ենթակառուցվածքներով:

Վիպական գործողությունների անցյալը ներկայացվում է պատմական էքսկուրսների միջոցով. անդրադարձ է կատարվում հեռավոր և ոչ հեռավոր անցյալի իրադարձություններին՝ պարսկաթուրքական տիրապետության հաստատում Արարատյան և մի շարք այլ գավառներում, փառահեղ հերոսամարտեր ու հոգևոր մաքառումներ և այլն: Գործողությունների շղթան ներկայացվում է ժամանակային որոշակի հաջորդականությամբ՝ պայմանավորված կոնկրետ ժամանակաշրջանի յուրահատուկ գործուններով: Պատմական էքսկուրսները գուգադրվում են ներկայում տեղի ունեցող դեպքերին ու իրադարձություններին, տեսանելի դարձնում ժամանակի շարժման անընդհատականությունը, պատմական առաջընթացի շարունակականությունը:

Պատմական իրադարձությունները եթե ոչ նույնությամբ, ապա մոտավոր նմանությամբ կրկնվում ու հաջորդում են իրար: Այդ ընթացքի համապատկերում ուրվագծվում էր «ճանապարհն հայոց»-ի համապատկերը, որի ընդհանուր ֆոնին էլ ձևավորվում են վիպական գործողությունները, կերպարների բնութագիրը:

«Միհիթար Սպարապետ»-ի կոմպոզիցիան պայմանավորված է թեմայի զարգացման տրամաբանությամբ: Վեպը բաղկացած է երկու մասից՝ համապատասխանաբար տասնվեց և տասնչորս գլուխներից: Մինչև բուն կոնֆլիկտի ծավալումը Ս. Խանզադյանը ներկայացնում է զինված պայքարի անցնելու անհրաժեշտության հիմքերը, կենսական այն պայմանները, սոցիալական ու աշխարհագրական այն միջավայրը, ուր տեղի են ունենալու գործողությունները և ուրվագծվելու են վեպի հերոսները:

Հայոց ժողովի ավագանու մեջ անասելի ոգևորություն էր առաջացրել Գանձասարի Եսայի Հասան Զալայան կաթողիկոսի սուրբանդակի բերած լուրը. «Ուսւաց Պետրոս

ողորմած թագավորը պատվիրակ է հղել մեզ: «Պատվիրակն արքայական թղթով հասել է Բաքու և շուտով կլինի Գանձասարում: Ուղարկիր քո Երևելիներին, որ հասու լինեն մեզ առաքած արքայական հրովարտակին»<sup>32</sup>: Սա է Մխիթար Սպարապետին պատվիրում Դավիթ Բեկը:

Ժամանակային առումով Ռուսաց թագավորի հրովարտակը զինված պայքար սկսելու ազդանշան էր, որին վեպում հաջորդում են մնացած բոլոր իրադարձությունները: Հայոց Երկրում մեծ ոգևորություն է տիրում. «Բացել է հայոց Երկինքն ու լուսի մի շող է մոտենում մեզ: Եթե մարեց, կմնանք անմխթար» (2-րդ, 4):

Բոլորովին այլ ընթացք ունի ժամանակը Սյունյաց աշխարհում: Նրա գավառներից մեկում՝ Քաշաթաղում, ժամանակը կարծես դուրս է եկել իր շավիղից. «Մի ժամանակ հայարնակ, այժմ բնակչությունից իսպառ դատարկված» Պղնձաքարում, ուր ապաստան են գտել Մելիք Բարխուդարի կողմից հալածված փախստականները, «մորուքավոր, այծե բաճկոններով, կլոր գլխարկներով մարդիկ կիսավայրենիների էին նմանվում: Բոլորն ել նետ ու աղեղ ունեին: Շատերը բորիկ էին, ոմանք՝ գրեթե մերկ: Մխիթարին դիմավորող երկու աժդահանները զինված էին գլուխները գամած մահակներով, նիզակներով ու թրերով: Նրանց հագին այծի մորթուց կարած բաճկոններ էին, մազից գործած խոնջավոր վարտիքներ: Կոպիտ տղամարդիկ էին: Աչքերի սպիտակուցները փայլատակում էին ջահի դեղնակարմիր լուսից: Բայց Մխիթարը նրանց աչքերում ինչ-որ շոյող բան նկատեց ու հասկացավ, որ նրանք իրեն թշնամաբար չեն դիմավորի իրենց ժայռակիոր որջերում» (2-րդ, 7):

Ժամանակն ու աշխարհագրական միջավայրը՝ գործողությունների ծավալման տարածական սահմանները, որոշիչ դեր են կատարում կերպարների բնավորության ձևավորման համար, մշակում են աշխարհընկալման յուրահատուկ սկզբունքներ: Դա ցայտուն կերպով երևում է վեպի հետագա ողջ ընթացքում, հատկապես այն դրվագներում, երբ հեղինակը ներկայացնում է Սյունիքի և Արցախի գորագնդերի վարած մարտերը, նրանց հերոսականությունը, անկոտրում ոգին:

Վեպի առաջին մասի առաջին՝ «Խորհրդավոր քարավանը» գլխում են ուրվագծվում հետագա գործողությունների ընթացքը, որոնք ծավալվում են «բաց» և «ներփակ» ժամանակներում: Այդ ընթացքն ունի իր տարբեր հանգրվանները՝ քրոնոտիպի դրսնորման իր յուրահատկություններով, և «ճանպարհն հայոց»-ի փիլիսոփայության բացահայտման իր տրամաբանությունն ու փիլիսոփայությունը, որի

<sup>32</sup> Խանզադյան Ս., Երկերի ժողովածու վեց հատորով, հ.2, Երևան, 1981:  
Այսուհետև հղումները կնշեն շարադրանքի մեջ:

բացահայտման բանալին Մարաղայի ճակատամարտից առաջ Դավիթ Բեկին համակած մտածումներն են. «Վաղը Մարաղայի դաշտում կորոշվի հայոց մի փոքր աշխարհի բախտը: Կընկնեն ահա իրար հետ տաք-տաք վիճող այս զորապետերից շատերը: Կընկնեն, բայց չեն ընկճվի թշնամու ահից: Այստեղ պետք է խորտակիչ հարված տալ թշնամուն: Եթե նույնիսկ կատարյալ չլինի հաղթանակը, այնուամենայնիվ, նորից ահուդող կգցեն թշնամու սիրտը: Ով կենդանի մնա, նա ականատես կլինի վերջին: Վերջի՞ն, թե՝ սկզբին: Որտե՞ղ է վերջը: Սկիզբը եղավ, վերջը՝ ոչ, չի երևում: Կապրեն այդպես կրվելով, ազգովի դիմադրելով այն արհավիրքին, որ դարեր շարունակ գալիս է Հայոց աշխարհի վրա: Կդիմադրեն բոլորը՝ սերնդեսերունդ, մինչև մի տեղ կվերջանա արհավիրքը: Այդպես է եղել ի սկզբանե «ճանապարհն հայոց» (2-րդ, 164): Թշնամուն սերնդեսերունդ դիմադրելու գաղափարը պայմանավորված է մեր գենետիկ կողի յուրահատկություններով ու մեր ազգային գաղափարաբանության առանցքն է կազմում:

Թշնամու դեմ մղված մարտերում, ինչպես Դավիթ Բեկն էր կանխազգում Մարաղայի ճակատամարտից առաջ, ժամանակի ընթացքում ընկնում են շատ-շատերը, սակայն «նոր կտրիծներ են աշխարհ գալիս Սյունիքում և նոր աղջիկներ: Նրանք նոր ծաղիկներ են տանում լեզենդ դարձած ռամիկ զորավարի շիրիմին: Նոր թշնամիներ են գալիս Հայոց աշխարհի վրա, ու նոր քաջեր են դուրս մղում նրանց իրենց հինավորց հողից: Մի սերնդին փոխարինում է մյուսը» (2-րդ, 577):

Սա ժողովրդի հարատևելու ձգտումն է, որը ժամանակի ընթացքում դրսևորման տարբեր ձևերով է ներկայանում՝ հանուն հայրենյաց նահատակվելու պատրաստակամությամբ, ինքնազոհաբերմամբ, համաժողովրդական ցասումի անսովոր բռնկումներով, ինչը վկայում է, որ «ճանապարհն հայոց»-ի բոլոր հանգրվաններում մեր մղած պատերազմները (Ավարայր, Զիրավ, Շուշի և այլն) միշտ էլ Հայրենական պատերազմներ են եղել, որոնց մասնակցել են հասարակական բոլոր խավերն ու շերտերը՝ իշխանավորներ, շինականներ, հոգևորականներ, արհեստավորներ, մտավորականներ, տղամարդիկ ու կանայք՝ աշխարհի հայաբնակ բոլոր ծագերից: Կենաց և մահու պատերազմներ են եղել դրանք, որոնց ժամանակ հետին պլան են մղվել ներիշխանական տարածայնություններն ու գժությունները, աշխարհիկ ու հոգևոր շահերի բախումները, անհամաձայնությունները: Հայրենական էր նաև Դավիթ Բեկի ու Մխիթար Սպարապետի գլխավորած ազատագրական պատերազմը՝ իր ժամանակի ու մեր պատմության հետագա ընթացքի հոլովույթում աշխարհաքաղաքական ու

բարոյահոգեբանական հսկայական նշանակություն ունեցած մի պատերազմ, որի օրգանական շարունակությունը եղավ մերօրյա արցախյան ազատամարտը:

«Մխիթար Սպարապետ»-ում Ս. Խանզադյանը, վիճական ժամանակի տևականության մեջ ընդգծելով ժողովրդի կենսասիրության ձգտումը, փորձում է նախ՝ հասնել պատմաշրջանի «բազմեզր» ընթանման և երկրորդ՝ «տարածամանակային իրողությունների» ճանապարհով կոնկրետ ժամանակահատվածում ներկայացնել պատմական կերպարներին՝ նրանց բնութագրելով ըստ «ճանապարհն հայոց»-ի ընտրության իրենց ընկալումների, որոնք ել ընկած են գլխավորից սկզբնավորվող ու ծյուղավորվող տարբեր կոնֆլիկտների ու բախումների հիմքում:

«Մխիթար Սպարապետ»-ում տարածության և ժամանակի փոխհարաբերությամբ է պայմանավորված Ս. Խանզադյանի գեղարվեստական մտածողության կառույցը, նրա աշխարհայացքի, փիլիսոփայական ընդգրկումների շրջագիծը: Ժամանակը դարձնելով գեղարվեստական ընկալման առարկա՝ գրողը պատմական կերպարների կողքին ավելացնում է նաև ստեղծագործական կերպարներ, որոնցից շատերը, թերևս, ավելի ավարտուն ու լիարժեք են:

Ս. Խանզադյանը հաճախ շեղվում է նաև պատմական փաստերից՝ պատմության ճշմարտությունը խախտելով ի շահ գեղարվեստական ճշմարտության: Այդ կապակցությամբ նա գրում է. «Եթե գիտականորեն նայելու լինենք հարցին, իհարկե, գրողն «իրավունք չունի» փոխելու պատմական ճշմարտությունը, պատմական դեպքերի բովանդակությունը: Բայց մյուս կողմից, եթե խսկապես «իրավունք չունենա», ապա կզրկվի նաև իր՝ գրողի կոչումից, և նրա գրվածքը կդառնա քաղաքացիական դատաստանագիրք հիշեցնող շարադրանք»<sup>33</sup>:

Տասնամյակներ անց նույն միտքն է արտահայտում Զ.Խալավիյանը: Իր «Վասիլ մեծ՝ հայ կայսր Բյուզանդի կամ կծուճների թագավորը» պատմավեպի առիթով նա գրում է. Զգացի, թե որքան իրաշալի ժամը է դա, որ գրողը կարող է լրիվ ազատության մեջ զգալ իրեն, չկաշկանդվել նույնիսկ պատմական ճշմարտությամբ, որովհետև դա, այնուամենայնիվ, պատմություն չէ, այլ գրականություն»<sup>34</sup>:

Պատմական փաստերը «Մխիթար Սպարապետ» վեպում ոչ թե աղավաղվում են, այլ ենթարկվում են «գեղարվեստական մշակման», ինչը գրողին հնարավորություն է տալիս ավելի որոշակիորեն ներկայացնել իր նպատակը, խորքային բացահայտումների ճանապարհով հարստացնել գլխավոր կերպարները, նրանց գործողություններն

<sup>33</sup> «Հայրենիքի ձայն», 1980, № 92:

<sup>34</sup> «Գրական թերթ», 1999, 15 ապրիլի:

իմաստավորել ժամանակի ընդհանուր համապատկերում: Այստեղ նա մեծապես հետևում է Մուրացանի ու Ռաֆֆու՝ պատմական փաստերի և ստեղծագործական հորինվածքի ներդաշնության միջոցով գեղարվեստական ծշմարտության հասնելու մեթոդներին ու եղանակներին:

Մուրացանն ու Ռաֆֆին, ելնելով պատմական որևէ կոնկրետ ժամանակաշրջան իրենց ապրած ժամանակների սոցիալ-տնտեսական, աշխարհաքաղաքական, բարոյահոգեբանական իրողությունների բացահայտման նպատակով ներկայացնելու սկզբունքներից, հաճախ ընդլայնում են գործողությունների ծավալման տարածաժամանակային ընդգրկումների սահմանները, կերպարների մասին եղած պատմական տեղեկությունները հարստացնում գեղարվեստական «միջամտություններով», կերպարներն օժտում ժամանակաշրջանին բնորոշ հատկանիշներով ու գծերով:

Ս. Խանզադյանի վեպի վերնագիրն արդեն հուշում է, որ ծավալվող իրադարձությունների կենտրոնում պետք է լինի Մխիթարը, ում մասին այնքան էլ շատ տեղեկություններ չեն հասել պատմությունից: Վեպի առաջին մասի գործողությունները, սակայն, հիմնականում կապված են Դավիթ Բեկի հետ՝ մեր պատմավիպասանության ամենահաջողված, գեղարվեստական բոլոր առումներով լիարժեք ու բազմակողմանիորեն բացահայտված մի կերպարի հետ, ում ժողովուրդն առասպելականացրել և օժտել է հայոց վիպասքի հերոսներին բնորոշ գծերով:

Ղուկաս Սեբաստացին Դավիթ Բեկին ներկայացրել է որպես «ազնուական, բարեպաշտ, արդարակորով, զօրաւոր բանիւք և գործուք, և վրէժինդիր թշնամաց ազգին մերոց»<sup>35</sup>: Զորավարի մասին այս համառոտ տեղեկությունները Ս. Խանզադյանի համար ուղեցույցի դեր են կատարել կերպարն ամենատարբեր կողմերով ներկայացնելու, ժամանակի ոգին պահպանելու ու ռիթմն զգալու համար:

Իր «Ավանդատուն» գրքում Ս. Խանզադյանը բազմիցս նշում է, որ Դավիթ Բեկի կերպարի կերտման գործում իրեն մեծապես օգնել են Գորիսի, Սիսիանի, Կապանի շրջաններուն իր կատարած բանահավաքչական գրառումները, այն զրույցները, առասպելներն ու լեգենդները, որ հյուսել է ժողովուրդը Դավիթ Բեկի քաջության, զորավարական տաղանդի, մարտավարական հնտությունների, քաղաքական ու ռազմավարական «հոտառության», մարդկային բարձր հատկանիշների, գիտելիքների անսպառ պաշարի, վարվելակերպի կուլտուրայի և այլնայլ հատկանիշների մասին:<sup>36</sup>

<sup>35</sup> Սեբաստացի Ղ., Ընտիր պատմութիւն Դավիթ Բեգին և պատերազմաց Հայոց Խափանու, որ Եղև ընդդեմ բուրքաց, Վաղարշապատ, 1871, էջ 37 :

<sup>36</sup> Տես՝ Խանզադյան Ս., Ավանդատուն, Երևան, 1976:

Դուկաս Սեբաստացու՝ Դավիթ Բեկի բարեպաշտության ու ազնվագարմության և այլ հատկանիշների մասին համառոտ տեղեկությունները Ս. Խանզադյանը ներկայացնում է ավելի լայն կտրվածքով. «Բարձրահասակ էր նա, լայնալանջ ու լայնաթիկունք, բայց ոչ թանձրամարմին: Բնությունը ոչինչ չէր խնայել այս մարդուն, ոչ մարմնական ուժ, ոչ տոկունություն, ոչ կորով, ոչ խելք: Նրան շրջապատողները գիտեին, որ գահերեց զորավարը բարիով առաջնորդվող, արդարակորով ու երկայնամիտ նարդ էր, դպրության գաղտնիքներին ծանոթ, զորավոր խոսքով և գործով և վրեժխնդիր թշնամյաց ազգին հայոց», ում լայն ճակատի վրա տևական մի մտահոգություն էր դրոշմված, որ նշան էր մշտապես փոթորկված ներաշխարհի (2-րդ, 98):

Միահյուսելով հայոց աշխարհում 18-րդ դարի առաջին քառորդում կատարված մեծ և փոքր իրադարձությունները՝ Ս. Խանզադյանը հյուսում է մի դյուցազնական պատում զորավարի, նրա մաքառումների, մտորումների, հոգսերի, հուսահատությունների ու սպասելիքների մասին:

Ինչ-որ տեղ՝ հատկապես Մարադյայի դաշտում իր նժույգով հիշեցնում է դյուցազնական Դավթին. «Բեկի օդապարիկ երիվարը թռչունի պես խաղում, սլանում էր կարծես ոչ թե գետնի վրայով: Յզոր կուրծքն առաջ մղած՝ նժույգն ասես ուզում էր հրել իր առջև եղած ամեն արգելք: Թվում էր՝ նրանով էր հպարտ, որ իր մեջքին կրում էր Հայոց աշխարհի պարծանքը »(2-րդ, 98):

Դավիթ Բեկի գլխավորությամբ Հայոց ինքնության վերահաստատման պատմությունը գրի է առնում պատմիչ Սաթենիկը՝ վեպի ամենահաջողված կերպարներից մեկը, որի հոգեկան ծանր ապրումներն ու դրաման գրողը ներկայացնում է մի առանձին սիրով ու քնարականությամբ. «Դավիթ Բեկն իր սակավաթիվ հավատարիմներով ապստամբություն բարձրացրեց պարսից տիրապետության դեմ: Դա 1722 թվականի գարնանն էր: Հայոց նորաստեղծ բանակի մի բուռ քաջեր Սիսականի Եռաբլուր սարահարթում առաջին անգամ բախվեցին պարսից զորքերի հետ և ջախջախելով նրանց՝ դուրս մղեցին Սյունիքի սահմաններից:

Առաջին խոշոր հաղթանակից հետո Դավիթ Բեկն իջավ Շինուհայր բերդը, մեծ ջանքերի շնորհիվ կարողացավ իրեն միացնել շրջակա հայ մելիքների զորագնդերը: Ապա նրան միացավ հայ գինվորությունը՝ անվեհեր Յովհաննես Ավան իշխանի հրամանատարությամբ, և Դավիթ Բեկին հաջողվեց Տաթևից և Որոտնա բերդից դուրս քշել պարսից զորքերն ու Տաթևի դավաճան Մելիք Դավթի ուժերը: Այդ օրերին արդեն Բեկի անունը թնդում էր ամբողջ լեռնաշխարհում, և նրա դրոշի տակ համախմբվել էին

մեկ տասնյակ հազար հայեր: Ապստամբության առաջին տարում Կապան գավառում Դավիթ Բեկը կառուցեց Յալիձոր բերդը և հազարավոր ընտանիքներ տեղափոխելով այնտեղ՝ դարձրեց իր իշխանության մայրաքաղաքը» (2-րդ, 34):

Յամենատաբար խաղաղ ժամանակներում Բեկը կատարում է ուժերի վերախմբավորումներ, ամրացնում պաշտպանական դիրքերը, բարձրացնում գործերի մարտական ոգին, զինում սահմանամերձ բնակավայրերի ժողովրդին:

Յամենատաբար խաղաղ էին 1724 թվականի ամառը, 1725-ի և 1726-ի գարունները: Յալիձորում և ազատագրված բազմաթիվ բնակավայրերում ժողովուրդը գրաղված էր առօրյա գործերով. արտերում հնչում էր հորովելը, զրնգում էր շինարարի մուրճը, հարսանիքներ էին անում, երեխաներ էին ծնվում:

Ժողովուրդը նաև ծանր սպասումների մեջ էր. անընդհատ սպասում էին թշնամու հարձակումներին՝ քաջ գիտակցելով, որ խաբուսիկ է այդ խաղաղությունը: Սպասումների մեջ էր նաև Դավիթ Բեկը, ում «սուրհանդակներն անվերջ մաշել էին լեռնային ճանապարհները: Նրա լրտեսները թափանցել էին Երևանում նստած փաշայի գորակայանը, մտել Շահ Թամազի պալատը, լուրեր բերել Ստամբուլի Բարձր Դռնից» (2-րդ, 415):

Պատումի ողջ ընթացքում դեպքերն ու իրադարձությունները զարգանում են ժամանակի շարժմանը զուգահեռ: Ս. Խանզադյանն անընդհատ շեշտում է կոնկրետ ժամանակահատվածը, որի ընթացքում փոփոխվում են իրավիճակներ ինչպես Յայոց երկրում, այնպես էլ վիպական գործողությունների հետ կապված այլ վայրերում. «Լուսացավ հազար յոթ հարյուր քսանչորս թվականի ապրիլի ութը: Թուրքերը քսաներեք թնդանոթ ամրացրին Դալմայի խաղողի այգիներում և փողերն ուղղեցին քաղաքի վրա: Երևանը պաշարվեց»: «Յազար յոթ հարյուր քսանչորս թվականի ամառն անցավ առանց որևէ նշանակալից իրադրության», «1725 թվականի ձմռան վերջերին Ստամբուլում եղած հավատարիմները լուր տվեցին, թե արաբներն ապստամբել են Եգիպտոսում, որն ահուղողի մեջ է գցել սուլթան Ահմեդին: Թուրքերն իրենց ռազմական ամբողջ զորությունն ուղղել են այդ վտանգավոր ապստամբությունը ճնշելու համար: Երևանում եղած թուրքական զորքի մեջ մասը ևս ուղարկվեց Եգիպտոս»: «Եկավ հազար յոթ հարյուր քսանվեց թվականի մայիսը», - այսպես է ժամանակը մասնակցում գործողությունների ընթացքին, ուղղորդում այն, նպաստում ստեղծելու կառուցիկ կոնպոզիցիա: Ս. Խանզադյանը, ինչպես թվում է առաջին հայացքից, բժախնդրորեն չի ներկայացնում գործողությունների ֆարուլային հաջորդականությունը, ինչը

կիանգեցներ երևույթների նկարագրության միագծության: Ընդհակառակը, ինչպես «Մխիթար Սպարապետ»-ում, այնպես էլ «Խոսե՛ք, Յայաստանի լեռներ», «Շուշի», «Թագուհին հայոց», «Անդրանիկ» վեպերում յուրաքանչյուր դրվագ նպատակառողջված է վիպական գործողությունների զարգացմանն ու կերպարների բացահայտմանը: Իսկ գործողությունները զարգանում են սրբնաց արագությամբ՝ ներկայացնելով տարբեր իրավիճակներ, սյուժետային ծավալումների մեջ ներառելով նորանոր կերպարներ, մեծ հաշվով՝ ամբողջացնելով ժամանակի տարեգրությունը:

Դավիթ Բեկի կերպարը Ս. Խանզադյանը ներկայացնում է երկու գուգահեռներում՝ ժամանակ – հերոս, պատմություն – հերոս գծերի համադրմամբ՝ յուրահատուկ կապ ստեղծելով՝ իրադարձությունների ծավալման գեղարվեստական ներկայի ու պատմական անցյալի միջև: Այդ գուգահեռներից առաջինում Բեկը ներկայանում է որպես անհատականություն, որը չունի անձնական կյանք, անձնական հետաքրքրություններ, իսկ երկրորդում՝ պետական-քաղաքական ու ռազմական գործիչ, որն ընդունակ է ճիշտ ժամանակին հայտնվելու ճիշտ տեղում, կայացնելու ճիշտ որոշումներ, գտնելու ոչ միայն թշնամիների, այլև իր գորապետերի համար անակնկալ լուծումներ:

Դավիթ Բեկի համար խիստ բնորոշ է ժամանակի սրված զգացողությունը: Նա իրաշալի գիտակցում է, որ աշխարհաքաղաքական անկանխատեսելի զարգացումները, տարածաշրջանի նկատմամբ գերտերությունների հետաքրքրություններն ու նկրտումները թելադրում են խաղի նոր կանոններ, և ազգային շահերը թելադրում են մշակել այդ կանոններին համապատասխան քաղաքականություն:

Ուստամանի կայսեր իրովարտակը, ճիշտ է, ինչ-որ հույսեր է ներշնչում, սակայն Բեկը քաջ գիտակցում է, որ ազատագրական պայքարը հաջողությամբ կարող է պսակվել միայն ժողովրդի՝ սեփական ուժերին ապավինելու դեպքում: Այդ համոզմունքը պատմության դարավոր ընթացքի, նրա դասերի խոր իմացության արդյունք է և բազմիցս հաստատվել է մեր գոյապայքարի ամենատարբեր հանգրվաններում:

Բեկը հասկանում է, որ Եվրոպական տերությունները հանուն մի բուռ հայ ժողովրդի չեն փչացնելու իրենց հարաբերությունները ոչ Պարսկաստանի, ոչ էլ Թուրքիայի հետ: Պատմության դառը փորձն է հուշում այդպես: Ուստի, Բեկի համար բոլորովին էլ անսպասելի չեր Յակոբ Նաղաշի բերած լուրը. «Սուլթանը ուսւներին ստիպեց զիջել ու ստորագրել հաշտության թուղթը: Ուստաց դեսպան իշխան Նեպյունը շատ է համառել, նույնիսկ սպառնալով պահանջել է, որ սուլթանը իրենց զիջի Յայաստանն ու

Վրաստանը, Երևանից ու Թիֆլիսից հեռացնի իր զորքերը, բայց բան չի ստացվել: Ֆրանկի Դը Բոնակը և անգղիո թագավորի դեսպանը ամուր էին կոխել սուլթանի ոտքը... Նեպյունը սպառնացել է պատերազմով: Սուլթանը պատասխանի համար երկու օր ժամանակ է խնդրել: Մտադիր է եղել կատարել Նեպյունի այդ պահանջը» (2-րդ, 412):

Տեղի ունեցող ու ժամ առ ժամ փոփոխվող իրադարձությունները Ս. Խանզադյանը ներկայացնում է աշխարհաքաղաքական գարգացումների ու շահերի բախման լայն ուղեծիրում: Գերտերություններն իրենց շահերն են հետապնդում և առաջնորդվում են Ռուսաստանին դեպի Արևելք ծավալվել չթույլատրելու իրենց վաղեմի ծրագրերով. «Տիրի՛ր հարուստ Յայաստանին ու Վրաստանին, սուլթան Ահմեդ, մենք քո թիկունքին ենք: Ո՞վ կարող է քո մի մազին դիաչել: Տիրի՛ր, մի՛ թույլ տուր, որ ռուսները մտնեն այդ երկրները»(2-րդ, 412),- սա է ժամանակի իսկական դեմքը, նրա նկարագրի ամենագլխավոր բաղադրիչը:

Յայ ժողովրդի համար այս օրհասական, կատարյալ հուսալքության մղող պահերին անգամ Դավիթ Բեկը չի կորցնում սառնասրտությունը, մարտական ոգին ու կորովը՝ ժողովրդի միասնության ու ներուժի համախմբման մեջ տեսնելով երկրի փրկության տեսլականը. «Մի հուսահատվիր, Նաղաշ: Այդ ամենը ես կանխազգում էի: Սակայն ոչ ոք չի կարող մեր ճանապարհից շեղել մեզ: Ոչ ոք: Ես ողորմություն չեմ հայցել ոչ ոքից և մտադիր ել չեմ հայցելու: Մենք կշարունակենք մեր կրիվը՝ մեր ժողովրդի ու մեր հայրենիքի ազատ գոյության համար» (2-րդ, 413): Սակայն բոլոր դեպքերում Բեկին չեն լքում Ռուսաստանի օգնության հետ կապված հույսերը:

ճիշտ գնահատելով իրավիճակը՝ Բեկը ամենուր դաշնակիցներ է փնտրում: Փույթ չէ, թող դրանք լինեն նույնիսկ պարսիկները, որոնք տասնամյակներ շարունակ ասպատակել են մեր երկիրը: Նա շատ սթափ ու իրատեսորեն է գնահատում իրավիճակը: Ժամանակը պահանջում է առավելագույնս օգտվել պարսիկների ու թուրքերի՝ թեկուզ ժամանակավոր գժտությունից ու տարածայնություններից՝ անսպասելի գործողություններով հարուցելով զինակիցների, հատկապես Մխիթարի զարմանքն ու դժգոհությունը:

Բեկը Յալիձորում ապաստան է տալիս մի խումբ պարսիկ խաների՝ իրենց ծառաների ու հարեմների հետ միասին, հայոց գանձարանից նրանց կեցության միջոցներ հատկացնում՝ դժգոհ գորապետերին ու Մխիթարին բացատրելով, որ, ճիշտ է, պարսիկը թշնամի է մեզ, բայց «դա երեկ էր, կարող է լինել նաև վաղը: Իսկ այսօր

պարսիկը թուրքի թշնամին է: Այսօր նա մեզ հետ հաշտվելու միջոցներ է որոնում: Այսօր նա ուժ է թշնամու դեմ, ինչու մերժել, երբ մենք ենք օգնության կարոտ» (2-րդ, 418):

Բեկը դույզն-ինչ չի կասկածում իր ծշմարտացիությանը, թեպետ պարսիկ խաներին ապաստան տալու, Պարսկաստան պատվիրակություն ուղարկելու միջադեպերը դառնում են նրա ու Մխիթարի միջև կոնֆլիկտի սրման պատճառ:

Ժամանակի սրված զգացողությունը, իրավիճակը ճիշտ գնահատելու զարմանալի ունակությունը Բեկին հուշում են նոր քայլեր, առաջադրում գործողությունների հետագա ընթացքի նոր ծրագրեր, մեթոդներ ու եղանակներ: Նա այնքան միամիտ չէր, որ հավատար պարսիկ խաների «թուրքերի դեմ միասնաբար» կրվելու կեղծ հավաստիացումներին: Նա համոզված էր, որ վերջիվերջո պարսիկները թեքվելու են դեպի իրենց հավատարին բարեկամները և ամենաօրհասական պահին դավաճանելու և լքելու են մարտադաշտը:

Պարսիկների իրական դեմքը երևում է Երևանի պաշտպանության ժամանակ. Երևանում նրանք առերևույթ ցույց են տալիս, թե հայերի հետ են, բայց իրականում նրանց միայն թուրքերի գթասրտությանն արժանանալն ու իրենց հարստությունը փրկելն է հետաքրքրում: Դրա վառ ապացույցը Երևանի խանի իրամանն է իր զորքին. «Յրաման տվեք թոփշիներին, որ կգլխատվի նա, ով մի գնդակ կամ մի թոփ կարձակի թուրքերի վրա: Յրամանը տար, պատվելի մոլլա Ասադ, հասցրու բոլոր յուգբաշիներին, զորքին: Թող Աբդուլահին իմանա, որ մենք նրա սուլթանի դեմ քեն չունենք» (2-րդ, 345):

Նրանց իրական դեմքը բացահայտվում է նաև Մարաղայում, որտեղ նրանք ոչ թե զորքի, այլ խաժանուժի են նմանվում, Գանձակի պաշտպանության ժամանակ, երբ նրանք դրժում են իրենց խոստումը, պաշարման երրորդ օրը բացում քաղաքի դռները ու սրի մատնում ժողովրդին:

Օգնության վերջին հույսը մնում է Ռուսաստանը, որը նույնպես իր որոշակի հետաքրքրություններն ու շահերն ունի տարածաշրջանում. «Այնուամենայնիվ,- մտածում է Դավիթ Բեկը,- մենք պետք է մեր հույսը կապենք ռուսների օգնությանը միայն, ուրիշ ելք չկա» (2-րդ, 132):

Օգնություն՝ օգնություն, բայց հայ ժողովուրդը այն պետք է հայցի ոչ թե մուրացկանի պես ուրիշներին ձեռք պարզելով, այլ արժանապատիվ կեցվածքով՝ առանց դույզն-ինչ նսեմացնելու ազգային արժանապատվությունը. «Սակայն այդ օգնությունը մենք չպիտի հայցենք հետին մուրացկանի աղերսանքի գնով: Երբեք ծնկաչոք: Երբեք պաղատագին: Այո՛, պետք է ռուսաց թագավորի պատվիրակին

Իրավիրենք Յալիձոր: Այդ էր ի սկզբանե կամքը բոլորիս: Բայց իրավիրենք՝ թագավորին ցույց տալու մեր պապական կարողությունը, թշնամուն ծնկի բերելու մեր ուժն ու պատրաստակամությունը և ոչ թե թագավորին աղերսող լինենք Աբրահամի գառան խեղճությամբ» (2-րդ, 113):

Ազգի ուժը Դավիթ Բեկը տեսնում է ժողովրդի միասնության մեջ և ամեն ինչ անում է այդ միաբանությունն ամրապնդելու, ժողովրդին իր արմատներին մերձ պահելու, հայրենի եզերքին կապելու համար: Այս առումով խիստ հատկանշական են մելիք Բարխուդարին ուղղված նրա զայրույթը. «Դու չգիտեի՞ր, որ ես կենդանի չեմ թողնում այն մարդկանց, որոնք սեաւ են խրում մեր իրականության մեջ: Գո՞հ չես, որ հող եմ տալիս անհողներին, ռամիկներին: Ապա ու՞ն տամ, ունո՞վ պահենք երկիրը, ապա քաղցած տկլորներով կպահե՞ս երկիրն Յայոց. մուրացկա՞ն մնա ժողովուրդը՝ քո ճարպերը ուռեցնելու համար: Յակառա՞կ ես կամքիս, կամքին Յայոց ժողովի» (2-րդ, 102): Այս խոսքերը միայն մելիք Բարխուդարին չեն ուղղված, այլ բոլոր նրանց, «ովքեր սրտում քեն ունեն ժողովրդի դեմ», որովհետև «մենք երկիրը կարող ենք պահել՝ միայն դիմադիր կանգնելով թշնամուն, իսկ այդ դիմադիր ուժը ժողովուրդն է» (2-րդ, 103):

Դավիթ Բեկի վարած ազգահավաք քաղաքականության շնորհիվ սկսվում է ներգաղթը դեպի Սյունյաց աշխարհ: Գալիս են ամենատարբեր վայրերից, ամենից շատ Պարսկաստանից. «Ճահ Աբաս հայակերի գերած, Պարսկաստան տարած հայերի ժառանգներն են: Չեն հանդուրժում օտարի լուծը» (2-րդ, 104):

Վեաի գլուխներից մեկը վերնագրված է «Անհանգիստ մարդը», որտեղ Ս. Խանզադյանը Դավիթ Բեկին ներկայացնում է ամենատարբեր կողմերով: Վիպական գործողությունների ներկայում Դավիթ Բեկը անհանգիստ պրատումների մեջ է. Պղնձաքարում զինագործարանի հիմքերն է դնում, իրճվում է՝ տեսնելով Սյունիքում ծուլած առաջին թնդանոթը, շրջում է բնակավայրերուն, ահավոր զայրույթով է լցվում՝ տեսնելով, որ Պղինձ Արթինի զավակները պարսկերեն են խոսում («Զավակներիդ պարսիկ ես դարձրել, հա: Յայոց լեզուն սպանել ես, հա: Ուրացող: Ազգը լեզուն է պահում, լեզուն: Մեր հողը առել են մեր ծեռքից... լեզվով ենք հայ մնում: Իսկ դու սպանում ես մեր լեզուն, հայությունը... Մենք արյուն ենք թափում, որ անապական պահենք հայոց լեզուն, իսկ դու սպանում ես մեր նախնավանդ լեզուն. մանուկներդ պարսիկ ես դարձնում, հա... Այդպես էր կամենում Յազկերտ հայակերը, Շապուհը, Շահ Աբասը...» (2-րդ, 116):

Վիպական գործողությունների անցյալում Դավիթ Բեկն իր մտորումների հետ է: Մտովի նա տեղափոխվում է դեպի անցյալ՝ «Քուո գետի ափերից մինչև Արաքսի շամբուտները, մինչև Մեղրի ու Ազուլիս, մինչև Վայոց ձորի բերանն ու Սևանա ծովակի ափերը» (2-րդ, 125): Այդ ընդարձակ լեռնաշխարհում Բեկն ստեղծել էր ռազմական մի հզոր իշխանություն, միավորել ոչ միայն Մեծ Սյունիքի բազմաթիվ գավառներն ու քաղաքները, այլև իր իշխանության տակ վերցրել Գյուլիստանի, Զրաբերդի, Խաչենի, Վարանդայի ու Դիզակի մելիքությունները, որոնք տարիներ շարունակ գտնվում էին պարսից տիրապետության տակ: Պատմական անցյալի ու ներկայի գուգահեռները Բեկի մտորումներում ձգվում են դեպի ապագա, որն անորոշ ու մշուշոտ է: Յայոց աշխարհի բախտի բեռը դրված է նժարների վրա: Երկիրը շրջապատված է դարավոր թշնամիներով, որոնք վայելում են գերտերությունների համակրանքն ու օժանդակությունը: Յուսի աղոտ շողեր են նշանարվում-առկայժում հյուսիսից միայն: Պատմական անցյալ – ներկա - ապագա գուգահեռներում Բեկը մտորում է ազգապահպանության հարցերի շուրջ, որոնք պտտվում են մի քանի առանցքների շուրջ: Նա քաջ գիտակցում է, որ երկրի հզորությունը միայն գենքի տակ պահպող գորքի քանակով չէ պայմանավորված: Իր գորքերը փառավոր հաղթանակներ են տարել, դա շատ կարևոր ու ոգևորիչ է, բայց պետք է մտածել նաև հոգևոր մաքառումների մասին, այսինքն՝ վաղվա օրվա, որովհետև մեր գիրն ու մշակույթն են եղել մեր գոյատևման կարևոր կրվաններից մեկը: Դավիթ Բեկի ու Մովսես աբեղայի զրույցի, նրա՝ նկարիչ Յակոբ Յովնաթանյանի նկատմամբ ցուցաբերած ակնածալից վերաբերնունքի միջոցով Ս. Խանզադյանն ավելի է խորացնում զրավարի կերպարը. «Փոթորիկը կանցնի, Մովսես: Շատ փոթորիկներ են անցել հայ ժողովրդի գլխով: Այս էլ կանցնի... Ես հավատում եմ մեր ժողովրդի վաղվա օրվան... Մենք քեզ հետ միասին բաց կանենք Գրիգոր Տաթևացու դպրոցը, որ իմնարկել է նրա ուսուցիչ Յովիան Որոտնեցին, որ խափանված է սակայն մեր աշխարհի ու մեր թշնամիների ձեռքով... Մեր հայրենակիցները հեռավոր աշխարհում գրքեր են տպագրում: Նրանց կրերենք մեր լեռները: Կնորոգենք խափանված դպրոցը և քեզ հետ միասին լույս տվող մի փոքր օջախ կիհմնենք մեր մթանած լեռներում» (2-րդ, 140): Դավիթ Բեկը ժողովրդի գոյատևման, ազգային ինքնության պահպանման գործում անչափ կարևորում է նրա հոգևոր մաքառումների, գրի, դպրության ու մշակույթի անգնահատելի նշանակությունը:

Խորհրդանշական են Մովսեսին ուղղված նրա իմաստուն խոսքերը, որոնք Բեկին բնութագրում են որպես առաջադեմ մտածող, գրի ու դպրության հարզն իմացող

զորական ու քաղաքական գործիչ. «Միայն սուրը չէ, որ ամուր է պահում ժողովրդի ոգին: Լույսն է առաջին հերթին նրա ուժը: Որքան լուսավոր լինի ժողովրդի միտքը, այնքան հզոր կլինի նա» (2-րդ, 138):

Մի վեհ ու խորհրդավոր զգացում է ապրում Բեկը Մովսես աբեղայի աղքատիկ խցում: Դա գրքերի ու մատյանների խորհուրդն է, «Եռամեծար Գրիգոր Տաթևացու» մատյանի խորհուրդը, իայ մեծ մտածողի իմաստնության խորհուրդը, ով իր «Գիրք հարցմանց»-ի մեջ վեճի է բռնվել Արիստոտելի հետ: Մովսեսին զարմացնում են գահերեց զորավարի խոր գիտելիքները, լայն աշխարհայացքը, միշտ և ամենուր մի նոր բան սովորելու նրա բուռն ցանկությունը. «Վատ է այն զորավարը, Մովսես, որ մահվան մահձում էլ չի փորձում մի նոր բան սովորել» (2-րդ, 137):

Մովսես աբեղայի խցում Բեկը գործողությունների կատարման ներկայից մտովի տեղափոխսվում է մերթ պատմական անցյալ, մերթ ապագա, որը նրան բավականին լուսավոր կողմերով է երևում:

Նա հիշում է Ագուլիսի վաճառականների հաղորդածը. «Պետրոս կայսրը միտք ունի, որ եթե չկարողանա մտնել Յայաստան, ապա համոզի իայ ժողովրդին տեղափոխվել Կասպից ծովի ափերը, որ շենացնի իր նվաճած աղուտները», - հայտնել էին նրանք: «Եթե ես չկարողանամ ազատագրել ձեր երկիրը, ապա խորհուրդս այս է՝ թող ձեր ժողովուրդը գա ու բնակվի իմ նվաճած հողում» (2-րդ, 138):

Բեկը հիշում է կայսեր խոսքերը, և նրա «մտապատկերում գծվում էր իր փոքրիկ հայրենիքը՝ գալարուն գետերով, ձյունաթույր լեռներով, գյուղերով ու քաղաքներով» (2-րդ, 138):

Ժամանակներն անզոր են կոտրելու հայի ոգին, նրան կտրելու իր արմատներից, - սա է Բեկի համոզմունքը:

Վաղվա լուսավոր օրվա հույսով ու հավատով է Բեկը Նաղաշ Յակոբին ուղարկում Եվրոպա: Իսկ նրա վերադարձից հետո պատվիրում բաց անել պատկերահանի իր արվեստանոցը, ավելացնել աշակերտների թիվը. «Մարմինը պահելու համար լուսավոր պետք է լինի հոգին, Նաղաշ: Ժամանակին նայենք՝ կմնանք հավիտենական խավարում: Դու քո լույսի օջախը ստեղծիր մեր տանը: Ինչպիսի փոթորիկներ էլ լինեն, չպետք է հուսահատվել: Գնա, համարձակ սկսիր գործել, մի քանի օրից հետո ես կզամ արվեստանոցդ» (2-րդ, 414):

Այսպես է ժամանակի հոլովութում՝ պատմական անցյալ – ներկա - ապագա ուղեծիրում, Դավիթ Բեկին ուրվագծվում «ճանապարհն հայոց»-ը՝ մեր պատմության գլխավոր մայրուղին:

## Բ) ՊԱՅՔԱՐԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Դավիթ Բեկի մահվանից հետո սկսվում են նոր ժամանակներ, դեպքերն ու իրադարձությունները՝ ժամանակի շարժմանը զուգընթաց, ծավալվում են նոր ուղղություններով, ընդգրկում աշխարհագրական նոր տարածքներ:

Վիպական գործողությունների յուրաքանչյուր նոր ժամանակահատվածում անսպասելիորեն փոխվում են իրադրությունները, ավելանում են սյուժետային նոր ծյուղավորումներ, ընդլայնվում են տարածական ընդգրկումների սահմանները, գործողությունների ընթացքի մեջ են ներառվում նոր կերպարներ, ուրվագծվում են «ճանապարհն հայոց»-ի նոր հանգրվանները:

Բեկի մահվանից հետո գահերեց զորավար է ընտրվում Մխիթարը, ում, հակառակ մի քանի մելիքների դժգոհության, վստահում են ժողովուրդն ու զորքը, նրա հետ կապում ազատագրական պայքարի հետագա հաջողությունները:

Ժամանակային որոշակի հաջորդականության ձևով ներկայացնելով գործողությունների ծավալման ընթացքը, իրադրությունների փոփոխման պատճառահետևանքային կապերը՝ Ս. Խանզադյանն աստիճանաբար կենտրոնանում է Մխիթարի կերպարի վրա, խորացնում այն: Հեղինակը Սպարապետին ներկայացնում է տարբեր մոտեցումներով՝ որպես Բեկի գործի ուխտյալ նվիրյալ, նրա սկսած պայքարը շարունակող հմուտ ռազմական գործիք, որն օժտված է ժամանակի սրված զգացողությամբ ու ցանկացած իրավիճակում ճիշտ կողմնորոշվելու կարողություններով, անկոտրում կամքի ու ոգու տեր գինվոր, ով հանուն նվիրական գործի հաջողության պատրաստ է հայտնվել մարտադաշտի ամենաթեժ կետերում, որպես անհատ, ով ունի հոգեկան խոր դրամա՝ երկիրեղկված սեր և ծանր ու հոգեմաշ ապրումներ՝ պայմանավորված աշխարհիկ ու հոգևոր իշխանավորներից շատերի հետ ունեցած տարածայնություններով:

Մխիթար Սպարապետը նոր ժամանակների ազատագրական պայքարի փիլիսոփայության կրողն է, ով, շարունակելով Բեկի ավանդույթները, դրանք հարստացնում է նոր մոտեցումներով, մշակում պայքարի նոր սկզբունքներ ու ձևեր:

Պայքարի Մխիթարյան ժամանակը սկսվում է այն պահից, երբ նա երդում է տալիս Բեկի աճյունի առջև. «Երդվում ենք քո սուրբ աճյունի առջև, մեր բախտի աստղ Դավիթ Բեկ, որ մինչև վերջին շունչը կկռվենք Յայոց աշխարհի փրկության համար: Երդվում ենք...Ոչ մի օտար ոտք չի մոտենա քո սուրբ գերեզմանին» (2-րդ, 516):

Գրականագետ Ս. Արզումանյանը նկատում է, որ թեպետ Ս. Խանզադյանը վեպում մեծ տեղ է հատկացնում Դավիթ Բեկին, բայց Մխիթարն ավելի տարրողունակ ու ավելի խորությամբ բացահայտված կերպար է, և նրա անվան հետ են կապվում պետական կարևոր իրադարձություններից շատերը, մասնավորապես Շահապունիքի կիրճում ու Մարաղայում թուրքական զորագնդերի ջախջախումն ու հայկական ուժերի փառահեղ հաղթանակները:

Մխիթար Սպարապետին Ս. Խանզադյանը ներկայացնում է ինչպես գործողությունների ծավալման ներկայում, այնպես էլ պատմական էքսկուրսների միջոցով՝ անցյալում, որը նրա կենսագրությունն է, ապրած ամբողջ կյանքը: Սպարապետին ու մյուս կերպարներին ներկայացնելու համար ընտրում է ժամանակների հերթագայության հնարքը, ինչը մի կողմից արագացնում է գործողությունների ընթացքը, մյուս կողմից՝ հսկայական ինֆորմացիա հաղորդում ոչ միայն Յայոց երկրում, այլև տարածաշրջանում անսպասելիորեն փոփոխվող աշխարհաքաղաքական զարգացումների վերաբերյալ: Այդ ինֆորմացիան զարգացումների պատճառահետևանքային կապերի մասին է, որոնք այս կամ այն կերպ առնչվում են Յայաստանում կատարվող դեպքերին, թշնամու մտադրություններին ու գործելառնին, որոնց չտիրապետելը անկանխատեսելի հետևանքներ կարող է ունենալ հայերի համար:

Մխիթարը Բեկից ժառանգել է ժամանակի զարկերակն զգալու նուրբ զգացողություն և ըստ այդմ՝ հաշվարկներ անելու, իրավիճակին համապատասխան որոշումներ ընդունելու յուրահատուկ կարողություններ: Նա հիանալի գիտակցում է, որ ժամանակը հետադարձ ճանապարհ չունի, որ ժամանակի կորուստը տարածքների ու մարդկային ռեսուրսների անվերադարձ կորուստ է:

Ժամանակի շարժմանը զուգընթաց՝ փոխվում են իրավիճակները, և Ս. Խանզադյանը հնտորեն շաղկապում է անցյալում ու ներկայում կատարվող իրադարձությունները, ինչը յուրահատուկ ձևով դրսնորվում է վեպի կոմպոզիցիայում:

Վեպի ոչ միայն երկու մասերը, այլև գլուխները, միասնական սյուժետային գծի առանձին օղակները լինելուց բացի, նպատակառուղում են հերոսների գործողու-

թյունները, բացահայտում նրանց նպատակները, ազատագրական պայքարի ձևերի ու միջոցների վերաբերյալ նրանց պատկերացումները:

Ժամանակը թելադրում է թշնամու դեմ պայքարի նոր ռազմավարություն ու մարտավարական նոր ձևեր ու եղանակներ, որոնք հաջողությամբ մշակվում են Սպարապետի կողմից: Նրա համար ամենակարևորը ժամանակի գործոնն է, որից ելնելով էլ նա որոշումներ է ընդունում, խորհրդակցում մելիքների ու հարյուրապետերի հետ, գործում կամ Դավիթ Բեկի նախասիրած ձևերով, կամ էլ առաջարկում անսպասելի լուծումներ:

Վիպական գործողությունների ողջ հետագա ընթացքը պայմանավորված է հենց այդ գործոնով: Մեր պատմության ողջ ընթացքը Մխիթարին հուշում է, որ պայքարի հաջողությունը պայմանավորված է նրա համաժողովրդական բնույթով: Եվ ինչպես Դավիթ Բեկը, նա նույնպես հենվում է ժողովրդի վրա՝ մեկը մյուսի հետևից նոր պահանջներ դնելով մելիքների առջև, որոնք, արտաքուստ հավանություն տալով սպարապետի բարեփոխումներին, ներքուստ թշնամությամբ են լցվում նրա նկատմամբ: Առավել գազազած էին մելիք Բարխուդարն ու Ագուլիսի պարոն-տեր մելիք Մուսին, եպիսկոպոս Յովիաննեսը, Տաթևի Գարեգին վարդապետը՝ ուրացող Դավիթ-Տաթևացու եղբայրը: Մխիթարը լավ է ճանաչում բոլորին, որոնց հետ ժամանակին կոնֆլիկտներ է ունեցել՝ Բարխուդարի պարագայում՝ Պղնձաքարում կատարված դեպքերի, Գոհարի ու Թովմայի ամուսնության, մելիք Մուսու դեպքում՝ Ագուլիսի հասարակ ժողովրդին ցուցաբերած օժանդակության, նրանց իրավունքների ընդլայնման, հոգևորականների հետ՝ վանքապատկան հողերի մի մասի՝ գյուղացիներին տրամադրելու կապակցությամբ:

Սպարապետը Ագուլիսը դարձրել էր «բաց» քաղաք, որի բնակչությունն օրավոր ստվարանում էր Պարսկաստանից ներգաղթող արհեստավորներով ու մանր առևտրականներով: Նա ամեն կերպ նպաստում էր արհեստավորության ծաղկմանը, թերևացնում քաղաքացիներից գանձվող հարկերը, նրանց զինում Մարադայում ձեռք բերված ավարային գենքով:

Դա ժամանակի պահանջն էր, բայց մելիքները չին համակերպվում այն մտքի հետ, որ «ռամիկի որդին» գահերեց զորավար է կարգվել ու սահմանափակում է իրենց իրավունքները: Ծանր մտորումների մեջ է հատկապես մելիք Բարխուդարը, ով սեփական շահերի համար պատրաստ է դիմել անգամ պարսիկներին ու թուրքերին: Բայց նա ահավոր հուսահատված է. ժողովուրդն ու զորքը պաշտում են Մխիթարին. «Ո՞վ օգնության կզա: Իր ստվերից անգամ խրտնող Բաթալի Սուլթան խանը, թե՞ երերուն

գահին հազիվ կառչած Շահ Թամազը: Ոչ ոք», - ցավով մտածում էր մելիք Բարխուդարը (2-րդ, 319): Կոնֆլիկտն ավելի է խորանում, երբ արդեն գահերեց կարգված Սպարապետը իրամայում է զորքին ռոճիկ տալ ոչ թե հայոց ժողովրդի գանձարանից, այլ մելիքների անձնական միջոցներից. «Այս ի՞նչ է անում Սպարապետը: Միսիթարը բռնել է մեր օձիքները: Առաջ զորքին ռոճիկ էինք տալիս հայոց ժողովրդի գանձարանից: Յիմա ինչու՝ է ուզում մեզ թալանել, թողնել մի սև դրամի կարոտ» (2-րդ, 517): Միսիթարը ոչինչ պահի թելադրանքով չի անում ու միշտ հետևում է ժամանակի ընթացքին: Նա միանգամից վրեժխնդիր չի լինում ներքին թշնամիներից, միանգամից վճռական ու վերջնական հարված չի հասցնում մարտադաշտում:

Այդպես է նա վարվում դավաճան մելիքների ու հոգևորականների հետ Յալիձորում, երբ զգում է, որ իր դեմ դավադրություն է հասունանում: Յամբերատար սպասում է մինչև հասունանա այն պահը, երբ «նրանք դուրս կգան իրենց որջից և ցույց կտան գարշելի մռութները», և համոզված է, որ հեռու չէ այդ ժամանակը: Նա երբեք առանց ճշգրիտ հաշվարկների չի հարձակվում թշնամու վրա, դարձյալ կարողանում է որսալ ճիշտ պահը: Այդպես է նա Շահապունիքում գլխովին ջախջախում Սարը Մուստաֆա փաշայի բազմահազարանց զորքը՝ նրան խորանանկությամբ քաշելով Շոշի կիրճը, այդպես էր նա կրվում Մարադայում՝ թշնամու վրա հանկարծակի հարձակվելով այն ժամանակ, երբ նա արդեն մարտի էր նետել իր վերջին զորագնդերը:

Արագորեն ու անկանխատեսելի ուղղություններով ծավալվող իրադարձությունները Միսիթարին դարձնում են ավելի սառնասիրտ, ներքուստ՝ փոթորկուն, արտաքուստ՝ հանդարտ, երբեք խուճապի չմատնվող, քայլերի հաջորդականությունը ճշգրիտ իմացող:

Գրականագիտության մեջ նկատվել է, որ Դավիթ Բեկի համեմատությամբ թույլ են արտահայտված Միսիթարի՝ քաղաքական ու դիվանագիտական մտածողության գծերը, որն ինչ-որ չափով կարծես թե աղքատացնում է կերպարը: Այս կարծիքի հետ կարելի է համաձայնվել որոշ վերապահումներով: Ճիշտ է, Միսիթարը չունի Դավիթ Բեկի մտահորիզոնի լայնությունն ու գիտելիքների մեծ պաշարը, ծանոթ չէ անտիկ աշխարհի ու հայ փիլիսոփայական մտքի նվաճումներին, բայց քաղաքականության ու դիվանագիտության մեջ ավելի պրակտիկ է և այդ փորձը ձեռք է բերել ժողովրդական ակունքներից: Նրա ամբողջ կյանքն անցել է ժողովրդի մեջ, նրա «քաղաքականությունն ու դիվանագիտությունը» թրծվել են բազմաթիվ մարտերում, և Ս. Խանզադյանը նրան ներկայացնում է որպես ժողովրդական հերոս, ում համար հայրենիքը անգնահատելի ու

անփոխարինելի արժեք է, հայրենասիրությունը՝ գենետիկորեն փոխանցված գերագույն զգացում, եռթյան հիմնական բաղադրիչ:

Որպես անհատականություն՝ Մխիթարյան համար էր ու անկոտրում, իր ծշմարտությանը հետամուտ, իր ուժերի վրա միշտ վստահ: Նա միակն էր, որ համարձակություն էր ունենում վիճելու Բեկի հետ՝ լավ ճանաչելով նրան, իմանալով, որ կարող է ենթարկվել ամենադաժան պատժի: Երկու զորահրամանատարներն էլ իրենց ժամանակի ծնունդն էին, և հայրենիքը նրանց համար գերագույն սրբություն էր: Բեկն ավելի սառնասիրությունը էր, Մխիթարյան՝ բռնկուն ու զգացմունքային: Բեկը Մխիթարին համարում էր իր զավակը, Մխիթարյան՝ Բեկին՝ իր կուռքը, որից շատ բան է սովորել ու պատրաստ է ծնկաչոք աղոթել նրա համար: Բայց Բեկը կարող էր նաև դաժան լինել իր հոգեզավակի նկատմամբ, իրամայել անգամ գլխատել նրան, ինչպես պատահեց այն ժամանակ, երբ Սպարապետը հրաժարվեց ճակատամարտել պարսիկների դեմ՝ կանխազգալով իր զորքի պարտությունը: Բոլորն այդ ժամանակ հասկացան, որ Բեկն այդ իրամանով մելիքներին ու զորապետերին է զգուշացնում. «Այսուհետև ես գլխատել կտամ նրան, ով կիամարձակվի փոքր անգամ հակառակ կանգնել իմ կամքին, թեկուզ դա իմ ամենասիրելին լինի» (2-րդ, 426):

Ներումի զգացումը միայն ամենաուժեղներին է հատուկ, որովհետև անարժեք է թույլի զգացումը: Բեկը Մխիթարին ներում է նաև այն դեպքում, երբ վերջինս հակառակվում է նրան՝ Պարսկաստան դեսպանություն ուղարկելու կամ չուղարկելու հարցի քննության ժամանակ («Իսկ դու, սպարապետ Մխիթար, քիթ մի խոթիր այնտեղ, որտեղ իրավունք չունես... Սպարապետությունդ արա... Թուրքերը մանր խմբերով ասպատակում են Վարանդայի գյուղերը: Կարկառի պարտությունը գազագեցրել է նրանց: Յենց հիմա վերցրու քո գնդերն ու մեկնիր այնտեղ, Մխիթար Սպարապետ...» (2-րդ, 426-427):

Ամեն ինչ հիշում է Մխիթարյանը, բայց երբեք հիշաչարությամբ չի լցվում: Նրա համար գլխավորը հայրենիքի ճակատագիրն է, Բեկի գլխավորած ազատագրական պայքարի հաջողությունը: Իրեն ու Մխիթարին հանգստացնելու համար է Բեկը նրան ուղարկում Յալիձոր՝ համոզված լինելով, որ Սպարապետը կհասկանա իրեն, ճիշտ ժամանակին կկանգնի իր կողքին: Գահերեց զորավարը, ինչպես միշտ, չեր սխալվում, ինչը երևաց Մարադայի դաշտում: Ճակատամարտի ընթացքը բարեհաջող ավարտ չեր խոստանում հայերին: Բեկը ծանր ապրումների մեջ էր. ուր որ է թուրքական զորագնդերը կշրջապատեն արագորեն նոսրացող հայերին, ու պարտությունը վերջնական կլինի: Իրավիճակը պահանջում էր մարտի նետել վերջին հույսը՝ Մատյան գունդը, անվեհեր

կրվում էր նաև գահերեց զորավարը: Բայց ուժերն անհավասար էին: Այս օրհասական պահին է դրսնորվում ճիշտ ժամանակին ճիշտ տեղում հայտնվելու Մխիթարի զորավարական տաղանդը, թշնամուն անակնկալ ու անկասելի հարված հասցնելու, ճակատամարտի վերջնական ելքը վճռելու նարտավարական հմտությունը:

Մրարշավ ռազմադաշտին մոտեցող զորագունդը, որին հայերը թուրքերի տեղ էին դնում, ահ ու սարսափի մեջ է գցում Բեկի փոքրաթիվ մարտիկներին, բայց «հայոց բանակի մեջ ուրախ էր միայն մեկ մարդ, և դա Դավիթ Բեկն էր: Ինչպես նա չճանաչեր իր հեծելազորին առաջնորդող սպիտակ ձիավորին: Քանի անգամ էր այդ ձիավորն, իր նժույգի ականջը մտած, փութանակի սուրացել թշնամիների վրա: Ինչպես չճանաչեր հարազատին, սիրելիին: Բեկը կանգնեց ձիու ասպանդակին ու որքան ձայն ուներ, կանչեց. –Մխիթար Սպարապետը եկավ...» (2-րդ, 477):

Ինչպես Դավիթ Բեկի, այնպես էլ Մխիթար Սպարապետի կերպարուն Ս. Խանզադյանն անընդհատ ընդգծում է պետական ու քաղաքական գործի միասնությունը, քաղաքական իրավիճակը ճիշտ գնահատելու և ըստ այդմ էլ՝ ռազմավարության ճիշտ ծրագրեր կազմելու նրանց անուրանալի տաղանդը: Վիպասանը Դավիթ Բեկի ու Մխիթարի վարած քաղաքականությունը ներկայացնում է որպես ազգային կեցության ծրագիր, որի հիմքում ընկած են հայ ժողովրդի ուժին հավատալու (հիշենք Մխիթարի՝ բազմից կրկնվող խոսքերը. «Ես հավատում եմ հայ ժողովրդի ուժին»), այդ ուժին ապավինելու հաստատակամությունը («Տերությունը հաստատ է մնում ժողովրդով») և դիմադրության ոգին՝ որպես «ճանապարհն հայոց»-ի միակ ուղենիշ:

Սեփական կենսափորձի հերոսական, հաճախ նաև՝ դառը կենսափորձով է Մխիթարն զգում իշխանության ոչ միայն ողջ ծանրությունը, այլև կեղծիքի ու խարդավանքի ցավն ու տառապանքը: Ներքուստ նա պատրաստ է խստագույնս պատժել մելիք Բարխուդարին, վաճառական ու դավաճան մելիք Մուսուն, մի քանի հարյուրապետերի, բայց ժամանակն ու դեպքերի զարգացման տրամաբանությունը նրան հետ են պահում կտրուկ քայլերից, որովհետև գիտակցում է, որ «ծայրահեղությունների միացման օրենքի թելադրանքով մի փոքրիկ սխալի, սայթաքնան պարագայում կվտանգվի «ճանապարհն հայոց» - ի գաղափարը, ուստի նա «մշտապես քննության առաջին պլանում է դիտում իրողությունների ու երևոյթների ներքին տրամաբանական աղերսների ու պատճառաբանության, պատմահոգեբանական

հավաստիության այն գործոնները, որոնք շարժման մեջ են դնում ոչ միայն ժամանակը, այլ նաև մարդկային էությունն ու գործողությունները»<sup>37</sup>:

Հետևելով դասական պատմավեպի՝ «Վիպական կառուցվածքի, կերպավորման հարցերում ռոմանտիկական գեղագիտության ինչ-ինչ կողմերի յուրացման, անցյալի խորքերում ժողովրդական կենսական ոգու հայտնաբերման»<sup>38</sup> ավանդույթներին՝ Ս. Խանզադյանը զարմանալի մի խորաթափանցությամբ ու ներքնատեսությամբ է ներկայացնում նաև Մխիթարի ներաշխարհի ելեջումները, նրա խուլ տառապանքի ողջ գեղեցկությունն ու հմայքը:

Գեղարվեստական բարձր վարպետությամբ են ներկայացված Մխիթար-Սաքենիկ-Գոհար հարաբերությունները, որոնց շրջանակներում բացահայտվում է վիպասանի՝ հոգեբանական խորը ներթափանցումներ կատարելու, կերպարակերտման ու պատկերաստեղծման նուրբ եզրագծեր ու թարմ միջոցներ հայտնաբերելու անուրանալի տաղանդը:

Մխիթարին Սաքենիկի հետ ամուսնացրել է Դավիթ Բեկը՝ ելնելով քաղաքական դրդապատճառներից: Սպարապետը «ենթարկվել է» գահերեց զորավարին. ժամանակի պահանջն էր դա, բայց երբեք չի կարողացել մոռանալ Խնձորեսկի մելիք Բարխուդարի դուստր Գոհարին, ով փոթորկում է նրա հոգին, ամենուր նրա սրտում ու մտքերի մեջ է: Նա Մխիթարի համար անհասանելի երազ էր, որ հայտնվում էր քուն թե արթմնի, «սև շողարձակ աչքերով ժպտում էր գինու բոցերի միջից»: Թե հոգեկան անդորրի և թե մենության ծանր պահերին Գոհարը հայտնվում էր կանացի իր ողջ հմայքներով՝ «նուրբ ռունգերը լայնացած դողացող շուրթերով, եղնիկի վախեցած հայացքով»: Սպարապետը խուլ տառապանքների գնով էր կարողանում «զսպել իր կարոտն ու խուսափել հանդիպելու նրան, ում համար պատրաստ էր տալ մարտերում շահած իր փառքն ու կյանքը: Դա դեռ բոլորը չեր: Սպարապետը ջանում էր ամեն կերպ մոռանալ իր սիրեցյալին: Նա զգուշանում էր հանդիպել Գոհարին. այդ հանդիպումը նորից կբորբոքեր սիրո կրակը և գուցե լափեր, կործաներ այն գործը, որին նվիրվել էր նա, որի համար երդվել էր ժողովրդի առջև...» (2-րդ, 61):

Բայց ամենակարևորը՝ չեր ուզում տառապանքի գիրկը նետել իր սիրեցյալին՝ Սաքենիկին՝ իր երկու զավակների մորը, ում նվիրված էր ամբողջ հոգով ու էությամբ:

<sup>37</sup> Արզումանյան Ս., Սովետահայ վեպը, գ.3, էջ 156:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 157:

Յին պատմություն ունի Գոհարի սերը. այն «ծնվել էր, երբ Մխիթարը դեռ տասնինը տարեկան էր, իսկ Գոհարը՝ տակավին դեռաբույս աղջիկ: Բուռն էր եղել այդ սերը, սակայն...»

Սակայն ոչ Մխիթարի, ոչ էլ Գոհարի մեղքով կատարվեց անսպասելին: Դավիթ Բեկը Մխիթարին ամուսնացրեց Սաքենիկի հետ: Գոհարը մազերը փետեց, շաբաթներով փակվեց իր սենյակում, անիծեց Մխիթարին, փորձեց ատելությամբ լցվել դեպի նա, մոռանալ եղածը, բայց չկարողացավ սրտից պոկել նրան: Այլևս իր բախտի աստղը խավարած համարելով՝ Գոհարն իրեն նվիրեց խենթ ձիարշավների ու որսորդության: Նրա պահանջով հայրը Վայոց ձորից բերել տվեց մի ուսումնական արդեն զառամած կույս մայրապետ՝ աղջկան գրագիտություն սովորեցնելու համար» (2-րդ, 44 – 45):

Շատերն էին խնդրել Գոհարի ձեռքը՝ հարուստ ու հպարտ մելիքների որդիներ, «բայց Գոհարը չէր ցանկացել նույնիսկ լսել նրանց անունները: Նա ուխտել էր մինչև կյանքի վերջը մնալ իր հոր տանը, սիրել միայն Մխիթարին, նրան նվիրել իր ամբողջ սերը, ապրել՝ թեկուզ հեռվից-հեռու տեսնելու բավականությամբ» (2-րդ, 45):

Սպարապետը մարդկայնորեն խղճում էր Գոհարին, հատկապես այն առումով, որ ինքը մարտերի, զորքերի ու զինակիցների մեջ մոռանում էր իր վիշտը, իսկ Գոհա՞րը. «Ինչո՞վ մխիթարվեր Գոհարը՝ բուռն սիրող այդ աղջիկը, որի հպարտությունը փշրվեց քարին զարնված բյուրեղաթասի պես» (2-րդ, 45):

Երկու կրակի միջև հայտնված Մխիթարին ազնվացնում են մարդկայնորեն ազնիվ ու գեղեցիկ, վեհ տառապանքները, նրա կերպարը երանգավորում ռոմանտիկական նուրբ եզրագծերով: Նա դժբախտ էր համարում իրեն, բայց մխիթարվում էր այն մեծ գործով, որին զինվորագրված էր և հոգեկան ծանր ապրումների պահերին կարողանում էր չկորցնել սթափությունն ու սառնասրտությունը, իանուն մեծ գործի հաջողության մոռանալ անձնական ծանր ապրումներն ու տառապանքները:

Այս ամենը լավ էր հասկանում նաև Գոհարը, ում համար Մխիթարը ոչ միայն միակ ու եզակի տղամարդն էր աշխարհում, այլև ազատագրական պայքարի խորհրդանշիցը:

Իր ժամանակի տոհմիկ հայ ազնվական կնոջ մարմնացումն է Գոհարը, հպարտ ու վեհանձն էր հայրենի անառիկ, աննատչելի լեռների պես ու սիրո ամենազորեղ բռնկումների պահերին անգամ չի կորցնում իր սառնասրտությունն ու սթափ մտածողությունը: Յանուն միաբանության, իանուն հայրենիքի ազատության նա պատրաստ է ամենածանր ու անդառնալի զոհողությունների:

Գոհարը սառնասրտորեն, բայց սրտի խոր կսկիծով ու անամոք ցավով է ընդունում հարյուրապետ Թովմայի հետ ամուսնանալու Մխիթարի որոշումը, որը նաև Սպարապետի հրաման էր: Սաթենիկի հետ Մխիթարի ամուսնությունից հետո երբեք չամուսնանալու որոշում ընդունած Գոհարը վճռական զոհաբերության է գնում հանուն Սպարապետի անվան ու միաբանության, հանուն մեծ գործի հաջողության:

Այնուամենայնիվ, Գոհարը կարողանում է «վրեժ լուծել» իր սիրեցյալից. «Առագաստի գիշերը նա բնավ չքննեց: Ամուսնուն չքողեց մոտենալ մահճին. Վիրավորված էր մինչև սրտի խորքը: Յիշեց Մխիթարի շփոթված, բայց ծանր հայացքն ու խղճաց նրան... Ու մնաց մենակ՝ իր մտքերի ու ցավերի հետ... Մխիթարը դուրս չեր գալիս իր սրտից: Մի՞թե հնար չկա նրա անունն ու պատկերը պոկել կրծքից: Երբ համոզվեց, որ դա լինելու բան չէ, վրեժի մի մեծ զգացում վառվեց նրա վիրավորված սրտում և դրանից մղված նետվեց Թովմայի գիրկը ու սկսեց համբուրել նրան» (2-րդ, 106):

Ս. Խանզադյանը հոգեբանական նուրբ դիտարկումներով է ներկայացնում նաև Մխիթարի ծանր ապրումները: Սպարապետն ամբողջ էռությամբ ձգտում էր դեպի Գոհարը. Երբեք չի մոռանում «այդ էօ վագրին, որից ոչ կարողանում է հեռանալ, ոչ մոտենալ: Սպարապետը երբեմն ցանկանում էր ծպտյալ գնալ Խնձորեսկ ու տեսնել նրան, ապա մի պատրվակով դուրս բերել Գոհարին Խնձորեսկից ու հեռանալ, կորչել նրա հետ: Բայց այդ ծրագրերը փշրկում էին, երբ հիշում էր իր պարտքը, կնոջը, Դավիթ Բեկին. «Ինչպե՞ս կարող էր նա թողնել այն փոքրիկ լեռնաշխարհը, որի ազատության համար արյուն թափեց, որի անունը Յայաստան է՝ մոր կաթի պես քաղցր ու անկրկնելի հարազատ: Ինչպե՞ս թողնի Դավիթ Բեկին, զորքը, ժողովրդին, որ ահա մի փոքր ազատ շունչ է քաշում իր երկողում, իր տանը, իր նորաստեղծ իշխանության հետ» (2-րդ, 44):

Անբաժանելի են Գոհարի համար Մխիթարն ու Դավիթ Բեկը, նրանց մեծ գործը, որի ուխտյալ նվիրյալն է նաև ինքը: Որքան նուրբ, հմայիչ ու կանացի հմայքներով է օժտված Գոհարը, նույնքան էլ քաջ է ու աներեր օրիհասական պահերին ու իր օրինակով շատերին է վարակում: Ագուլիսում դավաճանների կողմից քաղաքն առանց դիմադրության թուրքերին հանձնելուց առաջ նա ոգևորում է հայ կանաց ու աղջիկներին, հորդորում երբեք չհավատալ թուրքի կեղծ հավաստիացումներին ու խոստումներին. «Դուք ձեր քնքշությամբ արիացրեք նրանց /հայ տղամարդկանց- Յ.Դ./) սրտերը, որ ոչ մի թշնամի իր կեղտոտ թաթը չկացնի ձեր շղարշներին: Միաբանության սուրբ ուխտին հավատարիմ պահեցեք ձեր տղամարդկանց, եթե չեք ուզում, որ թուրքերը ձեզ մերկացնեն ու քարշ

տալով իրենց վայրենի բանակի միջով՝ անպատվեն: Մի մոռանաք, որ թուրքը հեռու չէ: Ոչ մի բարություն մի սպասեք նրանից: Անխուս ականջով ու արթուն աչքով հետևեցեք, հսկեցեք ձեր տղամարդկանց, որ նրանք չշեղվեն հավատարմության ճշմարիտ ճանապարհից ու միաբան լինեն Յայոց ժողովի ու Մխիթար գահերեց զորավարի հետ»(2-րդ, 598-599):

Մխիթարը նույնպես Գոհարի հետ է նրա երազներում, հիշողությունների մեջ: Սյունյաց գեղեցկուիին հաճախ է հիշում անցած-գնացած օրերը, հանդիպումը Տրտու գետի ափին, «Երբ ինքն առաջին անգամ թարտաց Մխիթարի գրկում, և երբ Մխիթարն իր կրծքին ամրացրեց իր առաջին նվերը՝ ժայռի ճեղքից պոկած մայր մանուշակը /2-րդ, 599/: Որքան քննուշ ու ռոմանտիկ է Գոհարը, նույնքան էլ անողոք է թշնամու հանդեպ, վրեժինդիր: Նա ևս կարողանում է իր փոքրաթիվ զորացոկատով հանկարծակիի բերել թշնամուն, անողոք վրեժ լուծել նրանից հայ անմեղ կանանց ու երեխանների համար: Գոհարը սիրանքներ է գործել Մարաղայի ճակատամարտում, Յալիձորի պաշտպանության օրերին: Գոհարի նվիրվածությունը Մխիթարին ու նրա գործին շարունակվում է մինչև իրադարձությունների ողբերգական ավարտը: Նա դաժանորեն պատժում է դավաճաններին՝ հարազատ եղբորն ու նրա ընկերներին. «Լսեցեք, ազգուրաց թշնամիներ: Ես ձեզ նետում եմ այս ամենի գետը, որպեսզի ոչ մի երկրի հող չունենաք ձեզ վրա: Ապա այս պատիժն եմ նշանակում ձեզ, որպեսզի ամեն մի հայ, որի մտքով կանցնի դավաճանել հայրենիքին, իիշի այս կամուրջն ու ձեզ, ահ ունենա ու ետ կանգնի կործանիչ ճանապարհից: Թող հայ ժողովրդի անեծքը ծանրանա ձեր ապականված հոգիների վրա» (2-րդ, 776):

Գոհարը, ինչպես նաև Սաթենիկը, թեպետ վեպի ստեղծագործական, բայց ամենահաջողված, բազմակողմանիորեն բացահայտված կերպարներից են ու իրենց վեհանձնությամբ, նվիրվածությամբ, հայրենիքի, սիրո, ընտանիքի վերաբերյալ իրենց պատկերացումներով ժողովրդական վիպասքի ու դասական վիպասանության հայ կնոջ կերպարն են հիշեցնում:

Պատմական որոշակի ժամանակի համապատկերն է ամբողջացնում Սաթենիկը, ով ժողովրդի հոգևոր փնտրութեների ու մաքառումների խորհրդանիշներից մեկն է վեպում: Եիշտ է, Սաթենիկը նույնպես վեպի ստեղծագործական կերպարներից է, բայց ունի իր տոհմաբանությունը: Նա «հայ կին պատմիչների սիմվոլիկ բնավորություն է ու անում է

այն, ինչ արել են մեր միջնադարյան պատմիչները, ինչ արել է Ստեփան Զորյանի Դպիր Երեմիան»<sup>39</sup>:

Ս. Խանզադյանը Սաթենիկի էպիկական կերպարը ներկայացնում է քնարական նուրբ վրձնահարվածներով, ինչը մի առանձին վեհություն ու հմայք է հաղորդում նրան:

Յասան Զալայան հպարտ տոհմի այդ չքնաղ կինը Մխիթարի համար անդավաճան նեցուկ էր՝ օժտված մայրական սիրո քնքշանքներով. «Արքայական վեհություն ուներ Սաթենիկը: Շրթունքները սեղմված էին, մի հոնքը՝ կեռ: Անջնջելի մի վիշտ կար նրա գունատ դեմքին: Աչքերը տամուկ էին, տագնապալի: Անհույս բողոք ու ծանր հանդիմանություն կար նրա ձայնի մեջ» (2-րդ, 46):

Անչափ խորն է Սաթենիկի հոգեկան դրաման: Նա գիտի, որ Մխիթարը սիրում է Գոհարին՝ հոգու ամբողջ նվիրումով ու խորությամբ, ամենուր և միշտ նրա հետ է, բայց հավատարիմ է մնում սիրելի ամուսնուն, թև ու թիկունք կանգնում նրան ու կանացի կասկածամտությամբ ու խանդով չի շեղում նրա ուշադրությունը:

Մխիթարն այդ ամենը լավ է հասկանում, ու Սաթենիկն ավելի է վեհանում նրա համար: Եվ ամեն անգամ, երբ նայում է Սաթենիկին, թվում է՝ կանգնած է սրբապատկերի առջև, ում տիսրամած աչքերում առկայօնում են հոգու մաքրությունն ու գեղեցկությունը:

Սաթենիկն իր մեջ մարմնավորում է Յասան Զալայան տոհմի հերոսական ոգին, մտավոր ողջ կարողությունները: Նա ստացել է ժամանակի համար փայլուն կրթություն: Գանձասարի Եսայի Յասան Զալայան կաթողիկոսն ու պատմիչ հորեղբայրը նրան սովորեցրել են հունարեն ու պարսկերեն, գրաբար: Իսկ ամուսնալուց հետո հորեղբայրը խորհուրդ է տվել գրել Դավիթ Բեկի պատերազմի պատմությունը:

Դավիթ Բեկի ու Մխիթար Սպարապետի ժամանակների տարեգիրն է Սաթենիկը, ով քայլ առ քայլ, գրի առնելով դեպքերն ու իրադարձությունները, նյութական-առարկայական կերպարանք է տալիս ազգային ոգու աննահության, ազատագրական պայքարի շարունակականության գաղափարներին: Ժամանակագրական հաջորդականությամբ սերունդներին ի պահ տալով ազատագրական հերոսամարտի պատմությունը՝ Սաթենիկն իր մատյանում ամբողջացնում է ժամանակի համապատկերը, ներկան կապում պատմության ընթացքին, որի հանդեպ ունի պատասխանատվության բարձր զգացում ու խորին ակնածանք:

Սաթենիկի մեջ ապրում է մեր «եռամեծար պատմիչների» բարձր ոգին, որը նրա շնորհիվ հասնում է մինչև իր ապրած օրերը, մղում սխրանքների, կյանքի ու մահվան

<sup>39</sup> Արգումանյան Ս., Սովետահայ վեպը, գ.3, էջ 133:

գոտեմարտերի: Պատմիչների օրինակով Սաթենիկը վերականգնում է ժողովրդի հոգեսր հիշողությունը, նորովի ներկայացնում ժամանակավորապես ընդհատված ազատագրական պայքարի պատմության էջերը. «Գրում եմ մատյանս՝ աչքիս լույսը թափելով մեր եռամեծար պատմիչների մարգարտաշար հորինվածքների վրա՝ լուսապսակ ունենալու համար: Ոչ ոտք առ ոտք կամ քայլ առ քայլ, այլ ոստոստալով թռչում եմ ասպարեզից ասպարեզ՝ անհուն ժամանակների մեջ: Եվ հանդիպելով անթիվ ժամանակների՝ հազիվ կարողացա սովորել հազարից մեկը և բյուրերից երկուսն այն իմաստասիրությունների, որ հանդիպեց...» (2-րդ, 36):

Սաթենիկը դժվարին պահերին ոգեսրում է Մխիթարին, անընդհատ հիշեցնում, որ նա միայն իրեն չի պատկանում, այլ ողջ հայ ժողովրդին ու պարտավոր է նրա հանդեպ կատարել իր պարտքը, ինչպես վայել է մի ազգի արժանավոր զավակի: Եվ մի անգամ չէ, որ Մխիթարը ականջալուր է լինում նրա իմաստուն խորհուրդներին, սթափության ու սառնասրտության կոչերին:

Յայոց պատմությունից բերված օրինակներով է Սաթենիկը ոգեսրում Մխիթարին, ցրում նրա տագնապները, բոլորին համոզում, որ եթե «քուրքերն առնեն Սյունիքն ու Արցախը, ապա Յայոց աշխարհի վրա հավիտենական գերեզմանաքար կդրվի: Յայրենասիրության, անձնականը հայրենիքի փրկությանը զոհաբերելու վարակիչ օրինակ է ցուցաբերում Սաթենիկը յուրաքանչյուր քայլափոխի, հատկապես վիպական այն դրվագում, երբ իր ունեցած ամբողջ զարդերը առանց վայրկյան իսկ վարանելու նվիրում է հայրենիքի պաշտպանության սուրբ գործին, անգամ տոհմական մասունքներն է զոհաբերում բանակի կարիքներին՝ առաջնորդվելով պատմությունից քաղած այն դասերով, որ «Օսմանլուն ուժեղ է, ահօնի, և նրա թաթերը կտրել կարելի է միայն մեծ, կանոնավոր մշտական զորք ունենալու դեպքում: «Ինացած եղեք, որ անկախ ու հաղթող են եղել այն թագավորները, ովքեր մեծ ու մշտական զորք են ունեցել» (2-րդ, 533):

Նրա համար «չկա ավելի թանկագին զարդարանք, քան երկրի ազատությունը», և նրա օրինակին հետևում են բազում կանայք՝ շրջելով Յայաստանի տարբեր գավառներում ու միջոցներ հայթայթելով բանակի կարիքների համար: Սա բոլոր ժամանակների հայ կանանց վարքագծի բնորոշ կողմերից մեկն է, որ ավանդվում է դարեղար: Սաթենիկը հիանալի է զգում ժամանակի զարկերակը և «եռամեծար պատմիչների կարգով» քայլ առ քայլ ամբողջացնում է նրա համապատկերը՝ Դավիթ Բեկի ու Մխիթարի հաղթանակները՝ ոգեսրությամբ ու խանդաղատանքով, ողբեր-

գությունները, դավաճանությունները՝ սրտի խոր կսկիծով ու արգահատանքով. «Ավաղ պատմության ջանքերին և եղուկ սկսմանս, որովհետև խնդրությամբ չեմ կարողանում շարադրել վեպս, այլ լցված եմ սգով ու ահով, հոգնած եմ անթիվ ցավերից ու թանձրատարափ ողբերից: Պակասում է ուժը Սյունյաց տան: Չկա թշնամիներին սանձող Դավիթ Բեկը, որ բոլորի սիրտը հանգուցանում էր: Մտքերով լքեց ու դավաճանեց Ագուլիսի պարոն - տեր Մուսին: Բարին սկսեց ի փախուստ դառնալ, եկավ չարն ու խռովությունը... Տե՛ր, դու արիացրու հայազունս, որ սպասում են քո աջակից ձեռքին » (6-րդ, 683 – 684):

Մեծ մտահոգություն ունի Սաքենիկը, խոր տագնապներ՝ պայմանավորված զարգացող իրադարձությունների ծավալումների, մելիքների շրջանում պայքարի նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունների, բանակի ու ժողովրդի որոշ շերտերում հուսահատության տրամադրությունների խորացման ու տարաբնույթ այլ հանգամանքներով: Ամենամեծ տագնապն ու մտահոգությունը, սակայն, մատյանն էր. «Թեև հոգնել եմ տիվ ու գիշեր դառն պատմություններ հյուսելուց, բայց շտապում եմ, որովհետև ահ ունեմ, թե պարտքով կմնամ մարդկանց ու աշխարհի առաջ. .» (6-րդ, 683): Սաքենիկն օգում է, որ ժամանակը հայերի օգտին չի աշխատում, որ հայկական ուժերը ժամ առ ժամ սպառվում են, որ Մխիթարի շուրջ դավեր են նյութվում, որ դավաճանության որդը արդեն իսկ բույն է դրել մելիքներից ու նրա զավակներից, Մխիթարին հավատարիմ հարյուրապետերից շատերի հոգում: Այս դաժան, օրհասական պահերին է դրսնորվում Սաքենիկի վեհությունը, ոգու անկոտրում ուժը, սառնասրտությունն ու սթափությունը: Ու նա մինչև վերջ հավատարիմ է մնում հայրենիքի պաշտպանության, Մխիթարի կողքին լինելու ու նրան հոգեպես սատարելու ուխտին:

Ինչպես վեհանձն կերպով ապրել, նույնպես էլ վեհանձն կերպով է Սաքենիկը կնքում իր մահկանացուն՝ ի հեծուկս հայ գերիներին տանջամահ անող ու լլկող թուրք զազազած ամբոխի ու զինվորների, արյան հոտից մարդկային դեմքը կորցրած մոլլաների: Նրա պահվածքը, որ վեհ էր ու անսասան, մահվան հանդեպ ցուցաբերած նրա արհամարհանքը ցնցում է անգամ թուրք փաշային: Արժանապատվության բարձր զգացումով է Սաքենիկը կնքում իր մահկանացուն՝ մինչ այդ սպանել տալով բռնությամբ թլպատված իր որդուն, որ հետագայում ենիչերի չդառնա, չհեղի անմեղ մարդկանց արյունն ու չարժանանա անեծքի:

«Մխիթար Սպարապետ»-ը մեր գրականության ամենախիտ բնակեցված վեպերից մեկն է, ու նրա կերպարները ներկայացնում են ժամանակի ու պատմության ամենատարբեր կողմերն ու դրսնորումները, անձնական կյանքի բոլոր բնագավառները: Սյուժետային ճյուղավորումները իրենց մեջ են ներառում հասարակական բոլոր խավերի ներկայացուցիչներին՝ ռազմական գործիչներ, իշխանավորներ, եկեղեցականներ, գոչի ու մտքի մարդիկ, զինվորներ ու գեղջուկներ՝ հոգեկան տարածեա դրսնորումներ ունեցող մարդիկ: Յայրենիքին ու ազատագրական պայքարին նվիրված ուխտյալներ են նրանցից շատերը, մի որոշակի մասը՝ անհանդուրժողականության, վրեժխնդրության, չարության, անտակ ատելության մարմնացումներ, որոնց համար առաջնայինն իրենց ունեցվածքն ու շահն է, սեփական կաշին թեկուզ հազարավորների արյամբ փրկելը:

Ազատագրական պատերազմի գլխավոր ուժը Ս. Խանզադյանը մարմնավորում է համաժողովրդական միասնության ու անկոտրում կամքի ինքնաբուխ դրսնորումներում: Պատերազմի ժողովրդականությունը պահպանելու նպատակով չի անտեսում նաև հոգևորական-իշխանական դասին, առևտրականներին, արհեստավորներին:

Վեպի թե՛ պատմական և թե՛ գեղարվեստական կերպարներից յուրաքանչյուրը յուրովի է ընկալում ժամանակի ոգին, պատմական պահի թելադրանքը: Ժամանակը երկու ճանապարհ է առաջադրում՝ պայքարելով և կռվելով ապրելու կամ թշնամու հետ հաշտվելու, նրա լծի տակ գոյատևելու ճանապարհները: Ժամանակը այլընտրանքային սողանցքներ չի թողնում: Այդպես է եղել մեր պատմության ողջ ընթացքում, այդպես է նաև ազատագրական պայքարի նոր շրջանում:

Մխիթարն ունի հստակ դիրքորոշում՝ «Մեր ժողովուրդը կապրի միայն դիմադրության գնով, իր բոլոր ուժերն ի մի գումարելու, թշնամուն դիմադիր կանգնելու միջոցով: Ուրիշ ելք չկա» (2-րդ, 528):

Այս ոգով են Մխիթարի զորագնդերը բազմից հաղթում ու գլխովին ջախջախում թվով տասնապատիկ ավելի թուրքական զորքերին Մարաղայում, Շոշիի կիրճերում, Ագուլիսի մատուցներում և այլուր:

Բայց պատմության փորձն արձանագրում է նաև մի այլ մտայնություն. խուսափել թշնամու դեմ առճակատումից, հավատալ նրա գթարտությանն ու վայր դնել գենքը, ինչը հոգևոր ու ֆիզիկական ոչնչացման ամենակարծ ճանապարհն է:

Ժողովրդի գոյատևման այլընտրանքային ճանապարհի ընտրության այս մտայնությունը Ս. Խանզադյանը մարմնավորում է Տեր-Ավետիսի ողբերգական կերպարում:

Նրա կերպարում Ս. Խանզադյանը մարմնավորում է հոգևորականին ու աշխարհիկ կենսահայեցողության տեր անհատին, որին տանջում են ճանապարհի դժվարին փնտրութեները: Ծանր ապրումները հոշոտում են նրա հոգին, ալեկոծում մտքերը, պաշարում ծանր ապրումներով. «Խաբվեցի՞նք, - մտածում էր Տեր-Ավետիսը դառնացած, - կործանիչ ուղի բռնեցինք: Կրակի մատնեցինք ժողովրդին: Պետք չեր դիմադրել: Յենց սկզբից պետք է ենթարկվեինք սուլթանին, կատարեինք նրա կամքը՝ այս մի բուռ ժողովրդին պահպանելու համար» (2-րդ, 691):

Նրա բոլոր մտածումները, տագնապները, ծանր ու օրիասական ապրումները պտտվում են ժողովրդին վերջնական կործանումից փրկելու առանցքի շուրջ, ու նրան թվում էր՝ հասել է ժամը՝ ժողովրդին ապրեցնելու, ազգը հայոց, Յայաստան աշխարհը կործանումից փրկելու՝ թեկուզ դարերի անեծքն իր վրա առնելու գնով. «Գնացեք փաշայի ոտքը: Ասացեք՝ հպատակվում ենք զորքով ու ժողովրդով, մեծով ու փոքրով, քահանայով ու աշխարհականով: Ասացեք, որ աքլորականչին քաղաքի դրաները բաց կանեն նրա առջև: Պայմանն այս է՝ ձեռք չտալ մեր քաղաքին ու ժողովրդին, չապատակել գավառները: Մենք նրան հարկ կտանք: Ապա երդվում ենք՝ այլև գենք չբարձրացնել սուլթանի դեմ... Գնացեք, ուրիշ ճար չկա» (2-րդ, 698):

Մխիթարը լավ է հասկանում Տեր-Ավետիսին՝ նրա մեջ տեսնելով մոլորյալին, բայց «ոչ երբեք դավաճանին»: Կործանվում է Յալիձորը, բայց սերունդներին է հասնում մոլորված Տեր-Ավետիսի պատգամը՝ խաբված հոգու վերջին ծիչը. «Չհավատաք թուրքին, հայե՛ր: Չհավատաք այսօր, վաղը և հավիտենից հավիտյան» (2-րդ, 730):

Պատմական ժամանակի սպառիչ պատկերը վեպում Ս. Խանզադյանը ամբողջացնում է բազմաթիվ ուրիշ կերպարներում (Մելիք Բարխուդար, Թովմա, Փոքր Գորգի, վարպետ Վրթանես, Պղինձ Արթին, Միհրան հարյուրապետ և շատ ու շատ ուրիշներ):

Տեր Ավետիսի պես ողբերգական, հոգեկան ծանր ապրումների, երկվությունների մեջ խճճված կերպար է Խնձորեսկի մելիք Բարխուդարը, ով երբեք չհամակերպվեց, որ «ռամիկ» Մխիթարն է Բեկից հետո ստանձնել գահերեց զորավարի պաշտոնը, և փորձում էր մելիքներին ներշնչել, որ «անտոհմ ազնվական», «կոշտ ռամիկ» Սպարապետը, այնուամենայնիվ, «ապստամբ է, կարող է ոտնատակ անել արքայական գահերն անգամ»;

Հոգեկան խռովքների պահերին մելիք Բարխուդարը երբեմն մտածում է սպանել Սպարապետին, նրա կողմից մելիք կարգված Թուրինջին, բոլոր ձագեծորցիներին:

Սակայն, ի տարբերություն **Տեր Ավետիսի**, մելիք Բարխուդարը չի դիմում վճռական քայլերի, չի բռնում դավաճանության ուղին: նիշտ է, Դավիթ Բեկի մահվանից հետո նա ուղիներ է որոնում «սպարապետության պատիվն իր տուն» բերելու համար, բայց ամենավճռական պահին գերադասում է հայրենիքի պատիվը ու զոհվում է սեփական դավաճան որդու ձեռքով.

- Զեռքդ հեռու պահիր Մխիթարից, տիրասպան,- գոռաց մելիքն ու նետվեց որդու վրա:

- Յեռացիր, հայր,- ոտքը տապալված Մխիթարի մեջքին դնելով՝ բղավեց Միհրանը: - Յեռացիր, չեմ խնայի:

- Դավաճան, ուրացող,- աղաղակեց մելիքն ու խոյացավ որդու վրա:

Սակայն որդին հասցրեց հարվածել հորը: Սա ընկավ Մխիթարի մոտ:

«Մխիթար Սպարապետ»-ում ժամանակի դիմագիծն ամբողջացնում են մասսայական տեսարանները, սովորությունների, բարքերի նկարագրությունները, կոլորիտային պատկերները, հերոսների բառապաշարը՝ համեմված գրաբարյան ու ժողովրդախոսակցական լեզվի տարբեր շերտերով:

Քննադատության մեջ բազմիցս նշվել է, որ Խանզադյանը մասսայական տեսարանների, հատկապես ճակատամարտերի նկարագրության մեջ վարպետ է: Գեղարվեստական մեծ վարպետությամբ են նկարագրված Երևանի պաշտպանության, Մարաղայի, Յալիձորի, Մեղրու ճակատամարտերը, որոնք ընթերցողին են ներկայացվում ժամանակին բնորոշ առանձնահատկություններով, կոլորիտային գույններով ու երանգներով, մարտավարության ձևերով ու եղանակներով: Այդ նկարագրությունների մեջ զգացվում է ժամանակի տեղագին շունչն ու ոգին, իրադարձությունները զարգանում են ամենատարբեր ուղղություններով: Երեք կողմից պաշարված ու անդնդախոր ծորով, աննատչելի լեռներով շրջափակված Յալիձորը դիմադրում էր Աբդուլահ փաշայի բազմահազարանոց զորքին. «Լեռնային փոքրիկ տափարակների վրա Երևան էին փաշայական սրագագաթ վրանները, որի գլխին տնկված էին փնջով գնդածայր մականներ, ռազմական դրոշներ: Փաշաների ու եվրոպացի ռազմական խորհրդատունների բազմությամբ շրջապատված Աբդուլահ փաշան կանգնել էր գետի ծախ ափին, մի բարձր, անտառազուրկ բլրի և աչքերը կողցելով նայում էր Յալիձորի պարիսպներին » (6-րդ, 666): Յալիձորը գերմարդկային ճիգերով դիմադրում էր թուրքերին: «Չորքն ու քաղաքի բնակչությունն ամբողջովին գտնվում էր պարիսպների վրա, պարիսպներից գնդակահար էին անում ներքնում սողացող մարդկային գորշ

զանգվածը, կանայք հալած ձյութ էին թափում պարիսպներից, պատաճիները չոր խոտի խրձեր էին վառում ու նետում գրոհող բուրքերի գլխին: Լեռնալանջերին, ձորերում ու մացառուտներում բազմաթիվ դիակներ էին ընկած... (6-րդ, 679): Այսպիսի պատկերներով է Ս.Խանզադյանը ներկայացնում մարտերի նկարագրությունները, որոնք օրվա տարբեր ժամանակահատվածներում տեսանելի էին դաշնում տարբեր գույներով ու երանգներով: Գիշերվա ժամերին ձորերը լուսավորվում են խարույկների բոցից, լուսաբացին ամեն ինչ ծածկվում է շերտերով ու տարբեր տրամաչափի գենքերից ժայթքող կրակով ու ծխով, կեսօրին արևի բարկ ճառագայթներից փայլատակում են սրերն ու գենքերը, երեկոյան լեռները պատվում են մանուշակագույն շղարշով, գիշատիչ թռչունների կռնչոցն արձագանքվում է խոր ծերպերում, մարդկանց ականջները խլանում են ձիերի վրնջոցից, արկերի պայթյուններից, սրերի շաշունից, վիրավորների օրհասական ծիչերից:

Ս.Խանզադյանի պատկերները խիստ համահնչուն են ու իրավիճակային, տեսանելի են ու զգացական, դրանք մարդկային անհուն տառապանքների ու ցավի, հերոսական մղումների, թշնամու վայրագրությունների տիպական խորհրդանշեր են...

Ժամանակի համապատկերն ամբողջացնում են մասսայական տեսարանները՝ հարսանեկան հանդեսները, տոնախմբությունների ժամանակ հնչող գուսանական երգերը, թաղման ու իրաժեշտի արարողությունները: Ներկայացնենք ժամանակին բնորոշ մի քանի պատկերներ, որոնք խորհրդանշում են ժողովրդական ծխակատարությունները, սովորությունները, ավանդույթները. «Աղամամութից սկսած դողանջում էին շեների եկեղեցիների զանգերը: Նեղ հովտում հավաքվել էին հազարավոր մարդիկ: Պատերի տակ խռնվել էին ճակատները կարմիր ներկված մատաղացու ոչխարներ» (6-րդ, 23), - այսպես է դիմավորում ժողովուրդը պարսիկների դեմ տարած հաղթանակից հետո վերադարձող զորքին, փառաբանում իր քաջանարտիկներին: Ճնշում են ոգևորության բացականչություններ, զինվորների ճանապարհ ծածկվում է լեռնային թարմ ծաղիկներով: Խրոխտ քայլերով անցնում են հարյուրյակները, նրանց հետևից՝ երկրի տարբեր գավառներից զորքին միացած աշխարհազորայինները. «Զորքը գալիս էր քաշաթուխափ պես ծանր: Առջևից ծունկ ծնկի գալիս էին Մխիթար Սպարապետն ու հազարապետ Տեր-Ավետիսը: Յետո երևում էր Մելիք Բարխուդարի բուրդ գլխարկը՝ երկու որդիների հետ, կողքին կարճահասակ, չորուցանաք մելիք Եգանը, ժապաղեն Բաղրը: Բոլորի գլխարկներին վառվում էր կարմիր մահուղի մի նեղ ծվեն՝ ինչպես կրակը ատրուշանում: Դրոշակները բռնել էին

բարձր, երբեմն երևում էին նրա վրայի պատկերները՝ հասկ, գութան, թուր և առյուծի գլուխ» (6-րդ, 23.):

Ս.Խանզադյանը վառ գույներով է ներկայացնում ժամանակի կոլորիտը, նրա շունչը, ոգին: Այս առումով բնութագրական են ուրախության տոնահանդեսների, հարսանիքների նկարագրությունները: Լեռնցիներն ինչպես քաջաբար կրվել, թշնամուն դիմակայել, այնպես էլ ուրախանալ գիտեն: Ամենուրեք լսվում են երգեր: Յասան Յեթումի երգի հնչյունները տարածվում են ուրախությունների համար հատուկ կահավորված «սրահներում», լցվում մարդկանց սրտերը, ալեկոծում նրանց, արթնացնում ջերմ հույզեր ու թրթիռներ.

Թե շաբաթե-շաբաթ քեզի մի պաշիկ տամ,  
Մեզի մի պաշիկ տամ,  
Դու ել առ, թե կարաս:  
  
Թե ամսե-ամիս կոճակս արձակեմ,  
Կոճակս արձակեմ,  
թե կարաս:  
  
Թե տարեց-տարի քեզ կտրիճ որդի  
քեզ կտրիճ որդի,  
կտամ, թե կտաս.... (6-րդ, 65)

Տեսանելի պատկերներով են ներկայացվում հարսանեկան սովորությունները. այդպիսի մի բնորոշ օրինակ է Գոհարի ու Թովմայի պսակադրության արարողությունը հարսանքավորների հագուկապը, աղջիկների նուրբ, տղաների կրակոտ պարերը:

Իսկ թաղման ու հրաժեշտի արարողությունների ժամանակ հնչում են տխրության ու ցավի մրմունջներ. «Կոիվ Եղավ Քաշաթաղի լեռներում, // ռամկի արյամբ ծաղիկները սկացան...» (6-րդ, 65): Խիստ բնորոշ է Պավիթ Բեկի հուղարկավորության նկարագրությունը, որի ընթացքում «հեթանոսական զարհութելի ողբագնան» միախառնվում է «Մաշտոցի հանգստին»: Խիստ բնորոշ պատկեր է, որովհետև հեթանոսության «հետքերը դեռ մնացել էին ժայռերի ծալքերում ու մթին անտառներում կորած գյուղերում» (6-րդ, 515): Արարողությունը ավարտվում է խիստ խորհրդանշական պատկերով. «Երբ վերադառնում էին հանգստարանից, արդեն մութն ընկել էր: Յանկարծ մի զարմանալի վառ աստղ պոկվեց տեղից ու երկնքի կապույտ շերտի վրա հրեղեն գիծ քաշելով՝ գնաց, ընկավ կապուտջիղ լեռան ատամների վրա» (6-րդ, 596):

1991 թվականին Ս. Խանզադյանը իրատարակեց «Շուշի» պատմավեպը, որը թե՛ ժամանակագրական, թե՛ ազգային-ազատագրական պայքարի առումով «Մխիթար Սպարապետ»-ի շարունակությունն է: Դավիթ-Բեկի մահից հետո, ստանձնելով գահերեց զորավարի պարտականությունները, Մխիթարը քայլ առ քայլ իրագործում է Բեկի ծրագրերը: Սյունիքում այլևս թշնամու ոչ մի զինվոր չկար, ու պահն էր արդեն արշավել Արցախ՝ թուրքերին այնտեղից ևս հեռացնելու համար: Նա մարդիկ է ուղարկում Արցախի գյուղերը՝ ժողովրդին ապստամբության նախապատրաստելու համար, միաժամանակ սպասում է Աբդուլահ փաշայի խաղաղության դեսպանին ու համոզված էր, որ նա գալու է: Այդ մասին ակնարկներ էին արել Ստամբուլից Եկած սուրբանդակները. «Սուլթանը դժգոհ է, որ խճանկար է Սյունիքի գործերում: Իսկ Սյունիքն ազատ է նորից՝ ճահուկ-Շահապունիքից մինչև Գեղամա ծովակի ափերը, Արաքսից մինչև Քաշաթաղի մթին ծմակները (2-րդ, 756):

Ինչպես «Մխիթար Սպարապետ»-ում, այնպես էլ «Շուշի» վեպում պատմական իրադարձությունների իրական ժամանակը որոշակիորեն կոնկրետ է՝ 18-րդ դարավերջի վերջին տասնամյակները: Սակայն այս վեպում նույնպես գեղարվեստական ժամանակը հերոսների հիշողություններում ավելի լայն է և մղվում է դեպի պատմության խորքերը: Միաժամանակ անցյալի բազում իրադարձությունները տարբեր մեթոդներով ու դրսնորումներով հակադրվում կամ համադրվում են ներկային:

«Շուշին» նույնպես ճիշտ ժամանակին գրված վեպ է, ինչը զգալիորեն մեծացնում է նրա կարևորությունը, արդիական հնչեղությունը: Վեպը գրվել է 1986-1988 թվականներին և լույս է տեսել 1991 թվականին՝ Սպիտակի ահավոր երկրաշարժից հետո, երբ ոչ միայն բազմահազար զոհեր եղան, այլև կոտրվեց հանրապետության տնտեսական ողնաշարը, արցախյան գոյամարտի առաջին հերոսական շրջանում, երբ անհավասար պատերազմ էր մղվում վայրագ թշնամու դեմ, ինչը կրկին խոսում է վեպի կարևոր նշանակության, հեղինակային նպատակամիտումի արդիականության մասին:

«Շուշին» ճիշտ ժամանակին հղացված ու գրված վեպ է նաև մի այլ նկատառումով՝ ազերի վայ-պատմաբանների իրական դեմքը բացահայտելու, նրանց պատմության գեղձարարությունները ի ցույց դնելու տեսանկյունից:

Այստեղ տեղին ենք համարում համառոտակի անդրադառնալ Ս. Խանզադյանի՝ արցախյան գոյապայքարի ակունքներում կանգնած անխոնջ հայրենասերի եռանդուն

գործունեությանը, որը շատերի կողմից այժմ կարծես թե մոռացության է մատնվել: Այժմ շատ քչերն են հիշում կամ երկի թե չեն ել հիշում, որ Ս. Խանզադյանը հազվագյուտներից մեկն էր այն հայ մտավորականներից, որ ոչ միայն իր գեղարվեստական ստեղծագործություններում, այլև հրապարակախոսական կրօնու ելույթներով, կենտրոնական իշխանություններին հղած համարձակ նամակներով ու դիմումներով բացահայտում էր ազերիների պանթուրքիստական նպատակները, զեղծարարություններն ու կեղծիքները, փաստական հավաստի տվյալներով հաստատում պատմական ճշմարտությունը, Արցախ աշխարհի՝ այնտեղ ապրող հայության բնօրրան լինելը: Դա հատկապես կարևոր ու արդիական էր 1980-ականների վերջերին, երբ Խորհրդային Միությունն իր վերջին օրերն էր ապրում, ու անվանի գրողը հեռատեսորեն զգում էր, թե միության փլուզումից հետո ինչպիսի ջանադրությամբ էր գործի դրվելու թուրք-ադրբեջանական կեղծիքների, սադրանքների մեջենան, որն ընթացքի մեջ էր դրվել դեռևս 1920-ական թվականներից, երբ Արցախը ստորաբար բռնակցվեց արհեստականորեն կազմավորված Ադրբեջան կոչվող հանրապետությանը, Նախիջևանը հայաթափվեց իիմնովին, ու լայն ասպարեզ բացվեց զիաբունիաթովյան ստահակների համար: Այս ոհմակի ախորժակն այնպես բացվեց, որ սկսեց շրջանառության մեջ դնել նաև Զանգեզուրի՝ իրենց պատմական տարածքը լինելու գառանցանքը:

Բայց ճշմարտությունը, հատկապես պատմական ճշմարտությունը, ինչքան էլ աղավաղվի ու խեղաթյուրվի, միևնույն է, չի կարող անտեսվել ու ծածկված մնալ, ինչպես չի կարող ծածկի տակ մնալ լույսը: Ու պատահական չէ, որ անվանի գրողը «Շուշի» վեպի համար բնաբան է ընտրել պատմիչ Մովսես Կաղանկատվացու «ճշմարտությունը չի կարող ծածկված մնալ, և լույսը փակի տակ լինել» մարգարեական խորիմաստ խոսքը, որը բանալի կարող է լինել ստեղծագործության նպատակադրումների ու գաղափարական բովանդակության բացահայտման համար:

Ս. Խանզադյանը լավ գիտեր ոչ միայն իր ծննդավայր Սյունիքը, նրա ամեն մի գյուղի, ամենափոքրիկ բնակավայրի պատմամշակութային կոթողների պատմությունը, ժողովրդական ավանդույթները, սովորությունները, բարքերն ու կենցաղը, մարդկանց, այլև քաջածանոթ էր Արցախ աշխարհին, շրջել էր նրա բոլոր պատմական վայրերում, գրի առել բազմաթիվ պատմություններ Արցախում մղված հերոսամարտերի, իրենց կյանքը Արցախի ազատության համար զոհասեղանին դրած հերոսների մասին: Սյունիքում և Արցախում կատարած իր «անմիջական գրառումները հարստացրել է

հիշատակարանների, դասագրքերի, կալվածագրերի, կոնդակների մեջ «ավագահատիկների նման ցրված» գլխավոր վկայություններով՝ դրանց ավելացնելով նաև այս կամ այն բնակավայրում հետագա տարիներին (1929 թվականից այս կողմ) կատարած օրագրային գրառումները»<sup>40</sup>:

Եվ պատահական չէ, որ «Շուշի» պատմավեպում այնքան մանրամասնորեն է ներկայացված Արցախ աշխարհը, որը փոփած էր Գանձակից մինչև Արաքսի ափերը, նրա պատմամշակութային կոթողները՝ հայկական ճարտարապետության բնորոշ ոճերով ու զարդաքանդակներով, հոգևոր կենտրոնները, եկեղեցիները՝ իրենց ազգապահպան նշանակությամբ, քրիստոնեական մարդասիրության բարձր առաքինություններով։ Սա նույնպես ծանր ապտակ է պատմության գեղջարարներին, որոնք, ինչքան էլ որ իրենց կոտորեն, չեն կարող ոչ Սյունիքում, ոչ էլ Արցախում թուրքական մշակույթի որևէ հետք հայտնաբերել։

«Շուշի» պատմավեպում նկարագրված իրադարձություններն ունեն պատմական հավաստի հիմքեր, կերպարների ճնշող մեծամասնությունը կոնկրետ դեմքեր են։ Պատմական գործողությունների իրական ժամանակը ներկայացնելիս գրողը պահպանում է վիպական գործողությունների ժամանակի, տեղանքի, գործողությունների մասնակից անձանց հավաստիությունը։

Վեպում ներկայացված պատմական ժամանակում Արևելյան Հայաստանում և Արցախում, պայմանավորված աշխարհաքաղաքական նոր ու անկանխատեսելի զարգացումներով, տեղի են ունենում լուրջ ու վճռորոշ փոփոխություններ։ Պետրոս Մեծի մահը, ռուսական զորքերի նահանջը, Նադիր շահի մուտքը Այսրկովկաս թելադրում են իրադրություններին համապատասխան դիրքորոշում։ Զայ մելիքների կազմակերպչական, հմուտ գործողությունների, կաթողիկոս Աբրահամ Կրետացու ջանքերի շնորհիվ ձեռք բերված հաջողությունները նոր շունչ են հաղորդում ռուսական զորքերի նահանջից հետո հուսախարված հայության ազատագրական ձգտումներին, ներշնչում հավատ պայքարի վերջնական հաղթանակի հանդեպ։ Այսպիսի քաղաքականության շնորհիվ հաջողվում է համագործակցել Նադիր շահի հետ, հարկադրել նրան ճանաչելու Սյունիքի և Արցախի հայության իրավունքները։

Ըստ ժողովրդական գրույցների ու ավանդությունների՝ Մխիթար Սպարապետի մահվանից հետո ազատագրական պայքարը սկսում են դեկավարել Մելիք Փարսադանի թոռ Այվազ Բեկն ու Ստեփան իշխանի որդի Մելիք-Ղուկասը։ Զենքը ցած չէին դրել նաև

<sup>40</sup> Աղաբարյան Ս., Յոդվածներ, դիմանկարներ, հուշեր, Երևան, 1982, էջ 352։

Արցախի գինականները, ովքեր նախկինում Գանձակի Բեկլարբեկությանը ենթակա Գուլիստանի, Խաչենի, Զրաբերդի, Վարանդայի և Դիզակի մելիքների գլխավորությանք, համագործակցության եզրեր գտնելով պարսիկների հետ, ինքնիշխանության համար հերոսական մարտեր էին մղում օսմանցիների դեմ:

Նադիր շահի հետ Դիզակի Մելիք-Եգանի գլխավորությանք Արցախի հայ մելիքների գինակցությունը ծնունդ տվեց վարչատարածքային նոր միավորի՝ Խամսայի մելիքություններին: Վավերացվեց այն, ինչին մոտ երկու տասնամյակ ձգտում էր Արցախի հերոսական ժողովուրդը. իինդ մելիքություններից միավորված նահանգը՝ Տող կենտրոնով, ճանաչվեց որպես ինքնավար մի երկիր, որի սահմանները ձգվում էին Գանձակի հարավային շրջաններից մինչև Արաքս գետը:

Իրադարձությունները զարգանում էին սրընթաց արագությամբ. 18-րդ դարի երկրորդ կեսին՝ Նադիր Շահի մահվանից հետո, Արևելյան Յայաստանում նորից սկսվում են տեղական խաների վայրագությունները, ակտիվանում ու թալանով են զբաղվում քոչվոր ցեղախմբերը, ավելի է խորանում պարսկա-օսմանյան հայահալած քաղաքականությունը, ինչի հետևանքով բարձրանում է ազատագրական պայքարի նոր ալիք :

«Շուշին» բաղկացած է չորս գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը վիպական գործողությունների նոր փուլ է ժամանակային իր տարածքի մեջ, նոր հանգույց: Այդ հանգույցների միասնության մեջ է ձևավորվում վիպական ժամանակը՝ իր տարբեր չափումներով:

Վեպում Ս. Խանզադյանն ընտրել է պատումի հետաքրքիր ու յուրօրինակ եղանակ. դեպքերն ու իրադարձությունները ներկայացնում է ոչ թե ինքը՝ հեղինակը, այլ իր հերոսները, ովքեր պատումի մեջ ներառում են ժամանակային որևէ հատված, տարածական կոնկրետ հարթություններ: Դեպքերն ու ծավալվող իրադարձությունները հիմնականում ներկայացնում են միանձնուհու կերպարում հանդես եկող Գոհարը, ով ընթերցողին ծանոթ է «Մխիթար Սպարապետ»-ից, Աբրահամ Երևանցի պատմիչը, ով նույնիսկ մարտերի թեժ պահերին անպակաս է իր մատյանից, Երբեմն-Երբեմն՝ Խնձորեստանի մելիք դավաճան Միրզեխանի կինը՝ Երնջիկը, ազգությամբ հայ Ալի Աբդուլ Յասանը, որը պարսից շահի դեսպանն է, որոշ դրվագներ՝ մի շարք երկրորդական կերպարներ:

Վարպետորեն մի ամբողջության մեջ միահյուսելով բոլորի պատմածները՝ Ս. Խանզադյանը ստեղծում է բազմաճյուղ սյուժետային ծավալումներ, հանգույցներ, կոնֆլիկտներ, բախումներ, որոնք ամբողջացնում են ժամանակի համապատկերը:

Վիպական ժամանակում ամենամեծ տեղը հատկացված է Գոհարին ու Աբրահամ Երևանցուն, որոնք իրենց «պատմությունների» մեջ ներկայացնում են բազմաթիվ հերոսների՝ հայոց Արևելից իշխան Մելիք-Ավան Եգան, Զրաբերդի տեր Աստվածապով սպարապետ, Գյուլիստանի մելիք Բեկլար, Մեծլում Բեկ, Երնջակի տեր Յովհաննես Խանդամիրյան, Յովսեփ Բեկ, Աղամ Բեկ, բազմաթիվ հոգևորականներ, զինականներ, աշխարհազորայիններ, նաև՝ Արիֆ-Ահմեդ փաշա, Նադիր Խան Աշրաֆի, սարը Մուստաֆա, Փանահ Խան, Վարանդայի մելիք Դավաճան Շահնազար և բազում ուրիշներ:

Վեպի առանցքային կերպարներից է Գոհար իշխանուին, ով, Մխիթարի սպանությունից հետո դաժան ու արդարացի դատաստան տեսնելով հարազատ եղբոր ու նրա համախոհ դավաճանների հետ, ստանձնում է միանձնուիու դեր և հերոսական գործունեություն ծավալում Արցախում: Միանձնուիու տարազը մի տեսակ ազգային շղարշ է Գոհարի համար: Նա նախկին Գոհարն է՝ հպարտ ու վեհանձն, կանացի ու նրբազգաց, ազնիվ ու անդավաճան, միաժամանակ՝ դաժան ու անողորմ՝ հայ աղջիկներին լլկող թուրքերի ու պարսիկների, թալանչինների ու ավազակների, հատկապես՝ դավաճան հայերի նկատմամբ:

Ս. Խանզադյանը Գոհարին օժտել է ժամանակի սուր զգացողությամբ: Յատկանշական են վեպի սկզբում նրա մտորումները. «Ժամանակի ամեն հատված իր եսն ունի, իր ոգին է ընդգծում: Միթե այդպիսին չէր ճշմարտության ոգի Մովսես Խորենացին: Այդպես էին Փավստոսը անաչառ, մյուս Մովսեսը, ով հենց մեր Արցախի Կաղանկատայքից ծագեց, և Կիրակոսը՝ Գանձակի լույսն ու խիղճը...»<sup>41</sup>

Տարիներ են անցել, բայց Գոհարը կարծես չի փոխվել բոլորովին: Նա հաճախ է հանում «կուսակրոնի ուրուրը», մյուս սկերը ու հագնում հարյուրապետի այն զգեստը, որով մտել է Մարադայի ճակատամարտը: Յենց այս պահերին է նա մտովի Մխիթարի հետ. «Օ՛, Մխիթարս...Օ՛, սպանված տերս, մորթված աստվածս: Բայց ես ել քեզ հետ էի, չէ՞: Քո ստվերը, քո ոտքի փոշին: Ես... Եվ մենք փրկեցինք Յայոց պետական տունը՝ Նախիջևանի հովտից մինչև Կուր գետի Գանձակը: Կա Յայաստանը: Այո՛, կա անընկուն ու վեհ: Կա: Ուրեմն դու ել կաս, Մխիթարս...»<sup>42</sup>

Թշնամու դեմ բազմաթիվ բախումների ընթացքում, որոնց մասնակցում էր նաև Գոհարը՝ «գլխին քաշած հարյուրապետի մորթե ցցուն գդակը, դրա վրայի սև արծիվը, որ Յասան Զալայան տոհմի զինանշանն էր, ճանկերում՝ էգ գայլ», և որը նրան քանի-քանի

<sup>41</sup> Խանզադյան Ս., Շուշի, Երևան, 1991, էջ 22:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 7:

տարի առաջ Սաթենիկ տիկինն էր նվիրել, նա հայ զինվորներին ներշնչում էր Մխիթարի ոգով, քաջության աներևակայելի օրինակներ ցույց տալիս:

Սաթենիկ տիկնոց պես նա էլ է դիմում նաև հայ կանանց. «Լսեցեք, տիկիններ: Զեր ամուսինների առաջ փակ պահեք ձեր ծոցերը, եթե նրանց մեջ ահ տեսնեք թուրքից... Թե հարկ լինի, ձեր ամուսիններին մղեցեք մարտի: Գերադասելի է ընկնել սուրբ հոչակով, քան ապրել ստրուկ...»<sup>43</sup>:

Բոլոր գլխավոր և երկրորդական կերպարների միջոցով Ս. Խանզադյանն անընդհատ շեշտում է վեպի հիմնական գաղափարը. «Յայոց երկիրն ի սկզբանե, Նոյի աշխարհ գալուց սկսած, Յայաստանն է: Առ այսօր ազատ ու ինքն իրեն է Յայաստան աշխարհի կեսը՝ Գուգարքի Բողնովիորն լեռնաճյուղերից մինչև Արաքսի եղեգնուտները, Կուր և Արաքս գետերի ջրախառնուրդից մինչև Գողթանի ու Երնջակի տափարակները...»<sup>44</sup>:

Ժամանակի հերոսական ու ողբերգական իրադարձությունները չեն մարել Գոհարի հոգու կորովը, հույսն ու հավատը գալիք լավ օրերի հանդեպ, թեպետ դեպքերի զարգացումները բոլորովին էլ լավատեսություն չեն ներշնչում: Այստեղից էլ հիմնական եզրահանգումը. «Վայ էն ազգին, որ չի հավատում իր վաղվա օրվան», և Գոհարի շուրթերից հնչող պատգամը. «Յույսը կորցնելը կորստաբեր է, ինչպես ճակատամարտում կորցնես սուրդ: Վիատությունը փութացնում է անկումը: Ինացեք, հուսահատությունը տառապյալների կործանման գավազանն է: Երբեք չընդունեք նման չարիք: Ամուր եղեք հոգով, նամանավանդ ոգով»<sup>45</sup>:

Գոհարն արժանապատիվ կեցվածքով է իրեն պահում ամենուր. իշխանական հավաքներին, տոնախմբությունների ընթացքում, անգամ ռուսաց կայսրութու պալատում, ուր առաջ է բերում պալատական կանանց զարմանքն ու հիացմունքը: Գոհարն ունի աշխարհընկալման իր ուրույն տեսակետները: Նրա ներքին մենախոսությունները փիլիսոփայական խտացված մտքեր են աշխարհի, կյանքի, մարդու եռթյան, անցակորի ու հավերժականի մասին: Յայոց պատմության, փիլիսոփայական մտքի հայկական դրսնորումների վերաբերյալ նրա խոր իմացությունը, վերլուծական միտքը, տրամաբանությունը մեկ անգամ չէ, որ շարժել են շատ-շատերի անկեղծ զարմանքն ու հիացմունքը:

Ինչպես «Մխիթար Սպարապետ»- ում Սաթենիկը, այնպես էլ «Շուշի»-ում Աբրահամ Երևանցին, իրենց ժամանակների տարեգիրն են: Վեպում վերջինս ինքն է ներկայացնում

<sup>43</sup> Նոյն տեղում, էջ 24:

<sup>44</sup> Նոյն տեղում, էջ 25:

<sup>45</sup> Նոյն տեղում, էջ 64:

իրեն և իր գործը. «Ես՝ ողորմելի Աբրահամ Երևանցիս, ես՝ աշխարհը ոտքիս տակ տված վաճառականս, ահա Տող բերդում եմ, կանգնած ահեղ իշխանութի Գոհար միանձնուիու դեմ-դիմաց... Միանձնուիին առաջինը դիմավորեց ինձ, հայացքում խոցող հարց՝ ինչ ես բերել, հույս, թե անհուսության սարսափ»<sup>46</sup>:

Աբրահամ Երևանցին գրի է առնում բոլոր կարևոր և ոչ կարևոր թվացող անցքերը՝ ամբողջացնելով ժամանակի համապատկերը, սերունդներին հանձնելով Արցախի հերոսամարտիկների սխրագործությունները, անկոտրում ոգին, ազգային արժանապատվության պահպաննան բուռն ձգտումները:

«Շուշի» վեպում Ս. Խանզադյանը կերտում է ուշագրավ կերպարների մի մեծ պատկերասրահ, և այդ կերպարներից յուրաքանչյուրը բնորոշ կողմերով է ներկայացնում իր ապրած ժամանակը:

Ինչպես «Մխիթար Սպարապետ»-ում, այնպես էլ «Շուշի»-ում հայրենիքի պաշտպաններին միավորում են ազգի միասնության, ազգային արժանապատվության գաղափարները: Դավիթ Բեկի և Մխիթարի գործը շարունակում է Մելիք-Ավան Եգանը՝ «Շուշի» վեպի ամենաընդգծված կերպարներից մեկը: Հենց նրա կերպարով է Ս. Խանզադյանը բացահայտում պատմության ու ժամանակի գլխավոր միտումները:

Թուրքերի նկատմամբ մի շարք փառահեղ հաղթանակներից հետո Մելիք-Ավան Եգանը՝ «Զայոց Արևելից կողմանց իշխանը», ներկայանալի շքախմբով մեկնում է Պետերբուրգ՝ ռուսների հետ դաշինք կնքելու, թուրքերի դեմ միասնական ճակատ ստեղծելու նպատակադրումներով: Գերագահ Մելիք Եգանը դեռ ճանապարհին է Պետերբուրգի դեսպան Իվան Կալաշնիկին պարզաբանում այցի նպատակը. «Մի բան լավ ինացիր, գոսպադին պոլկովնիկ, մենք՝ հայերս, ոչ թե ողորմություն ենք աղերսում ձեր աստվածային կայսրություց, այլ՝ Եղբայրական ձեռք, ազնիվ դաշինք»<sup>47</sup>: ճիշտ և ճիշտ Դավիթ Բեկի վարած քաղաքականությունը, որը հենվում էր ազգային բարձր արժանապատվության գիտակցման ամուր իիմքերի վրա: Այս գիտակցությամբ է Մելիք Եգանը ներկայանում նաև կայսրութի Աննային՝ «Կուգենայինք, որ աստծո կամեցնությամբ մեծ Ռուսիան Եղբայրական դաշն կնքի Զայաստան աշխարհի հետ»; Տպավորիչ է, թե ինչպես է հայ իշխանը պատասխանում կայսրությունը «Մե՞ծ է Արմենիա աշխարհը» հարցին և ինչպես է ներկայացնում այդ մեծությունը, հայոց աշխարհի զորությունը. Զայոց Երկիրը մեծ ու հզոր է «իր Երեք հազար տարվա զորությամբ, իր դիմադրական կամքով, տոկունությամբ: Երևի Զեր ազնիվ ականջին հասել է, թե քանի

<sup>46</sup> Նույն տեղում, էջ

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 29-30:

անգամ սուլթանը արշավեց մեր Երկրի վրա: Արշավեց ու ջախջախվելով փախավ: Աստվածապահ իմայերատրիցա, մենք շատ չենք, բայց հայ ենք: Յա՞յ ենք...»<sup>48</sup>:

Ավելի տպավորիչ են Մելիք Եգանի պատասխանները կայսրութու խորհրդական գերմանացի պաշտոնյային, որոնք հատկանշվում են ինչպես արհամարհանքի թաքնված շեշտադրումներով, այնպես էլ ազգային արժանապատվության բարձր գիտակցությամբ:

«Շուշի» վեպում նույնպես Ս. Խանզադյանն ընդգծում է կոնկրետ ժամանակները, որոնք ուղղորդում են հերոսների գործողությունները, լույս սփռում աշխարհաքաղաքական զարգացումների վրա: 1736 թվականի ամառն էր՝ Սարը Մուստաֆա փաշան վաթսուն հազարանոց զորքով արշավում է դեպի Գյուլիստան: Յայերը նրան դիմավորում են տասներկու հազարանոց զորքով: 1744 թվականի գարնան սկիզբն էր: Յամենատական խաղաղություն է երկրում: Գերազան Մելիք Եգանը պարսիկների հետ թուրքերի դեմ միասնական ճակատ կազմելու ճանապարհներ է որոնում, ծրագրեր մշակում: 1795 թվականի ամառը Յայաստանի արևելքում տոթակեզ ու խորշակաշունչ էր: «Օսմանլու սուլթանի, Ավստրիայի թագավոր-կայզեր, Փոանկի պարոնների» ակնհայտ հովանավորությամբ պարսից Աղա Մամեդ խանը գնում է «նվաճելու Յայաստան ու Վրաստանը, ռուսներին վշնդելու Դերբենդից, Սև ծովի արևելյան ափերից: Ասում է՝ Ես Մոսկվան իմ ծիերի ախոռը կդարձնեմ»: Ժամանակի կոնկրետ սահմաններում որոշակիանում են թշնամուն դիմագրավելու միջոցները. ժողովուրդը քաշվում է «դեպի Կառկառ գետի վերևներն ու Բիրսի ծերպերը», «հայկական զորագնդերը շարժվում են դեպի Շուշի», «Շուշին տագնապի մեջ է», «Սկսվում են ծանր, տևական մարտերը»: Վեպի հերոսները բնութագրվում են ժամանակի ավելի փոքր չափումների մեջ: Մեպտեմբերի կեսերն էին. Ղարաբաղը պատրաստվում էր նոր փոթորիկների, լուսաբաց է, կեսօր, Շուշին պաշարել է սև, թանձր գիշերը...

Ընդգծվում են նաև տարածական միավորները. «Կարնո դաշտը. հայերն այստեղ ապրել են արարչության օրերից»...«Մարաղա... Սպարապետն այստեղ փառահեղ հաղթանակ է տարել...», Շուշի... «հայոց հոգևոր այս կենտրոնը նաև անառիկ բերդ է եղել արաբական, թուրքական և պարսկական զորքերի ճանապարհին»:

Ընդգրկումների մասշտաբայնությունը, պատմության տարբեր շրջափուլերի վերաբերյալ փաստական հարուստ տեղեկությունները, իրական ու գեղարվեստական կերպարների մեջ պատկերասրահը, ժամանակաշրջանի կոլորիտը, որը ներկայացված է տեսանելի գույներով ու նրբերանգներով, 18-րդ դարասկզբի արցախյան

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 255:

սովորությունները, բարքերն ու ավանդույթները, իիմնական հերոսներին հոգեբանական, կենցաղային-առօրյա հարաբերություններում ներկայացնելը և բազում այլ հանգամանքներ «Ծուշի» վեպում տեսանելի են դարձնում ժամանակի շարժումը:

Վեպի մասին շատ քիչ է գրվել: Նրա գեղարվեստական արժանիքներին, արդիական նշանակությանն անդրադարձել է գրականագետ Ս. Արգումանյանը «Արդի հայ վեպը» ուսումնասիրության 5-րդ հատորում: Անվանի գրականագետը նշում է նաև մի շարք թերություններ՝ մասնավորապես այն, որ «Ծուշի»-ում հեղինակը շատ հեշտ հաղթանակներ է «պարզեցում» հայերին, հայ մելիքական գնդերն արագ ջախջախում են հակառակորդին, այդ հաղթանակները հաճախ վերածվում են «հեշտ զորախաղերի», կերպարներից շատերը ներկայացվում են «տարեգրի գրչով, ոչ թե արվեստագետի գրչով, «շատ է շահարկվում սոցիալական պրոբլեմը՝ աղքատ-հարուստ որոշակի բներացումը»<sup>49</sup> և այլն: Ս. Արգումանյանը միաժամանակ բարձր է գնահատում վեպի արդիական նշանակությունն ու հնչեղությունը՝ նշված թերացումներն ու վրիպումները համարելով «չճշին» այն առավելությունների ու արժանիքների ընդհանուր համապատկերում, որ առկա են «Ծուշի»-ում:

Ս. Խանգաղյանի պատմավիպասանության մեջ տարածության ու ժամանակի համայնապատկերն ամբողջացվում է նաև «Արաքսը պղտորվում է» վեպում, որը մեր մանկապատանեկան արձակի լավագույն նմուշներից մեկն է: Ս. Արգումանյանն այս համարում է «անհավակնոտ, սակայն իր տեսակի ու նպատակամիտումի մեջ կայացած»<sup>50</sup> ստեղծագործություն, կարծես հուշելով, որ այն պետք է արժենորել մանկապատանեկան ընթերցանությանը ներկայացվող դաստիարակչական ու ճանաչողական նշանակության տեսանկյուններից:

Անվանի գրականագետի դիտարկումը լավագույնս է բնութագրում վեպի կարևոր բովանդակությունը, մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակության կազմակերպման բնագավառում պատմական հայրենիքի ճանաչողական նշանակությունը: Պատանի Առաքել Ղավրիժեցու և Թուխծամի կերպարները հիանալի օրինակ կարող են հանդիսանալ նաև այսօրվա մեր պատանի ընթերցողի համար, ոգևորել նրանց հայրենիքի գաղափարն ամրապնդել որպես անանց արժեք:

Վեպի ամսագրային տարբերակը լույս է տեսել «Սովետական գրականություն» 1981թ. 7-րդ և 1982թ. 10-րդ համարներում, առանձին հրատարակչությամբ՝ 1985-ին:

<sup>49</sup> Արգումանյան Ս., Արդի հայ վեպը, հ.5, էջ 167:

<sup>50</sup> Նույն տեղում, էջ 168:

Վեպում ներկայացված իրադարձությունները, ճիշտ է, ծավալվում են 17-րդ դարում, երբ հայոց երկիրը «ոտքի կոխան» էր դարձել պարսիկների և օսման թուրքերի կողմից, սակայն տեղի են ունենում ժամանակագրական տարբեր հարթություններում: Պատանի Առաքելի, նրա պապ Առաքելի և պատմիչ Առաքել Դավրիժեցու, հանդիպումները տեղի են ունենում ներկայում և հեռավոր անցյալում, ու հեղինակին հաջողվում է կապ ստեղծել հարյուրամյակների պատմական անցքերի միջև, դրանք դիտարկել որպես պատմության շղթան ամբողջացնող անբաժան օղակներ: Վեպն ունի նաև տարածական լայն շրջանակներ՝ Տիգրանակերտ, Գանձակ, Շամախի, Արցախ, Սյունյաց աշխարհ, Սպահան և այլն, ու տարածաժամանակային այս լայն ընդգրկումներով են պայմանավորված նրա ձևակառուցվածքային յուրահատկությունները:

Վեպն ուշագրավ է նաև ազգագրական տեսանկյունից. հայոց աշխարհի յուրաքանչյուր գավառ ներկայացված է կենսակերպի, ավանդույթների, բնապատկերների, ծիսական սովորությունների իր յուրահատկություններով, որոնցով էլ պայմանավորված են գործող անձանց բարոյահոգեբանական, աշխարհընկալման առանձնահատկությունները, մարդու և ժամանակի, մարդու և հասարակության վերաբերյալ պատկերացումները: Իննունմեկամյա Առաքել պապը իր տասնվեցամյա թոռնիկին՝ Առաքելին է կտակում Առաքել Դավրիժեցու «Պատմություն անցից հարվացո՞, որք եկին ի վերա աշխարհիս Հայոց... ի թագավորին Շահաբաս կոչեցելո, ի նորին ազգե, որք են պարսիք» գիրքը ու պատվիրում այն կարդալ իր մահանալուց հետո...

Վիպակում գործողությունները ծավալվում են «ազգատոհմի նախահոր»՝ Առաքելի հիշողությունների ծիրում ու ներառում սյուժետային նոր գժերը, տարածական ու ժամանակային չափնան նոր միավորները: Երեք առաքելները խորհրդանշում են հայոց պատմության երեք աստիճանները, և նրանց «հաղիպադրման» կոնպոզիցիոն հնարքը հեղինակը օգտագործում է՝ ամբողջացնելու Պատմագրյան տոհմածառի ընդհանուր պատկերը: Երեք հարյուր տարուց ավելի Պատմագրյան տոհմի մեջ կրկնվում է Առաքել անունը, և նրանցից յուրաքանչյուրի կերպարում Ս.Խանզադյանը ներկայացնում է պատմական կոնկրետ ժամանակի վերաբերյալ իր հայեցողությանը:

Առաքել պատմագիր Դավրիժեցին իր ծննդյան չորսհարյուրմյակի օրը հայտնվում է պատանի Առաքելին, օգնում նրան հասկանալու իր մատյանի խորհուրդը, նրան տանում բոլոր այն ճանապարհներով, որոնցով անցել է ինքը, մասնակից դարձնում

պատմության հերոսական ու ողբերգական իրադարձություններին: Թոռան համար խիստ ուսանելի է նախապապի կենսապատումը, որի յուրաքանչյուր դրվագ լույսի ու մտքի ուժով հայրենիքին ծառայելու փայլուն օրինակ է: Իր ամբողջ կյանքը նախահայր Առաքելն անկացրել է հայրենիքի ազատագրության ուղիների փնտրտուքներում, կրթություն է ստացել Թավրիզում ու Յոզոմում և հայոց կաթողիկոսի օրինությամբ լծվել է ժողովրդին լուսավորելու հայրենանվեր գործին. «Լսիր ինձ, Առաքել Դավրիժեցի, զավակս, ահա մեր ազգը անփարատելի տառապանքի մեջ է: Դու պարտավոր ես նվիրվել նրա լուսավորության և փրկության գործին»<sup>51</sup>:

Իր գործունեությունը նախապապ Առաքելը սկսում է Տիգրանակերտում, և նրա համար ճակատագրական է դառնում հանդիպումը իր հասակակից Թուխծամի հետ: Պատանի Առաքել Դավրիժեցին ազգի փրկության ու նրա ազատագրական պայքարի հաջողության գրավականը համարում էր մտքի ուժը, լուսավորյալ զավակներ դաստիարակելու անհրաժեշտությունը: Թուխծամի՝ ազգի փրկության վերաբերյալ դատողությունները բեկումնային են դառնում Առաքելի համար. «Մի՞թե սև սրբնով հնարավոր է փրկել մեր ազգը: Մի՞թե քո իմացությունն ու խաչը, որ կրում ես, գորություն ունեն կործանելու այն տաժանելի լուծն ու ծանր բեռը, որ օտարը հագցրել է մեր վզին: Հազիվ թե»<sup>52</sup>:

Թուխծամի համար իդեալ էր Անդրեաս Երեց Նախիջևանցին, որն իր մեջ մարմնավորում է ուժն ու բարությունը, սուրն ու մտքի լույսը. «Նա մեծ ուժ ունի՝ հետը բարություն: Ուժը պետք է բարություն ունենա, որ չվնասի մարդուն, իսկ բարությունն անկարող ու չնչին բան է, եթե հզոր ուժ չունենա»<sup>53</sup>:

Թուխծամը նույնպես դեմ չէ ազգը լուսավորելու, ազգի փրկության համար լուսավորյալ պաշտպաններ դաստիարակելու գաղափարին: Բայց ժամանակն իր օրենքներն ունի, երբեմն՝ դաժան ու անողոք: Տվյալ պահին պետք է նախ «փրկել ազգի մարմինը»՝ լուծել ֆիզիկական գոյության, օտարի լուծը թոքափելու խնդիրը, նոր միայն մտածել «հոգին լուսավորելու» մասին: Սա ազգային-ազատագրական պայքարի խանգաղյանական սկզբունքի գեղարվեստական մարմնավորումն է, որն ընկած է պատմական թեմայով գրված նրա բոլոր ստեղծագործությունների հիմքում: Առաքելն ու Թուխծամը միավորում են «լուսավորության ու փրկության ուխտը»՝ գենքի և լուսավոր հոգու զաղափարները, ամրապնդում ըմբոստության, վրեժինդրության, չարին

<sup>51</sup> Խանզարյան Ս., Արաքսը պղտորվում է, Երևան, 1985, էջ 6:

<sup>52</sup> Նույն տեղում, էջ 52:

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 53:

դաժանորեն հակադրելու զգացումները, որոնք յուրահատուկ են Ս. Խանզադյանի պատմավեպերի հերոսներին, հատկապես՝ «Խոսեք, Յայաստանի լեռներ» վեպի ազատամարտիկներին:

Առաքել պատմագիր նախապապը պատանի Առաքելի հետ շրջում է բոլոր գավառներում: Նրան հատկապես ցնցում են Արցախի և Սյունիքի ժողովրդի միասնականությունը, պայքարի անկոտրում ոգին, որն անսասան է մնացել հայ ժողովրդի կազմավորման նախապատմական ժամանակներից մինչև այժմ:

Յավատավոր ժողովուրդ են արցախցիներն ու սյունեցիները, հայրենի հողին արմատներով միաձուլված, պատվախնդիր, ուժեղ ու բարի: Որպես օրինակ է Թուխծամը մատնանշում նրանց, որ Եկեղեցիների փոխարեն ավելի շատ սահմաններում բերդեր ու ամրոցներ են կառուցել, որ գիտեն զենքը հարգել և երբեք անզեն չեն եղել թշնամու հանդեպ: Խելոք և իմաստում մելիքներ են դարերի ընթացքում պաշտպանել հարազատ երկիրը: Այդպես եղավ նաև Շահ Աբասի արշավանքի, թուրքական ապստամբությունների ժամանակ: Ժամանակն իր անողոք օրենքներով միշտ էլ անզոր է եղել արցախցիների հանդեպ, որովհետև. «Սյունիքի և Արցախի տերերը գնացին ու ամուր մնացին իրենց տեղերում: Երկու, թե երեք անգամ Ամիր Գունե խանը դարձյալ գնաց նրանց վրա, սակայն ետ դարձավ պարտված»: Անդրեաս երեցը հորդորում է վառ պահել հոգու լույսը. «Մենք ապրում ենք խավարով շրջապատված: Սյունիքն ու Արցախը զերծ մնացին տարագրվելուց»:

Իր կենսապատումի ողբերգական դրվագները, մասայական ջարդերն ու կտտանքների ահասարսութ տեսարանները նախահայր Առաքել պատմագիրը իր թոռանը ներկայացնում է ոչ թէ լայաց երգերի ոգով, այլ Վրեժինդրության զգացումն անմար պահելու շեշտադրումներով: Պարսիկ դզլբաշների, թուրքական քոչվոր ցեղերի դաժանությունները, խաղաղ բնակչության կոտորածներն ու թալանը, ավերածություններն ու կողոպուտները ոչ թէ բարոյալքում ու ահուսարսափի մթնոլորտ են ստեղծում, այլ ավելի են համախմբում ու բարձրացնում ժողովրդի դիմադրողական ոգին, վրիժառության անհագ ծարավը: Այսպես եղավ Աշտարակ քաղաքի, Թալինի, Գեղամա աշխարհի, Մասիսունի, Կարբիի իշխաններին խաբեությամբ խորհրդակցության կանչելու ու նենգաբար սպանելուց հետո, այսպես եղավ, երբ բացահայտվեցին հայ ժողովրդին տեղահան անելու, հայոց հարցը մեկընդմիշտ փակելու պարսկաթուրքական մտադրությունները:

Ընթոստության ալիքն առաջինը բարձրացրին թալինցիները.

«Պարսիկները խուժեցին գյուղերը հայոց և բոլոր բնակիչներին թրերով, խարազաններով մղեցին ի «սուրգուն»: Այնքան մարդ բերին, որ լայնածավալ դաշտն Արարատյան լցվեց ծագեծագ: Գերիների երկարության մի ծայրը Գառնո լեռների ստորոտումն էր, մյուսը Երասխ մեծ գետի եզրին»<sup>54</sup>: Թալինցիների օրինակը վարակիչ էր, ոգեշնչող. Տասնյակ հազարավոր մարդիկ փայտ, քար, երկաթի կտար վերցնելով ահեղ մռնչոցով ընկան անձնապահ հեծելազորի վրա: «Ո՛վ սքանչելիք, ո՛վ աստվածային վրեժի խորհուրդ, կատարվիր....»<sup>55</sup>:

«Աստվածային վրեժի» խորհրդանշներն են, Թուխծամը, Մելիք-Յայկազն իշխանը, Պողոս Վարդապետը, Անդրեաս Երեց Նախիջևանցին, ովքեր ազգի փրկությունը պայմանվորում են ժողովրդի ու մելիքների միասնականությամբ առանձնակի հույսեր չեն կապում ազգային օգնության ու բարեգործության հետ: Թուխծամը ու վեպի մի շարք կերպարներ առաջ են ընկնում իրենց ժամանակակից ու շատ հաճախ ծիշտ կանխատեսումներ անում:

Եվ պատահական չե, որ Մելիք-Յայկազն իր գավառում դպրոցներ է բացում, մտածում է Տաթևի համալսարանը վերականգնելու մասին, որ Անդրեաս Երեցը խոստանում է վառ պահել հոգու լույսը. «Մենք ապրում ենք խավարով շրջապատված: Անհնարին է, որ այս խավարի մեջ մտքի աշխատանքն ու պտուղը հարգ ու գին չունենան»:

«Արաքսը պղտորվում է» վեպում շարունակում ու խորացնում է «Մխիթար Սպարապետ»-ի, «Շուշի»-ի, Եղեռնի թեմային նվիրված «Վեց գիշեր», «Մեռածները հիշում են», «Խոսեք, Յայաստանի լեռներ» ստեղծագործությունների գաղափարական գիծը. ամուր պահել դիմադրության և վրեժխնդրության ոգին, երբեք չիավատալ թուրքերի կեղծ խոստումներին, ապավինել միայն սեփական ուժերին և բոլոր դեպքերում լինել միասնական:

Վեպն ավարտվում է խորհրդանշական պատկերով. Թուխծամի գլխավորությամբ Կարփին, որը տվյալ պարագայում Յայաստանի խորհրդանշն է, հաշվեհարդար է տեսնում «իր մարմինը հոշոտող բռնակալների» հանդեպ. «Լույս բացվեց աշխարհի ու մեր Կարփու վրա: Ամեն ինչ արդեն վերջացած էր, ոչ մի թուրք կենդանի չէր այլև ... Ես երբեմն-երբեմն համբուրում էի Թուխծամի աջը.

- Դու սուրբ Ես, դու սուրբ Ես»<sup>56</sup>.

<sup>54</sup> Նույն տեղում, էջ 80:

<sup>55</sup> Նույն տեղում, էջ 95

<sup>56</sup> Նույն տեղում, էջ 206:

ՀԵՐՈՍԱԿԱՆ ՈՒ ՈՂԲԵՐԳԱԿԱՆԸ

Ս. Խանզադյանի պատմավեպերում ընթերցողն առնչվում է ժամանակային տարբեր չափումների հետ՝ հայոց պետականության կազմավորման վաղնջական շրջաններ («Թագուհին հայոց», 17-րդ դարասկիզբ, Շահ Աբասի արշավանքներ դեպի Յայաստան, ահավոր կոտորածներ ու մասսայական տեղահանություններ («Արաքսը պղտորվում է»), 18-րդ դարասկիզբի և դարավերջի ազգային-ազատագրական շարժումներ Սյունիքում և Արցախում («Մխիթար Սպարապետ», «Շուշի»), առաջին համաշխարհային պատերազմի, հայոց մեծ եղեռնի, 1920-ական թվականների խառնակ ու ահասարսութ ժամանակներ («Խոսե՛ք, Յայաստանի լեռներ», «Անդրանիկ», «Գարեգին Նժդեհ»):

Բոլոր այս ստեղծագործություններում հեղինակի մտասեռումների առանցքում ժողովրդի ճակատագիրն է, նրա գոյապայքարի շարունակականության գաղափարը և, որ ամենակարևորն է, ժամանակի շարժումը ներկայացվում է «այսօրվա հետ ունեցած իր առնչություններով, զուգահեռներով, այսօրվա ու վաղվա խնդիրներում ծիշտ կողմնորոշվելու հեղինակային դիտարկումներով: Այլ խոսքով՝ պատմությունը դառնում է մի այնպիսի հետադարձ հայացք, որ սրում է մեր տեսողությունը այսօրվա և վաղվա վրա»<sup>57</sup>, - գրում է Վ. Դավթյանը՝ անդրադառնալով պատմության ու ժամանակի գեղարվեստական անդրադառներին:

Ս. Խանզադյանի բոլոր այս պատմավեպերն, իհարկե, չունեն տարածաժամանակային ընդգրկումների նույն մասշտաբները, կերպավորման ու պատկերաստեղծման նույն բարձր վարպետությունը, բայց հետապնդում են նույն նպատակը՝ վերականգնել ժողովրդի պատմական հիշողությունը, դիմադրության ոգին, ժողովրդի միասնության ու սեփական ուժերին ապավինելու խորհուրդը պատգամել սերունդներին:

Այս նպատակամիտումներն ունեն «Խոսե՛ք, Յայաստանի լեռներ», «Անդրանիկ», «Գարեգին Նժդեհ» վեպերը, որոնք 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներում Յայաստանում տեղի ունեցած իրադարձությունները ներկայացնում են Եվրոպայում ու տարածաշրջանում տեղի ունեցած աշխարհաքաղաքական խմորումների լայն համապատկերում:

<sup>57</sup> «Գրական թերթ», 1981, հ. 29:

Եղեռնի թեմային մեծ կտավի ստեղծագործություններով Ս. Խանզադյանն անդրադարձել է 1960-70 ականներին: 1965- 68-ին նա գրել է «Վեց Գիշեր», 1971-ին՝ «Մեռածները հիշում են» 1968-73-ին «Խոսեք, Յայաստանի լեռներ» վիպակներն ու վեպերը, որոնք ընդհանրության մեջ ճշմարտապատում մի ասք են 1915-ի Եղեռական իրադարձությունների մասին, հերոսական-ողբերգական մի պատմություն, որտեղ ներկայացվում են Արևմտյան Յայաստանում դարասկզբին ծրագրված ու իրականցված ոճրագործությունները, մասսայական կոտորածները, առանձին նահանգներում միասնական պաշտպանություն կազմակերպած քաջազունների հերոսական պայքարը, Եղեռնից փրկված բեկորների ճակատագիրը: Յուրաքանչյուր առանձին ստեղծագործության մեջ հեղինակն օգտագործում է գեղարվեստական տարբեր հնարքներ, կերպարակերտման ու պատկերավորման իրար չկրկնող միջոցներ՝ ավելի խստացնելով «Մխիթար Սպարապետ»-ի հեղինակային պատմահայեցողությունը, հայոց ճակատագրին վերաբերվող իր մտասներումները: «Վեց Գիշեր» վիպակում, որն ունի ընդամենը սյուժետային մի գիծ, ներկայացված է երկու հայ զինվորների՝ Աստվածատուրի ու Սրապիոնի՝ Արևմտյան Յայաստանից Արաքսի մյուս ափին անցնելու տառապալ

Գործողությունները տեղի են ունենում ժամանակի փոքր հատվածում՝ ընդամենը վեց օրում, բայց ունեն տարածական լայն ընդգրկումներ: Որտեղ էլ որ իրենց ճանապարհին հանգրվանում են Աստվածատուրն ու Սրապիոնը, ականատես են լինում նույն պատկերներին. անթաղ դիակներ, գիշանգղների, նրանիցից ոչնչով չտարբերվող մարդակերպ գազանների խելահեղ խրախճանք («Սպանել են ու հիմա խելագար ցնում են դիակների վրա» (IV, 338):

Վիպակում ներկայացված բնապատկենները խիստ համահունչ են հերոսների ներաշխարհին ու վարքագին: Գիշերները մռայլ են ու սևով ներկված, անթաղ ու կիսանեխած դիակներով լեցուն անտառներում ու ձորերում քամին ոռնում է շնագայլերի ոռնոցի հանգույն, երկնքում ոչ միայն աստղ չկա, լուսնի արևագույն շողերը հազիվ են լուսավորում Աստվածատուրի ու Սրապիոնի տառապալից ուղին: Անհանգիստ աշխարհը հերոսներին երևում է նրանց հոգեվիճակին համահունչ խորհրդանիշերով:

Աներևակայելի կամքի ուժ ու երկաթյա նյարդեր են պետք հոգեկան հավասարակշռությունը չկորցնելու, չխելագարվելու համար: Իրենց հոգեկերտվածքով տարբեր են Աստվածատուրն ու Սրապիոնը: Վերջինիս նյարդերը երբեմն տեղի են տալիս, և նա իր շուրջը կատարվող դեպքերն ու իրադարձություններն ընկալում է որպես

կեցության պարտադրանք, ճակատագիր, որից անհնար է խուսափել: Նրան երբեմն լքում է հավատը, և անհմաստ են թվում Աստվածատուրի՝ մարդկայնության, գոյության նպատակի, կյանքի շարունակության վերաբերյալ դատողությունները: Սրապիոնի համար ժամանակը շեղվել է իր բնականոն ընթացքից ու անշարժացել տիեզերական քառում: Ուստի հարկ չկա ավելորդ բեռ դարձնել ու իրենց հետ տանել բռնաբարված ու խոշտանգված մոր դիակի մոտ քաղցից մղկտացող մանկանը: Աստվածատուրն այլ պատկերացումներ ունի ժամանակի, մարդու, գոյի ու կեցության տարբեր հարցերի մասին: Կործանումից փրկված մանկան ճռվողյունի մեջ նա լսում է ապագայի ձայնը. «Թող բոլոր-բոլոր մանուկներն ապրեն, նրանց հետ էլ, այս փոքրիկ, այս տաք-լաց դժբախտը» (IV, 338):

Ամենասարսափելի եղեռն անգամ չի կարող բնաջնջել մի ժողովրդի, ով հավատով է լցված ապագայի հանդեպ ու ամենաանելանելի վիճակներում անգամ կարողանում է ելքի ճանապարհներ գտնել, - սա է հեղինակի մտահաղացումը, որը մարմնավորված է Աստվածատուրի կերպարում:

Նույն ժամանակահատվածում են տեղի ունենում նաև «Մեռածները հիշում են» վիպակի գործողությունները, որտեղ Ս.Խանզանդյանն օգտագործում է գեղարվեստական նոր հնարք, ինչով էլ պայմանվորված են ստեղծագործության ձևակառուցվածքային յուրահատկությունները: Յեղինակն ուրվականների գրուցի միջոցով է բացահայտում պատմական ճշմարտությունները՝ կերտելով իրական ու գրական կերպարների բականին հարուստ մի պատկերասրահ: Ֆիշտ է, վիպակի ոչ բոլոր կերպարներն են ավարտուն, ոչ բոլոր գործողություններն ու իրադարձություններն են գեղարվեստականորեն համոզիչ, սակայն, մեր կարծիքով, այս ստեղծագործության հիմնական արժեքները պետք է գնահատել հեղինակի պատմահայացեղության ընդհանուր համակարգում:

Գլխավոր գաղափարը դարձյալ օրիհասական իրավիճակներում համախմբելու ու միասնական դիմակայություն կազմակերպելու միտքն է, որն ընկած է Ս. Խանզադյանի բոլոր պատմավեպերի ու պատմության թեմայով գոված տարբեր ժամրերի ստեղծագործությունների հիմքում: Պատանի Սերոբի ու նրա հասկակաց թուրք պատանու ուրվականների «հանդիպման» ու նրանց գրուցի միջոցով հեղինակը ներկայացնում է հայկական քյոքյուկ գյուղի կործանումն ու Ալիզոն լեռան անմատչելի ծերպերում ամրացած ազատամարտիկների անհավասար պայքարը թուրքական կանոնավոր զորքերի ու արյան հոտով արբած վայրագ խուժանի դեմ:

Յոթ տարի շարունակ աներևակայելի պաշտպանական մարտեր են մղում «ալիզոնցիները»՝ եղեռնից փրկված, հայու «բեկորները», որոնցից յուրաքանչյուրի մեջ հեղինակն ընդգծում է ազգային արժանապատվության բարձր զգացումը, անկոտրում ոգին, ապրելու հաստատակամությունը: Ալիզոնը մի փոքրիկ Յայաստան է՝ չորս կողմից շրջապատված արյունառուշտ թշնամիներով, բայց միշտ կանգուն, միշտ պատրաստ դիմակայելու արհավիրքներին: Դարերի ընթացքում թշնամու բազմաթիվ գորախմբեր են բախվել Ալիզոնի կարծր լեռնալանջերին և ջարդուփշուր եղել կամ հետ շպրտվել քաջարի ազատամարտիկների կողմից:

Այսպես եղավ նաև 1915-ին ու նրա հաջորդած տարիներին, երբ փոքրիկ թյոքյուկի մի բուռ բնակչությունը, ի զարմանս նույնիսկ թուրք բարբարոսների, չընկճվեց ու կազմակերպված երթով անցավ Արաքսի մյուս ափը:

1968-1973թթ. Ս.Խանզադյանը գրեց և 1976-ին իրատարակեց «Խոսե՛ք, Յայաստանի լեռներ» վեպը, որը Յայոց մեծ եղեռնի թեմայով գրված լավագույն ստեղծագործություններից մեկն է նորագույն շրջանի հայ գրականության մեջ:

Ի տարբերություն «Մխիթար Սպարապետ»-ի՝ Ս. Խանզադյանի այս վեպը չունի սյուժետային ճյուղավորումներ, սակայն աչքի է ընկնում ոճավորման, կերպարակերտման ու պատկերաստեղծման յուրահատկություններով:

Ս. Սարինյանը վեպում տիրապետող է համարում խոհական, քնարական երանգը: Վեպն իր բնույթով՝ ժամրի մի յուրահատուկ փոխաձևությամբ համարելով պատմական՝ Ս. Սարինյանը գրում է. «Եթե «Մխիթար Սպարապետը» պահպանում է պատումի էպիկական ընթացքը, ապա «Խոսե՛ք, Յայաստանի լեռներ» վեպում տիրապետողը խոհական-քնարական երանգն է: Եվ դա որոշակիորեն պայմանավորել է ոչ միայն վեպի կառուցվածքն ու հերոսների հոգեբանական կտրվածքը, այլև հեղինակային սուբյեկտիվիզմի ուժեղ դրոշմը գեղարվեստական պատումի հանգույցներում: Բանն այն է, որ վեպում պատկերված իրադարձությունները հեռավոր անցյալ չեն, այլ ընդամենը միայն երեկ, վերքերը դեռ չեն սպիացել, դեռ ապրում են նրանք, որոնք կրել են եղեռնի արհավիրքները, դեռ թարմ են որդեկորույս մայրերի, անապատան որբերի կսկիծն ու տվայտանքը, հայոց լեռներում դեռ լսվում են կործանման սարսափի արձագանքները»<sup>58</sup>:

Գրականագետը վեպի «խոհական, քնարական երանգով» է պայմանավորում պատումի ընդհանուր հյուսվածքի «ներքին անջատումները», որոնք բացատրելի են

<sup>58</sup>. Սարինյան Ս., Գեղարվեստական գրականության պատմականությունը, գ.2, Երևան, 1989, էջ 424:

«հենց այն ընդիանուր տրոհվածությամբ, որ ցուցադրում է հանգամանքների դրամատիկ սրությունը»<sup>59</sup>:

Վեպի վերաբերյալ Ս.Սարինյանի տեսակետն այնքան էլ համոզիչ չի համարում Ս.Արզումանյանը, որովհետև, նրա կարծիքով, «...մեծ ողբերգության մասին «խոհական-քնարական երկի ստեղծումը դուրս է եղել գրողի մտահղացումից: Նրա ստեղծագործության գերիշխող հնչերանգը էպիկական-դրամատիկ պատումն է: Ժողովրդի ողբերգական ու հերոսական մաքառումների գեղարվեստական տարեգրությունը ոճական այդ սկզբունքն էր պարտադրում : Պարտադրում էր և ժողովրդի՝ իրու կենտրոնական հերոսի ընտրությունը: Այստեղից էլ՝ ինքնին հասկանալի է դառնում նաև ժողովրդական կերպարների մարմնավորման հեղինակային միտումը»<sup>60</sup>:

Ըստ Ս.Արզումանյանի՝ «Խոսե՛ք, Յայաստանի լեռներ» վեպը «ժողովրդական հերոսամարտերի ասք-տարեգրություն» է, և ժամրի յուրահատկությամբ է պայմանավորված «ոչ միայն կառուցվածքային տարրերի ինքնատիպությունը, այլև հերոսների ընտրության գեղագիտական ելակետը»<sup>61</sup>:

Գրականագետ Թ. Պետրոսյանը «Խոսե՛ք, Յայաստանի լեռներ» վեպը որակում է որպես «մատյան ցավի և հույսի»<sup>62</sup>:

Բոլոր այս որակումներն, անշուշտ, պայմանավորված են վեպի թե՛ բովանդակությամբ, թե՛ ոճական յուրահատկություններով և թե՛ գրականագետների սուբյեկտիվ ընկալումներով: Իրողությունն այն է, որ Ս.Խանզադյանի «ասք-տարեգրության» «ցավի և հույսի մատյանում» ներկայացված ժողովրդի ողբերգական ու հերոսական մաքառումների գեղարվեստական տարեգրության էպիկական-դրամատիկ պատումն ունի նաև «խոհական-քնարական երանգ», որն ավելի է բարձրացնում ստեղծագործության գեղարվեստական արժանիքները, նպաստում կերպարների լիարժեք բացահայտմանը:

Վիպական գործողությունները զարգանում են սրընթաց արագությամբ: Ժամանակի ընթացքին զուգահեռ՝ փոփոխվում են իրավիճակները, ասպարեզ են գալիս իրական ու գեղարվեստական նոր կերպարներ, ընդլայնվում են տարածական ընդգրկումների սահմանները: Ս.Խանզադյանը էջ առ էջ բացահայտում է «ժամանակի ու պատմության հակասությունները: Այսինքն՝ գեղարվեստական լայն կտավի վրա ցույց է տալիս, թե

<sup>59</sup> Արզումանյան Ս., Սովետահայ վեպը, գ.3, էջ 142-143:

<sup>60</sup> Արզումանյան Ս., Սովետահայ վեպը, գ.3, էջ 142-143:

<sup>61</sup> Նույն տեղում, էջ 137:

<sup>62</sup> Պետրոսյան Թ., Սերո Խանզադյանի պատմական արձակը, էջ 100:

որտեղից են սկիզբ առնում մեր ազգային ողբերգության պատճառներն ու արմատները, ինչպես են հասունանում և ի՞նչ հետևանքներ ունեցան »<sup>63</sup>:

Հենց այս տեսանկյունից է հեղինակը շոշափում տվյալ ժամանակահատվածի առավել գլխավոր երևոյթները<sup>64</sup>, լույս սփռում պատմական մի շարք կնճռոտ հարցերի վրա, և մի անգամ փաստում, որ թուրքերը միշտ էլ հարմար ժամանակ ու առիթ են որոնել հայկական հարցը մեկընդիշտ փակելու, թուրքիայի գլխավորությամբ մուսուլմանական պետություն ստեղծելու անհեթեթ նկրտումներն իրագործելու համար: Այդպես է եղել Դավիթ Բեկի ու Մխիթար Սպարապետի ժամանակներում, 18-րդ դարի վերջին տասնամյակներում, 20-րդ դարասկզբին ու նաև մեր օրերում: Այս տեսանկյունից Ս.Խանզադյանի «Խոսե՛ք, Յայաստանի լեռներ» պատմավեպը մեր ազգային հիշողությունը թարմացնելու, պատմության դարավոր փորձից դասեր քաղելու արդիական նշանակությամբ է օժտված:

Երիտթուրքերի կազմակերպած ցեղասպանությունը չի կարելի բացատրել միայն առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ տարածաշրջանում ծավալված աշխարհաքաղաքական զարգացումներով: Դա տասնամյակներով մանրամասնորեն մշակված ծրագիր էր, և առաջին համաշխարհայինը սոսկ առիթ էր այդ ծրագիրն օգտագործելու համար: Ծրագրի բուն էությունը հետևյալն էր՝ «Երբ այլս չեն լինի հայերը, չի լինի հայկական հարցը»:

Անվանի պատմաբան Զ.Կիրակոսյանը իր՝ «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» գրքում հղում անելով գերմանացի հայագետ Յոզե Մարկվարտից, գրում է, որ Երիտթուրքերը «առաջ անցան մեծ դահիճ Աբդուլ Յամիդից» և մշակեցին ծրագիր, որի համաձայն «կայսրությունը դառնալու է գուտ թուրքական՝ քրիստոնյա, ոչ թուրք տարրերի վերացման միջոցով»<sup>65</sup>:

«Խոսե՛ք, Յայաստանի լեռներ» վեպի գործողությունների առանցքուն Կաթակն գյուղն է, սակայն դրանք ծավալվում են տարածական ավելի լայն ընդգրկումների սահմաններում: Գործողությունների զարգացման ընթացքում մասնակի դեպքերի ու իրադարձությունների գեղարվեստական արձարծումները ծառայում են պատմական կոնկրետ ժամանակահատվածի համապատկերի ամբողջացմանը:

Պատմական Երգնկայի հայկական ջարդերի, գավառի Կաթակն գյուղի հերոսական ինքնապաշտպանության միջոցով Ս. Խանզադյանը գեղարվեստական բարձր վարպե-

<sup>63</sup> Նույն տեղում, էջ 104:

<sup>64</sup> Նույն տեղում, էջ 105:

<sup>65</sup> Զ. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գ.2, Երևան, 1987, էջ 7:

տությամբ ներկայացնում է ողջ Արևմտահայաստանում տիրող իրավիճակը, ժողովրդի դաժան ճակատագիրը, ջարդերի ահասարսուռ տեսարանները, դանթեական դժոխքի պարունակներում բզկտվող արևմտահայության կենսապատումի սկզբնական ու հերոսական էջերը:

Ս.Խանզադյանի նպատակը, սակայն, ջարդերի ահասարսուռ տեսարանների նկարագրությունը չէ, այլ փիլիսոփայական այն ելակետի հիմնավորումը, որ հայապահպանության հիմնական երաշխիքը «ճանապարհն հայոց»-ի բոլոր հանգրվաններում եղել ու մնում է նրա միասնականությունը, սեփական ուժերին ապավինելու համոզմունքը, և, որ ամենակարևորն է, երբեք և ոչ մի պարագայում թուրքերի կեղծ հավաստիացումներին ու երդումներին չհավատալը:

Գործողությունները սկսվում են Երզնկայի հայության տեղահանության, կողոպուտի ու ջարդերի նկարագրությամբ: Ըստ նախապես մշակված ծրագրերի՝ թուրքերը նախ տեղահանեցին տղամարդկանց, կենտրոնացրին Երզնկայում, հետո մասմաս բաժանելով՝ ոչնչացրին բոլորին: Այնուհետև թուրքական զորագնդերը, ոստիկանական

արյան և կողոպուտի ծարավ խուժանը սկսեց անպաշտպան բնակչության ջարդը: Վայրագ ամբոխին առաջնորդում էին մոլեռանդ մոլլաները. «Մոլլաները պատռեցին իրենց շապիկները, փաթթոցներին սև լաթեր կպցրին ու ոռնացին՝ կողոպուտի ու արյան ծարավ: Նրանց առաջնորդությամբ մոլեգնած խուժանը դուրս հոսեց դեպի փողոցները: Օդը ցնցվում էր վայրենի աղաղակներից»<sup>66</sup>:

Թուրքերը Երզնկայի հայկական գյուղերն ավերելու, թալանելու, բնակիչներին տեղահան անելու ու քաղաքներից հեռու ամայի վայրերում կոտորելու համար դիմում են ցանկացած միջոցի, անգամ բանտերից ազատում ու զինում են բոլոր հանցագործներին. «Բանտի դաները բաց արին: Նույնիսկ սեփական զավակը մորթած ցմահ բանտարկվածին լողացրին բաղնիքում, զինվորական համազգեստ հագցրին, զենք տվին ու չեթե դարձնելով՝ ուղարկեցին հայ ժողովրդի բեկորների վրա»<sup>67</sup>:

Երզնկայի կոտորածների օրերին գավառի Կաթակն գյուղի բնակչությունը՝ Ներսեհ Չառչի գլխավորությամբ, ամրանալով Ակնովիտ լեռան բարձունքներում, ցուցաբերում է հերոսականության աներևակայելի օրինակներ՝ ահ ու սարսափի մեջ պահելով ոչ միայն հայերի օջախներում բնավորված թուրքերին, այլև կանոնավոր զորագնդերին, որոնք զինված էին գերմանական ժամանակակից զինտեխնիկայով:

<sup>66</sup> Խանզադյան Ս., Խոսեբ, Հայաստանի լեռներ, Երևան, 1976, էջ 116:

<sup>67</sup> Նույն տեղում, էջ 187-188:

Անսահման սիրով ու քնարական ջերմությամբ է Ս.Խանզադյանը ներկայացնում Կաթակնը, նրա աշխատավոր, ջանասեր, հողի հետ արմատներով կապված շինականներին. « Աշխատասեր մարդիկ էին կաթակնցիները: Իրենց դարբնի շինած կացնով ու սղոցով ժայռերի ծերպերից սամշիտ ծառ էին պոկում, փայտը շոգեխաշում, սայլեր հյուսում՝ գարնանը վաճառելու համար: Օջախներում ծխում էր դեռևս Տիգրան արքայի քրմերի օրինած կրակները, բարձրանում գյուղի վեց հարյուր յոթանասուննեկ երդիկներից: Ծխի հետ ամեն առավոտ ու երեկո երկինք է սլանում նաև եկեղեցու զանգի դողանջը՝ «Դին-Դան»: Վարժարանում փոքրերը՝ աղջիկ-տղա, միահամուռ կրկնում են. «Յայկ ծնավ Արամանյակ, Արամանյակ ծնավ Արամայիս...»: Իր պղնձե դողանջով ձորն

արձագանքում է նրանց՝ այդ ձայնը տանում դեպի Եփրատի ծալքերը»<sup>68</sup>:

Գյուղն այնքան բարեշեն ու բարեկեցիկ էր, որ «երբ Օսման Օնբաշին եկավ Կաթակն իր ծառայությանը, բերանը բացվեց ականայից՝ «Բաղդա՞տ եմ ընկել»»<sup>69</sup>:

Կաթակնը Եփրատի ափին ծվարած մի փոքրիկ Յայաստան է՝ իր հուռի այգեստաններով, ամբողջ գավառում և նրա սահմաններից դուրս հայտնի ոսկեհատ ցորենով, ձկնառատ գետակներով: Ժամանակն այստեղ իր սովորական ընթացքն ունի, ու դժվար էր ենթադրել, որ նա կարող է դուրս գալ իր հունից, որ Կաթակնի շինարար ժողովուրդը կարող է լքել իր բարեկեցիկ բնակավայրը, ապավինել հայոց երկնամերձ լեռներին ու գոյության անհավասար հերոսամարտ մղել հարյուրապատիկ ավելի շատ ու ավելի լավ զինված զորքերի դեմ:

Վեպում Ս.Խանզադյանը կերտում է թե՛ իրական և թե՛ գեղարվեստական տասնյակ կերպարներ, ու հարկ է մի անգամ ևս ընդգծել, որ նրա գեղարվեստական կերպարներն ավելի լիարժեք, բնութագրական ու տիպական են, քան իրական կերպարները: Բացառություն է, թերևս, Ներսեհ Չառւշի կերպարը, որը, իրական լինելով հանդերձ, ներկայացված է գեղարվեստական բարձր վարպետությամբ ու խորհրդանշում է այն քաջազուններին, ովքեր կարողացան համախմբել հայության որոշ հատվածներին, կազմակերպված դիմադրություն ցույց տալ ու արժանի հակահարվածներով դիմակայել թուրքական կանոնավոր զորագնդերին ու արյունարբու խուժանին:

Ներսեհ Չառւշը մեկն է այն բազմաթիվ հայերից, ովքեր ծառայում էին թուրքական բանակում, աչքի ընկնում կարգապահությամբ, և մեկը այն եզակիներից, որ զոհ չդարձավ 1915 թվականի Եղեռնագործության օրերին: Նա թուրքական բանակի

<sup>68</sup> Նույն տեղում, էջ 47:

<sup>69</sup> Նույն տեղում, էջ 45:

ամենակրթված սպաներից մեկն էր, վայելում էր Ենվերի համակրանքը, ծառայում նրա շքախմբում, ինչը մեծ պատիվ էր ցանկացած բարձրաստիճան սպայի համար:

Ս.Խանզադյանը Ներսեի Չառւշին ներկայացնում է նրա կենսագրության տարբեր շրջաններում, ինչը վեպի առանցքային կերպարը դարձնում է ավելի լիարժեք ու բնութագրական՝ ժամանակի, այսպես կոչված, հայ Երիտասարդության «խարված» մասի տրամադրություններն ու գործունեությունը պատկերելու համար: Ընդամենը տասներկու տարեկան է եղել Ներսեիը, երբ հայրը նրան Կաթակնից բերել է Երզնկա, հանձնել գավառում հոչակված Գերասիմ Վարժապետին: Երեք տարի նա սովորել է գերմաներեն, ապա հոր կամքով մեկնել Բեռլին՝ բարձրագույն կրթություն ստանալու նպատակով: Բեռլինում Ներսեի Չառւշը ծանոթացել է Երիտթուրք կուսակցության պարագլուխ Ենվերի հետ: Մակեդոնական հեղաշրջնան ժամանակ, երբ Ենվերը փաշա հոչակվեց, Ներսեհին՝ իբրև իր հին մտերիմի և կապի ինժեների, վերցրել էր իր մոտ զինվորական ծառայության:

Ս. Արգումանյանը Ներսեի Չառւշին համարում է վեպի իրական կերպարներից մեկը («Տասնյակ կերպարներից միայն Ենվեր փաշան, Քենալ Բեյը, Ներսեի Չառւշը և թերևս ելի մեկ երկուսը պատմական հավաստիություն ունեն»<sup>70</sup>), իսկ Թ.Պետրոսյանը գրում է. «Նրա (Ներսեի Չառւշի- ընդգծումը՝ մեր կողմից) կերպարը կերտելիս գրողը ի նկատի չի ունեցել որևէ կոնկրետ նախատիպ»<sup>71</sup>: Մեր կարծիքով՝ բոլորովին էլ էական չէ՝ Ներսեի Չառւշը ունեցե՞լ է նախատիպ, թե՞ ոչ. գեղարվեստական տեսանկյունից էականն այն է, որ Ս.Խանզադյանին հաջողվել է կերտել ժամանակի սուր զգացողությամբ օժտված, հայրենի հող ու ջրին կապված, հայրենիքը որպես գերագույն արժեք ընդունող մի ավարտուն կերպար, ով իր մեջ խտացնում է ազգային-ազատագրական պայքարի տրամաբանությունն ու փիլիսոփայությունը, հայրենիքի ազատության գաղափարին նվիրված ուխտյալ քաջորդիների ոգու արիությունն ու անկոտրում կամքը:

Ներսեի Չառւշը ժամանակին տարված է եղել Երիտթուրք պարագլուխների գաղափարներով, հավատացել եղբայրության, ազատության, հավասարության մասին նրանց կեղծ հավաստիացումներին: Նա հաճախ էր հիշում Ենվերի ոգեշունչ կոչերը Մակեդոնական հեղաշրջնան ժամանակ, երբ փաշան գոռում էր ամբոխի առջև. «Մեր նպատակն է մարդկությանը, հատկապես Թուրքիայում տառապող ժողովուրդներին

<sup>70</sup> Արգումանյան Ս., Սովետահայ վեպը, գ. 3, էջ 137:

<sup>71</sup> Պետրոսյան Թ., Մերո Խանզադյանի պատմական արձակը, էջ 108:

ազատություն, հավասարություն, եղբայրություն տալ, մանավանդ արդարադատություն, լսեցեք, մարդիկ: Սա է մեր նպատակը»<sup>72</sup>:

Սակայն դա երեկ էր: Ներսեի Չառչն այժմ տեսնում է ստոր ու խաբերա Ենվերին, հիշում, թե ինչպես էր նա խաբում ռուսական դեսպանությանը, ցարի ներկայացուցիչ գեներալ Լեոնտևին. «Դուք մի անհանգստանաք, ձերդ պայծառափայլություն: Մեր զորքերի շարժումներն ու զորախաղերը անմեղ վարժություններ են և, ալլահն է վկա, բոլորովին էլ Ռուսաստանի դեմ չեն: Ի՞նչ եք ասում, ի՞նչ եք ասում: Թուրքիան բոլորանվեր բարեկամական ձգտումներով է կապված Ռուսական կայսեր պետության հետ: Եթե մեր զորավարժությունները մազաչափ անգամ անհանգստացնում են նորին մեծություն ցարին, ապա ես կիրամայեմ ետ կանչել մեր զորամասերը մեր ու ձեր կովկասյան սահմաններից»<sup>73</sup>:

Երգնկայի դեպքերը ցնցեցին Ներսեի Չառչին, փոխեցին նրա կյանքի ընթացքը, բացեցին աչքերը: Յիմա նա ահով է նայում Ենվերին տեղափոխող սև կառքին, որն իր մեջ «տանում է տմարդություն, կեղծիք և լերդացած արյան գարշահոտ»<sup>74</sup>:

Ժամանակները փոխվել են, խաբեությամբ ու ստորությամբ ռազմական մինիստր ու զորքերի գլխավոր իրամանատար դարձած Ենվերը բացահայտել է իր իսկական դեմքը, դիվական հոգին, և Ներսեի Չառչն այժմ ֆիզիկական ցավ է զգում «այդ սև դաժանության կողքով անցնելիս»: Ռուսաստանի դեմ սկսած պատերազմի « մի թևը Յայաստանի արևմուտքում է՝ Եփրատի ափերից մինչև Ուրմիայի լիճը», և Ներսեին տանջում է մի ահավոր մտահոգություն. «Ի՞նչ պիտի լինի իր դժբախտ արյունակիցների վիճակը: Արդյոք հայոց խելոքները փրկության ճանապարհը գտե՞լ են, թե՞ նորից մոլորված են՝ հավատալով այս սև կառքից աշխարհի բոլոր կողմերը տարածված կեղծիքին ու խաբեկանքին»<sup>75</sup>:

Ներսեի Չառչի կերպարը Ս.Խանգաղյանը ներկայացնում է գեղարվեստական ամենատարբեր հնարքներով՝ ներքին մենախոսությունների, հասարակական տարբեր խավերի մարդկանց, բարձրաստիճան թուրք զինվորականների, գերմանացի խորհրդատունների և այլոց հետ ունեցած հարաբերությունների, զրույցների, անձնական ապրումների նկարագրությունների ընթացքում:

<sup>72</sup> Խանգաղյան Ս., Խոսեք, Յայաստանի լեռներ, էջ 34:

<sup>73</sup> Նույն տեղում, էջ 35:

<sup>74</sup> Նույն տեղում, էջ 35:

<sup>75</sup> Նույն տեղում, էջ 37:

Ժամանակն իր կնիքն է դրել այս հայ քաջորդու բնավորության, հայացքների ձևավորման, անհատականության կայացման գործընթացների վրա:

Նրա ամենաբնորոշ գիծը հայրենիքին նվիրվածության գաղափարն է, նրա ազատության համար կյանքն անգամ չխնայելու պատրաստակամությունը: Ներսեիը հաճախ է գնահատում իր վիճակը. թուրքական մինքաշու հագուկապով այդ բարետես զինվորականը հայրենակիցներից շատերի նախանձն է շարժում, շատերն էլ իրենց մտքում նրան համարում են Ենվերի ծառա. «Այո՛, ծառա եմ,- մտքում խորհում է նա,- բայց ոչ թե այս հաստագլուխ թուրք փաշային, այլ քեզ՝ հայոց այրվող հող, քեզ՝ հավիտյան տառապանքի մատնված մարդ, քեզ, ամենից առաջ քեզ»<sup>76</sup>:

Ներսեիը քաջ գիտակցում էր, որ եթե Թուրքիան պատերազմի մեջ մտնի Գերմանիային դաշնակցած, ապա Ենվերն իր զորքերը կըշի Կովկաս՝ Ռուսաստանի դեմ, որին ատում էր մոլեգին, ապա ինքը ստիպված կլինի ծառայել սեփական ժողովրդի ազատության ու շահերի դեմ: Նա հրաշալի է զգում ժամանակի զարկերակը և պատերազմի հենց առաջին օրերից մտածում է ինքնապաշտպանություն կազմակերպելու, հայերի ցաքուցրիվ բեկորները համախմբելու մասին:

Ներսեի Զառւշը բարձր ինտելեկտի տեր անձնավորություն է, և նրա դատողությունները զարմանք են պատճառում գերմանացի գեներալ, Ենվերի ռազմական խորհրդատու Լինան ֆոն Սանդերսին, ով Թուրքիա գալուց առաջ համոզված էր, որ այնտեղ կատարյալ խավար է:

Գեներալի հետ զրույցում Ս.Խանզադյանն ընդգծում է Ներսեի Զառւշի սթափ մտածողությունն ու սառնասրտությունը: Նրան հունից հանում են գերմանացու դատողությունները. «Այդ երբվանից է թուրք ազնիվ սպան սկսել մտածել հայի կամ նրա իրավունքի մասին: Դա զառանցանք է. հանցանք սուլթանի ու թուրքի հայրենիքի հանդեպ: Սակայն դուք մի անհանգստացեք, իմ զրույցը այսօր մասնավոր է, և ես չեմ շտապում ձեր մեջ հանցագործ տեսնել: Միայն հիշեցեք, Սարիղամիշի աղետի պատճառներից մեկն էլ ձեր ասած այդ հայերն են: Նրանք միացած են ռուսներին: Նրանք ռազմական ջոկատներ ունեն ռուսական բանակներում և կռվում են կատաղի: Այդ հայերը պետք է ոչնչացվեն...»<sup>77</sup>:

Գեներալի կերպարով Ս.Խանզադյանը բացահայտում է «դեմոկրատ» Գերմանիայի իսկական դեմքը: Գեներալի շուրթերից են հնչում հայերի վերաբերյալ

<sup>76</sup> Խանզադյան Ս., Խոսե՞ք, Յայաստանի լեռներ, էջ 18:

<sup>77</sup> Խանզադյան Ս., Խոսե՞ք, Յայաստանի լեռներ, էջ 53:

ամենանողկալի խոսքերը. «Ի՞նչ հայ, հեր հազարապետ: Եթե հայ պետք է մնա, կմնա միայն նմուշի համար՝ մեկ կամ շատ-շատ մեկ տասնյակ»<sup>78</sup>:

Ներսեի Զառւշը շրջում է գյուղից գյուղ, գավառից գավառ, հորդորում ժամանակ չկորցնել, վաճառել ամեն ինչ ու զենք գնել, հեռանալ դեպի անտառներն ու լեռները, պատրաստվել պարտիզանական պայքարի: Նա քաջ գիտակցում էր, որ իրենց պայքարը հաղթանակով պսակվել չի կարող, բայց կարող է լիակատար ոչնչացումից փրկել ժողովրդին, ճանապարհ բացել դեպի փրկության երանելի եզերը: Այստեղ էլ նրան ավելի մեծ խնդիր է մտահոգում՝ երկիրը կորցնելու, հայաթափվելու խնդիրը:

Կաթակնացիների և նրանց միացած այլ գավառների ու գյուղերի բնակիչների հետ ամրանալով Ակնովիտի լեռնածերպերին՝ Ներսեի Զառւշը ցուցաբերում է մարտավարական բարձր ունակություններ, ինքնապաշտպանությունը խելացի կազմակերպելու հմտություններ, որոնք ավելի լիակատար են դարձնում նրա կերպարը, օժտում գեղարվեստական բարձր արժանիքներով: Երկարատև մարտերից, բազմաթիվ կորուստներից հետո նրան հաջողվում է Արաքսի մյուս ափը հասցնել հայության մի ստվար մասին:

Ներսեի Զառւշի կերպարը Ս.Խանզադյանը կերտում է պատմություն-հերոս և ժամանակ-հերոս գուգահեռների հարթության տիրույթներում՝ բացահայտելով առանձին անհատների կարևոր դերը ժողովրդին համախմբելու, դիմադրության ոգին բարձրացնելու, «մատադի գառան» հոգեբանությունը հաղթահարելու գործում:

Անչափ դժվար էր կոտրել դարերով հայության մի որոշակի հատվածի մեջ ամրացած, արմատներ գցած այն կարծրատիպերը, որ բոլորովին հարկ չկա խառնել «բգեզի բույնը», այլ հարկ է լինել օրինավոր քաղաքացի, հլու-հնազանդ կերպով ենթարկվել օրենքներին:

Ակնհայտորեն պարզ է, որ Ս.Խանզադյանը մի առանձին սիրով ու խանդադատանքով է ներկայացնում իր գլխավոր հերոսին, օժտում նրան մարդկային ամենաբարձր հատկանիշներով: Այս կերպարով հեղինակն իր վերաբերմունքն է արտահայտում Ֆիդայական շարժման, նրա կազմակերպիչների, առաջնորդների նկատմամբ, ցույց տալիս, որ այդ շարժումը սկսվեց ոչ թե դիպվածաբար, այլ ժամանակի հրամայականով:

Ֆիդայական շարժմանը 1970-80-ական թվականներին մեր գրողներից շատերն են անդրադարձել, սակայն անհրաժեշտ է նշել, որ նրանցից առաջիններից մեկը Ս.Խան-

<sup>78</sup> Նույն տեղում, էջ 55:

զայյանն էր, որ շարժումը ներկայացրեց որպես ազգային ոգու պոռթկման արտահայտություն, ազգային-ազատագրական պայքարի կազմակերպման յուրահատուկ ձև, մտածողության նոր եղանակ: Այս ամենը նա խտացված կերպով ներկայացնում է Ներսեի Զառւշի կերպարում, ցույց տալիս, որ ֆիդայական շարժումները պայքարի ոգի ներշնչեցին ժողովողին, նաև՝ դաժանություն թշնամու նկատմամբ: Եվ պատահական չէ, որ Զառւշի ականջին միշտ զնագում էր մի խուլ պահանջ. «Լացացրեք նրանց, ովքեր մեր աչքերից արյուն հանեցին»<sup>79</sup>:

Սա է ժամանակի հրամայականը, սա է այն միակ ճշմարիտ ճանապարհը, որ կարող է ստիպել թշնամուն չափավորել իր ախորժակը, ասել է թե՝ ուժն է սահմանում օրենքներ, այսինքն՝ խեղճին, տկարին, ուրիշներից օգնություն ակնկալողներին ոչ ոք չի հարգում ու հավատում:

Բազմաթիվ հավաստի տեղեկություններ կան, որ եղեօնի տարիներին, կազմակերպված դիմակայելով թշնամուն, ֆիդայիներից շատ-շատերը ժողովողի փրկված բեկորներին՝ կանանց, ծերերին ու երեխաներին, տեղափոխելով Արաքսի մյուս ափը, ավարտված չհամարեցին իրենց առաքելությունը ու նորից վերադարձան հայրենի եզերք՝ նորից համախմբելու հրաշքով կենդանի մնացածներին ու շարունակելու պայքարը:

Հայրենի հողն էր կանչում նրանց, պապերի շիրիմներն ու անթաղ զոհերն էին պահանջում դա:

Այդպես է վարվում նաև Ներսեի Զառւշը. «Երբ բոլորն անցել էին գետը և դուրս եկել ափ, Ներսեի Զառւշը շրջվեց ետ և ջրի մեջ թաղվելով, ելնելով՝ փախավ դեպի մութը: Լսվեց Յեղինեի ծղրտոցը. - Ներսե՞հ...

Քայլերն արագացրեց ու վազեց խավարի մեջ՝ դեպի ետ եկած ճանապարհը: Նա վազքը դադարեցրեց միայն այն ժամանակ, երբ այլևս չէր լսվում Յեղինեի կանչը: Դե, լավ է, Յեղինեն կկարծի, որ ինքը խեղդվել է գետում: Դե, լավ է, իր փրկած ժողովուրդը հասցրեց ապահով ձեռքերի՝ ռուսներին: Փրկվածները կապրեն, իսկ ի՞նքը»<sup>80</sup>:

Ներսեի Զառւշի կերպարի վերաբերյալ Թ.Պետրոսյանը նշում է, որ Ս.Խանգաղյանը նրան օժտել է արկածախնդրության որոշ գժերով, որն ինչ-որ չափով թուլացնում է կերպարը: Մեր կարծիքով դա բոլորովին էլ այդպես չէ:

Ներսեի Զառւշին վեպում մենք հաճախ ենք տեսնում այնպիսի իրավիճակներում, որոնք ինչ-որ չափով յուրահատուկ են արկածային ժամրի ստեղծագործություններին:

<sup>79</sup> Նույն տեղում, էջ 305:

<sup>80</sup> Նույն տեղում, էջ 527:

Սակայն այդ իրավիճակում Զառւշի կատարած գործողությունները (մեն-մենակ հայտնվել թշնամիներով բնակեցված գյուղերում, համարձակորեն մարտի մեջ մտնել միանգամից մի քանի թշնամիների դեմ և այլն) կապ չունեն արկածախսնդրության հետ: Դրանք ավելի շատ անձնական օրինակով զինակիցներին ոգևորելու, մարտական ոգին պահպանելու և նմանակերպ այլ նպատակներ են հետապնդում: Նրա՝ «արկածախսնդրություն» հիշեցնող քայլերն ավելի շատ պայմանավորված են նրա հախուրն բնավորությամբ, թուրքերի նկատմամբ ունեցած բուռն ատելությամբ: Նա հաճախ է հավատարիմ մնում «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» կարգախոսին՝ հերքելու համար թուրքերի մոտ ծեսավորված այն թյուր մտայնությունը, որ հայերն ընդունակ չեն գենք կրելու, վրեժ լուծելու: ճիշտ է, նա ներողանտարբար է վերաբերվում թուրք անպաշտպան երեխաներին, կանանց ու ծերերին, բայց և դատաստան է տեսնում Շուխ-Իլդիգ հանըմի նկատմամբ, որ իր տաք անկողնում մի անգամ չէ, որ հյուրընկալել է Զառւշին՝ իմանալով հանդերձ, որ նա քրիստոնյա «երմանի» է: Շուխ -Իլդիգի աչքերից «կապույտ լճակներ էին նայում Ներսեի Զառւշին՝ կապույտ անդունդների որոգայթով: Ինչու՝ է անզոր հաղթահարելու սեփական արյան խենթությունը: Շուխ-Իլդիգի ծիծաղը փշրվում է նրա ծնկներին:

- Վայելիր, Բեյս: Տիմարներն արյան են ծարավ, ես՝ քեզ: Իմ սրտում ավելորդ արյուն չկա: Վայելիր»<sup>81</sup>:

Ներսեի Զառւշի կերպարն ամբողջացնելու համար Ս.Խանզադյանը նրան օժտել է նաև ռոմանտիկական գծերով, գեղեցիկն զգալու ու տեսնելու սուր տեսողությամբ:

Վեպի ամենահաջողված էջերից են Ներսեի Զառւշի ու Աղավնու, նրա ու Յեղինեի ազնիվ ու ջերմ հարաբերությունների նկարագրությունները, ռոմանտիկական անկեղծ գեղումները, որոնք ներկայացված են հոգեբանական նուրբ ներթափանցումներով, պարզ ու անպածույթ գունավորմամբ: Տոհմիկ հայ մարդու իսկական մարմնացում է Ներսեի Զառւշը՝ իր ազնվությամբ, բարությամբ, բարեկրթությամբ, բարձր ինտելեկտով, հայրենիքին ու ընտանիքին անմնացորդ նվիրվածությամբ:

Վեպում Ս.Խանզադյանը կերտում է նաև ոչ իրական, բայց լիովին բացահայտված մի շարք գեղարվեստական կերպարներ՝ Խորեն աղա, Զիլ Զաքար, Գերասիմ վարժապետ, Երգնկայի հայոց հոգևոր առաջնորդ Գրիգորիս Եպիսկոպոս, դեղագործ Յաջի Բարսեղ Էֆենդի, Ուլիկ, Բենիամին, Յեղինե, Մարգարիտ, Շամոսկի մարե և

<sup>81</sup> Նույն տեղում, էջ 49:

ուրիշներ, որոնք ներկայացնում են հասարակական տարբեր խավեր, ամբողջացնում ժամանակի համապատկերը:

Վեպը սկզբից մինչև վերջ համակված է այն գաղափարով, որ ժողովուրդն է այն հիմնական ուժը, որի վրա հենվելով՝ կազմակերպվեց հայրենիքի պաշտպանության, թշնամուն արժանի դիմադրություն ցույց տալու ազատագրական պայքարը: Յեղինակն անընդհատ ցույց է տալիս հայրենի հողն արյան գնով պաշտպանելու ժողովրդական վճռականությունը: Ժողովուրդն իր հաստատականությունն ու բարոյական բարձր հատկանիշները ցուցաբերում է իրադարձությունների լարման ամենաօրիհասական պահերին, երբ անհրաժեշտ է զորակոչից թաքցնել Կաթակնի երիտասարդներին, զենք ձեռք բերել, պարեն ու զինամթերք պահեստավորել: Բազմաթիվ մարտերում նա ցուցաբերում է իր ոգու վեհությունը, անխորտակելի հավատը, ոյուցազնական ուժով հայրենի եզերքը պաշտպանելու կամքը:

Ժողովուրդի կերպարն ամբողջացնելու նպատակով Ս.Խանզայանը ներկայացնում է նաև նրա աշխատանքային առօրյան, կառուցելու, հայրենի օջախը շենացնելու, բարիքներ ստեղծելու նրա տեսակի անհագ ձգտումները:

Վեպի ժողովրդական կերպարների ճնշող մեծամասնությունն ունի այն գիտակցությունը, որ հայրենիքը կանգուն է իր զավակների միասնականությամբ, որ դարեր շարունակ ոչնչացումից փրկվել են միայն նրանք, որ չեն հավատացել նենք թշնամու խոստումներին ու հավաստիացումներին: Յայրենասիրական բարձր ընթանումներ ունեն վեպի ժողովրդական հերոսները, որը դրսնորվում է թե՛ առօրյա խաղաղ աշխատանքի ժամանակ, թե՛ թշնամու դեմ մղված անհավասար մարտերում, թե՛ ազատամարտիկների, թե՛ կանանց ու անգամ Ուլիկի, Բենիամինի և բազմաթիվ այլ երեխաների գործողություններում, մտածումներում, երկխոսությունների ընթացքում:

Նրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է ժողովրդական կյանքի մի բնորոշ կողմը, բոլորը միասին՝ ընդվզումի ու հերոսականության բարձր ոգին, վրեժի ու ատելության սրված զգացումը: Յուրաքանչյուրն առանձին-առանձին անսահման նվիրվածությամբ նպաստում է հայրենի եզերքի պաշտպանության սուրբ գործին, արհանարիում աներևակայելի զրկանքները, անմռունչ տանում խոշտանգումները:

Ոյուցազներգերի հերոսներին են հիշեցնում գյուղապետ, սայլագործ Խորեն աղան ու Զիլ Զաքարը, որոնք նույնպես առանցքային տեղ են զբաղեցնում վիպական ողջ գուծողությունների ընթացքում:

Ս.Խանզադյանն այս կերպարներով խորհրդանշում է հողագործ, արարող, հողից հաց քամող հայ մշակներին, ովքեր հայրենի եզերքին կապված են պապենական արմատներով: Հայրենի Կաթակնը նրանց համար սոսկ ծննդավայր չէ, այլ հայրենիքի պատկերն ամբողջացնող հայրենական տուն, պապենական շիրիմների, մանկության կապույտ հեքիաթների աշխարհ՝ անգնահատելի արժեքներ, որոնք այժմ հայտնվել են հրդեհի բոցերում՝ կործաննան եզրին: Ժամանակի ընթացքում Խորեն աղան, որ ոչ միայն Կաթակնում, այլև Երզնկայի ողջ գավառում հայտի էր որպես հմուտ սայլագործ վարպետ, լիովին վերափոխվում է ու դառնում ազգապահպանության պայքարի առաջամարտիկներից մեկը: Ու եթե ոչ հեռավոր անցյալում նա հայտնի էր իր հյուրասիրությամբ, աշխատասիրությամբ, նահապետական իր ընտանիքով ու վարքով, ապա այժմ նրա մտասեռումների առանցքում Կաթակնի ինքնապաշտպանությունն է, ժողովրդին մոտեցող ահավոր խորշակից փրկելը, որն, արդեն ավերելով ու հրկիզելով գավառի հայկական գյուղերը, հասնում էր Կաթակն: Նա խոր մտահոգությունների մեջ է. «Միտքը շիկացել էր: Այս գյուղում երկու հարյուր տասը ծուխն կա: Թե ծուխը մի ֆիդայի տա, երկու հարյուր տասը ֆիդայի կունենանք, որը մեծ ուժ է»<sup>82</sup>:

Խորեն աղային նույնպես Ս.Խանզադյանն օժտում է ժամանակի սուր զգացողությամբ: Իսկ ժամանակի հրամայականը զինվելն էր, հնարավոր բոլոր միջոցներով զենք ձեռք բերելը, զենք բռնելու ընդունակ տղամարդկանց զորակոչից թաքցնելն ու ոչնչացումից փրկելը: Գյուղում նա առաջինն է զենք գնելու համար վաճառում իր եզներն ու սայլերը, ու նրա օրինակը վարակիչ է դառնում բոլորի համար:

Տարիների իր փորձն ու իմաստնությունն է Խորեն աղան փոխանցում համագյուղացիներին, թուրքին երբեք չհավատալու, նրա կեղծ երդումներին ու հավաստիացումներին չխարվելու իր համոզմունքը: Ակնակիտ լեռան բարձունքներում Խորեն աղան ոչնչով հետ չի մնում երիտասարդ ազատամարտիկներից, իր գործողություններով ոգևորում ու սխրագործությունների է մղում նրանց:

Ինչպես արժանապատիվ կերպով ապրել, նույն արժանապատվությամբ էլ կնքում է իր մահկանացուն Ամառինե քաղաքի հրապարակում. «Յրապարակը ոռնում էր արյան հոտի հածույքից: Դիմացը կառավարական շենքն էր՝ զարդարված սև ու դեղին դրոշներով: Արևն այրում էր Խորեն աղայի աչքերը: Փողային նվազախմբի դղրդոցը զարնվում էր պատեպատ»<sup>83</sup>:

<sup>82</sup> Նույն տեղում, էջ 27:

<sup>83</sup> Նույն տեղում, էջ 28:

Ողջակիզման սյունին գամված՝ արժանապատիվ մահ է ընդունում նաև գերված ազատամարտիկ Գեղամը, որի շուրջերից հնչում են վեպի՝ թուրքերի դաշնակից գերմանացիներին ուղղված ամենածշմարիտ ու դաժան խոսքերը. «Յեր գերմանացիներ, երբ դուք Յայաստանի ու հայերիս արյամբ կշտացած կվերադառնաք ձեր աշխարհը, ապա չմոռանաք ձեր կանանց ու երեխներին պատմել, թե ինչպես եք դուք ձեր կայսերական վարտիքները հանել այս թուրք փաշաների ու բեյերի առջև...Պատմեցեք այս մասին: Դա ձեր արժանիքին է, ձեր վաստակը...»<sup>84</sup>:

Իր ժողովրդի տոհմիկ նկարագիրն են ամբողջացնում Զիլ Զաքարը, որին վեպի հենց սկզբում հեղինակը ներկայացնում է դյուցազնական հերոսներին հատուկ գժերով, «Թուխ-մուխ երեսով, կզակը՝ կացնի շեղը», զեկետցի Փափազը՝ Յաջի Բարսեղ Էֆենդու որդին, որին հայրը տարավ խորեն աղայի տուն՝ սայլագործություն սովորելու համար. «Զզվել եմ քոռ ու յաման յարա մաքրելուց... Թող որդիս քո արհեստով վաստակի իր հացը»<sup>85</sup>:

Դյուցազնական ուժով է օժտված Զիլ Զաքարը, միաժամանակ՝ մարդկային բարձր առաքինություններով, նահապետական վարք ու բարքով: Անասելի տանջանքների գնով նա կարողանում է փախչել գերությունից, միանալ Ներսեի Չառւշի ազատամարտիկներին, մասնակցել բազմաթիվ մարտերի ու իր տեսքով, ահօնի ուժով ահ ու սարսափ տարածել թշնամիների մեջ: Իր օրինակով է նա դաստիարակել նաև իր զավակներին, որոնցից Ուխտանիկը հոր զոհվելուց հետո վերցնում է նրա զենքը ու իր պատաճի ընկերների հետ կրվում Ակնովիտի բարձունքներում:

Եղեռնի տարիների Ակնովիտի հերոսական պայքարի նկարագրության միջոցով հեղինակն առավել ուշադրություն է հրավիրում հայ քաջամարտիկների հերոսական գործողությունների վրա, ներկայացնում նրանց անկոտրում կամքը, դյուցազնական ոգին: Պետք է նշել, որ բացի Երզնկայի ջարդերի նկարագրությունից, Ս.Խանզադյանը այնքան էլ հաճախ չի անդրադառնում ահասարսութ տեսարաններին, այլ հետևողականորեն առաջ է տանում այն միտքը, որ այդ տարիներին համեմատաբար քիչ զոհեր տվեցին հայկական այն բնակավայրերը, որոնք համախմբվեցին ու միասնաբար դիմակայեցին արհավիրքին: Այս առունով Կաթակնը, Ակնովիտը խորհրդանշում են ժողովրդի հավաքական ուժի դրսնորումները, այն գաղափարը, որ ուժեղի հետ են միշտ հաշվի նստում:

<sup>84</sup> Նույն տեղում, էջ 529:

<sup>85</sup> Նույն տեղում, էջ 7:

Վեպի կերպարներից յուրաքանչյուրը, ինչպես արդեն նշել ենք, ներկայացնում է հասարակական որոշակի խավերի ու շերտերի բնութագիրը: Ոչ բոլորն են նրանցից, որ ծիշտ գնահատեցին ժամանակը ու չխարվեցին թուրքերին: Ֆիշտ է, նրանք հետագայում զղացին դրա համար, բայց ծանր կորուստների գնով: Վեպում դրանք ներկայացված են դեղագործ Յաջի Բարսեղի, Գերասիմ Վարժապետի, Գրիգորիս Եպիսկոպոսի, Միսաք աղայի, մի շարք հոգևորականների կերպարներով: Այդ «հավատացյալներից» շատերն իրենք դարձան թուրք ոճրագործների առաջին գոհերը, ինչը, սակայն, նորից դաս չհանդիսացավ ուրիշների համար:

Իրեն ու իր երեխաներին փրկելու համար դեղագործ Բարսեղ Էֆենդին Փափազ որդուն ուղարկում է զինվորական ծառայության, աղջկան ամուսնացնում է թուրք բարձրաստիճան զինվորականի հետ, բայց վերջիվերջո հասկանում է ամեն ինչ, զղում ու կեղծ կրոնափոխություն ընդունելով՝ ձեռնամուխ է լինում իր մեղքերի քավությանը. «Պետք է փրկել ժողովրդի բեկորները, որ հետո դրանք հավաքենք ու նոր Յայաստան ստեղծենք»<sup>86</sup>:

Մեծ վարպետությամբ է Ս.Խանզադյանը ներկայացնում Բարսեղ Էֆենդու հոգեկան ծանր ապրումները, անողոք մղձավանջները, որոնք զօր ու գիշեր տանջում են նրան: Իր կաշին փրկելու համար չէ նա մահմեդականություն ընդունում և հաճախ է կրկնում. «Ես պատրաստ եմ հենց այս պահին նույնիսկ ծիզվիտ դառնալու, եթե իմանամ, թե դա կօգնի դժբախտ ազգին մեր: Յասկացեք դա»<sup>87</sup>:

Նրա կարծիքով ժամանակներն այնպիսին են, որ պետք է ամեն գնով սիրաշահել թուրքերին, չգրգռել նրանց ու սպասել հարմար ժամանակների, իսկ դրանք հեռու չեն. «Օսմանյան կայսրությունը, աղետի առջև կանգնած, կործաննան շեմին է: Անզամ անհնարինը հնարավոր դարձնելով՝ պետք է շատ հայերի փրկենք թուրքի ճանկերից: Մի բան լավ ինացեք, ամենաշատը եկող ամառ թուրքերը կքաշվեն Յայաստանից: Յայ պիտի ունենանք այստեղ, այս հողի վրա, որ ծայն ունենանք, նաև իրավունք՝ ասելու, թե մերը մերն է»<sup>88</sup>:

Յայի ամենամեծ դժբախտությունն ըստ Բարսեղ Էֆենդու այն է, որ դարերի ընթացքում խարել չսովորեց («Աշխարհը եթե խաբեությամբ չի ստեղծված, ապա խաբեությամբ է կանգուն») ու միշտ պատժվեց իր ճշտապահության երեսից, իր արդարամտության, քրիստոնեական հնագանդության պատճառով: Նրա

<sup>86</sup> Նույն տեղում, էջ 256:

<sup>87</sup> Նույն տեղում, էջ 302:

<sup>88</sup> Նույն տեղում, էջ 303:

մտասնեռումների կենտրոնում աղջիկն է՝ Հեղինեն, որի հանդեպ մեծ մեղք է գործել հայրը ու այժմ փորձում է քավել այն՝ Ներսեի Չառւշին մեծ գումար նվիրելով՝ զենք ձեռք բերելու, հայրենի հողը պաշտպանելու համար (« Սերունդները կանիծեն մեզ, եթե մենք Եփրատը կորցնենք»):

Ծերունու նկատմամբ հեղինակը ոչ թե ատելության, այլ կարեկցանքի զգացմունքներ է հարուցում՝ նրան ներկայացնելով որպես խառնակ ժամանակներում մոլորված մի հայի, որը տառապում է Երկրնտրանքների ծանր որոգայթներում:

Բարսեղ Էֆենդու պես մոլորյալներ են նաև Բեյի որդու գերմաներենի ուսուցիչ Գերասիմ Վարժապետը, հնազանդության ու խոնարհության կոչեր անող Գրիգորիս արքեպիսկոպոսը և մի քանի ուրիշներ, որոնց միամտությունից վարպետորեն օգտվում են թուրքերը:

«Խոսե՛ք, Հայաստանի լեռներ» վեպում Ս.Խանզադյանը ստեղծել է կերպարների ու «պատկերային միավորների բազմաստիճան» համակարգ, ինչն ավելի շարժուն է դարձնում սյուժեի ընթացքը, ընդլայնում ժամանակի ու «տարածության հարաբերումները»:

Վեպում այդ հարաբերումների առանցքում են ներկայացված Աղավնու, Հեղինեի, Խորեն աղայի կնոջ՝ Մարգարիտի, Շամոսկի Մարեի, Բենիամինի դեռատի կնոջ՝ Զյունիկի, Ակնովիտ լեռան Ֆիդայական ճամբարում տղամարդկանց հետ ուս ուսի պայքարող կանանց ու աղջիկների կերպարները...

Քնարական ջերմությամբ են ներկայացված այս կերպարները, և, անկասկած, հենց նրանց նկատի ունենալով է Ս.Սարինյանը շեշտում վեպի «խոհական-քնարական երանգը»:

Հոգեբանական զարմանալի նրբանկատությամբ է Ս.Խանզադյանը ներկայացնում Աղավնուն ու Հերիքնազին, ովքեր վիպական հյուսվածքի տարբեր մասերում ներհակում են Ներսեի Չառւշի ներաշխարհը, դառնում նրա մտասնեռումների առանցքային բաղադրիչները:

Ողբերգական կերպար է Աղավնին, ում հայրը՝ Բարսեղ Էֆենդին կնության է տալիս մի թուլամորթ, բայց ազդեցիկ Բեյի՝ աղջկան սպասվող արհավիրքից փրկելու համար:

Սիրո առաջին թրիոններն իր մատաղ կրծքի տակ Աղավնին զգացել է պատանության վաղ շրջանում, երբ հանդիպել է Ներսեի Չառւշին ու նրա հայացքում տեսել իրեն անծանոթ տաք բռնկումները: Ժամանակը խաթարել է Աղավնու ճակատագիրը. նա

թեպետ վերջիվերջո ամուսնանում է իր սիրած տղամարդու հետ, բայց անցյալի մղձավանջները հանգիստ չեն տալիս, ուրվականների պես քուն թե արթնի հետապնդում են նրան, խառնում ներաշխարհի անդորրը: Աղավնին ապրում է իրականության ու ցնորքի սահմանագծում: Իրական պատկերներն ու միրաժային տեսարանները, մեկը մյուսին հերթագայելով, հանում են աղջկան հոգեկան հավասարակշռությունից, ինչի հետևանքով էլ նա հայտնվում է թշնամու շրջապատման մեջ ու զոհվում որպես իր ժողովորդի օրիասական պայքարին մասնակցող ազատամարտիկ:

Ժամանակը փոխում է վեպում ներկայացված կանաց կյանքի ընթացքը, կատարում իր սրբագրումները: Չքնաղ ու երազային Յեղինեն, ով աղետալի դեպքերից առաջ կարծում էր, թե դառնալով քրիստոնյա մի այլ աղանդի հավատին՝ իր ընտանիքն ու իրեն կփրկի վերահաս կործանումից, պատումի ընթացքում լիովին վերափոխվում է: Նրբագեղ այդ աղջիկը Ակնովիտում դառնում է խսկական ռազմիկ. ամեն օր պարտադիր զինավարժանքի է գնում Բենիամինի ու նրա հետախույզ տղաների հետ, ցատկում ժայռի գլխից, վազում, սողում, մինչև կոկորդը խրվում ծյունաթմբերի մեջ, տղաների պես հանում արտահագուստը, շալակում ծանր ուսապարկը ու լողալով անցնում սառցակալած գետը:

Տոհմիկ հայ կնոջ տիպական ներկայացուցիչն է Խորեն աղայի մայրը՝ Շամուկի մարեն, ով իր մայրական ջերմությամբ հանախմբում է ընտանիքը, համերաշխություն ու խաղաղություն սերմանում իր շուրջը: Յայկական օջախի խորհրդանիշն է Շամուկի մարեն, և նրա նմաններով են շեն մնում ավանդական ընտանիքները, նրանց շնչով են ծխում հայրենական օջախները, նրանց միջոցով են սերունդներին փոխանցվում դարավոր սովորութմերն ու ավանդները: Յատկապես ցնցող են վեպի այն պատկերները, երբ հեղինակը ներկայացնում է ճամբարի ծեր կանաց անձնազնի արարքը. վերջանալու վրա են պարենի վերջին պաշարները, մի կտոր գարեհաց կամ մի կուն ջուր են ստանում միայն երեխաներն ու վիրավորներն, և Շամուկի մարեն հետ ճամբարի ծեր կանայք իրենց նետում են անդունդը՝ «ավելորդ ուտող բերաններից» ազատելով ճամբարականներին:

Յայ կանաց հակապատկերն են հավերժ մեղկության թմբիրով ողողված քեմալ Բեյի տիկինը, Շուլս-Իլդիզ հանըմը, որոնց միջոցով Ս.Խանզադյանը ներկայացնում է թուրքական բարձրաստիճան պաշտոնյաների՝ ժամանակի համար խիստ բնորոշ աշխարհիկ կյանքը: Նրանք անտարբեր են իրենց շուրջը ծավալվող

իրադարձությունների նկատմամբ, ապրում են միայն էգի կենսաբանական բնագդներով, մտածում միայն անկողնային հաճույքների ու վայելքների մասին: Նրանցից ոչնչով չի տարբերվում նաև Սեքին, որը համոզված է, որ մարդու հավատը ոչ միայն կրոնն է, այլ զգացմունքն ու սերը, բայց միաժամանակ դիմում է ոճրագործության՝ սպանելով խմբապետ Թաթուլի սիրած աղջկան՝ համոզված, որ ինքն իր պարտականությունն է կատարել:

Ժամանակի պատկերն ամբողջացնելու համար Ս.Խանզադյանը ներկայացնում է ինչպես թուրքական վերնախավի, այնպես էլ հասարակ ժողովրդի առօրյան, նիստուկացը, սովորությունները: Մի կողմից՝ առասպելական ճոխություն, վայրենի խրախճանքներ, արքայավայել ճաշկերույթներ, մյուս կողմից՝ համատարած աղքատություն ու խեղճություն: Պատերազմը քայլայել է Թուրքիայի տնտեսությունը, ինչը չի խանգարում սակայն, որ երիտթուրքական պարագլուխները Գերմանիայի բանկերում միլիոններ կուտակեն: Պատերազմի տարբեր ճակատներում տասնյակ հազարներով թուրք զինվորներ են զոհվում, իսկ վերնախավի զավակներն իրենց օրն անցկացնում են ճոխ խրախճանքներով, ռեստորաններում ու հասարակաց տներում վատնում ժողովրդի ունեցվածքը:

Ժողովուրդը տառապում է համատարած աղքատության ճիրաններում, իսկ դա արդարացնելու համար ծանրակշիռ փաստարկներ են անհրաժեշտ: Ու գտնվեցին դրանք. ամեն ինչում հայերն են մեղավոր, որոնք զավթել են թուրքերի բարեբեր հողերը, իրենց ձեռքը վերցրել բոլոր շահաբեր ոլորտները:

Թուրքական քարոզամեքենան օրեցօր ավելացնում է ժողովրդի մեջ ներարկվող հակահայկական թույնի չափաբաժինները ու գրգռում տգետ ամբոխին: Այսպիսին էր դարասկզբին քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակը Թուրքիայում, որը կարելի է համարել հայկական ջարդերի հիմնական պատճառներից մեկը: Եթե այս ամենին ավելացնենք նաև թուրքական մոլեռանդ կրոնապաշտությունը, կույր հավատը, հոգեւոր դասի գրգռիչ գործունեությունը ամբոխի հետ, ապա ժամանակի պատկերն ավելի կլոնկրետանա ու կամբողջանա:

Սակայն վեպում կան նաև իրավիճակը ճիշտ գնահատող, սեփական իշխանություններին ատող, նրանց ժողովրդի դժբախտությունների հիմնական մեղավորը համարող առանձին կերպարներ, ինչը վկայում է հեղինակի օբյեկտիվությունը, պատմական իրողությունները սթափ արժեկությունը:

Թուրքական բանակում, բարձրաստիճան սպաների թիկնազորերում ու պահախմբերում հարյուրավոր կեղծ հավատափոխ եղած հայ զինվորներ էին ծառայում, որոնք եղեռնի նախորդող օրերին նախազգուշացնում էին սպասվող արհավիրքի մասին, այնուհետև արժեքավոր տեղեկություններ փոխանցում լեռներում ամրացած հայ ազատամարտիկներին թուրքերի կողմից սպասվող հարձակումների, շուրջկալների և այլ միջոցառումների վերաբերյալ:

Նրանցից մեկն է Կուրբան-Ալի Մանուկը, որի կերպարում Ս.Խանզադյանը մարմնավորում է հայ ժողովրդի վիհժառության ոգին: Նրա հորը՝ Խորեն աղային, թուրքերը մորթել են: Տասնամյա պատանին թափառեց վիլայեթից վիլայեթ, ծպտվելու համար թլպատվեց և ծառայության անցավ ոստիկանությունում: Յենց այդ օրերին էլ նա երդվեց վրեժինողիր լինել իր հայրենակիցների կրած տառապանքների, անմեղ զոհերի արյան համար: Յեղինակը Կուրբան-Ալի Մանուկին ներկայացնում է մի առանձին ջերմությամբ ու գորովանքով, ինչպես Ներսեի Չառւշին է ներկայացնում: Թուրք ոստիկանի հագուստը ճնշում է Մանուկին, ու նա երբեմն մտածում է դեն նետել այն, փախչել լեռները, միանալ իր հասակակից տղաներին, նրանց պես հետախուզության գնալ, մասնակցել կրիվներին: Բայց Ներսեի Չառւշը նրան համոզում է, որ այսպես նա ավելի շատ օգուտ կտա իրենց, քան զենքը ձեռքին կռվելով:

Կուրբան-Ալի Մանուկը նույնպես անցնում է Արաքսի մյուս ափը, ծառայության անցնում խորհրդային զորքերի կազմում, Բուխարայի անապատներում կռվում բասմաչների դեմ: Յեղինակը նրան ներկայացնում է ժամանակի տարբեր չափումներում: Մանուկը ոստիկանի հագուստով շրջում է Երզնկայի շուկայում, անուղղակիորեն հայերին տեղեկացնում թուրքերի մտադրությունների մասին: Կարմիր բանակի հեծյալ ջոկատի հրամանատարին ցնցում է մայրամուտի հրդեհը՝ «Նրան հիշեցնելով Ամառինեի հրապարակի խարույկը, ողջակիզվող Գեղամի խրոխտ ձայնը: Նա հիշում է, թե ինչպես գնդակահարեց գերմանացի բարձրաստիճան սպային՝ Կուրտ Ֆոն Բայցին. «Չեմ կարող չսպանել ձեզ, իեր գնդապետ: Սակայն ուզում եմ ինանաք, որ ես ձեր գանձերը կողոպտելու մտքով չեմ սպանում ձեզ, ինչպես անում է հետին ավագակը: Այլ ուզում եմ ինանաք, որ ես հայ եմ ու իմ արդար վրեժն եմ հանում»<sup>89</sup>:

Կուրբան-Ալի Մանուկի վրեժինորության գագաթնակետը էնվեր փաշայի սպանությունն է Բուխարայի ավագուտներում, երբ նա արտահայտում է եղեռնի մեկուկես միլիոն անմեղ զոհերի արդար ցասումը:

<sup>89</sup> Նույն տեղում, էջ 531:

- Մի սպանիր ինձ: Ես քեզ կհանձնեմ Բեռլինի բանկերում ունեցածս ողջ դրամը: Նա մեկուկես միլիոն դոլար է:

- Բարի, սակայն ասացեք, ենվեր փաշա, ես ի՞նչ պատասխան տամ մեկուկես միլիոն հայրենակիցներիս անթաղ ոսկորներին, որ դու ևս քո ատամներով կրծոտելով կոտորեցիր: Ի՞նչ պատասխան տամ քո ձեռքերով ևս խոշտանգված Հայաստան հայրենիքին, պղծված Եփրատին: Եթե քո մեջ մարդ ասած մասունքից թեկուզ մի փշուր կա, ապա նման առաջարկ չպիտի անես ինձ: Յող օգիր բերանդ, ենվեր փաշա, դու պիտի սատկես»<sup>90</sup>:

Ժողովրդական ցասումի ու անհագ վրեժխնդրության մարմնացումներ են նաև Մանուկի հայրենակիցներ Բենիամինի, Զյունիկի, Ուլիկի և Վեպի մի շարք այլ մանուկ ու պատանի հերոսների կերպարները, որոնք նույնպես կերտված են քնարական ջերմությամբ ու սիրով:

Բենիամինը՝ Խորեն աղայի որդին, ժառանգել է հոր հաստատականությունն ու կամքը, անսահման սերը հայրենիքի նկատմամբ, նրա՝ ազատության համար անգամ կյանքը չխնայելու պատրաստականությունը: Դեռահաս Բենիամինը հերոսականության իսկական օրինակներ է ցուցաբերում վիպական գործողությունների զարգացման ընթացքում, ծպտյալ հակառակորդի շարքերը թափանցելու, հետախուզության մեկնելու ժամանակ: Նրա օրինակին հետևում են վեպի մյուս պատանի հերոսները, որոնք ժամանակից շուտ հասունացել, դարձել են իսկական մարտիկներ, հայրենիքի ուխտյալ զինվորներ:

Հայոց մեծ եղեռնից փրկված բեկորները ցրվեցին աշխարհով մեկ, շատերն անցան Արաքսի մյուս ափը, տնավորվեցին Հայաստանի տարբեր վայրերում: Սակայն նրանց դեռևս վիճակված չէր ապրելու խաղաղ, ստեղծագործ կյանքով: Այս անգամ արդեն՝ եղեռնից մի քանի տարի հետո, նրանք նորից ստիպված եղան գենք վերցնելու և Անդրանիկի ու Նժդեհի գլխավորությամբ մասնակցելու թուրք-ազերիական զորքերի ու ավազակախմբերի դեմ մղվող մարտերին:

«Անդրանիկ» և «Գարեգին Նժդեհ» վեպերը գրվել են փաստական հարուստ նյութի հիման վրա: Յեղինակն ուսումնասիրել է Անդրանիկ զորավարի և քաղաքական ու ռազմական հայտնի գործիչ Գարեգին Նժդեհի վերաբերյալ հրապարակում եղած համարյա բոլոր նյութերը, գրի առել զորավարի նախկին գինվորների, որոնց թվում քիչ չեն եղել սյունեցինները, հիշողությունները, նրանց մասին շրջանառվող գրույցները,

<sup>90</sup> Նույն տեղում, էջ 535:

առասպելները, որոնք այնքան էլ հեռու չեն իրականությունից: Իսկ Գարեգին Նժդեհի մասին պատմություններ է լսել ու գրի առել նրա հետ անմիջական շփումներ ունեցող զինակիցներից, որոնցից ոմանք դեռևս ողջ էին ու կարող էին բնութագրել Նժդեհին թե՛ որպես պետական-ռազմական գործիչ, թե՛ որպես անհատականություն:

Դրանք իրար հետ կապված են առաջին հերթին ժամանակային ընթացքով և այդ հատվածում իրար հաջորդող իրադարձություններով: Ընդամենը մեկուկես տասնամյակի իրադարձություններ են ներկայացված «Անդրանիկ»-ում և «Գարեգին Նժդեհ»-ում, բավականին կարճատև մի ժամանակահատված, որը, սակայն, լեփ-լեցուն է ողբերգական ու հերոսական բազմաթիվ էջերով:

Ի տարբերություն նախորդ վեպերի («Մխիթար Սպարապետ», «Խոսե՛ք, Յայաստանի լեռներ», «Թագուհին Յայոց»՝ «Անդրանիկ» և «Գարեգին Նժդեհ» վեպերում Ս.Խանզադյանի հերոսները գաղափարատիպեր են, բայց արտահայտում են ոչ թե որոշակի կուսակցությունների, այլ համաժողովրդական կողմնորոշումները, որովհետև, ինչպես դիպուկ նկատում է Ս.Սարինյանը «Խոսե՛ք, Յայաստանի լեռներ» վեպի կապակցությամբ, կուսակցական գաղափարներն «արդեն ապարդյուն անցյալ էին, և ստեղծված կացությունը բացառել էր որևէ երաշխիք՝ ժողովրդի մի զանգվածի թողնելով մեն-մենակ իր ճակատագրի հետ՝ անորոշ, տագնապալից, ողբերգական»<sup>91</sup>:

Այդ երկու վեպերում Ս.Խանզադյանը բացում է գաղտնի համաձայնությունների այն կծիկը, որն առաջացել է թուրք-բոլշևիկյան համաձայնությունների որոգայթներում ու խաղասեղանին դրել ժողովրդի մի մեծ հատվածի ճակատագիրը:

«Անդրանիկ» վեպի վրա Ս. Խանզադյանն աշխատել է մոտ տասը տարի (1973-1983): Վեպը լույս է տեսել 1989 թվականին՝ զորավորի ծննդյան 125-ամյակի առթիվ: Վեպի հղացման մասին Ս. Խանզադյանը բազմիցս նշել է, որ Անդրանիկի հիշատակը վեպով հավերժացնելը իր գերագույն նպատակներից մեկն է եղել, բայց հայտնի պատճառներով չի իրականացվել ավելի վաղ:

Անդրանիկ զորավարի կերպարը համանուն վեպում ներկայացվում է որպես հայ ժողովրդի ազատատենչ ոգու, ազատ ու անկախ ապրելու, ազգային արժանապատվությունը բարձր պահելու խորհրդանիշ:

Վիպական գործողությունները տեղի են ունենում 1910-ական թվականներին, երբ Այսրկովկասը նորից կռվախնձոր էր դարձել Եվրոպական գերիզոր տերությունների միջև, որոնք միասնաբար փորձում էին արգելել ռուսների մուտքը բնական պաշարներով

<sup>91</sup> Սարինյան Ս., Յայ գրականության երկու դարը:

հարուստ ու աշխարհագրական կարևոր դիրք ունեցող այդ տարածաշրջան, իսկ առանձին-առանձին՝ որքան հնարավոր է մեծ բաժին ու ազդեցություն ունենալ երկրանասում: Ամենածանր հարվածներն իր վրա կրեց հայ ժողովուրդը՝ ընդամենը մի քանի տարում տալով միլիոնավոր զոհեր, տարհանվելով ու սփռվելով աշխարհով մեկ:

Վեպի պատմական ժամանակն ու գեղարվեստական ժամանակը, ճիշտ է, համընկնում են, բայց գլխավոր հերոսների հիշողությունների միջոցով հեղինակը պատմական էքսկուրսներ է կատարում դեպի անցյալ՝ անելով ուշագրավ եզրահանգումներ. պատմական իրադարձությունները նույն կամ համարյա նույն ձևով կրկնվում են ժամանակային տարբեր հատվածներում, ուրիշ խոսքով՝ հայ ժողովորդի ազգային-ազատագրական հույսերն ու երազանքները ավելի են մեծանում ու խորանում, երբ սրվում են ռուս-թուրքական հարաբերությունները, բայց փշրվում և անհետանում են, երբ Ռուսաստանը, Եվրոպական գերտերությունների ճնշմամբ, դուրս է գալիս խաղից՝ իր դաշնակիցներին թողնելով բախտի քմահաճույքին: Ոգևորության այդպիսի պահեր է ապրել հայ ժողովուրդը, երբ Պետրոս Մեծի զորագնդերը հայտնվեցին Կասպիականի ափերին, նույն ոգևորությունը համակեց հայ ժողովորդին, երբ առաջին համաշխարհայինի տարիներին Գերմանիայի դրդմամբ Թուրքիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին և սկսեց պարտություն պարտության հետևից կրել ռազմաճակատի ողջ երկայնքով:

Հայկական կամավորական գնդեր կազմելու և ռուսական զորքերի կազմում դարավոր թշնամու դեմ կրվելու ու բռնազավթված հայկական տարածքներն ազատագրելու ոգևորությամբ համակված՝ Հայաստան է վերադառնում Անդրանիկը, որը մասնակցել էր Բալկանյան պատերազմին ու բազմաթիվ հաղթանակներով պսակել իր զորավարական տաղանդը:

Իրական կոնկրետ հանգամանքներում է Ս. Խանզադյանը ներկայացնում Անդրանիկի կերպարը, որը բնութագրվում է որպես մեծ զորավար, կոնկրետ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվող, ձեռքը ժամանակի զարկերակին պահող քաղաքական գործիչ, ով հիմնականում առաջնորդվում է սեփական ուժերին ապավինելու՝ դարերով ստուգված կարգախոսով:

Կարծում ենք՝ սխալված չենք լինի, եթե ասենք, որ Անդրանիկի կերպարում Ս. Խանզադյանը տեսնում է Դավիթ Բեկի շարունակողին: Բեկի պես Անդրանիկը ևս հերոսական-ողբերգական կերպար է: Ծանր ճակատագիր է բաժին հասել զորավարին ու ամեն անգամ, երբ հիշում է կնոջ ու որդու՝ մանկահասակ Լևոնի մահը, երկաթյա այդ

մարդը հուզմունքի ծանր պահեր է ապրում: Նրա հիշողության մեջ հաճախ են հնչում մահամերձ կնոջ խոսքերը. «Անդրանիկ, ներիր, որ մեռնում եմ, դու մնացիր որպես թևը կտրած հավը»:<sup>92</sup>

Անդրանիկը Յայաստան է գալիս ազգի պահանջով, նրա ցաքուցրիվ ուժերը համախմբելու, Սասնա լեռներում իր հետ կրված ֆիդայիներին կանչելու, հայկական կամավորական գնդեր կազմելու, ռուսական ուժերի հետ թուրքերի դեմ կռվելու նպատակամիտումով: Ազգը ցնծությամբ է ընդունում զորավարին, ամենուրեք համազգային ոգևորություն է, մարտական ոգու դրսևորումներ:

Նրա հիշողությունների մեջ զուգահեռվում են անցյալն ու ներկան: Կենսապատումի բարդ զիգզագներում ու զուգահեռներում արթնանում են վաղեմի պատկերները, հիշում է Աղբյուր Սերոբին, Գևորգ Չառլին, Զեյթունցի Յովնանին, Արաբոյին, մարտերում զոհված, դավադրաբար սպանված իր զինակիցներից շատերին, նրանց, ովքեր Սասունից, Տալվորիկից, Թիֆլիսից, Բարումիից, անգամ հեռավոր Եվրոպաներից շտապում են Երևան՝ միանալու իրեն: Օրհասական պահերին ազգը համախմբվում է, ու դա խիստ ոգևորում է Անդրանիկին: Ազգը մի տեսակ փոխում է իր դիմագիծը, ու զորավարը հիշում է 1908 թվականի դժմդակ օրերը, երբ իրեն խիստ մտահոգում էր երիտրուրքերի իշխանության գալու իրողությամբ ոգևորությամբ համակված հայության մի հոծ զանգվածի, հատկապես նրա ունկոր, բարեկեցիկ կյանքով ապրող հատվածի ոգևորությունը: Նա այդ թվականին բազմիցս է զգուշացրել հայ հավատացյալներին. «Պարտքս են համարում հիշեցնել ձեզ, որ համայն հայ ազգի դեմ որոգայթներ են ստեղծում այդ «նոր» կոչված թուրք դեկավարները: Մի ընկեք նրանց թարթափի մեջ կույր ու տխմար ձկնիկի նման: Մի հավատաք թուրք կառավարողներին, նրանք մեզ նորից կշարդեն: Ինքներդ գնում եք դեպի կործանում, դա ձեր գործն է, սակայն ժողովրդին մի տարեք դեպի մահ»<sup>93</sup>:

Անդրանիկի կերպարում Ս. Խանզադյանն արծարծում է ռազմաքաղաքական, բարոյահոգեբանական, խոհափիլխոփայական բավականին մեծ թվով խնդիրներ, ինչով էլ պայմանավորված է վեպի կերպարների մեծ քանակությունը, աշխարհագրական լայն ընդգրկումները:

Զորավարի կերպարը Ս. Խանզադյանը փորձում է կերտել ժամանակաշրջանի պատմաքաղաքական համապատկերում՝ ընդգծելով նրա քաղաքական հեռատեսությունը: Ժամանակի սրված զգացողությունը Անդրանիկի բնավորության

<sup>92</sup> Խանզադյան Ս., Անդրանիկ, Երևան, 1989, էջ 4:

<sup>93</sup> Նույն տեղում, էջ 22:

ամենաբնորոշ կողմն է, և այդ գգացողությամբ է զորավարը արժենորում տարածաշրջանում և Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունները: Պատմության փորձը նրան հուշում է, որ երբեք չպետք է հավատալ թուրքերի կեղծ խոստումներին ու խորամանկ քայլերին, որոնք հայերի զգոնությունը բթացնելու, որոգայթներ լարելու նպատակներ են հետապնդում: Այդպես նրանք դեռևս 18-րդ դարում գրավեցին Հալիձորն ու գլխովին ոչնչացրին նրա բնակչությանը, այդպես վարվեցին Տարոնի, Վասպուրականի, Մուշի, հայկական այլ գավառների բնակչության հետ, ովքեր խարվեցին կեղծ խոստումներից ու զինաթափ եղան, աղ ու հացով դիմավորեցին իրենց դահիճներին:

Պատմական իրական փաստերի միջոցով է Ս. Խանզադյանը բացահայտում Անդրանիկի հեռատեսությունը: Զորավարը հիշում է, թե ինչպես թուրքերը խորամանկորեն իր զինակից Մուրադին՝ քաջ ու հայրենասեր այդ մարդուն, առաջադրեցին մեպուս-մեջլիսի թեկնածու, հորդորեցին Հայ հեղափոխական դաշնակցությանը առաջադրել նաև Անդրանիկի թեկնածությունը. «Վեց օր անընդհատ ստիպում էին, խնդրում, համոզում, որ ինքը համաձայնվի ընտրվել պառլամենտի անդամ, մերժում էր: - Դա կուսակցության պահանջն է,- ասացին: - Ես այլս ձեր կուսակցության անդամ չեմ և հեռանում եմ ձեր կուսակցությունից անվերադարձ»<sup>94</sup>: Ս. Խանզադյանը, սակայն, չի արձանագրում պատմական փաստերը, որովհետև, ինպես Ս. Սարինյանն է գրում, քաջ գիտակցում է, որ «պատմականության էությունը պատմության փիլիսոփայության ճիշտ ընկալման մեջ է, ոչ թե պատմական փաստերի մերկ արձանագրությունն է»<sup>95</sup>:

«Անդրանիկ» վեպում նույնպես իրար հաջորդող չորս մասերը վիպական գործողությունների նոր ժամանակներ են ներառում, ժամանակի չափման տարբեր փուլեր, և զորավարի կերպարը բացահայտվում-բնութագրվում է տվյալ ժամանակահատվածի տարաբնույթ զարգացումների հեղինակային դիտարկումներով:

Ժամանակի շարժմանը զուգընթաց փոխվում են իրավիճակները, ճյուղավորվում են սյուժետային նոր գծեր, ասպարեզ են զալիս նոր կերպարներ, որոնցից շատերը, ճիշտ են, լիարժեքորեն չեն բացահայտվում, սակայն կարևորվում են զորավարի կերպարի մարմնավորման համար: Նրանց հետ ունեցած շփումների, վեճերի, քննարկումների ընթացքում են դրսերական Անդրանիկի կերպարի բնորոշ գծերը:

<sup>94</sup> Նույն տեղում, էջ 22-23:

<sup>95</sup> Սարինյան Ս., Սերունդներ և ավանդներ, Երևան, 1984, էջ 22:

«Անդրանիկ» վեպում նույնպես ժամանակն ունի ծևակառուցվածքային որոշակի գործառույթներ. «Մարմնավորման այս կառուցվածքը, որ մտահղացել է վիպասանը, ենթադրում էր գեղարվեստական ու գաղափարական այնպիսի համակցությունների ներդաշնակում, որը լայն կապերի մեջ ու մասշտաբային պլանով գլխավոր հերոսին պատկերեր և ժողովրդական մաքառումների գլխավոր հանգույցներում, և արտաքին դիվանագիտական նենգ խաղերի կրահողի դերում, և, ի վերջո, անհավասար ուժերի ու ծանր ճակատագրի անխուսափելի փորձությունները գիտակցողի ու դրանց դիմակայողի մարտիրոսությանք»<sup>96</sup>:

Որքան հերոսական նույնքան էլ ողբերգական կերպար է Անդրանիկը: Դեռևս պատանեկան տարիներից հավատարմագրվելով Արևմտյան Հայաստանի ազատագրման գործին՝ նա 1894-96թթ. կոտորածների ժամանակ մասնակցել է Սասունի, Տարոնի ինքնապաշտպանական մարտերին, Աղբյուր Սերոբի ֆիդայական ջոկատի կազմում կրվել թուրքերի դեմ: Նա հատկապես աչքի է ընկել Մշո Առաքելոց վանքի պաշտպանական մարտերում, վաստակել է ժողովրդական հերոսի համբավ: Այնուհետև մասնակցել է Աշճակի, Աղթամարի, Կարճկանի, Դատվանի պաշտպանական մարտերին, իր անունը փառքով օծել հատկապես Դիլմանի ճակատամարտում:

Կենսագրական այս փաստերը Ս. Խանզադյանի գեղարվեստական հյուսվածքում ներկայացվում են մի կողմից պատմաբան - հետազոտողի, մյուս կողմից՝ գեղագետի տեսանկյունից, թեպետ ճշմարտության դեմ մեղանչած չլինելու համար պետք է նշել, որ հեղինակային միտումը շատ դեպքերում որոշակիորեն թուլացնում է վեպի գեղարվեստական արժանիքները: Յեղինակն ավելի շատ ուշադրություն է հատկացնում Անդրանիկի մղած մարտական գործողություններին, հաճախ նրան ներկայացնում միայն զորականի ու քաղաքական գործչի դերում, ինչից կերպարը որոշ չափով գրկվում է բազմակողմանիությունից, դառնում միագիծ:

Վեպում Ս. Խանզադյանը իիմնականում անդրադառնում է Զանգեզուրում կատարվող իրադարձություններին, որոնք անմիջականորեն պայմանավորված են Անդրանիկ զորավարի գործունեությամբ:

1918 թվականին թուլդարիայից վերադառնալով Կովկաս ու Կովկասյան ռազմաճակատի հրամանատարի կողմից ստանալով գեներալ-մայորի կոչում՝ Անդրանիկը վճռական դեր է խաղացել Զանգեզուրը թուրքական զորքերի ու մուսաֆարականների կողմից Աղբբեջանին բռնակցելու մտադրությունները ձախողելու

<sup>96</sup> Արգումանյան Ս., Արդի հայ վեպը, էջ 247:

գործում: Շրջելով գավառից գավառ, գյուղից գյուղ՝ զորավարը ամենուրեք զինված պայքարի կոչ էր անում բնակիչներին, կազմում աշխարհազորային ջոկատներ, հայթայթում զենք ու զինամթերք: Նա անչափ կարևորում էր ժողովրդական մաքառումները, ամեն ինչ անում էր, որ ժողովուրդը կապված մնա իր հողին. «Մեր նշանաբանը մեկն է՝ հաղթել թշնամուն: Եվ սա ոչ թե աստծո ձայնն է, այլ մեր հողի»<sup>97</sup>: Անդրանիկն իր հոգեկերտվածքով, բնավորության բնորոշ գծերով, մարդկանց հետ հաղորդակցվելու, շփվելու եղանակներով, ժամանակի սուր զգացողությամբ ինչ-որ տեղ հիշեցնում է Դավիթ Բեկին: Զորավարը նույնպես անձնական կյանք չունի, նրա ամբողջ կյանքն անմնացորդ նվիրում է ու մարտիրոսություն. «Ով նրա հետ շփվում էր թեկուզ մեկ անգամ, անհնարին էր, որ չհամակրեր նրան: Նրա կեցվածքը զուսպ էր ու պիրկ, ինչպես պողպատի համաձուլվածքը, շարժումը՝ կտրուկ... Իր համոզմունքի մեջ անզիջում էր... Նրա ձայնը հրամայող էր, հզոր»<sup>98</sup>: Երկաթյա այս մարդը, սակայն, հոգու խորքում պարզ էր ու առինքնող, երբ «առիթ էր լինում ծիծաղելու, իսկ դա շատ հազվագյուտ էր լինում, ապա ծիծաղում էր ինչպես մանուկ, որ սքանչացել է արևի առաջին շողերից և աշխատում է բռնել դրանք»<sup>99</sup>: Զորավարի ամբողջ հոգսը ժողովուրդն էր, հատկապես գաղթականները, որոնցից երեսուն հազար հոգու նա տեղավորեց Զանգեզուրի տարբեր քաղաքներում ու գյուղերում, ընդգրկեց աշխարհազորային ջոկատներում, հոգ տարավ, որ նրանք մերվեն տեղացիների հետ. «Ով օգնում է ժողովրդին, նա իմ բարեկամն է,- ասում էր մտերիմներին, նույնիսկ անծանոթներին: -Ո՞վ անտարբեր է ժողովրդի ցավին, նա իմ թշնամին է»<sup>100</sup>:

Վեպի առանցքում, ճիշտ է, հիմնականում զանգեզուրյան դեպքերն են, բայց գործողությունները ծավալվում են ավելի լայն սահմաններում: Թուրքերն արշավում են տարբեր ուղղություններով՝ դեպի Ալեքսանդրապոլ, Էջմիածին ու Երևան... Բայց նրանց գլխավոր նպատակը Զանգեզուրն ու Արցախն է, այն ամուր բերդերը, որոնք երբևէ չեն ընկճվել թշնամու գերակշռող ուժերի առջև:

Վեպում Անդրանիկ զորավարը ներկայացված է որպես հմուտ դիվանագետ, ով երբեք չի հավատում մեծ տերությունների կեղծ հորդորներին ու խոստումներին: Չի հավատում՝ գիտակցելով, որ Յայաստանը նրանց համար լոկ հասարակ խաղաքար է ազդեցության ոլորտների համար մղվող մոլախաղերում, և հանուն վերջնական

<sup>97</sup> Խանզադյան Ս., Անդրանիկ, էջ 31:

<sup>98</sup> Նույն տեղում, էջ 31:

<sup>99</sup> Նույն տեղում, էջ 31:

<sup>100</sup> Նույն տեղում, էջ 31:

նպատակների իրագործման՝ այն հեշտությամբ կարելի է նաև զոհաբերել: Զորավարի հավատը իր ժողովուրդն էր, նրա միասնությունը, անկոտրում կամքն ու պայքարի ոգին:

Անդրանիկը արժանապատիվ կեցվածքով է ընդունում ու ճանապարհում օտարերկրյա ռիվանագիտական պատվիրակություններին, մեծ հույսեր է կապում ռուսների հետ, ինչը, սակայն, չի խանգարում, որ հաճախ չհամաձայնվի ռուս գեներալների հետ, կայացնի ինքնուրույն որոշումներ: Խիստ բնութագրական է զորավարի բնավորությանը ռուս գեներալ Աբայցևի հետ կոնֆլիկտը, երբ վերջինս դրսևորում է կոնկրետ պահին ոչ համարժեք վարքագիծ ու ձախողում Բիթլիսը գրավելու ժրագիրը:

Վեպում, ինչպես նշում է Ս. Արզումանյանը, բավական շատ են լիովին չբացահայտված կերպարները, բայց սյուժետային մի շարք ճյուղավորումներում վարպետորեն են կերտված գեներալ Նազարբեկյանի, Վահան Թոթովենցի, Արշավիր Մելիքյանի, Ֆիդա Մխոյի, Լևոնի, մի շարք աշխարհագորայինների կերպարները, որոնք ներկայացնում են հասարակական որոշակի շերտեր: Նրանց բոլորին միավորում է հայրենիքի պաշտպանության գաղափարը, որը միշտ նրանց մտասեռումների կենտրոնում է, հայրենապաշտությունը, սերը հայրենի հողի ու ջրի նկատմանը, անմնացորդ նվիրումը:

«Անդրանիկ» վեպի գործողությունները հիմնականում ընդգրկում են Առաջին համաշխարհայինի ժամանակները, երբ օգտվելով առիթից՝ Թուրքիան փորձում էր իրագործել իր դարավոր ծրագրերը: Կրակի բոցերում հայտնվեցին նաև Զանգեզուրն ու Ղարաբաղը, ժամանակի հրամայականով ասպարեզ եկան հայրենիքի պաշտպանության նոր հերոսներ ու մարտիրոսներ:

1993 թվականին Ս. Խանզադյանը հրատարակեց «Գարեգին Նժդեհ» վեպը, որն առաջին փորձն էր վիպականացնելու Գարեգին Տեր-Ճարությունյանի՝ տաղանդավոր քաղաքական գործչի ու զորավարի կերպարը: Ենշտ է, «Գարեգին Նժդեհը» չունի Ս. Խանզադյանի նախորդ վեպերի խորությունն ու ընդգրկումների լայնությունը, գեղարվեստական բարձր արժանիքները, բայց ճիշտ ժամանակին ու ճիշտ նպատակամիտումով գրված ստեղծագործություն է՝ ևս մի անգամ ի ցույց դնելու հարեւան հանրապետության նկրտումներն ու ստոր մտադրությունները, որոնք տասնամյակների պատմություն ունեն՝ կապված Ղարաբաղի ու Զանգեզուրի հետ:

Տասնամյակներ շարունակ Գարեգին Նժդեհի՝ ականավոր քաղաքական գործչի, զորավարի, գիտնականի կյանքն ու գործունեությունը գտնվել է յոթ փակի տակ, ու

միայն խորհրդային կարգերի փլուզումից հետո է հնարավոր դարձել անդրադառնալ նրան, բացահայտել այն մեծ դերը, որ ունեցավ նա Ղարաբաղի ու Զանգեզուրի ինքնապաշտպանական մարտերում: Եվ եթե այսօր Զանգեզուրը նույնպես բռնակցված չէ Ադրբեյջանին, ապա դրանում անշափի մեծ է Նժդեհի առաքելությունը:

Խորհրդային տարիներին Նժդեհը ներկայացվել է միայն մռայլ գույներով՝ որպես ժողովրդի թշնամի, «հակասովետական պայքարի» կազմակերպիչ. «1920թ. մայիսին իր զորամասերով ճնշել է Զանգեզուրի աշխատավորության զինված ապստամբությունը, 1920-ի հուլիս-օգոստոսին կրվել թուրքական հարձակումը կանխելու նպատակով Զանգեզուր, Ղարաբաղ և Նախիջևան մտած 11-րդ Կարմիր բանակի զորամասերի դեմ: Եղել է դաշնակցականների 1921-ի փետրվարյան խռովության եռանդուն կազմակերպիչներից, այսպես կոչված Լեռնահայաստանի Հանրապետության «ռազմական դիկտատոր»: Զանգեզուրի ազատագրումից (1921 հունիս-հուլիս) հետո փախել է արտասահման, շարունակել հակասովետական պայքարը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ համագործակցել է գերմանական ֆաշիստների հետ, դարձել Բեռլինում ստեղծված (1924) «Հայկական ազգային խորհրդի» անդամ, 1944-ին՝ ձերբակալվել Բուլղարիայում և հանձնվել սովետական դատարանին»<sup>101</sup>, - այսպես է մեծ հայրենասերին ու ականավոր քաղաքական գործչին, նվիրյալ հայրենասերին ու գիտնականին ներկայացնում «Հայկական սովետական հանրագիտարանը»:

Վեպում Ս. Խանզադյանն անդրադառնում է 1918-1921թթ. Զանգեզուրում մղված ազգային-ազատագրական-ինքնապաշտպանական կոիվներին, պատմական գողքն զավառում տեղի ունեցած իրադարձություններին: Ի տարբերություն Ս. Խանզադյանի մյուս պատմավեպերի՝ «Գարեգին Նժդեհ»-ում միայն իրական կերպարներ են, որոնք ներկայացված են տարածաժամանակային կոնկրետ միջավայրում, իրական հանգամանքներում: Ս. Խանզադյանը, սակայն, պարզապես չի արձանագրում դեպքերն ու իրադարձությունները, որոնք զարգանում են շեշտակի արագությամբ, հաճախ փոփոխվում ժամ առ ժամ՝ պայմանավորված տվյալ խառնակ ժամանակահատվածին բնորոշ տարաբնույթ զարգացումներով:

1918-1921թթ. Զանգեզուրի ինքնապաշտպանական մարտերում շատ-շատերն են անմահացել իրենց քաջությամբ ու խիզախությամբ, կազմակերպչական, ռազմական

<sup>101</sup> Հայկական Սովետական հանրագիտարան, հ.8, Երևան, 1982, էջ 269:

հմտություններով, և Ս. Խանզադյանն այս վեպում իր հոգու պարտքն է համարել արժանին մատուցել ու սերունդների հիշողության մեջ պահել նրանց անունները:

Անվանի գրականագետ Ս. Արզումանյանը նկատում է, որ Ս. Խանզադյանը «հերոսի զարգացմանը չի տվել անհրաժեշտ բազմակողմանիություն ու դրամատիզմ, որի հետևանքով Գ. Նժեհի կերպարը մի որոշ չափով կորցրել է բնորդի հմայքն ու ներազդեցության ուժը»<sup>102</sup>, Վիպասանին շատ «կօգներ, եթե ինչ-որ չափով հենվեր Նժեհի հայացքների, ելույթների, հոդվածների, աֆորիզմային մտածողության ու ասույթների վրա՝ նրա կերպարը գրավիչ կամ ամբողջական դարձնելու համար»:<sup>103</sup>

Անվանի գրականագետի դիտարկումներին դժվար է առարկել, բայց և պետք է նշել, որ վեպի ընթերցումից հատակ երևում է, որ Գարեգին Նժեհը եղել է իր ժամանակի ամենազարգացած ու կրթված մարդկանցից մեկը, նրա բոցաշունչ ելույթները մարտական տրամադրությամբ ու ոգով են համակել անգամ ամենահուսահատ մարդկանց, նրա գործողությունները եղել են հաշվարկված, նա միշտ էլ ճիշտ է կողմնորոշվել ստեղծված բարդ իրավիճակներում, կարողացել է ձեռքը պահել ժամանակի զարկերակին, անսխալ զգալ նրա բարեխսունը: Ժողովուրդը սիրում ու հավատում էր Նժեհին: Վեպի առաջին գլխում Ս. Խանզադյանը նկարագրում է, թե ինչ ոգևորությամբ էր սպասում և ինչպիսի ցնծությամբ ընդունեց Գորիսի ժողովուրդը նրան, երբ Անդրանիկի հեռանալուց հետո Նժեհը եկավ Զանգեզուր: Գորիսում Գ. Նժեհը կատարում է զինվորական կադրերի մի շարք անհետաձգելի փոփոխություններ: Նա առաջին հերթին խիստ կարևորում էր ժողովուրդի բարոյական ոգու ամրացումը, ինչը լավագույնս երևում է սյունեցիներին ուղղված յոթ պատվիրաններ պարունակող պատգամում, որն այդ օրերին կարդում էին Սյունիքի եկեղեցիներում, դպրոցներում, ռազմաճակատներում, ամեն մի հարկի տակ: Այդ պատվիրանները ևս մի անգամ ընդգույն են զորավարի՝ սեփական ուժերին ապավիճնելու, երկրում տիրոջ իրավունքով ապրելու նշանաբանը: Նա ամբողջական հայրենիքի գաղափարը մեծապես պայմանավորում է Զանգեզուրի ու Արցախի՝ անվերապահորեն Հայաստանի կազմում մնալու հանգամանքով: Ահա ժամանակի հրամայականով գրված նրա պատվիրանները.

1. Երբեք առանց Սյունիքի ու Արցախի: Առանց Հայաստանի աշխարհագրական այդ ուժեղ ողնաշարի՝ մեր ամբողջական հայրենիքը գոյություն ունենալ չի կարող:

<sup>102</sup> Արզումանյան Ս., Արդի հայ վեպը, էջ 264-265:

<sup>103</sup> Նույն տեղում, էջ 264:

2. Լեռների վրա, լեռների մեջ է քո փրկությունը: Արդ, տաճարներիդ մեջ, խաչերիդ կողքին բարձրացար մի-մի ժայռ և պաշտե, և երկրպագե, որ չթուլանա փրկարար պաշտամունքդ դեպի լեռները:

3. Սպարտա: Քո երկիրը որպես Սպարտա կարող է գոյություն ունենալ տիսուր Արևելքում: Զգտիր, կարող ես և պիտի դառնաս:

4. Երբեք անզեն: Թող նախ հարևանները իրենց սրերը խոփերի և նիզակները օտոցների վերածեն:

5. Եվ ոչ մի ընչազուրկ քո հողի վրա: Խեղճերի արցունքից ու թույլերի անարիությունից են քանդվում հայրենիքները: Բոլոր որդիները անկարոտ և արի:

6. Մի ժողովուրդ - մի ընտանիք: Ազգերի մեջ գուցե և միայն դու իրավունք չունես ներքուստ պառակտված լինելու:

7. Եղիր ուժեղ, ելի ուժեղ և միայն ուժեղ: Ժողովուրդները վերջիվերջո տեր են մնում ոչ թե նրան, ինչ որ նրանց տրվում է, ինչ որ մուրում են, այլ միայն նրան, ինչ որ արժանի են, ինչ որ իրենց սեփական ուժերով ապահովել են կարողանում»<sup>104</sup>:

Զորավարին հատուկ հեռատեսությամբ Նժդեհն զգում էր, որ Զանգեզուրի փրկության գործը նախևառաջ պայմանավորված է ժողովողի միասնությամբ և երկարյա կազմակերպվածությամբ, որ ինքնապաշտպանությունից պետք է անցնել հարձակողական գործողությունների, հասնել ոչ միայն հաջողությունների, այլև խոշոր հաղթանակների: Նրա համար հայրենիքը գերագույն արժեք էր, հայրենասիրությունը՝ գենետիկորեն փոխանցված մեծագույն զգացում. «Իմ հավատքի ու պաշտամունքի տաճարում, - գրել է Նժդեհը, - միշտ էլ առաջին տեղերը հատկացված են եղել Աստծուն և հայրենիքիս: Հայաստանն է եղել երկրավոր սրբազնագույնն ինձ համար: Շնչել, ապրել են նրանով և միշտ պատրաստ տառապելու, զոհաբերելու և մեռնելու նրա համար: Դա է իմ սրբազն ցավը, կարոտը, ուրախությունը, իմ գոյության իմաստը, իմ անմահությունը, իմ գերագույն իրավունքն ու պարտականությունը»<sup>105</sup>:

Ս. Խանզադյանն, անշուշտ, ծանոթ է եղել Գ. Նժդեհի ելույթներին, հողվածներին, նրանցում արտահայտված խորաթափանց մտքերին, նրա մասին արտահայտված կարծիքներին, հատկապես Համաստեղի գնահատականին. «Հայաստան ու հայ ժողովուրդն էին անոր հավատքը: Հայրենասիրութեան մեջ իր ուժն ուներ, տեսակ մը պառնասական: Այնպես կխոսեր, որ կարծես գտած էր հայ ժողովողի գոյության

<sup>104</sup> Նժդեհ Գ., Ազատ Սյունիք, «Հայրենիք», 1925, հուլիս, , № 9, էջ 78: Հղումն՝ ըստ Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը / 1920- 1921թթ./, Երևան, 2000, էջ 32:

<sup>105</sup> Նժդեհ՝ Կեանքն ու գործունեությունը, նշխարներ, Վկայություններ, Պեյլութ, 1968, էջ 431:

նախնական կավը - այդ կավը ցեղն էր ու ցեղի փիլիսոփայությունը: Մոլեգնորեն կը հավատար, որ հայ ժողովուրդը պահողը այդ էությունն է: Եվ ավանդույթներեն, մեր լեզուեն, նույնիսկ մեր նախապաշտումներեն»<sup>106</sup>:

Յեղինակը կոնկրետ չի անդրադառնում Գարեգին Նժդեհի կենսագրական մանրամասներին, բայց վեպի ամբողջ ընթացքում երևում է, որ զորավարը դեռևս պատանեկան հասակից իրեն նվիրել է հայրենիքի անկախության սուրբ գործին, անարդարությունների դեմ մղված պայքարին, որ բավականին ժամանակ է անցկացրել բանտերում, Անդրանիկի հետ մասնակցել է Բալկանյան պատերազմին, որպես մեծ զորավարի զինակից ու հայկական կամավորական վաշտի հրամանատար՝ կռվել է թուրքերի դեմ մղվող ազատագրական մարտերին, Կողբի, Ղարաքիլիսայի ճակատամարտերին: Եվ որտեղ էլ որ նա եղել է, բոլորն զգացել են, որ «ի դեմս հայկական բանակի կապիտանի՝ գործ ունեն արտակարգ խելքի ու ռազմական մեծ տաղանդով օժտված մարդու հետ»:

Յեղինակը հիմնականում կենտրոնանում է 1918-1921թթ. Զանգեզուրում և Ղարաբաղում Գ. Նժդեհի ծավալած գործունեության վրա՝ անմիջական կապ տեսնելով տասնամյակներ առաջ տեղի ունեցած և արցախյան նոր գոյամարտի իրադարձությունների միջև:

Արցախն ու Զանգեզուրը միշտ էլ անանցանելի խոչընդոտ, անառիկ բերդ են եղել պանթուրքիստական ծրագրերի իրականացման ճանապարհին: Եվ այն, ինչ Արցախի հարցում թուրք բարբարոսներին չհաջողվեց իրագործել դարերի ընթացքում, նրանց ազերի եղբայրների կողմից իրագործվեց Աղբեջանի խորհրդայնացման ու կարմիր բանակի զորագնդերի անմիջական օգնության շնորհիվ: Օրակարգում Զանգեզուրի խնդիրն էր, և Կարմիր բանակի ուժեղացված զորամիավորումների աջակցությամբ աղբեջանական կանոնավոր զորագնդերն ու խուժանը պարբերաբար հարձակումներ էին գործում Գորիսի տարածաշրջանի գյուղերի վրա, սպանում ու առևանգում բնակիչներին, անգլիացիների միջոցով վերջնագրեր ներկայացնում: Բոլշևիկյան Մոսկվայի մտադրությունները քաջ հայտնի էին Նժդեհին, նրա զորակիցներին. «Մոսկվան նորից ուրացել է մեզ՝ իր երեկվա դաշնակցին: Իսկ երեկ, երբ մենք նրա նվիրված զինակիցն էինք, առատ խոստումներ էր տալիս: Մոսկվան գաղտնի դաշնագիր է կնքել Յայաստանի դեմ...»:<sup>107</sup>

<sup>106</sup> Նույն տեղում, էջ 433:

<sup>107</sup> Նույն տեղում, էջ 224:

ճիշտ է, ոուս բոլշևիկները բացահայտ կերպով չին արտահայտում իրենց մտադրություններն ու տրամադրությունները, բայց Նժդեհի հետախույզների ձեռք բերած փաստաթղթերն այլ բան էին ասում. Խորհրդային Ռուսաստանն ամեն կերպ օգնում է Թուրքիային ու Ադրբեջանին: Նժդեհի սեղանին է ոուս գեներալ-լեյտենանտ Սալկիչի նամակը՝ «Սեկրետնո», թիվ 4007 մակագրությամբ: Քանի որ «Գարեգին Նժդեհ» վեպը տպագրվել էր խիստ սահմանափակ տպաքանակով, և ընթերցողների մեծամասնությունը ծանոթ չէ նրան, նպատակահարմար ենք գտնում այն մեջբերել ամբողջությամբ. «Զանգեզուրի միացումը Ադրբեջանին կկատարվի: Նախիջևանի հայերի ջարդից հետո, որ կատարեցին մեր եղբայր թուրքերը, հազիվ թե Զանգեզուրը ռիսկ անի մեզ հակահարված տալու՝ չունենալով իր թիկունքում պաշտպանական որևէ ուժ: Յայերը Ղարաբաղի մշտական կորստյան հետ հաշտվել չեն կարող և անկասկած պիտի ձգտեն օգտագործել ամեն հնարավորություն՝ կորցրածը հետ բերելու համար... Պատրաստ եղեք նոր հարձակման Յայաստանի վրա»:<sup>108</sup>

Թուրք-ադրբեջանական հրոսակներին առաջնորդում էին տասնյակ ոուս սպաներ, իսկ 1919-ի նոյեմբերի 5-ին գեներալ Շիխլինսկին երեք ուղղությամբ այդ հրոսակներին հարձակման տարավ Գորիսի վրա:

Ավելի լկտի էին իրենց դրսնորում անգլիացիները՝ անվերջ հայտարարելով, թե Զանգեզուրն ու Ղարաբաղը ադրբեջանական տարածքներ են: Ահա Մեծ Բրիտանիայի՝ Անդրկովկասի ռազմական ուժերի հրամանատար Թոմ Թոմսոնի բանագնաց Գիբոնի ներկայացրած վերջնագիրը ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությանը, որով առաջարկվում է Զանգեզուրին անհապաղ ենթարկվել Ադրբեջանի կառավարությանը և դադարեցնել բոլոր տեսակի գործողությունները նրա դեմ. «Լեռնային Ղարաբաղն ու Զանգեզուրը ադրբեջանական տարածքներ են: Դա նրանց հողն է: Յայեր, կամ ընդունեք Ադրբեջանին հպատակվելու մեր պահանջը, կամ դուք կշնչվեք երկրի երեսից»:<sup>109</sup>

Աշխարհաքաղաքական զարգացումների այսպիսի դաժան ժամանակներում է Ս. Խանզադյանը ներկայացնում Գարեգին Նժդեհին՝ մեծ հայրենասերին, ազատագրական պայքարի ուխտյալ գինվորին, ով ազգովին նորոգվելու, ազգի ապագան նրա ներկայում տեսնելու («Մեր ապագան կախված է ներկայից: Վաղը ազգովին պիտի հնձենք այն, ինչ սերմանում ենք այսօր»: «Դույս չկա, թե մեր դարում սարը կփոխվի արոտի»<sup>110</sup>)

<sup>108</sup> Նույն տեղում, էջ 137:

<sup>109</sup> Խանզադյան Ս., Գարեգին Նժդեհ, Երևան, 1993, էջ 108:

<sup>110</sup> Նույն տեղում, էջ 137:

գաղափարներով է տոգորում ժողովրդին, արթնացնում նրա ինքնապաշտպանական ոգին, համախմբում, դարձնում միասնական բռունքը:

Ուազմաքաղաքական այս իրադրության մեջ Նժեմի ցուցաբերում է զորավարական մեծ տաղանդ: Նրա կերպարն ավելի ամբողջական ներկայացնելու համար Ս.Խանզադյանը պատմական հավաստի տեղեկությունների հիման վրա զորավարին ներքաշում է խճված հանգամանքների բարդ հանգույցների մեջ՝ բազմաթիվ հանդիպումներ Արցախի ու Զանգեզուրի ազատամարտի ղեկավարների, անգլիական միսիայի ներկայացուցիչների, անգամ բոլշևիկների հետ, որոնց ընթացքում նա ցուցաբերում է իրադրությունը գնահատելու բացարիկ ունակություններ:

Զանգեզուրում բոլշևիկյան ուժերը մեծ կորուստներ են կրում: Իրենց ուժերը պահպանելու համար անցնում են հարևան ադրբեջանական շրջանները, ստանում ռազմական ու նյութական զգալի աջակցություն, ոուս և ադրբեջանցի իրենց համախոհների թելադրանքով սպառնալից վերջնագրեր հղում Նժեմին:

Վեպի գաղափարը՝ հայրենի եզերքի պաշտպանությունը, ռազմավարական կենսական նշանակություն ունեցող Սյունիքը Հայաստանի կազմում պահելու վերջնական որոշումը Ս.Խանզադյանը զուգորդում է մարդու ազատ ապրելու բնական ձգտումներին, իր ճակատագիրը ինքնուրույն կերպով տնօրինելու դարավոր երազանքներին:

Նժեմի գլխավորությամբ Զանգեզուրի պայքարը գոյանարտ էր մարդու հենց այդ բնական ձգտումներն իրագործելու համար և, այս տեսանկյունից, ազգային լինելով հանդերձ, խիստ համամարդկային էր, որն անհասկանալի ու անընդունելի էր թե՛ թուրքերի, թե՛ նրանց հետ դաշնակցած բոլշևիկների համար:

Նժեմի համար թուրք-ազերիական նկրտումներն ավելի քան պարզ ու հասկանալի էին: Կարևոր նրանց համախոհ գերտերությունների երկերեսանի քաղաքականության էռթյան բացահայտումն էր ժողովրդական լայն զանգվածների համար:

Ստեղծված տարածաշրջանային զարգացումների տրամաբանությունը զորավարին հուշում են, որ յուրաքանչյուրն այս պարագայում իր նպատակներն ու շահերն ունի և հնարավոր բոլոր միջոցներով ձգտում է իրագործել իր ծրագրերը: Անենածանր իրավիճակներում անգամ Նժեմի չի կորցնում իր հավատը և դրանով վարակում է իր զինակիցներին, ցրում հուսահատության ու հուսալքության մռայլ տրամադրությունները: Անգամ այն օրերին, երբ պատմական իրադարձությունների ժամ

առ ժամ փոփոխությունները սրում են իրավիճակը, երբ ոռւսական գործերի՝ Բաքու մտնելուց հետո Արցախում ուժեղանում են հայերի նկատմամբ կիրառվող բռնարարքներն ու հալածանքները, Նժդեհը մնում է իր գորավարական բարձրության վրա: Լեռնահայաստանը հռչակվում է ինքնավար հանրապետություն, գերազույն իշխանության վարչապետ և գործերի գլխավոր հրամանատար հռչակված Նժդեհը ձեռնանուխն է լինում կառավարման ինստիտուտների ստեղծման, կանոնավոր բանակի կազմավորման, սոցիալ-տնտեսական ծանր խնդիրների լուծման հոգնատանց գործընթացներին:

Քուն ու դադար չունի աստանդական այդ հերոսը, ում կերպարը Ս.Խանզադյանը ներկայացնում է մի առանձին սիրով ու գորովանքով՝ որպես օրինակ գալիք սերունդներին:

Բացի Գարեգին Նժդեհից՝ Ս.Խանզադյանը փորձում է վիպականացնել նաև Զանգեզուրի ազատամարտի մի շարք առաջամարտիկների կերպարները, որոնք հանիրավի մոռացության են նատնվել խորհրդային տարիներին կամ դատապարտվել: Փաստական հավաստի տեղեկությունների հիման վրա են կերտված խմբապետներ Կուռոյի, Սաքո Յապոնի, Խաչատուր Տալինցյանի, Թևան Ստեփանյանի և ուրիշների կերպարները, որոնց ջանքերով տապալվեցին Զանգեզուրը ևս Նախիջևանի ու Արցախի պես Աղրբեջան հորջորջված արհեստածին պետությանը բռնակցելու բոլշևիկյան ու թուրք-ազերիական ծրագրերը:

Այս առումով ժամանակն է ու խիստ արդիական, որ Ս.Խանզադյանի «Գարեգին Նժդեհ» վեպը թարգմանվի տարբեր լեզուներով:

## ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԸ

Քննադատական միտքը վերջին տասնամյակների պատմական արձակում առանձնացնում է մի հետաքրքիր օրինաչափություն՝ գրականության ընդգծված հակումը դեպի բանահյուսություն ու դիցաբանություն, ինչը թեպետ նորություն չէ մեր գրականության համար, սակայն «կոնկրետ իմաստ ունի և թելադրվում է գրական պրոցեսի օբյեկտիվ օրինաչափությամբ»<sup>111</sup>, աշխարհաքաղաքական զարգացումների նոր բովանդակությամբ:

Ժամանակակից իրականության մեջ, սկսած անցած դարի 70-ական թվականներից, «տիրապետում են երկու հակադիր սկզբունքներ՝ համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և ազգային առանձնահատկությունների, ինքնության շեշտադրություն... Ի հակադրություն ժողովուրդների ու նրանց մշակույթների համահարթեցման, երկրների ու ժողովուրդների միջև պայքար է սկսվում մշակութային ժառանգության ազգայնացման, ազգային ինքնության հաստատման համար, որ հաճախ գուգորդվում է անկախ պետականությունների ստեղծման գործընթացի հետ»<sup>112</sup>:

Ս.Սարինյանը բանահյուսության ու դիցաբանության այդ «նոր հոսքը» դիտարկում է որպես գեղարվեստական մտածողության թարմացմանն ու գրականությունը կենսատու նոր լիցքերով հարստացմանն ուղղված գործընթաց, որը հնարավորություն է տալիս «գեղարվեստական նոր փոխածնման միանգամայն խորինաստ ու հետաքրքրական իրողության ենթաշերտերում հայտնաբերել ոչ միայն ազգային լիմելությունը հաստատող կայուն նստվածքներ, այլև էթիկական ու փիլիսոփայական հարուստ արժեքներ, որոնք գրականությունը մղում են դեպի համանարդկային ոլորտներ, ընդլայնում նրա ներքին տարողությունը»<sup>113</sup>: Կարևորվում է «պատմական իրողություններից ու հավասարակշռված տրամաբանությունից դուրս ներկա աշխարհն ու իրադարձությունները հնագույն առասպելների մեջ խտացված, բյուրեղացված հիշողությունների մեջ փնտրելու ձգտումը, ներկայից դեպի հնագույն ժամանակները գնալու հետադարձ ճանապարհը, ակունքներին հասնելու և ազգի

<sup>111</sup> Սարինյան Ս., Դայոց գրականության երկու դարը, էջ 442:

<sup>112</sup> Քալանթարյան Ժ., Ազգային ինքնության փիլիսոփայությունը էպոսում կամ՝ ըստ Լևոն Խեցոյանի, «Գրական թերթ», 2014, № 13:

<sup>113</sup> Սարինյան Ս., Դայոց գրականության երկու դարը, էջ 442:

գոյաբանական հիմքերը գտնելու մղումը, որը միանգամայն տեղավորվում է ժամանակակից մշակույթի համատեստում»<sup>114</sup>: Դիմել բանահյուսությանն ու առասպելներին, այնտեղից ընտրել համապատասխան, մեր ժամանակների ոգուն համահունչ թեմաներ, նշանակում է՝ զնալ դեպի արմատները, բացահայտել հին աշխարհի այն առեղծվածները, որոնցից շատերը թեպետ անմեկնելի են ժամանակակից մարդու գիտակցությանը, բայց անչափ կարևոր ինֆորմացիա են պարունակում ժողովուրդների միավորման, պետությունների կազմավորման, գենետիկ կողերի, ծագումնաբանական խնդիրների, կենցաղի, նախապատերի սովորությունների ու ավանդույթների, կեցության բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ:

Փիլիսոփայական, հոգեբանական, գրականագիտական բազմաթիվ ուսումնասիրությունների, վերլուծությունների շնորհիվ (Զ. Ֆրոյդ, Կ. Յունգ, Զ. Ֆրեզեր, Կ. Ինի Ստրոս) «առասպելի վերածնունդն» արդեն մտել է համաշխարհային մշակույթի ամենատարբեր բնագավառներ, ընդլայնել գեղարվեստական ծավալումների շրջանակները, մեծապես նպաստել աշխարհներկալման նոր մեթոդների ու եղանակների ձևավորման գործընթացներին:

Ինչպես մարդիկ, այնպես էլ ժողովուրդները միշտ էլ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում իրենց մանկության նկատմամբ՝ սեփական ինքնությունը, սեփական Ես-ը ճանաչելու նպատակադրումներով: Ժողովուրդների համար, այսպիսով, անչափ կարևոր են նրանց առասպելները, հնագույն գրույցները, ավանդավեպերը, որոնք իրենց մեջ պահպանում են հավերժական արժեքների չափանիշները, ազգի, ժողովորդի ինքնության վկայագրերն ու խորհրդանիշները: Առասպելները ժողովուրդներին վերադարձնում են «ինքնաճանաչման անհրաժեշտությանը», մշակում տարածության ու ժամանակի ընկալման նոր մոտեցումներ, կապ ստեղծում անցյալի, ներկայի ու ապագայի միջև, վերականգնում ժողովուրդների խարխլված հիշողությունը:

Այս առումով անչափ հետաքրքրական է մեր պատմության հեթանոսական շրջանը, որը լի է գիտականորեն դեռևս չբացահայտված բազմաթիվ պրոբլեմներով ու առեղծվածներով, մեր ժողովրդի ծագման, ինքնուրույն պետականության ձևավորման ու կայացման, լեզվի ու մշակույթի վերաբերյալ տարակարծություններով, որոնք առիթից առիթ տարբեր մեկնաբանություններով արտահայտվում են ոչ միայն օտարազգի, այլև հայ գիտնականների կողմից:

<sup>114</sup> Քալանթարյան Ժ., Ազգային ինքնության փիլիսոփայությունը էպոսում՝ ըստ Լևոն Խեչոյանի:

Այս խնդիրներն առավել քան արդիական են մեր օրերում, որովհետև մեր հարևան քոչվոր ցեղախմբերը եռանդ ու միջոցներ չեն խնայում աշխարհին ապացուցելու իրենց բնիկ ու մեր եկվոր լինելու զառանցական տեսակետների ծշմարտացիությունը:

1970-ականներին հայոց պատմության հեթանոսական խորքերում գրողները ձգտում են «էքնիկական առանձնահատկություններից հայտաժել պատմական լինելության խորհուրդ», հայտնաբերել «ժողովրդի ճակատագրի տրամաբանությունը», ստեղծել «կոնկրետ պատմաշրջանի կերպարը», «ամբողջացնել ժամանակների կապը», «որոշակիացնել ժամանակի պատմաքաղաքական դիմապատկերը»<sup>115</sup>:

Գրողների ուշադրությունն ավելի ու ավելի է սեռվում մեր պատմության այն շրջանին, երբ «կործանվում էին իին աստվածները, գալիս էին նորերը, բարբարոսության ու կեցության հեթանոս ազատության դեմ մահու կոիվ է մղում մարդկային քաղաքակրթությունը, պատմական նոր դարաշրջանը»<sup>116</sup>:

Հեթանոսական շրջանի հայոց պատմությունը 1960-ականների վերջերին ու 1970-ականների սկզբներին պատմավեպերով հանդես եկան Հայկ Խաչատրյանը («Երեբունի» (1968), «Տիգրան Մեծ»(1972), «Արտավազդ» (1975) ), Խ.Գյուլնազարյանը («Նուանի» (1971), ովքեր ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական զարգացումների լայն համապատկերում ներկայացրին հեթանոսությունից քրիստոնեության, բազմաստվածությունից միաստվածության անցման շրջանի սուր բախումները, միահյուսեցին պատմության առասպելական ու իրական շրջանները, ներկայացրին հեթանոսական բարքերը, սովորությունները, կենցաղի մանրամասները:

Հայոց պատմության հեթանոսական շրջանին է անդրադառնում նաև Ս.Խանզադյանն իր «Թագուհին հայոց» վեպում, որը քննադատության կողմից որակվեց որպես ստեղծագործական նվաճում ոչ միայն հեղինակի, այլև ժամանակակից հայ գրականության համար (Ս. Աղաբարյան, Հր. Թամրազյան, Ս. Արզումանյան, Ս. Սարինյան և այլք):

«Թագուհին հայոց» պատմավեպի նյութը Ս.Խանզադյանն ընտրել է ք.ա. Երկրորդ հազարամյակում հայերի բնօրրան Հայասայի կյանքից՝ հերքելով այն տեսակետները, թե հայկական պետականությունը կազմավորվել է Փոքր Ասիայի արևելյան հատվածներից մեկում՝ Ուրարտու Երկիր անվամբ (իին հայկական աղբյուրներում՝ Արարատա Երկիր, Արարադայ, Արարատեան թագավորություն):

<sup>115</sup> Եփրեմյան Վ., Զգոված գրքի ծանոթագրություններ, էջ 12-14:

<sup>116</sup> Մարգարյան Ս., Պատմության ժամանակը, Երևան, 2000, էջ 125:

Այս տեսակետների համար հիմք են հանդիսացել ք.ա. 9-րդ դարի առաջին կեսերի ասորեստանյան սեպագիր արձանագրությունները, որոնք վկայում են Յայկական լեռնաշխարհում գոյացած պետական միավորնան՝ «Ուրարտա Երկրի» մասին: «Ուրարտուի սկզբնատարածքի մասին որոշ տեղեկություններ է հաղորդում Ասորեստանի Սալմանասար Երրորդ թագավորը, որը բազմիցս հարձակումներ է գործել այդ Երկրի վրա՝ կանխելու նրա հզորացումը: Ըստ այդ արձանագրությունների՝ Արամե թագավորի գահակալման տարիներին (ք.ա. մոտ 860-840/ Ուրարտան սահմանակից էր Դայսենի «Երկրին», իին հայկական Տայք աշխարհին, Եփրատի ակունքների շրջանին, իսկ նրա հյուսիսային շրջանները՝ Վանա ծովին:

Այդ վկայություններից երևում է, որ այդ ժամանակ Ուրարտուն նույնանում էր Յայկական լեռնաշխարհի միջնատարածքին՝ հնագույն ժամանակներից Արարատ կամ Այրարատ անվանք հայտնի աշխարհին: Ք.ա. 9-րդ դարում Ուրարտան հասել է այնպիսի հզորության, որ գլխավորել է արդեն բովանդակ Յայկական լեռնաշխարհի տարանջատ ցեղային իշխանությունների համախմբումը միասնական պետությունների մեջ: Դրա ներքին խթանը եղել է այդ հայկական ցեղերի արյունակցությունն ու լեզվական ընդհանրությունը, իսկ արտաքինը՝ ընդհանուր թշնամու՝ Ասորեստանի արշավանքներին համատեղ ուժերով դիմակայելու անհրաժեշտությունը»<sup>117</sup>:

Ինչպես է փորձում Ս.Խանզադյանը հերքել օտար պատմագիրների՝ Ուրարտու պետության մասին շրջանառության մեջ դրված տեղեկությունները:

1981 թվականին «Ավանգարդ» թերթին տված հարցազրույցում անվանի արձակագիրն ասում է. «Մեր լեզուն ճշգրիտ տեղեկություններ է տալիս մեր հարևան հին աշխարհի մասին (Բաբելոն, Եգիպտոս, Ասորեստան ), բայց ահա մեր լեզվում նույնիսկ շշուկ չկա այսպես կոչված Ուրարտու պետության լեզվի մասին: Ինչու՞ չկա: Որովհետև Ուրարտու չի եղել: Ինչպես կարող էր 3-4 հարյուր տարի որևէ պետություն եղած լիներ, և ոչ մի հետք թողած չլիներ լեզվամտածողության մեջ»<sup>118</sup>:

«Թագուհին հայոց» վեպում «հազարամյակների հեռավորությունից, ինչպես գրականագետ Ս.Աղաբաբյանն է գրում, գրողը «պատմության խորքային ասպարեզ հանց ազգային գոյության լավագույն դասերը»<sup>119</sup>, պատմական առասպելի վիպականացման միջոցով լուծեց «գեղարվեստական բարդ խնդիր, գտնելով ոչ միայն

<sup>117</sup> Ավելի մանրամասն տես՝ Յայկական Սովետական Յանրագիտարան, հատոր 12, Երևան, 1986, էջ 273-282:

<sup>118</sup> «Ավանգարդ», 1981, № 12:

<sup>119</sup> «Գրական թերթ», 1980, № 41:

պատմության գիտական ու գեղարվեստական սինթեզը, այլև այն անհայտը, աներևույթը, անփոխարինելին, որ պատկանում է միայն ու միայն գրողի ինտուիցիային ու ստեղծագործական երևակայությանը: Հնագույն ժամանակների արձանագրություններից, պատմագիտական հետազոտություններից, ժողովրդական ավանդություններից նա հյուսում է մի նոր իրականություն՝ ստեղծելով շարժվող մի կյանք, մարդկային բնավորությունների, հոգեբանության, կրթերի, հոգեկան զեղումների մի անօրինակ աշխարհ, որ կարծես գոյություն ունի մեր կողքին, մեզ զուգահեռ»<sup>120</sup>:

Ս.Խանզադյանը գրում է, որ ինքը փորձել է ընթերցողի առջև բացել «մի առասպելական, բայց իրական աշխարհ, անդրադառնալ Սև ծովի, Եփրատի և հայկական Տավրոսի ու Վանա լճի միջև Եղած Յայասա անունով Երկրի կյանքին, որի մասին հիշատակում են ք.ա. 15-12-րդ դարերի խեթական արձանագրությունները: Ըստ այդ արձանագրությունների՝ խեթերի թագավորներն իրենց արշավանքների ժամանակ բազմից ընդհարվել են Յայասայի հետ: Յետագայում խեթերի Սուլապիլալումա առաջին թագավորը հաշտության պայմանագիր է կնքել Յայասայի թագավոր Յուգանայի հետ:

Յայաստան, որը Տիգրան Մեծին նախորդող հազարամյակներում եղել է Արևելքի հզոր ու հարուստ երկրներից մեկը, և ուր ապրել են հայերի նախապապերը, «իր պետականության իմնաքարերը դրել է Նարամսինի ժամանակներում»՝ միավորելով բաժան-բաժան գոյություն ունեցող ցեղախմբերին:

Առասպելականի ու իրականի զուգորդումներով Ս.Խանզադյանը աստիճանաբար բացահայտում է իր գաղափարական ելակետը՝ «հասնել պատմության գիտական լուսաբանման»<sup>121</sup>, ներկայացնել թագաժառանգ Կարաննիի ու թագուհի Մարի-Լույսի՝ խեթական թագավորության դեմ մղած պայքարը՝ «հայկական ցեղերը միավորելու մեկ միասնական կազմակերպված պետականության մեջ»<sup>122</sup>, վերացնել բազմաստվածությունն ու մարդագոհության կարգն այդ բազմաթիվ աստվածներին», «քանդել աստվածների տաճարներն ու դրանց քարով բերդ շինել», «Աստվածները թող ներեն քեզ, թագուհիս, - առանց ահի ասաց Կարաննին: - Մի՞թե կամենում ես աստվածներ կործանել: - Խնկի մզլած ծուխ պետք չէ մեզ, ամուսինս, այլ բերդ, ամրություն, ուժ»<sup>123</sup>:

<sup>120</sup> Սարինյան Ս., Յայոց գրականության երկու դարը, էջ 445:

<sup>121</sup> Աղջումանյան Ս., Սովետահայ վեպը, էջ 169:

<sup>122</sup> «Գրքերի աշխարհ», 1978, №12:

<sup>123</sup> Խանզադյան Ս., Թագուհին հայոց, Երևան, 1978, էջ 7:

Տարածաժամանակային ընդգրկումները, հեթանոսական շրջանի բարքերի, սովորությունների, կենցաղի, մարդկային ու հասարակական հարաբերությունների նկարագրությունները, իրական ու միֆական կերպարների միահյուսումները մեծապես բնորոշում են վեպի ինչպես գաղափարագեղարվեստական, այնպես էլ ձևակառուցվածքային յուրահատկությունները:

«Թագուհին հայոց»-ը բաղկացած է երեք վիպասանություններից, որոնց՝ Խաթթի թագավորներ Սոպակիլուհամասի (1347թ. մ.թ), Տուրսիլիս Երկրորդի (1331թ. ն.մ.թ.) տարեգրություններից քաղված բնաբանները լավագույնս թացահայտում են վիպասանի գաղափարական և գեղարվեստական ելակետերը:

«Պապս զնաց Յայասա, իսկ հայրս նրա հետ էր: Պապս հասավ Յայասա Երկիրը – Կարաննիի՝ Յայասայի թագավորի դեմ, Կումնախս՝ ճակատամարտի համար»<sup>124</sup>:

Ցեղային մասնատվածությունը, որ «Ճկում է Երկրի մեջքը», արյունակից ցեղերի անվերջ կրիվները միմյանց դեմ բարենպաստ պայմաններ էին ստեղծում խեթերի համար՝ ասպատակելու Յայասա Երկիրը: Նրանց «Մուրսիլիս թագավորը հաճախ է խոցոտում Յայասայի արևմուտքը: Նրա հայրը հափշտակել է հայոց տան Թորգոնա աշխարհը, որտեղ գարին մասուրի չափ է, գետերը թանձրացած են ձկներով: Խաթթին զավել է նաև հայոց Թեգուրամա Երկիրը», ուրեմն՝ «պետք է միավորել ցեղերը, կործանել նրանց ավագի չափ անհամար աստվածներին ու թողնել միայն մեկը՝ Մաժան-Արամազդը՝ իր Յեպիտ-Անահիտ տիկնոց հետ»<sup>125</sup>:

Միաստվածության, այսինքն՝ հոգևոր ինքնուրույնության ու ամբողջականության գաղափարը վեպում ածանցվում է քաղաքական անկախության ձգտումներին: Թագաժառանգ Կարաննիի ու հայոց թագուհի Մարի-Լույսի համար բոլորովին էլ հեշտ չէր ջարդել դարերով հայկական ցեղախմբերի հոգեբանության մեջ արմատավորված կարծրատիպերը, սերմանել բարոյականության նոր նորմեր, ցեղապետերին ստիպել հրաժարվել իրենց իրավունքներից ու արտոնություններից, ենթարկվել միայն թագավորին: Այդ իսկ պատճառով Կարաննին իր հոր սահմանած օրենքներից շատերը փոխում ու հարմարեցնում է ժամանակի պահանջներին: Նա հայտնաբերում է պետության ու պետականության իդեալը: Նրա օրոք պատմության սուբյեկտ է դառնում պետականության խորհրդանիշ թագավորը. «Ինչո՞ւ՝ պետք է ամբոխը ձայն ունենա,

<sup>124</sup> Նույն տեղում, էջ 3:

<sup>125</sup> Նույն տեղում, էջ 7-8:

քուրմը, կինը, զորականը ձայն ունենան արքայական գործերի մեջ: Ինչու՞: Ոչ, պետք է շրջել արևի սկավառակը»<sup>126</sup>:

Թագաժառանգ Կարաննին նպատակադրվում է «Խաթթի խեթերից ետ առնել նրանց հափշտակածը», տիրություն անել Տավրութերան աշխարհին, որն իր հոր ու իր թագավորության մի հատվածն է, «Ճայկ նահապետի ստնտու գավառը», իր նախապապի, ով «չարաբարո Բելին սպանելուց հետո հռչակվեց աստված ու այդպես էլ մնաց մինչև հիմա»<sup>127</sup>:

Ս.Խանզադյանը թագաժառանգ Կարաննին ներկայացնում է որպես պետական մտածողությանք օժտված, բազմաթիվ մարտերում կոփված, պետականաշխնության գործերին քաջատեղյակ անձնավորություն, ով, բաժան-բաժան ցեղախնմբերը միավորելուց բացի, մտածում է երկրի պաշտպանունակության բարձրացման, ուժեղ ու մարտունակ բանակ ստեղծելու, հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների իրավունքներն ու պարտականությունները որոշարկելու խնդիրների շուրջ: Նա ցեղապետերի իշխանությունն առանձին գավառներում թուլացնելու նպատակով նրանց զրկում է զորքից, դրանք միավորում արքայական դրոշի ներքո, ռոճիկն ու զենքի գինը տալիս թագավորական գանձարանից:

Կարաննին միասնական պետականության հետ է կապում ազատության նվաճման ու ազգային արժանապատվության պահպանման գաղափարը՝ հիմք դնելով «ճանապարհն հայոցի»՝ հազարամյակներ շարունակ մեր գոյապայքարն իմաստավորող փիլիսոփայությանը:

Թագաժառանգն իր նպատակին հասնելու համար նախ փորձում է փոխել մարդկանց մտածելակերպը, ներշնչել մոլորյալներին, որ աստվածները չեն ամեն ինչի սկիզբը:

Մարդկանց միջից պետք է հանել այն մտայնությունը, որ բոլորն աստծո ստրուկներն են, եթե միայն մեկ աստված է, ապա միայն նրա, եթե բազմաթիվ են աստվածները, ապա՝ բոլորի: Իսկ այդ նպատակով նախ պետք է տաճարների ընչափաղցությունը զսպել, սանձահարել քրմերին, որոնք ապականության ու չարիքի աղբյուր են:

Մեծ տարակարծություններով է Կարաննին վերադառնում Արցախ աշխարհից, ուր հասարակությունն ավելի քաղաքակրթված է ու միաբան, ու մարդիկ կարծես ոչնչով չեն զարմանում, առանձին համակրանք չունեն աստվածների նկատմամբ ու նրանց կարծես

<sup>126</sup> Նույն տեղում, էջ 19:

<sup>127</sup> Նույն տեղում, էջ 28:

պաշտում են ձևականորեն: Թագաժառանգին հատկապես զարմացնում են արցախցիների մարտական ոգին, ռազմական կորովը, հարգասիրությունն ու պարտաճանաչությունը՝ ի տարբերություն Վարարակն գետի հովտում ապրող ցեղախմբերի, որ դեռևս բնակվում էին քարայրներում, տաճարներ չեն շինում ու այրերի մեջ էին կատարում իրենց ծիսական արարողությունները:

Կարաննին հեռատեսորեն զգում էր, որ Արցախ աշխարհի ու Վարարակնի հովտում բնակվող ցեղախմբերի միավորումով կարելի է ամուր պատճեց ստեղծել Յայասա երկոր արևելքն ասպատակող ցեղերի դեմ, ու չեր սխալվում իր կանխատեսումների մեջ: Եվ ի տարբերություն իր թագավոր հոր և գլխավոր զորավար Կաշ Բիխունու, որոնք կարծում էին, որ ցեղախմբերին թագավորական տանը հպատակ պահելու համար պետք է անհաշտություն գցել նրանց մեջ, մտածում էր այդ ցեղախմբերը միմյանց հետ հաշտեցնելու, նրանց միավորելու, հողային տիրույթների սահմանները մեկընդիշտ տարանջատելու հարցերի շուրջ: Նրա այս մտորումներում ու դրանցից ծնված ծրագրերը կյանքի կոչելու գործողությունների ընթացքում Ս.Խանզադյանը բացահայտում է թագաժառանգի բարձր գիտակցությունը, մարդկանց համոզելու, նրանց մեջ հայրենի հողի ու ջրի նկատմամբ տիրոջ զգացմունքներ ու իրավունք սերմանելու հատկանիշները: Ս.Խանզադյանը թագաժառանգ Կարաննին ներկայացնում է որպես սառնասիրտ ու հաշվենկատ դիվանագետի, ռազմական հմուտ գործչի: Նա աչքի է ընկնում ընդգծված նպատակալացությամբ, ճշգրիտ հաշվարկումներով, երբ հարցը վերաբերում է միաստվածության ու միասնական պետականության անցնելու նպատակադրումներին: Դա ցայտուն կերպով երևում է, երբ նրա հայրը՝ Յուգաննա թագավորը, և բարձրաստիճան գինվորականներն ու պալատականները հորդորում են իրաժարվել ցեղախմբերը միասնական պետության մեջ միավորելու գաղափարից («Ցեղերը որքան մասնատված լինեն, այնքան քո իշխանությունը ապահով կլինի նրանց միասնության վտանգից»), սակայն Կարաննին նպատակալաց կերպով գնում է իր կանխատեսած ճանապարհով:

Թագաժառանգ Կարաննին հայոց պատմության հեթանոսական շրջանի այն եզակի իրական կերպարներից է վեպում, ում մասին Ժատ տեղեկություններ են հաղորդում խեթական աղբյուրները, և վիպասանը, օգտվելով այդ կցկտուր տեղեկություններից, վեպի սյուժեն չի ծանրաբեռնում Ժամանակագրական տեղեկություններով, այսինքն՝ ձգտում է ոչ թե փաստական, այլ գեղարվեստական

արժանահավատության՝ սուր ու, ինչպես հաճախ է նշվում, «պայծառ երևակայության» միջոցով ամբողջացնելով ժամանակաշրջանի համապատկերը:

Մեզ այնքան էլ համոզիչ չեն թվում գրականագիտական այն դիտարկումները, թե հեղինակը Կարաննիի կերպարը կերտել է ոչ այնքան համոզիչ կերպով՝ երկի թե նկատի ունենալով, որ թագաժառանգը, որ փաստորեն երկրի առաջին տիրակալն է՝ հոր հիվանդության պատճառով, վիպական մի շարք դրվագներում իրեն պահում է խիստ հասարակ ու մարդամոտ՝ մասնակցելով ոչ արքայավայել խնջույքների ու խրախճանքների: Նշվում է նաև, որ Կարաննին ներկայացված է միագիծ կերպով, լիովին չեն դրսենորվում նրա հոգեկան ապրումները, համոզիչ կերպով չեն իմաստավորվում նրա գործողություններից շատերը: Այս կարծիքները հիմնականում արտահայտված են Թ. Պետրոսյանի «Սերո Խանզադյանի պատմագեղարվեստական արձակը» ուսումնասիրության մեջ, ուր, մեր կարծիքով, այնքան էլ բնորոշ չեն նաև Մարի-Լույսի կերպարին տրված որոշ դիտարկումները. «Նկատենք, որ այնուամենայնիվ Մարի-Լույսի կերպարի զարգացման կորագիծը ոչ միշտ է պայմանավորված դարաշրջանի սոցիալ-հոգեբանական գործոններով: Պատմականությունից գեղարվեստորեն բավարար չափով չպատճառաբանված առանձին շեղումները տեղիք են տվել պատմության մոդեռնացման դրսենորումների: Մասնավորապես վեպի հյուսվածքին չեն ձուլվում թագուհու փիլիսոփայական խորհրդածությունները նյութի և ոգու, կյանքի և մահվան խրթին առեղծվածների շուրջ: Դրանք ստացվել են երբեմն ինքնանպատակ, գործողության ու դրության, հատկապես կերպարի շահերից չքիսող »<sup>128</sup>:

Կարաննիի՝ «Բարբարոսության ու կեցության հեթանոս ազատության դեմ հանուն կիաստվածության մղվող պայքարը, միասնական պետականություն ունենալու ձգտումը «սոսկ վարչաքաղաքական ակտ չեր, այլ մի նոր աշխարհայեցություն՝ փիլիսոփայական, բարոյակերպական մի նոր ընթանում, որ ենթադրում էր սուր բախում կեցության հազարամյա սովորութին: Դա, ըստ Էռլեյան, վաղ քաղաքակրթության բախումն էր բարբարոսությանը՝ հեղաբեկնան դարաշրջաններին յուրահատուկ ողբերգական հետևանքներով»<sup>129</sup>:

Թագաժառանգ Կարաննիի կերպարի՝ այս տեսանկյունով մեկնաբանությունը լիովին փոխում է նրա վերաբերյալ պատկերացումները, բացահայտում վեպի գեղարվեստական նպատակադրումները:

<sup>128</sup> Պետրոսյան Թ., Սերո Խանզադյանի պատմական արձակը, էջ 160:

<sup>129</sup> Մարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, էջ 447:

Վեպում Կարաննին ներկայացված է երկու պլանով՝ միասնական պետականության ձգտող առաջնորդի և անհատականության խիստ ընդգծված գժեր ունեցող մարդու հատկություններով, որի համար խորթ չեն նաև մարդկային թերությունները, անհատականությանը բնորոշ հակումները։ Մեկ ընտանիք, մեկ ամուսին ունենալու նրա նպատակադրումը, սակայն, չի խանգարում թագաժառանգին մարմնական վայելքի խելահեղ գիշերներ անցկացնել Նուարի հետ, վայելել նրա անմնացորդ ընծայաբերման հաճույքները, հանուն ընդհանուր գաղափարի՝ անտարբեր վերաբերմունքով ընդունելու Տաղի-Հուսակի հանդեպ կնոջ ցուցաբերած վերաբերմունքը, Խաթթիի թագավորին ու նրա որդուն տրվելու իրողությունը։

Ողբերգական կերպար է, անշուշտ, Կարաննին, ում էության երկու մասերը հակադրվում են իրար, դառնում հոգեկան խոր ալեկոծումների պատճառ, փոթորկում նրա ներաշխարհը։ Յեթանոսական խրախճանքների մեջ ու Նուարի գրկում նա անձանաչելիորեն փոխվում է, երբեմն դառնում անկառավարելի, խենթանում է կանացի մարմնի աստվածային հմայքներով, մոռանում իր դիրքն ու ով լինելը, և սա, մեր կարծիքով, հինք չի կարող հանդիսանալ նրան ոչ դրականորեն բնութագրելու համար։ Վերջիվերջո, Կարաննին, թեկուզ և թագաժառանգ, այնուամենայնիվ, մարդ է, բիոլոգիական էակ՝ իր բնական ցանկություններով ու հակումներով, ինչն ավելի դինամիկ ու ամբողջական է դարձնում նրա կերպարը։

Բացի թագաժառանգ Կարաննից՝ ողբերգական են նաև վիպական գործողությունների մեջ ներքաշված կերպարներից շատերը, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է ներկայացնում իր ապրած ժամանակի շունչը, ոգին, մտածողության կերպն ու եղանակները։ Վեպում ամենաբնորոշն ու ամենառերգականը Մարի-Լույսի կերպարն է, որը ներկայացված է ժամանակի դիմապատկերն ամբողջացնող գժերով։ Յենց այս կերպարով է Ս.Խանգաղյանը գեղարվեստական բարձր վարպետությամբ գուգորդում առասպելականն ու իրականը։ Յայոց թագուհին «ուխտի է գնում Ներիկի հովանավոր Մաժան-Արամազդ աստծո ոտքը։ Մաժան-Արամազդը իրեն մի խուրձ կայծակ կտա, որ ինքը դրանով խարազանի Զիվաղին։ Ամուսինը՝ թագաժառանգ Կարաննին, հեռավոր տեղեր է գնացել։

Աստված Զիվաղի ճանկերը պետք է կայծակներով կտրեր, որ չմխրճվեն ամուսնու մարտակառքերի ձիերի կողերը»<sup>130</sup>։

<sup>130</sup> Եփրեմյան Վ. Զգրված գրքի ծանոթագրություններ, էջ 3:

Նա թագաժառանգի կինը դարձավ, երբ ընդամենը տասնյոթ տարեկան էր, և անմիջապես թագուհի հոչակվեց, որովհետև ամուսնու մայրը վախճանված էր:

Սիսական աշխարհի ցեղապետերից մեկի՝ Գեղամի դուստրը, որ աչքի էր ընկնում ոչ միայն իր կանացի հմայքներով ու աստվածային գեղեցկությամբ, լեռնուհիներին հատուկ անհնազանդությամբ ու անընկճելիությամբ, շատ շուտով հայտնի դարձավ ոչ միայն Յայասայի ցեղախմբերին, այլև Երկիրը պարբերաբար ասպատակող խեթերի շրջապատում:

Վիպական գործողությունների հենց սկզբից Մարի-Լույսը հանդես է գալիս Երևույթների գնահատման սթափ հայացքով, սառը դատող արյամբ, քաղաքագետի, ռազմական գործչի ակնհայտ ունակություններով: Ամուսնու՝ թագաժառանգ Կարաննիի հետ նա պայքարում է միասնական պետության ստեղծման ու ամրապնդման համար, ու նրա առաջին մտահոգությունը բազմաստվածության վերացումն էր, որն իր մարդագոհության կարգով իսկական չարիք էր ժողովրդի համար: Նա խիստ հետևողական էր և չեր Երկնչում որ ոքի առաջ. «Իմ կամքով մարդ չպիտի մեր աշխարհում այլևս զոհաբերվի: Կամքս է»<sup>131</sup>:

Յեղինակը Մարի-Լույսին օժտում է առասպելական դյուցազնուհիներին յուրահատուկ բնավորության գծերով, աստվածային գեղեցկությամբ. Նրա աչքերից կայծակներ են ցայտում, նրա հոնքերը բարձր են ինչպես հայոց լեռները, «Վարդագույն մետաքսի փայլը Մարի-Լույսին մայր մտնող արևի հմայք են տալիս», երբ նա շարժում է թարթիչները, բիբերի սև խառնարանից սև կրակներ են ցայտում»<sup>132</sup>:

Արդար չեր լինի նրան նույնիսկ աստվածուհիների հետ համեմատել. «Նրա բումբերը գիրկ էին, կեցվածքը՝ սլացիկ, վիզը կարապի պես Երկար: Նրա Երեսը արևածագի էր նման, որին նայելուց ոչ ոք չի ձանձրանում, առատ ու գանգուր մազերը մութ ալիքավոր էին և իրապուրող: Գույններ ու Երանգներ չի խնայում հեղինակը նկարագրելու Մարի-Լույսի ոչ Երկրային գեղեցկությունն ու կանացի հմայքները, «իգության իրապուրող», որը նա հաճախ որպես զենք է օգտագործում իր թշնամիներին պատժելու համար: Իր կանացի կախարդանքով ու նույնիսկ աստվածներին հմայելու իր զորությամբ Մարի-Լույսը մի անգամ չէ, որ միտումնավոր կերպով կրվախնձոր է դարձել Նուանգա Վարադի, նրա զորավարների, բարձրաստիճան այլ խեթերի միջև, գնացել ցանկացած քայլի, միայն թե մեկ առ մեկ շարքից հանի իր ու իր ազգի այդ ոխերիմ թշնամիներին ու կարողանա հասնել ու կործանել նաև նրանց Սանթա-Շանթ աստծուն:

<sup>131</sup> Նույն տեղում, էջ 5:

<sup>132</sup> Նույն տեղում, էջ 9:

Ներքուստ նա իրեն լիովին նվաստացած է զգում, երբ գերության ժամանակ ձեռքից ձեռք ու անկողնուց անկողին է ընկնում («Այդ ամոթը մի՞թե կհարդուրժի Կարաննին»), բայց գերբնական ճիգերով կարողանում է դիմակայել հոգեկան ծանր ապրումներին՝ իր գլխավոր թշնամիներից շատերին տեսնելով գլխատված, ցցի հանված, անարգված ու լլկված իրենց իսկ զինակիցների ձեռքով։ Նա Նուանզա Վարադի ձեռքով վրեժինդիր է լինում նրա զորապետերից՝ միաժամանակ կանխելով նրա արշավանքը դեպի Յայասայի խորքերը, ապա Մուրսիլիս թագավորին գայթակղելով՝ նրան ստիպում է դաժան դատաստան տեսնել այդ նույն Վարադի նկատմամբ։ Նույն մեթոդներով նա իրար դեմ է հանում Մուրսիլիս թագավորին և նրա թագաժառանգ որդուն՝ Նանազիտին («Դու գեղեցիկ ես, Նանազիտի թագաժառանգ։ Սակայն կուզեի իմանալ՝ ինձ քո հո՞ր, թե՞ քեզ համար են բերել Խաթրուշաղ»)։

Գերության մեջ անգամ Մարի-Լույսը չի կորցնում իր արժանապատվության բարձր զգացումը. նրա համար առաջնայինը ոգին էր, որ միշտ բարձր էր պահում, իսկ մարմինը, թեպետ խորին զզվանքով ու ատելությամբ, նա ընծայաբերում էր հանուն ոգու, հանուն ազգային արժանապատվության։ Բնութագրական է վիպական այն դրվագը, երբ գերեվարված Մարի-Լույսը Խաթրի մտնելուց առաջ իրեն ուղեկցող խեթ զորապետին իրամայում է թափորի առջևից պարզած տանել Յայասայի դրոշը («Յայոց արքայական դրոշը ծածանվեց խեթական հողի ու զորախմբի վրա»)։

Թագուհին լիովին համոզված էր, որ Մաժան-Արամազդ աստվածը թողություն կտա իր մեղքերին, իրեն ընթռնումով կընդունի Կարաննին՝ իր երկրային աստվածը, միակն ու անփոխարինելին, թեպետ նա իրեն անդարձ կորած էր համարում ամուսնու, որդու, նույնիսկ ինքն իր համար։ Այս մտորումների ընթացքում նրան տանջում էր վրեժինդրության ծարավը, նրա մեջ արթնանում էր թոհքի պատրաստ եգ առյուծը։

Գերությունից հնարանտորեն ազատված Մարի-Լույսը վերջապես հասնում է իր նպատակին. մարտադաշտում նետահարում ու սպանում է թագաժառանգ Նանազիտին, գերի է վերցնում Մուրսիլիս թագավորին։

Վիպասանության երկրորդ մասում մենք տեսնում ենք բոլորովին այլ Մարի-Լույսի. «մի՛ տար ինձ՝ օտարի շնչով ապականվածիս ու մեղավորիս, անարդարիս ու անսուրբիս։ Մի՛ մոտենա շնչիս»։ Մարի-Լույսն սպառված ու Կարաննիի համար իրեն անդարձ կորած կին է համարում, բայց իբրև թագուհի՝ ոչ. «Քեզ համար սպառված համարիր իմ հոգու լույսը, որ վայելում էիր քո գիշերների խավարը լուսավորելով,

Կարաննի: Ես սոսկ թագուհիդ եմ, միայն թագուհիդ»<sup>133</sup>: Եվ որպես այդպիսին՝ նա խոստանում է այսուհետ ևս իր ուժերը նվիրաբերել ամուսնու փառքի ու հայոց աշխարհի սիրույն, շարունակել սատար լինել նրան ինչպես պետականաշինության, այնպես էլ անձնական կյանքի ամենադժվարին պահերին:

Ս. Խանզադյանն ընդգծում է նաև Մարի-Լույսի մարդկային բարձր արժանիքները: Թագուհին վրեժխնդրությամբ է լցված Մուրսիլիսի, քրմերի, ընդհանրապես իր թշնամիների հանդեպ, սակայն ամուսնուն պատվիրում է պատշաճ վերաբերմունք ցուցաբերել գերի Մուրսիլիսի նկատմամբ, չծանակել նրան, չկոտորել մարտադաշտում գերի վերցված խեթ զինվորներին: Նրա պայքարն այս առումով ձեռք է բերում քաղաքական ու գաղափարական երանգավորում: Ընդհանրացնելով հայոց թագուհու կերպարի բնորոշ կողմերը՝ կարելի է եզրակացնել՝ Մարի-Լույսին Ս. Խանզադյանը ներկայացնում է ամենատարբեր հանգամանքներում՝ իհմնական ուշադրությունը սկսելով նրա հոգեբանական տարաբնույթ դրսերումներին, ներքին ապրումների ելեջումներին: Նրա ներքին ապրումները վառ գույներով են ներկայացված ամուսնու՝ Կարաննիի ու աստղաբան Տաղի-Շուսակի հետ ունեցած հարաբերություններում, Արբոկ-Պերճի, խեթերի թագավորի նկատմամբ ունեցած վերաբերմունքի դրսերումներում: Նրա մտապատկերներում հեռուներում գտնվող ամուսինն էր միշտ, որը կարոտում էր իրեն, ինչպես հողը՝ ջրին: Իրեն է ձգտում նաև այս Տաղի-Շուսակը. մարմնով այրոցք է անցնում, երբ ինքը շոյում է նրա կուրծքը: Բայց մի՞թե ինքը չէ, որ անզուսապ ձգտում է նրան, մի մարդու, որ իրեն նայում է միշտ գուսապ, սակայն հոգի միշրճվող հայացքով»<sup>134</sup>:

Նրա համար «երկնքում միայն Մաժան -Արամազդ աստվածն էր, երկրի վրա՝ միայն ամուսինը», ինչը, սակայն, չի խոչընդոտում, որ նա կրթահարույց հայացքով ու կանացի թաքնված երկյուղածությամբ խելահեղ շանթեր միշրճեր Տաղի-Շուսակի աչքերի մեջ, հիացմունքի ճիշերն իր մեջ խեղելով՝ գնահատեր Պերճ-Արբոկի պիրկ մարմինն ու առնացիությունը, զարմանալ, թե ինչու տղամարդիկ չեն վայելում «սրահի պատի տակ խոնարի կանգնած կուսան աղջիկներին», և ինչու՝ «մարդն էլ ազատ չէ աստվածների նման իր կամեցողության մեջ»:

Քաղաքագետ-դիվանագետի, զորականի սառնասրտություն, խոհեմություն ու անընկճելի ոգի, բանակցություններ վարելու, իր կամքը թելադրելու բարձր հմտություններ, դաժանության աննախադեպ դրսերումներ, միաժամանակ՝ աշխարհիկ

<sup>133</sup> Նույն տեղում, էջ 343:

<sup>134</sup> Նույն տեղում, էջ 120:

վայելքների բուռն ցանկություն, կրքերի անզուսաց բռնկումներ, խելահեղ ընծայաբերումների անմոռանալի վայրկյաններ - ահա աստվածային այդ կնոջ ամենաբնութագրական գծերը:

Մարի-Լույսին տանջում են երկակի ապրումները, իրարամերժ մտքերը բզկտում են նրա հոգին: Մի կողմից աշխարհիկ վայելքների խելահեղ կարոտ, հույզերի ու զգացմունքների անկանխատեսելի պոռթկումներ, մյուս կողմից՝ ինքնահաստատման բուռն ձգտումներ, «Ես մոռանալ եմ ուզում, մրափել եմ ուզում մոռացումի թմբիրով: Ուզում եմ հանապազ իրար մերժող հոգուս ու մարմնիս միջև հաշտության միջոցներ գտնել»<sup>135</sup>:

Նրա մեջ գրողն առանձնացնում է երկու հակամետ որակներ՝ «դժոխային դաժանությունն ու լույսի պես անարատ սերը»: Թագուհին իր ողջ եռթյամբ դեմ է մարդագոհությանը, բայց և մի չնչին առիթով գլխատել է տալիս իր պատգարակակիր ստրուկներին, իսպառ կորցնելու սպառնալիքով է դիմում բոլոր նրանց, ովքեր զանց կառնեին իր իրամանները, կարգադրում է իր անձնապահ զորագնդի պետ Արքոկ Պերճին «սուր բանեցնել նրանց շլինքներին», ովքեր, հատկապես խեթ քրմերը, կիամարձակվեն արարողություն անել Շանթ աստծո տաճարում:

Մերթընդմերթ Մարի-Լույսի հիշողություններում վերակենդանանում են Սիսական աշխարհի անմոռանալի պատկերները, և նա իրեն համեմատում է բանտված, «ազատ գոյությունը խախտած» վայրի այծյամի հետ, որն իր «երամակին է կարոտում, նախնի իր որձին է կարոտում՝ ձգտելով դեպի իր վայրի սովորույթը»<sup>136</sup>:

Մենք մերթ տեսնում ենք կրքերի խելագար բռնկումների պահերին «վայրի ցուլեր» տենչացող Մարի-Լույսին, մերթ աստվածավախ, աստվածապաշտ կնոջը, ում համար ընտանիքի ու ամուսնու պատիվը վեր է ամեն ինչից: Այսպես է ծնվում թագուհու հոգեկան ծանր դրաման, որը Ս.Սարինյանը բնութագրում է որպես «բիոլոգիական էռթյուն» և մենամուսնության գաղափարի բախման հետևանք»<sup>137</sup>:

Մարի-Լույսն իր եռթյամբ բնության ազատ զավակն է, և նրա համար խորթ են բոլոր արգելքներն ու տարուները՝ լինեն դրանք աստվածային վերին կամքով սահմանված, թե կարգով ու օրենքով պարտադրված:

Վեպն ավարտվում է Մարի-Լույսի կործանմամբ, և այդ ճանապարհը հենց ինքը՝ թագուհին է ընտրում իր համար՝ հերքելու թագավորական տոհմի անարատությունը

<sup>135</sup> Նույն տեղում, էջ 49:

<sup>136</sup> Նույն տեղում, էջ, 49:

<sup>137</sup> «Գրական թերթ», 1979, № 8:

պղծելու Արվանդ Բիխունու տարածած ու սնոտիապաշտ ամբոխի վայրենի կրքերը բորբոքած հերյուրանքները: Մարի-Լույսն ամբողջովին լքված, մոռացված, դատապարտված, բայց հաղթողի հոգեբանությամբ է Արվանդ Բիխունու առաջնորդությամբ մոտենում զոհասեղանին՝ առանց մեղքի զգացումի, առանց դույզն - ինչ իրեն դատապարտելու. իր հաղթանակն արդեն առերևույթ է՝ կանգուն է հայոց գահը, միասնական պետության դրոշի ներքո համախմբված ու միաստվածությունն իբրև դավանանք ընդունած հայկական ցեղախմբերին այլևս վտանգ չի սպառնում, մեծանում է ու առնականանում է իր գահաժառանգ որդին:

Նա իրականացված է համարում մարդ արարածին տառապանքներից փրկելու իր առաքելությունը ու աստվածանում. «Մարի-Լույսն աստվածացավ, մարդիկ: Երկրպագեցեք ձեր նոր աստվածուհուն՝ Մարի-Լույսին»:

Վեպի առանցքային կերպարներից են Նուարը, Տաղի-Յուսակը, Արբոկ-Պերճը, ովքեր ամբողջացնում են ժամանակաշրջանի համապատկերը: Այդ կերպարներից յուրաքանչյուրն ամբողջացնում է ժամանակաշրջանի համապատկերը՝ իր գործելակերպով բացահայտում նրա բնորոշ կողմերը: Այդ առումով բավականին ուշագրավ է Նուարի կերպարը, որին առաջին հայացքից կարծես թե Երկրորդական դեր է հատկացված պատումի ողջ ընթացքում, ինչի հետևանքով էլ համարյա թե դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրությունից:

Վեպի ուժեղ ու ամբողջական կերպարներից է Նուարը, ով՝որպես կին ու անհատականություն, ինչ-որ տեղ նման է ու ինչ-որ տեղ էլ հակադրվում է Մարի-Լույսին: Յեթանոսական ըմբռնումների տեսանկյունից կինը դիտվում է սոսկ որպես բիոլոգիական էակ, որն ստեղծվել է հագուրդ տալու տղամարդու սեռական ցանկություններին: Սակայն Ս.Խանզադյանն այլ տեսանկյունից է ներկայացնում հեթանոսական կնոջը, ում «Բիոլոգիական եսը նաև նրա հասարակական եսն է, նրա կեցության ձևը, կամքի ինքնադրսնորումը, անհատական ինքնագիտակցումը: Յրաժարվել կեցության այդ ձևից, նշանակում է կորցնել իր եսը, կամքի ինքնագիտակցումը»<sup>138</sup>:

Եթե Մարի-Լույսը կանգնած էր թագուհի կամ կին երկընտրանքի առջև, ու նրա հոգին կեղեքում էին «բարոյական անձի ու բիոլոգիական էակի» մտասկեռումները, ապա Նուարի էությունը լցված է կանացիության տաք գրգիռներով ու անսահման հմայքներով: Մարի-Լույսն իրեն ընծայաբերում է (կարևոր չէ թե ում, որտեղ և երբ) նաև

<sup>138</sup> Մարինյան Ս., Յայոց գրականության երկու դարը, գ.2, էջ 450:

հեռահար նպատակադրումներով, իսկ Նուարը, լինելով հեթանոս կնոջ սովորական տիպար, մարմնական հաճույքների անսովոր ու տաք բռնկումների պահերին անգամ չի կորցնում ինքնատիրապետումն ու կանացի հպարտությունը՝ դրանով իսկ դառնալով ավելի կրքահարուց ու ցանկալի: Մարի-Լույսի մտասեռումներում «Եփրատի ափին կորցրած իր վայելքի ցավն էր, որ իրապուրիչ էր, ինչպես սրբազն Եփրատի ոգին», նրա «տիսրության միջով աստվածներ էին անցնում»՝ պիրկ, առնական և ուժեղ, ում տրվել ու ցանկանում էր տրվել, նաև նրանց երկնային բարձունքներից իշեցնել ու ոչնչացնել էր ցանկանում: Նրա երազների մեջ աստվածները կնոջ մարմին էին տենչում, նա վայելքների պահերին խելահեղ ու բռնկուն էր՝ ի տարբերություն Նուարի, ով թեաբետ ձեռքից ձեռք ու անկողնուց անկողին էր անցել, բայց հոգով մաքուր էր ու անարատ, ինչպես Նաիրի ծովի ալիքների վրա բացվող առավոտների լույսը: Դեռևս աղջնակ էր Նուարը, երբ զմայլվեց Տաղի-Շուսակի առնական տեսքով ու իմաստությամբ՝ պահպանելով իր հեթանոս վեհությունն ու աղջկական հպարտությունը: Հենց վաղ հասակից է Նուարի մեջ սահմանավորվում մենամուսնության գաղափարը. «Գոռողությանս բերումով չպիտի ասեմ, որ քեզ չեմ սիրում: Ես տաճարների դրները չեմ ընկնում կուսությանս հպարտությամբ: Բայց ինացիր, որ ոչ ոք, աստղաբան և թագուհու կառավար, իրավունք չունի արգելելու իմ սերը, և մի կարծիր, թե կվայելես մերժման հաճույքը: Դու կամ ինը պիտի լինես, կամ ոչ ոքինը. Վճռված է»<sup>139</sup>:

Աղջկական անմեղ գայթակղությունը շուտով վերածվում է բուռն ու անմնացորդ նվիրաբերումի, երբ նրա կյանքում հայտնվում է թագաժառանգ Կարաննին, ում հանդիպելիս «աղջկա շրթունքները դողում էին, ծոցի մեջ ասես աղավնիներ էին խլրտում»: Նա ինքնամոռաց նվիրումով է Կարաննին ընծայաբերում առաջին գիշերվա հեթանոս վայելքը. «Ով աստվածային, ինձ քեզ նվիրելով՝ չէ՞ որ ես առնչվում եմ աստվածների հետ»<sup>140</sup>:

Ինչքան ըմբոստ ու բռնկուն է Մարի-Լույսը ցեղապետերի հետ հարաբերություններում ու անկողնային վայելքի պահերին, նույնքան հեզ ու տիրոջ կամքին հլու-հպատակ է Նուարը, ով հոգեկան ծանր ու կեղեքող ապրումներ է ունենում, երբ Կարաննին սրտի անհուն կսկիծով նրան ամուսնացնում է ձկնորս պատանու հետ՝

<sup>139</sup> Խանգաղյան Ս., Թագուհին հայոց, էջ 450:

<sup>140</sup> Նույն տեղում, էջ 458:

այդ առիթով ստրկությունից ազատելով ու «այր մաքուր» հռչակելով ցեղապետ Անձնին պատկանող կղզու ձկնորսներին ու քարագործներին. «Նուարը լացելով՝ ձեռքը դրեց երջանկությունից շշմած տղայի ափի մեջ: Երկուսն էլ ծունկի իջան թագաժառանգի առջև»: Ծանր ապրումների մեջ էր նաև թագաժառանգը. «Դրսում հևում էր ծովը: Լուսինն ընկել էր նրա ծոցերը: Յևում էր...ՈՒ՞ր ես, Նուար, մի՞թե ծովից ելնող բոցերը քո ծոցերի ցոլքերը չեն: Մնաս բարով, Նախրի ծով: Մնաս բարով, Նուար...»<sup>141</sup>

Ի տարբերություն Մարի-Լույսի, ով գինի է խմում ու զվարճանում տղամարդկանց հետ՝ Յեպիտ-Անահիտ աստվածուհու սահմանված կարգով, Նուարը «իր բարեպաշտության պարտքն էր համարում լինել հավատարիմ ու հեզարարո. «Նրա թուխ-մթին աչքերը աշխարհին նայում էին ոչ այնքան հոգնած, որքան խռոված: Երկար թուխ էին նրա թերթելունքները, սպիտակուցները՝ ճառագայթող... Նրա շրթունքները բարկ էին, գրավիչ ծռված... Ուսերը բաց կլոր էին, պարանոցը երկար ու թափանցիկ: Թե ջուր խմեր, անշուշտ, ջուրը կերևար կոկորդի մեջ»<sup>142</sup>:

«Թագուհին հայոց» վեպում Ս.Խանզադյանը կերտում է նաև կանացի այլ կերպարներ՝ «կուսան աղջիկներ», ովքեր անմռունչ գնում էին դեպի զոհաբերության՝ մեղմելու աստվածների ցասունը, վարձկաններ, ովքեր իրենց խելահեղ պարով կրքեր էին բորբոքում ու հագուրդ տալիս գինարբուքներից խենթացած երևելիների ցանկություններին, հարճեր, մարմնավաճառներ, ստրկուհիներ, ովքեր դավեր էին նյութում ու զոհ դառնում իրենց նյութած դավերին, գույն ու երանգներ ավելացնում ժամանակի համապատկերին՝ հարմարվելով իրենց կեցության կերպին կամ երեմն խախտելով սահմանված կարգ ու կանոնը՝ վճարում կյանքով:

Կեպի ուշագրավ, առանցքային կերպարներից են Արբոկ Պերճը, Տաղի-Յուսակը, քրնապետ Արվանդ Բիխունին, որոնք սկզբից և գտնվում են իրադարձությունների հորձանուտում, այս կամ այն կերպ ծառայում հեղինակային մի շարք գաղափարների գեղարվեստական մարմնավորմանը: Արբոկ Պերճի կերպարը քննադատության կողմից ներկայացվել է տարբեր մեկնաբանություններով, երբեմն՝ նույնիսկ ծայրահեղ որակումներով: Այսպես, օրինակ, Գ.Յայրյանը Արբոկ Պերճին բնութագրում է որպես «ժողովրդական շարժման հերոս»<sup>143</sup>, ինչը, բնականաբար, բխում է այն գաղափարախոսությունից, որի համաձայն մարդկության պատմությունը դասակարգային պայքարի պատմություն է: Ի՞նչ «ժողովրդական հերոսի» մասին

<sup>141</sup> Նույն տեղում, էջ 458:

<sup>142</sup> Նույն տեղում, էջ 452:

<sup>143</sup> Յայրյան Գ., Սերո Խանզադյան, էջ 177:

կարող է խոսք լինել հեթանոսական ժամանակներում, և ո՞ր ժողովրդի հերոսն է Արբոկ Պերճը, ում գործողությունները Ս.Սարինյանը իրավացիորեն բնութագրում է որպես «բարբարոսական բնազդի ապերցեպցիա»: Գրականագետը՝ հանձին Արբոկ Պերճի, տեսնում է «ուժեղ, կանաչին, տարերքոտ» անհատի, իսկ նրա՝ «թագավորի, պետության, օրենքի ու իրավունքի դեմ ուղղված անարխիստական մաքսիմալիզմը»<sup>144</sup> որակում որպես հեթանոսական ժամանակներին բնորոշ բնազդային պոռթկման արդյունք:

Խորհրդային գաղափարաբանության դիրքերից է Մ.Մելքոնյանը Արբոկ Պերճի գործողություններում տեսնում «ժամանակաշրջանի հասարակ մարդու ազատասիրական ձգտումներ»<sup>145</sup>, որոնք ուղղված են ոչ միայն իր, այլև իր դասակարգի շահերի պաշտպանությունը:

Գրականագետ Ս.Արզումանյանը նույնականացնում է Արբոկ Պերճի ու նրա գլխավորած ապստամբների գործողություններում տեսնում է սոցիալական գիտակցված պայքարի տարրեր<sup>146</sup>, իսկ Թ.Պետրոսյանը նրան համարում է «ինքնագիտակցության եկած ստրուկ, ով ձգտում է ազատության, բայց ստանալով այն՝ դարձյալ ոգով ազատ չի գտում իրեն, ինչպես մի առասպելական հերոս, ով իզուր երջանկություն է փնտրում անարդար կառուցված աշխարհում»<sup>147</sup>:

Այն տպավորությունն է ստեղծվում, որ գրականագետներից ոմանք Արբոկ Պերճի և նրան համակիր ոչ մեծ թվով ստրուկների բնազդային ընդվզումը փորձում են գնահատել որպես «անարգ կառուցված աշխարհի» ու նրա տիրակալների դեմ սկսվող շարժման սկիզբ, որը հետագա ժամանակներում կրեց կազմակերպված բնույթ ու ընդգրկեց աշխարհագրական լայն տարածքներ: Ասել է թե՝ փորձում են Ս.Խանզադյանի այս հերոսին տեսնել ոչ թե կոնկրետ ժամանակաշրջանում, այլ իր ժամանակից առաջ ծնված, ինչն այնքան էլ համոզիչ չէ:

Ս.Խանզադյանը, կարծում ենք, այս կերպով ավելի շուտ փորձել է բացահայտել մարդկությանը միշտ ուղեկցող մի իրողություն՝ իշխանության ձգտելու, օրենքները տնօրինելու բնազդային ցանկության դրսնորումները, որոնք բնորոշ են նաև հետագա դարաշրջաններին: Ստրուկ Արբոկ Պերճը Մարի-Լույսի բարեհաճությանն ու «ազատ այր» լինելու պատվին է արժանացել՝ պատահականորեն փրկելով թագուհու կյանքը («Այսօրվանից դու այր ես ազատ, Արբոկ Պերճ: Իմ թիկնապահ ռազմիկների

<sup>144</sup> «Գրական թերթ», 1979, № 8:

<sup>145</sup> «Սովետական գրականություն», 1979, հ. 6, էջ 140:

<sup>146</sup> Արզումանյան Ս., Սովետահայ վեպը, Գ. 3, էջ 167:

<sup>147</sup> Պետրոսյան Թ., Թագուհին հայոց, էջ 9:

հարյուրյակը քեզ եմ վստահում»)<sup>148</sup>: Այդ օրվանից նախկին ստրուկը լիովին վերափոխվում է՝ համարձակություն ձեռք բերում անգամ ըմբոստանալու հատակից իրեն դուրս բերող թագուհու դեմ:

Քննադատներից ոմանք Արբոկ Պերճին ու Տաղի-Յուսակին բնութագրում են որպես իրենց գիտակցությամբ միջավայրից էապես տարբերվող անհատներ, ինչն էլ նրանց ողբերգության ու հոգեկան տառապանքների հիմնական պատճառ է դառնում: Մոտեցումն, անկասկած, ճիշտ է, սակայն տարակուսանք է հարուցում, որ Արբոկ Պերճին անպայմանորեն փորձում են ներկայացնել որպես դասակարգային պայքարի ռահվիրա:

Արբոկ Պերճը չի ընդունում աստվածների գոյությունն ու գաղափարն ընդհանրապես, այստեղից էլ՝ երկրային տիրակալներին, որոնք աստծո փոխանորդներն են կարծում իրենց: Այս դիրքորոշմամբ է Արբոկ Պերճն ըմբոստանում աստվածների ու թագավորների դեմ՝ առանց գիտակցելու, թե ինքն «անզոր է կործանելու սահմանվածը, ինչպես մոծակն է անզոր կասեցնելու քամու ընթացքը»:

Արբոկ Պերճը հմայված է ինքն իրենով ու իր ուժով և իրեն բոլոր տառապյալների փրկիչն է համարում: Նա չի եկել այն գիտակցությանը, որ իր ժամանակներում ապրող մարդը դեռևս չի սպանել իր մեջ արմատավորված ստրուկին, և, ինչպես Տաղի-Յուսակն է ասում, ազատել այդ «մարդուն շղթաներից, նշանակում է ոչնչացնել նրան»:

Բնութագրական են Մարի-Լույսի հետ նրա երկխոսությունները. («ՈՒրեմն այս լեռներու՞մ ես ապստամբ, Արբոկ: - Ես ամեն տեղ եմ, թագուհի: Որտեղ տառապած մարդ կա, ես այնտեղ եմ»):

Հանգամանքների խճճված հանգույցներում Արբոկ Պերճը չի գիտակցում իր վիճակի ողջ ողբերգականությունը ու տարերայնորեն շարունակում է ընդվզել աստվածների ու թագուհու դեմ, ինչը, սակայն, չի կարելի դիտարկել որպես հեթանոսական հասարակության խորքերում հասունացող սոցիալական ինքնագիտակցության զարթոնքի արտահայտություն:

Արբոկ Պերճը՝ նախկին ստրուկը, ամեն դեպքում սովորական մարդ էր, ու նրան նույնպես յուրահատուկ է ավելիին հասնելու, ավելին ունենալու բնական ձգտումը: Այստեղից էլ՝ երազանքների ու իրականության բախումը, երազանքներին անխուսափելիորեն հետևող հուսախարության դրսնորումները:

Ժամանակի ընթացքում Արբոկ Պերճը, վայելելով թագուհու համակրանքն ու վստահությունը, աստիճանաբար տեղ է գրավում Մարի-Լույսի մերձավորների շարքում,

<sup>148</sup> Խանզադյան Ս., Թագուհին հայոց, էջ 9:

նույնիսկ նրա հետ մասնակցում խելահեղ խրախճանքների: Ուշագրավ է, որ թագուհին, տեսնելով նախկին ստրուկի վարքագիծը, նրա մեջ աստիճանաբար հասունացող անհնազանդության նշանները, ավելի ու ավելի է հարգանքով լցվում նրա նկատմամբ, ավելին՝ տենչում է նրան. «Գնանք իմ օթևանը, Արքոկ Պերձ: Այս գիշեր խրախճանալ եմ ուզում քեզ հետ: Կկամենա՞ս...»<sup>149</sup>:

Իսկ խրախճանքը մոլեգին էր. թագուհին անընդիատ գինի էր խմում ու նաև «գարուջուր», որը ևս թունդ էր, ու մոլեռանդ կրքոտությամբ տրվում էր նախկին ստրուկին՝ «Դու, քաջ հրոսակ, սիրելի ես իմ արևին: Օ՛, քեզ չի կարելի չսիրել, Արքոկ Պերձ»:

Թափանցիկ էր, սակայն, թագուհու սիրալիրությունը, «Նրա խորքերում արյան բժեր էին երևում, ինչպես ուռենու արմատը՝ գետի եզերքի ջրերի մեջ...»: Խրախճանքի մոլեգնության մեջ երկուսն էլ անկոտրում են իրենց դիրքորոշումներում.

- Մի՞թե իմ թագուհին մտածում է, թե ես կխաբվեմ իր սիրալիրությունից ու պատրողական խոստումներից և կհեռանամ իմ ճանապարհից:

- Ո՞չ, ո՞չ: Քո կավեղեն էությունն անխոցելի է, Յեպիտ-Անահիտ միակ աստվածուհին վկա, ինձ համար ատելի է այն տղամարդը, որ իր նպատակից ետ է կանգնում: Նմանին ես կանացի վարտիք կհազցնեմ... Նաև գիտեմ, որ մեր խաղտիքի անտառներում մի տեսակ վայրի կատու կա, որ շատ սիրելուց լափում է իր ձագերին: Լսե՞լ եմ... Անմատչելի է իշխանություն ունեցող կնոջ հոգին: Նրանից պետք է հեռու լինես, ինչպես օձից: Ես հաճույք եմ ստանում, երբ որևէ սիրելիս տեսնում եմ անգլուխ...»<sup>150</sup>:

Թագուհին չի մերժում Արքոկ Պերձի նպատակը, բայց և իսկապես համոզված է, որ նրա «կամեցածը դատապարտված է կործանման...». «Ոչ ոք չնկատեց, թե ինչպես թագուհին փեշի տակից հանեց կեռ դաշույնը և մի թափով քաշելով Արքոկ Պերձի պարանոցով, նրա գլուխը կտրեց... Տաք արյուն թափվեց սուրբ հացի վրա»<sup>151</sup>:

«Թագուհին հայոց» վեպի առանցքային կերպարներից է Տաղի-Յուսակը՝ աստղաբան ու փիլիսոփա, տաղասաց ու տաղերգու, ամրակազմ ու քաջարի մի տղամարդ, որը վիպական գործողությունների ծավալման ողջ ընթացքում գտնվում է իրադարձությունների հորձանուտում և մեծապես նպաստում է հեղինակային մի շարք մտահացումների իրագործմանը:

<sup>149</sup> Նույն տեղում, էջ 355:

<sup>150</sup> Նույն տեղում, էջ 355-356:

<sup>151</sup> Նույն տեղում, էջ 357:

Տաղի-Հուսակի փիլիսոփայական խորհրդածություններում Ս.Սարինյանը տեսնում է «միֆոլոգիական բանականությունից անջատման իներցիան,, որ արդեն սկսում է գիտակցել մարդու ողբերգական գոյությունը»<sup>152</sup>:

Իր խորհրդածություններում Տաղի-Հուսակը փորձում է գոյի ու տիեզերքի հարաբերակցություններում գտնել անվերջանելին. իրերի սկիզբը, որ անքննելի է, և վերջը, որ անտեսանելի է ու անվերջանալի: Աշխարհը ժամանակի պես ոչ սկիզբ է ունեցել, ոչ էլ վախճան կունենա: Ամեն էություն անսահման է: Ամենափոքր անբաժանելին խաշխաշի հատիկն է, որին անվերջ կարելի է բաժանել, սակայն նա նորից կլինի: Ինչ գոյություն ունի, չի դադարում գոյություն ունենալուց: Յարյուր տարին մեկ երկնային հավքն իջնում է ամպերից ու իր կտուցը սրում Մասիս լեռան ժայռերին քսելով: Եվ երբ երկնային հավքն այսպես անելով մաշի ամբողջ լեռը՝ կանցնի հավերժության ակնթարթը»<sup>153</sup>: «Միֆոլոգիականից բանականության անջատման գրգիռը» (Ս.Ս.) ողբերգականության զգացումներ է առաջացնում մարդու մեջ: Ով փորձում է տիեզերական հավերժության ոլորտներում պարզաբանել իր ակնթարթային գոյության իմաստը, նրան տանջում են կասկածները, անորոշության որդը կրծում է հոգին՝ «Որտե՞ղ է վերջը, և ու՞ր է լուծնան բանալին»:

Վիպական գործողությունների ծավալման ողջ ընթացքում Ս.Խանզադյանն ավելի է խտացնում Տաղի-Հուսակի կերպարը: Իմաստուն ու առնական է նա, պատկերավոր ու պաթետիկ է նրա խոսքը, ազդեցիկ. «Փրկություն տուր ինձ, օ՛, դաժան թագուհի: Օ՛, դաժան կին, օ՛, լուսաստինք: Քաջության կաթ հղիր քո ստիճներից, որ շուշաններ բացվեն շուրթերիս: Օ՛, կրքի հեղեղ, ինձ արձակիր պաշտոնից, որ այլևս չերևան քեզ: Թող խրխնջան ուրիշ հովատակներ և ուրիշ ցոլեր բառաչեն քո պուրակներում՝ եղեմիդ հոտը ռունգերի մեջ»<sup>154</sup>:

Տաղի-Հուսակի կերպարը Ս.Խանզադյանը կերտում է հոգեկան ծանր երկվությունների կորագծերի հատման կետում, ինչն ավելի է հզորացնում վեպի դրամատիկ լիցքերը: Տաղի-Հուսակի մեջ նույնպես իրար են հակադրվում երկու ես՝ սառը դատողությամբ և տիեզերական գաղտնիքները բացահայտել ցանկացող, պրագմատիկ աստղագետն ու փիլիսոփան և լիրիկ տաղերգուն ու տաղասացը, աշխարհի ունայնության և վերուստ սահմանված կարգի անխուսափելիությունը գիտակցող մտածողն ու գեղեցիկը տեսնող և գնահատող արվեստաբանը: Իր ներքին

<sup>152</sup> Սարինյան Ս., Սերունդներ և ավանդներ, 1989:

<sup>153</sup> Խանզադյան Ս., Թագուհին հայոց, էջ 14:

<sup>154</sup> Նույն տեղում, էջ 361:

Երկվությամբ, թագուհու նկատմամբ ոչ միանշանակ տրամադրված Տաղի-Հուսակը, այնուամենայնիվ, միաստվածության, միամուսնության, միապետության կողմնակիցներից մեկն է վեպում, և պատահական չէ, որ Ս.Խանզադյանը հենց Տաղի-Հուսակին է վերապահում Մարի-Լույսի վերջնական հաղթանակն ավետելու առաքելությունը:

ճերմակ կտավով պատված, վառվող ջահը ձեռքին Տաղի-Հուսակը նետահարում է թագուհու նահատակությամբ իրծվող, մոլեռանդ ելույթով քրմերի ամբոխին ոգևորող ու գրգռող Արվանդ Բիխունուն, աշտարակի պարիսպներից անդունդ գլորում ամբողջ հասակով մեկ վեր խոյացած Շանթ աստծո՝ քրմերի պաշտամունքի արձանն ու ավետում. «Մարի-Լույսն աստվածացա՞վ, մարդիկ: Երկրպագեցեք ձեր նոր աստվածուհուն՝ Մարի-Լույսին, թագուհուն հայոց:

Նա ձեռքերը տարածեց ու թռավ դեպի անդունդի խորխորատները»<sup>155</sup>: Թագաժառանգ Կարաննիի, Մարի-Լույսի, Արբուկ Պերճի, Տաղի-Հուսակի, Նուարի, Արվանդ Բիխունու, խեթերի բազմաթիվ ցեղապետերի ու թագավորական տոհմի ներկայացուցիչների կերպարներով է Ս.Խանզադյանը ներկայացնում ժամանակի շարժումը՝ նրա բնորոշ յուրահատկությունը համարելով մշտական հականարտությունները, ժողովուրդների անվերջ բախումները, հեթանոսական ժամանակների գունագեղ պատկերները, որոնց մասին սեպագիր արձանագրություններն ու հուշագրությունները, հնագիտական վավերագրերը փաստական հակիրծ տեղոկություններ են հաղորդում միայն, և անչափ վառ երևակայություն է պահանջվում պատմավիպասանից՝ ներկայացնելու այդ շրջանի կոլորիտը, բարքերն ու սովորությունները, կրոնական արարողությունները, զոհաբերությունների, ռազմի, տոնախմբությունների տեսարանները, մարդկային հարաբերությունները, նրանց կենցաղը, հազն ու կապը, ինչն անչափ կարևոր է ժամանակի համապատկերն ամբողջացնելու, նրա շունչն ու ոգին հաղորդելու համար:

«Թագուհին հայոց» վեպում Ս.Խանզադյանը ցուցաբերում է «առասպելական պեյզաժի հնուտ զգացողություն», որը նրա մոտ ձևավորվել է «ոչ միայն ազգագրական ու հնէաբանական վավերագրերից» քաղված փաստերից, «այլև ժողովրդի եթիկական հիշողության ծալքերում պահված մասունքներից», ինչը նրան հնարավորություն է ընձեռել վերակերտելու «ինքնօրինակ ու անկրկնելի մի իրականություն, տեղայնացված

<sup>155</sup> Նույն տեղում, էջ 378:

ու գործող մի առասպել, կենցաղի, սովորությունների, մարդկային հարաբերությունների շոշափելի-իրական նմանակությամբ»<sup>156</sup>:

Վեպում Ս.Խանզաղյանը պատմավիպասանի համար խիստ անհրաժեշտ ներքնազգացողությամբ «հանդես է բերում պատմական իրականության, կենցաղային տարբեր կուլտերի և բարքերի, նամանավանդ, պատմական ժամանակի ու միջավայրի խորը զգացողություն: Ու ստեղծագործության ողջ տարածքն ասես շնչում է այդ զգացողությամբ, անցած ժամանակների ու առասպելական նիստ ու կացի թեև մասունք դարձած, բայց, էթնիկական ծինով իբրև հավիտենական հիշողության անցած հուշի պատառիկներով»<sup>157</sup>:

Վիպական գործողությունները ծավալվում են հայոց աշխարհի ամենատարբեր ծագերում, որոնք Ս.Խանզաղյանը ներկայացնում է հեթանոսական ժամանակներին բնորոշ երկնավառ գույներով ու երանգներով: Խանզաղյանական բնապատկերներն արտահայտում են համապատասխան հոգեվիճակներ ու համահունչ են կերպարների ներքին ապրումներին ու տագնապներին: Տագնապալից ապրումների մեջ է թագաժառանգ Կարաննին, և այդ տագնապներին յուրովի արձագանքում է բնությունը. «Լեռների գահերի վրա հաճախ էին որոտի շանթեր երևում: Յրե նշաններով զոհ է պահանջում Շանթ աստվածը... Առաջին ամպրոպի հետ հողի տակից երևում է Խատոր աստվածը՝ Գարշ աստծո նողկանքից մարդկանց ապահով դարձնելու համար...»<sup>158</sup>:

Բնապատկերներն ամենահին ել դեկորացիաներ չեն «Թագուհին հայոց» պատմավեպում, ուր հայոց աշխարհի տարբեր գավառներն ու խորհրդանշները՝ Աբոսը (այժմ՝ Բինգյոլ), Ալիզոնը, Ակնը, Անգեղատունը, Աշոցքը, Արածանին, Բագրենանդը, Բաղրերդը, Երիախի երկիրը և մի քանի տասնյակ այլ քաղաքներ, գյուղեր, լեռներ, լճեր ու գետեր ներկայացված են խիստ թանձր գույներով, տեսանելի մտապատկերներով. «Երասխը ճողփում է լայնակի: Պղտոր ու թանձր են նրա ջրերը՝ պղնձի հալվածք: Նրա եղեգնութներում երկար պարանոցներով վայրի բաղեր են խշշում, արագիլներ պտտվում: Արագիլ իջավ եղեգնութի վրա ու թափով սուրալով ցած, թափով բարձրացավ՝ մագիլների մեջ օձ»<sup>159</sup>:

Ս.Խանզաղյանը, ինչպես նշել ենք, մասսայական տեսարաններ ստեղծելու մեջ վարպետ է: Պատկերացնել միայն կարելի է, թե երևակայության ինչպիսի փայլուն

<sup>156</sup> Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, գ.2, էջ 457:

<sup>157</sup> Սարգարյան Ս., Պատմության ժամանակը, էջ 120-121:

<sup>158</sup> Խանզաղյան Ս., Թագուհին հայոց, էջ 9:

<sup>159</sup> Նույն տեղում, էջ 88:

առկայժումներ պիտի ունենալ հազարամյակների հեռավորությունից ներկայացնելու քրնական արարողությունները, մարդ զոհաբերելու ահասարսութ տեսարանները, հեթանոսական խենթ ու արբշիռ տոնախմբություններն ու գիճարբութները: Ամեն խորհրդանիշ, ամեն լեռ ու գետ ունի իր պատմությունը, որը սերնդեսերունդ փոխանցվում է երգերի ու ձոների միջոցով: Արտիտ Արարի ստրուկ մարդիկ վարում են ծանր լաստն ու վերակացուների մտրակի հարվածների տակ երգում են Երասխի ձոնը. «Ծով էր մի ժամանակ Արարատյան դաշտը, և այդ ծովը կապույտ ալիքներ ուներ: Ծովի հավերժահարսեր էին ապրում, և ապրում էր Ծովի Նարը: Բարկացավ Ծովի Նար Աստվածուիին Սյունական լեռների վրա, որ փակել էին Երասխի ճանապարհը և վավաշոտ նայում էին նրա կոնքերին ու բարձր կրծքերին»: Այնուհետև առասպելը երգի հանգույն ավանդում է, որ «շանթերով Ծովի Նարը հարվածում է Սյունական լեռներին, պատռում նրանց կուրծքը, և ջրերը, Երասխ գետ դառնալով, գնում-թափվում էր Կասպիական ծովը, որ հայոց աշխարհի արևելքն է ողողում»<sup>160</sup>:

Ս.Խանզադյանի բնապատկերները, Յայասա Երկրի տարբեր աշխարհների, նահանգների, բնակավայրերի գունեղ նկարագրությունները վիպական գործողությունների ծավալման համար ֆոն հանդիսանալուց բացի, ունեն ճանաչողական կարևոր նշանակություն: Յենց այնպես չէ Ս.Խանզադյանը նկարագրում Մուղանի դաշտավայրը, որը միացնում է հայոց Արցախ աշխարհի արևելքն ու արևելյան հարավը, ծավալվում մինչև Արաքս գետն ու նրա աջակողմյան տափաստանը՝ Փայտակարանը, Բիայնիլին՝ իին հայկական թագավորության արևելյան մասը՝ Տուշպա-Տոսպ (Վան) քաղաքով, Արծակը (Արծափ)՝ Իգդիրից Յին Բայազետ տանող ճանապարհի արևմտյան կողմում գտնվող անառիկ բերդերից մեկը, Բաղը, Բասիան, տասնյակ այլ հայկական խորհրդանիշեր, որոնք այժմ օտար անուններ ունեն:

Ս.Խանզադյանի նպատակը հայերի հազարամյակների պատմության վավերագրերը գեղարվեստորեն ներկայացնելն ու տարածաշրջանի քոչվոր ցեղերի հերյուրանքներին հակադարձելն է, մեր բնիկ, իսկ նրանց եկվոր լինելու անհերքելի ծշմարտության բարձրաձայնումը:

Վեպուն սեպագրերի հաղորդած թռուցիկ տվյալների հիման վրա Ս.Խանզադյանը երևակայության ուժով «վերակենդանացրել է պատմությունը ժամանակի ու տարածության մեջ, նրա հետ և մեր նախնիների առօրյան՝ իր բնական ու նախաստեղծ վիճակով»<sup>161</sup>: Այս առումով բնութագրական են ճոխ հանդիսությունների,

<sup>160</sup> Նույն տեղում, էջ 90:

<sup>161</sup> Պատրոսյան Թ. Սերո Խանզադյանի պատմական արձակը, էջ 163:

տոնախմբությունների, կրոնական արարողությունների նկարագրությունները. «Սրահի պատերի տակ ցածրիկ մահիճներ էին դրված՝ ծածկը գազանների մորթիներով: Նգույները ևս ցածրիկ էին, ծանրացած արծաթի ու ոսկյա անոթներով: Զահերի ու կանթեղների բոցերից հուրիրատում էին ապակե սրվակների մեջ հանդարտված գինին ու գարու քաղցր ջուրը...»<sup>162</sup>:

Խենթ ու խենեց էին մեր հեթանոս նախնիների խրախճանքները, իյուրընկալությունները՝ լիասիրտ ու սրտաբուխ, պարերը՝ խելահեղ ու կրքոտ, երգերը՝ խրոխտ ու մարտաշունչ: Եվ ինչպես լիասիրտ ու լիաբուռն էին մեր հեթանոս նախնիները բարեկամների հանդեպ, նույնքան անողոք էին թշնամիների ու «կուսան աղջիկներին» պղծող, բազմաթիվ աստվածների բարեսրտությունը շահելու նպատակով նրանց զոհաբերող քրմների նկատմամբ:

Ս.Խանզադյանը երևակայության մեջ ուժով է ներկայացնում մարտի տեսարանները, հակառակորդի ուժերի բախումները, զորքերի հագուկապը, հարբած փղերի մարտակարգերը, բոլորին զարմանք պատճառող արցախյան հեծելազորի ճկուն տեղաշարժերը: Այնքան վառ ու գունեղ, այնքան տեսանելի, որ ընթերցողն իրեն պատկերացնում է գործողությունների թատերաբեմում:

Մի առանձին ուսումնասիրության նյութ կարող է դառնալ «Թագուհին հայոց» վեպի լեզուն, հարուստ բառապաշարը, գրաբարյան, ժողովրդախոսակցական ու գրական լեզվի հմուտ գուգադրումները, ինչը նույնպես անչափ կարևոր է ժամանակի ոգին ու շունչը ներկայացնելու տեսանկյունից: Յարուստ ու ճոխ է «Թագուհին հայոց» վեպի լեզուն, զերծ անհարկի գունազարդումներից: Վեպում Ս.Խանզադյանը կարծես պեղում է մեր լեզվի հնավանդ շերտերը, բառերը մաքրում մոռացության փոշուց, ընդլայնում նրանց բառարանային իմաստները: ճանաչողական, իմացաբանական կարևոր նշանակություն ունի վեպին կցված «Բառաթերթ»-ը, որտեղ ընդգրկված բառերից, տեղանուններից շատերը անծանոթ են ընթերցողին:

<sup>162</sup> Խանզադյան Ս., Թագուհին հայոց, էջ 12:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ժամանակը Սերո Խանզադյանի պատմավեպերում» թեմայի ուսումնասիրության արդյունքում հաճգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Ս.Խանզադյանի պատմավեպերում ընթերցողն առնչվում է ժամանակային տարբեր չափումների հետ՝ հայոց պետականության կազմավորման վաղնջական ժամանակներ («Թագուհին հայոց»), 17-րդ դարասկիզբ, Շահ Աբասի արշավանքներ դեպի Յայաստան, ահավոր կոտորածներ ու մասսայական տեղահանություններ («Արաքսը պղտորվում է»), 18-րդ դարասկզբի և դարավերջի ազգային-ազատագրական շարժումներ Սյունիքում և Արցախում («Մխիթար Սպարապետ», «Շուշի»), առաջին համաշխարհային պատերազմի, հայոց մեծ եղեռնի, 1920-ական թվականների խառնակ ու ահասարսության ժամանակներ («Խոսե՛ք, Յայաստանի լեռներ» , «Անդրանիկ» , «Գարեգին Նժդեհ»):

2. Իր պատմավեպերում Ս.Խանզադյանը, շարունակելով հայ դասական պատմավիպասանության ավանդույթները, փորձում է հայտնաբերել ժամանակի «ներքին ֆունկցիան» ու նրա շարժումը մեկնաբանել ճշմարիտ պատմականության դիրքերից: Արդիականության տեսանկյունից իմաստավորելով հայ ժողովրդի հերոսական գոյապայքարը պատմական առաջընթացի տարբեր շրջափուլերում՝ Ս.Խանզադյանն ավելի է խորացնում «ճանապարհն հայոց» հասկացությունը, որը դարեր շարունակ եղել և մնում է մեր գաղափարաբանության անկյունաքարը:

3. Ս.Խանզադյանի պատմավեպերում ժամանակը հանդես է գալիս ամենատարբեր չափումներով, իր «բաց» և «ներփակ» դրսևորումներով: Դրանց մեջ մի դեպքում համընկնում են պատմական ու գեղարվեստական ժամանակները, մի այլ պարագայում՝ ներառում են ժամանակային տարբեր հոսքեր: Գործողությունների ծավալման ընթացքն այդ վեպերում մեծապես պայմանավորված է ժամանակի գործոններով, որոնք ուրվագծում են շարժման ուղղությունները, առաջ քաշում ազատագրական պայքարի առաջնորդների, համախմբում ժողովրդի ներուժը, բացահայտում նրա անկոտրում ոգին ու կամքը:

4. Ս.Խանզադյանի պատմավեպերում ժամանակն ընդգրկում է անհատի ու ժողովրդի կյանքի ինչպես ծավալուն հատվածներ, այնպես էլ փոքր, բայց նույնպես կարևոր իրադարձություններ: Նրա պատմավեպերի ժամանակային սահմաններն իրենց շրջանակներում ներառում են մեր պատմության որոշակի շրջանների իրադարձությունների բարձրակետերն ու այդ համապատկերում՝ հերոսների կյանքի

Ժամանակները: Ժամանակի սուր զգացողությունը Ս.Խանզադյանին հնարավորություն է տալիս գոյապայքարի ընդհանուր տրամաբանության ու շարունակականության համապատկերում ներկայացնել տարբեր ժամանակաշրջանների աշխարհաքաղաքական, սոցիալական զարգացումները, բարոյահոգեբանական մթնոլորտը, կոլորիտը, բարքերն ու սովորույթները:

5. Անդրադառնալով պատմական որևէ կոնկրետ ժամանակաշրջանի՝ Ս.Խանզադյանն անցյալում կատարված մեծ ու փոքր իրադարձությունները փորձում է ներդաշնակել ներկայում ընթացող դեպքերին, գեղարվեստական տարածք ներմուծել պատմամշակութային ու բարոյահոգեբանական այնպիսի արժեքներ, որոնք, անցնելով դարերի փորձությունների միջով, արդիական են նաև այսօր:

6. Ս.Խանզադյանը, վիպական ժամանակի տևականության մեջ ընդգրկելով ժողովրդի կենսասիրական ձգտումները՝ «փորձում է հասնել պատմաշրջանի «բազմեզր» ընթանական և իրադարձությունների միահյուսման ճանապարհով կոնկրետ ժամանակահատվածում ներկայացնել իր պատմական ու գեղարվեստական կերպարներին՝ նրանց բնութագրելով ըստ «ճանապարհն հայոց»-ի ընտրության իրենց ընկալումների, որոնք ել ընկած են գլխավորից սկզբնավորվող ու ճյուղավորվող կոնֆլիկտների ու բախումների հիմքում:

7. Ժամանակն ու աշխարհագրական միջավայրը՝ գործողությունների ծավալման տարածական սահմանները, Ս.Խանզադյանի պատմավեպերում որոշիչ դեր են կատարում կերպարների բնավորության դրսնորման, աշխարհընկալման սկզբունքների ձևավորման ընթացքում:

8. Ս.Խանզադյանը հաճախ շեղվում է պատմական կոնկրետ փաստերից՝ դրանք խախտելով ի շահ գեղարվեստական ծշմարտության: Ժամանակը դարձնելով գեղարվեստական ընկալման առարկա՝ գրողը պատմական կերպարների կողքին ավելացնում է նաև ստեղծագործական կերպարներ, որոնցից շատերը, թերևս, ավելի ավարտուն են ու լիարժեք:

9. Ս.Խանզադյանի թե՛ պատմական և թե՛ գեղարվեստական կերպարները ժամանակի ծնունդ են: Ժամանակաշրջանն է նրանց հերոսացնում, մղում անձնագործության, առնում տարերքի մեջ: Այդ կերպարները Ս.Խանզադյանը ներկայացնում է երկու գուգահեռներում՝ պատմություն-հերոս, ժամանակ-հերոս գօների համադրմամբ՝ յուրահատուկ կապ ստեղծելով պատմական անցյալի ու ներկայի միջև:

10. Իր պատմավեպերում Ս.Խանզադյանը, ներկայացնելով հայոց պատմության հերոսական ու ողբերգական իրադարձությունները, հույժ կարևորում է ոչ միայն մեր ժողովրդի փառավոր հաղթանակները, այլև այն, որ երկրի հզորությունը պայմանավորված է նաև հոգևոր մաքառումների խորությամբ ու լայնությամբ:

11. Ս.Խանզադյանի պատմավեպերում արծարծված պատմության դասերը հույսը սեփական ուժերին ապավինելու, ազգային ինքնությունը պահպանելու, տարաբնույթ մարտահրավերներին դիմակայելու իմաստուն պատգամներ են և հույժ արդիական են մեր օրերում: Վստահաբար կարելի է փաստել, որ Ս.Խանզադյանի պատմավեպերը իմացաբանական խոր նստվածքներով պատմական որոշակի ժամանակաշրջանների համապատկերը ներկայացնելուց բացի հանգրվանային իրողություններ են 1960-1990-ական թվականների պատմավիպասանության առատ հունձքի մեջ:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղաբաբյան Ս., Հոդվածներ, դիմանկարներ, Երևան, 1982, 256 էջ:
2. Աղաբաբյան Ս., Ս.Խանզադյան, «Սովետական Հայաստան», 1962, № 2, էջ 19-21
3. Աղաբաբյան Ս., Ժամանակների կապի պատմիչը, «Սովետական Հայաստան», 1985, 25 դեկտեմբերի:
4. Ավետիսյան ., Ժամանակի կատեգորիան «Գևորգ Մարգարունի» վեպում, «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1, Եր., 1979, № 1:
5. Արզումանյան Ս., Սովետահայ վեպը, գ.3, Երևան, 1986, 456 էջ:
6. Արզումանյան Ս., Արդի հայ վեպը, հ. 5, Երևան, 2004, 410 էջ:
7. Եփրեմյան Վ., Զգրված գրքի ծանոթագրություններ, Երևան, 2008, 146 էջ:
8. Թամրազյան Հր., Երկեր, Երևան, 2013, 1008 էջ:
9. Թամրազյան Հր., Պատմական թեմատիկան և «Մխիթար Սպարապետը», «Գրական ուղիներում», Երևան, 1962, էջ 256- 277:
10. Խանզադյան Ս., Արաքսը պղտորվում է, Երևան, 1985, 208 էջ:
11. Խանզադյան Ս., Անդրանիկ, Երևան, 1989, 447 էջ:
12. Խանզադյան Ս., Ավանդատուն, Երևան, 1976, 806 էջ:
13. Խանզադյան Ս., Թագուհին հայոց, Երևան, 1978, 395 էջ:
14. Խանզադյան Ս., Խոսե՛ք, Հայաստանի լեռներ, Երևան, 1978, 535 էջ:
15. Խանզադյան Ս., Կենսամատենագիտություն, Երևան, 1985, 65 էջ:
16. Խանզադյան Ս., Գարեգին Նժդեհ, Երևան, 1993, 318 էջ:
17. Խանզադյան Ս., Շուշի, Երևան, 1991, 779 էջ:
18. Կիրակոսյան Զ., Երիտրուրբերը պատմության դատաստանի առաջ, Երևան, 1987, 785 էջ:
19. Հայրյան Գ., Սերո Խանզադյան, Երևան, 1975, 187 էջ:
20. «Հայկական Սովետական հանրագիտարան», հատ.3, Երևան, 694 էջ:
21. «Հայկական Սովետական հանրագիտարան», հատ. 8, Երևան, 1982, 716 էջ:
22. «Հայկական Սովետական հանրագիտարան», հատ. 12, Երևան, 1986, 752 էջ:
23. Մաթևոսյան Հր., Ես ես եմ, Երևան, 2003, էջ 368:
24. Մարգարյան Ս., Պատմության ժամանակը, Երևան, 2000, 209 էջ:
25. Գ.Նժդեհ, Կեանքն ու գործունեությունը, Նշխարներ, Պեյրութ, 1968, 534 էջ:

26. Պետրոսյան Թ., «Մխիթար Սպարապետ»-ի լեզվական արվեստը, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», № 5, 1983, էջ 41-45:
27. Պետրոսյան Թ., Պատմականի և Երևակայականի դաշնությամբ, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1983, № 6, էջ 40-46:
28. Պետրոսյան Թ., Սերո Խանզադյանի պատմական արձակը, Երևան, 1986, 184 էջ:
29. Զրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Երևան, 1980, 454 էջ:
30. Սահյան Յ., Երկերի ժողովածու 2 հատորով, Երևան, 1982, 340 էջ:
31. Սարինյան Ս., Գեղարվեստական գրականության պատմականությունը, Երևան, 1979, 586 էջ:
32. Սարինյան Ս., Ժամանակակից արձակի զարգացման ուղիներում, «Սովետական գրականություն», 1971, № 8, էջ 89-114:
33. Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, հ.2, Երևան, 1989, 568 էջ:
34. Սարինյան Ս., Մնայուն արժեք, «Գրքերի աշխարհ», 1979, 15 մարտի:
35. Սարինյան Ս., Սերունդներ և ավանդներ, Երևան, 1984, 389 էջ:
36. Սարինյան Ս., Ռաֆֆի, Երևան, 1975, 450 էջ:
37. Սեբաստացի Ղ., Ընտիր պատմություն Դաւիթ Բեգին և պատերազմաց հայոց Խափանու, որ եղև ընդդեմ թուրքաց, Վաղարշապատ, 1871, 216 էջ:
38. Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը / 190-1921/, Երևան, 2000, 669 էջ:
39. «Սովետական գրականության պատմություն», հատ. 2, ԳԱ, 1965, 773 էջ:
40. «Փիլիսոփայական բառարան», Երևան, 1975, 496 էջ:
41. Քալանթարյան Ժ., Ազգային ինքնության փիլիսոփայությունը էպոսում՝ ըստ Լևոն Խեչոյանի, «Գրական թերթ», 2014, № 13:
43. Քալանթարյան Ժ., Ժամանակակից հայ արձակի վիճակն ու խնդիրները, «Գրական թերթ», 2014, № 26:
44. Бахтин М., Вопросы литературы и эстетики, М., 1975, 345 ср.
45. Голубев В. С., Феномен времен и соцестественная история, 2011, № 1.
46. Кузнецов М., Советский роман, М., 1980, 160 ср.
47. Лессинг Г., Лоокон или о границах живописи и поэзии, М., 1933, 256 ср.
48. Петров С., Русский советский исторический роман, М., 1980, 483 ср.
49. Юнг Г., Дух в человеке, в искусстве и литературе, Минск, 2003, 362 ср.

## ՄԱՍՈՒԼ

1. «Ավանգարդ», 1981, № 5:
2. «Գրական թերթ», 2014, № 26, 1982, 17 դեկտեմբեր:
3. «Գրքերի աշխարհ», 1979, 15 մարտի, 1982, 20 սեպտեմբեր:
4. Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1979, № 1
5. «Հայագիտական հանդես», 2013, № 2, 4, 2014, № 2-3:
6. «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1983, № 5, 6:
7. «Հայրենիքի ձայն», 1978, № 51, 1980, № 92:
8. «Սովետական գրականություն», 1971, № 8:
9. «Սովետական Հայաստան», 1962, № 2, 1985, № 146:
10. “Вопросы литературы”, М., 1980, №1:
11. “Литературная Армения”, 1979, № 2: